


ՏԵՐՄԻՆԱԲԱՆԱԿԱՆ
ԵՎ ՈՒՂՂԱԳՐԱԿԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

1956 - 2006



ԵՐԵՎԱՆ



ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԼԵԶՎԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԼԵԶՎԻ ԿԱՆՈՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՌԱՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆԸ. ԱԶԳԱՅԻՆ ՈՒ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՐԱ ՑԵՐՄԻՆԱԳՈՐԾՎԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ

1

Լեզուն մարդու ամենամեծ ստեղծագործությունն է, նրա համճարի մարմնացումը:

Աշխարհի մի քանի հազար լեզուներից յուրաքանչյուրն իրեն ստեղծող ու կրող ժողովրդի պատմությունն է, նրա հոգևոր ու մտավոր կարողությունների աղբյուր-հայելին, նրա բոլոր վերելքների ու վայրէջքների կենդանի վկան:

Եթե լեզվի քերականական կառուցվածքը շատ ինքնատիպ համակարգ է, զարգացմամբ՝ ներփակ և համեմատաբար անտարբեր՝ ժողովրդի տնտեսական-հասարակական կյանքում կատարված տեղաշարժերին, ապա լեզվի բառապաշարը մարդու՝ հաղորդակցմամբ իրականացվող հասարակական գործունեության անմիջական արտացոլումն է: Երեկ դեռ չուներինք ջերմակեկտրակայաններ, չուներինք տիեզերագնացություն, հեռուստատեսություն, հեռահաղորդում, չուներինք նաև այդ հասկացություններն անվանող բառերը, այսօր դրանք կան իրականության մեջ, կան և լեզվում:

Ժողովուրդների տնտեսական-հասարակական պայքարի, փոխազդեցությունների, ներքին կյանքի ու զարգացման պատկերը կարելի է տեսնել տվյալ ժողովրդի լեզվի մեջ: Յուրաքանչյուր լեզվի բառերի, բառաձևերի, բառիմաստների, ոճերի ու դարձվածքների ճոխությունն ու կենդանությունը, սրանց ազգային ինքնատիպությունը յուրատեսակ չափանիշ են տվյալ ժողովրդի հասարակական, գիտական ու մշակութային զարգացման:

Հայոց լեզուն նույնպես, իբրև աշխարհի հնագիտ լեզուներից մեկը, ենթակա է այս ընդհանուր օրինաչափություններին:

Հայերենով մեզ հասած հազարավոր ծեռագիր գանձերը մեր հին ու միջնադարյան հրաշալի գրականության, բազմադարյան մշակույթի, իմաստասիրության, բարոյագիտական, պատմագրական, քերականագիտական, ճարտասանական, բժշկագիտական, աստղաբաշխական, մաթեմատիկական, գիտության ու արվեստի այլ ճյուղերի հարյուրավոր ստեղծագործություններում մարմնավորված մեր տեսական զարգացած մտքի արտացոլումն են, որոնցով էլ պայմանավորված է հայոց լեզվի բառային հարստությունը, նրա բառաստեղծական զարմանալի ճկունությունը:

Դեռևս V-VI դարերում, երբ այսօրվա քաղաքակիրթ ժողովուրդներից շատերը կազմավորված էլ չէին, մեր ժողովուրդը մտահոգված էր ոչ միայն իր հայրենիքն ու լեզուն, ասել է թե՛ իրեն իսկ, անդառնալի կորստից փրկելու օրհասական վտանգով, այլև մարդկային հոգևոր հարստություններին հաղորդակից դառնալու, համաշխարհային մշակույթի զարգացման ասպարեզ մտնելու հոգսով: Հաղթահարելով այն ժամանակի համար անհնարին թարգմանչական դժվարություններ՝ մեր խորագետ նախորդները հայերենը դարձրին գիտության ու արվեստների լեզու: Հայերենի այն ժամանակվա բառակազմությանը նույնիսկ խորթ ու արհեստական միջամտությամբ ստեղծելով երկու տասնյակից ավելի նախածանցներ՝ հունաբան հայագետները կերտեցին այնպիսի բառեր ու տերմիններ, որպիսիք են՝ *ապացույց, առարկություն, առձեռն, արտադրել, արտադրություն, արտասահման, բաղադրություն, բացասել, բացարձակ, բացատրություն, գերագույն, գերազանց, գերակատարում, դերանուն, դերբայ, ենթակա, ենթարկել, հակադրություն, հակամետ, համագումար, համաժողով, համալսարան, համաչափություն, հարադրություն, հարացույց, մակագրություն, մակարդակ, մակբայ, մակերևույթ, նախադասություն, նախահայր, ներածական, ներածություն, ներքող, ներգործել, ներկա, շարադրել, շարահյուսություն, շարունակել, պարագա, պարագիծ, ստորագրություն, ստորադրյալ, ստորակետ, վերադարձ, վերածնություն, տարածական, տարակուսանք, տրամաբանություն, փոխադարձ, փոխադրություն, փոխակերպություն, փոխանցում* և այլն, և այլն*:

Սրանք «և այս եղանակով ստեղծված հարյուրավոր բառեր և տերմիններ, որոնք կարծես երեկ են ստեղծվել, այսօր էլ հայերենի գիտական բառապաշարի ամենագործածական բառերն են՝ նույն կամ փոխված նշանակություններով: Այաք քանի՜-քանի՜ բառ ու տերմին է ստեղծվել բառակազմման բնական ճանապարհով: Այդ ամենը, գումարվելով մեր լեզվի հնագույն բառապաշարին և ամենօրյա փոխառություններին, մեզ հասած մատենագրական խիստ թերի տվյալներով, հին հայերենում (գրաբարում) ներկայացնում է մի պատկառելի թիվ՝ շուրջ 56 հազար բառ: Այսպիսի բա-

*«Սովետական Հայաստան», հ. 7 (268), հուլիս, 1968 թ., էջ 19:

ռաքանակը կարող է պատվաբեր լինել նույնիսկ այսօրվա որևէ զարգացած լեզվի համար:

Սակայն նույնպիսի հայարտությամբ մենք չենք կարող խոսել մեր բանավոր լեզվի մաքրության և ճոխության, մեր գրական հին լեզվի ժողովրդականության, գրական ու բանավոր լեզուների փոխադարձ հարազատության ու համապատասխանության մասին:

Բարձրարժեք ու հարուստ մշակույթ ստեղծող հայ ժողովուրդը, պատմության քմահաճ խաղով, վերջին հազարամյակում միշտ բարբառախոս մնաց: Արաբական, պարսկական, թուրքական և այլ լեզուների անհարկի ազդեցությունները հայ բարբառները լցրին բռնի օտարաբանություններով, վերջիններս գնալով դարձան խոսակցական լեզվի կամ բարբառների ակտիվ բառապաշարի անդամներ, իսկ գրական հայերենի շատ բառեր աստիճանաբար մոռացվեցին կամ լավագույն դեպքում մնացին բարբառախոս հայի համար սովորույթի բառեր: Օտար *ամանաթ, բեջարեւ, բաղչա, բոստան, գյուլլա, դավա, գուլում, գիար, գոռ, գոռբա, թոզ, թիփի, ժեշտ, ժնջիլ, խուրջին, յարա, դոչաղ, մայմուն, քեր, չփլաղ, սիլլա, փեշքաշ, քեչա, քյոմուռ, քիրաճ, քյալփաթին, քյանդր, քյանդրբազ, քոռ, քորփա, քաչալ, քուչա, քյասիք* և նման հարյուրավոր բառեր բանավոր լեզվից վտարեցին հայերեն *ավանդ, մշակել, պարտեզ, բանջարանոց, գնդակ, ուղտ, արհավիրք, թույլ, դժվար, գորեղ, փռշի, բուք, թիթեղ, շղթա, ուսապարկ, էերք, կորիճ, կասպիկ, գրպան, մերկ, ապտակ, ընծա, թաղիք, անուխ, կիր, աքցան, լար, լարախաղաց, կույր, փոքրիկ, ճաղատ, փողոց, աղքատ* և այլ բառեր: Բարբառային հնչյունափոխությամբ անճանաչելիության աստիճանի կերպարանափոխվեցին գրական հայերենի հարյուրավոր բառեր, առաջացան միևնույն բառերի բազմաթիվ երկվություններ: Ահա թե ինչու, գրական հարուստ ժառանգությամբ հանդերձ, ժամանակակից գրական հայերենը կազմավորվեց իբրև մի նոր լեզու՝ մեծ դժվարություններ ու լեզվական հակասություններ հաղթահարելով:

XIX դարն ավարտեց աշխարհաբար լեզվի՝ դարեր առաջ սկսված գրականացման ու նորմավորման ընթացքը, և նոր գրական հայերենը դարձավ զարգացած գեղարվեստական գրականության, այդ դարաշրջանի հասարակական-քաղաքական հարաբերություններին, տնտեսակարգին, գիտությանը և ողջ մշակույթին համապատասխան լեզու:

Բայց այս ամենը սկիզբն էր միայն. նոր հայերենը երկփեղկված էր արևելահայ և արևմտահայ գրական լեզուների, իրենց գոյությունը շարունակում էին պահպանել հայերենի քառասունհինգ ավելի բարբառներ, գրական լեզվի խոսակցական դերն իրականացվում էր մտավորականների նեղ շրջանակներում միայն: Հայ ժողովրդի ու նրա լեզվի նկատմամբ շարունակվում էր ծուլման թուրքական ու ցարական քաղաքականությունը:

Առաջին համաշխարհային պատերազմը, սրան նախորդող ու հաջոր-

դող՝ արևմտահայության զանգվածային ջարդերը հայության ու հայերենի վերացման պատմական նոր ահավոր քայլեր եղան, որոնք այդ հրեշավոր նպատակի վերջնական իրականացման շեմքին էին, երբ ստեղծվեց Հայաստանի Առաջին, ապա՝ Երկրորդ Հանրապետությունը: Հայաստանի խորհրդայնացմամբ սկսվեց հայոց լեզվի ու նրա բառապաշարի ծաղկման մի աննախադեպ շրջան: Շնորհիվ տնտեսական, քաղաքական, գիտական ու մշակութային լայնորեն ծավալվող հեղափոխության՝ գրական հայերենը գնալով դարձավ լայն զանգվածների սեփականությունը, ընդլայնվեցին նրա գործածության ոլորտները, սկսվեց բարբառների՝ գրական լեզվին ձուլվելու, բարբառային հատկանիշների չքացման գործընթաց: Գրական հայերենը գնալով ճշգրտվեց ու նորմավորվեց, կայունացան նրա օրինաչափությունները: Ամենից էականը, սակայն, հայերենի բառապաշարի հարստացումը եղավ: Տնտեսական առաջադիմությանը համապատասխան, գեղարվեստական գրականության, գիտության նորանոր ծյուղերի ու մասնագիտությունների, արվեստների զարգացմանը համընթաց բազմապատկվեց հայերենի բառազանգը: Տնտեսական, քաղաքական անբարենպաստ պայմաններում անգամ մեր կյանքի առաջադիմությունը չի ընդհատվում, այնպես որ կարելի է ասել՝ հայերենը նորանոր բառերով հարստանում է ամեն օր, ամեն ժամ:

Հայոց լեզուն նախ հարստանում է իր բառաստեղծման ներքին միջոցների օգտագործմամբ:

1. Եղած բառարմատների բաղադրմամբ նոր բառեր կազմելը այնքան հարազատ է հայերենին, որ հաճախ մարդ չի էլ զգում, թե այս կամ այն հորինված բառը առաջին անգամ է լսում կամ կարդում: Այնպիսի նորակերտ բառեր, ինչպիսիք են՝ *առանձնատուն*, *չմշկասահք*, *գրոսայգի*, *տիեզերագնաց*, *վազքուղի*, *գեղասահք*, *գուգագուլպա*, *երիկամաքորթ*, *գազօջախ*, *սեղմագիր*, *վարկանիշ*, *ընտրակաշառք* և այլն, հայերենում մշտապես գործածված բառեր են թվում:

2. Հայոց լեզվի բառակազմական մյուս հիմնական միջոցը եղած արմատներից ու բառերից ածանցներով նոր բառեր կազմելն է: Մասնագիտական գրականության տվյալներով, արդի հայերենն ունի բառակազմական այդպիսի մոտ 200 ածանցներ, որոնց կեսից ավելին այժմ էլ ակտիվ բառաստեղծական արժեք ունի: Այդ ածանցներով կազմված շատ տերմիններ ու բառեր, որպիսիք են՝ *համակենտրոն*, *համակողմ*, *համակառույց*, *համալիր*, *ներաշխարհ*, *ներարկել*, *ներգաղթ*, *ներդաշնակ*, *ներխուժում*, *ինչյուն*, *ձևույթ*, *հատույթ*, *տիրույթ*, *վազորդ*, *չմշկորդ*, *ծանրորդ*, *դափուկորդ* և այլն, առաջին իսկ գործածությունից հարազատ են դառնում նույնիսկ ոչ մասնագետ մարդուն:

Գրական հայերենի բառապաշարը միշտ համալրվել ու համալրվում է նաև

3. բարբառային այնպիսի բառերով, ինչպիսիք են՝ *բարակացավ, գոգնոց, գռվիչ, դառնաժամ, դիմհար, դողերոցք, թերթերուկ, թերխաշ, խաչմենուկ, չոչաշոր, ջրբաժան* և այլն:

4. գրաբարյան բառերով՝ կենդանացնելով այդ բառերը, ընդլայնելով դրանց իմաստը: Այժմ սովորական են դարձել գրաբարի երբեմնի մոռացված *հաստոց, հեծան, պարետ, վթար, խոտան, աղանդեր, արգանակ, օշարակ* և այլ բառերը:

5. նոր տիպի կայուն բառակապակցություններով, ինչպիսիք են՝ *կարմիր աստղ, գիտության թեկնածու, ժողովրդական դերասան, հանգստյան տուն* և այլն:

6. օտար, առավելապես ռուսերենից կատարված բառային և դարձվածքային պատճենումներով, ինչպիսիք են՝ *հնգամյակ, զնդացի, ինքնաթիռ, քվեարկության դենե, իր վրա աշխատել, ոտքի կանգնեցնել, հարված հասցնել* և այլն:

Աշխարհում չկա մի լեզու, որ չհարստացնի իր բառապաշարը հարևան լեզուներից վերցրած փոխառություններով: Եթե լեզուն նոր է կազմավորված և նրա բառապաշարի օտարաբանությունները ճանաչելի են, ապա այդպիսի լեզվի վիճակը այնքան էլ նախանձելի չէ. երբեմն բառապաշարի մեջ սեփականը ճանաչելու շատ քիչ բան կարող է մնալ:

Փոխառությունների կամ օտարաբանությունների նկատմամբ լեզուները տարբեր տիպերի են լինում: Սեմական լեզուների բառային կառուցվածքը ստիպում է դրանց խուսափել օտարաբանություններից, իսկ չին-տիբեթական լեզուները հազվադեպ են հանդուրժում օտար բառեր: Սակայն նույն կառուցվածքի վերոհիշյալ ցեղակից լեզուների ներսում փոխառությունները բավական հարգի են: Այսպես, օրինակ, էստոներենը հաճությամբ չի փոխառություններ կատարում հնդեվրոպական լեզուներից, բայց իր ցեղակից ֆիններենից ունի հարյուրավոր փոխառյալ բառեր: Վիետնամերենը նույնպես ընկալունակ չէ օտարաբանությունների հարցում, բայց նրա բառապաշարի մոտ 75 տոկոսը, ըստ մասնագետների հավաստման, գալիս է ցեղակից չինարենից: Այսպիսով, օտարաբանություններով կամ փոխառություններով լեզուն հարստացնելու հարցը վեր է բառապաշարի հարստացման լեզվական քաղաքականությունից, կամ՝ ընդհանրապես քաղաքականությունից. այն սոսկ լեզվական հարց է:

Հայերենի բառային ու ձևաբանական կառուցվածքը լայն հնարավորություններ է ընձեռում ազատորեն փոխառություններ կատարելու. մեր լեզվի բառապաշարը լի է այդպիսի փոխառություններով: Հայերենը դառնի շարունակ հարստացել է այդ փոխառությունների հաշվին և շարունակում է հարստանալ: Դժվար է նույնիսկ հավատալ, որ հայերենի այնպիսի բառեր, ինչպիսիք են՝ *բժիշկ, ծակատ, շաքար, կարմիր, կապույտ, սուր, պողպատ, շավիղ, քնար, եկեղեցի, մկրատ, կատու, ոչխար* և այլ բառեր

երեւմտիկ օտարաբանություններ են եղել: Բայց այս կարգի բառերից շատերը հայերենին անցել են դեռևս նրա գրական լեզու չդարձած շրջանում և խոսակցական լեզվում այնպես են ձևափոխվել, որ նրանց օտարածին լինելը հաստատել անգամ դժվար է: Հայերենը նույնպիսի բարյացակամություն չի ցուցաբերում գրական փոխառությունների նկատմամբ: Հայ գրական լեզվի համար բառապաշարի հարստացման հիմնական ուղղությունը միշտ եղել է իր սեփական բառաստեղծումը. մեր գրական լեզուն օտարաբանությունների դիմել է միայն ստիպված պարագայում, այսինքն՝ երբ չի կարողացել տվյալ օտար բառը ճշգրիտ կամ հաջող թարգմանել: Հայոց լեզվի բառակերտման դարավոր ավանդությունից և իր իսկ լեզվական կառուցվածքից բխող և կանոն դարձած այս սովորույթը օրինականացված է նաև ժամանակակից հայերենի համար՝ նախկին տերմինաբանական կոմիտեի և ՀՀ ԿԳՆ լեզվի պետական տեսչության հայերենի բարձրագույն խորհրդի որոշումներով, որոնցում օտար լեզուներից կատարվող փոխառությունները համարվում են հայերենի բառապաշարի հարստացման միջոցներից մեկը: Ըստ որում օտար լեզուներից պիտի «փոխ առնել այնպիսի տերմիններ ու բառեր, որոնց համարժեքը չկա և հայերենի բառակազմական միջոցներով հաջող կազմել հնարավոր չէ»:

Ամեն ինչ պարզ է ասված. եթե հայերենն ունի *կենսաբանություն, բանասիրություն, երկրաբանություն, գյուղատնտեսություն, հեղափոխություն, կուսակցություն, գրախոսություն, մտավորականություն, վեպ, ճառ-ճատենոց, կարծրախոս, աղեթափություն, գրագող, քերմաչափ, բարենորոգում, բարոյագետ, գրասենյակ, կերպար, մտածելակերպ* և այլն, ապա բոլորովին ավելորդ են օտար *բիոլոգիա, ֆիլոլոգիա, գեոլոգիա, ագրոոմիա, ռևոլյուցիա, պարտիա, ռեցենզիա, ինտելիգենցիա, ռոման, մալարիա, սկլերոզ, գրիժա, պլազիատոր, թերմոմետր, ռեֆորմ, մորալիստ, օֆիս, իմիջ, մենթալիտետ* ու նման բառերը՝ սրանց անհրաժեշտություն ինչպիսի ջանքերով ու մոլուցքով էլ որ արդարացվի:

Եթե հայերենը չունի և դեռ չի ստեղծել այնպիսի բառերի համարժեքներ, ինչպիսիք են *ապարատ, գրենա, կիբեռնետիկա, կվարցիտ, պրոյուկիալ, մակարոն, բիֆշտեքս, ստադիոն, ակորդեոն* և այլն, ապա, անկախ այս բառերի հայերենին հարազատ ու հասկանալի լինելու կամ չլինելու հանգամանքից, դրանք պիտի օգտագործվեն, քանի որ այդ բառ-հասկացությունների մտել են մեր իրականության մեջ, ուստի լեզվից դուրս մնալ չեն կարող: Սակայն հայերենում օգտագործել այդ բառերը բնավ էլ չի նշանակում սրանք ընդհանրապես հայտարարել անթարգմանելի: Վերը բերված մի քանի բառերից հայերենի գրությանն ու արտասանությանը ամենից անհարազատը *ակորդեոն* բառն է, բայց այդ բառը այնքան հասկանալի ու արդեն տարածված բառ է, որ դժվար թե որևէ մեկի մտքով անցնի այն հայացքներ: Սրան հակառակ, հայերենի ինչնմանն ու գրությանը շատ

հարազատ է գրեճա բառը, բայց իր անհասկանալիության պատճառով այդ գրեճա-ն իր հարևան *պրոլյուվիալ*-ի հետ մարդկանց միշտ պիտի հուշի սրանց թարգմանելիության մասին: Բոլորը լավ հասկանում են, թե ինչ բան է *ստադիոն*, բայց 16 դար է, ինչ հայերենը իր հոմանիշներով կռվում է այս բառի դեմ: Ինքերը այն թարգմանել են *ասպարեզ*, *մրցարան*, *մրցավայր*, *հրապարակ*, այժմ էլ սրանց ավելացան՝ *խաղաղաշտ*, *մրցաղաշտ*, *մարզաղաշտ* հոմանիշները: Ոչ ոք թշնամություն չունի հունարեն *ստադիոն*-ի դեմ, բայց լեզուն անում է իր գործը. հավանաբար բոլորովին նոր ստեղծված *մարզաղաշտը* ասպարեզ պիտի ելնի 1600-ամյա *ստադիոնի* դեմ՝ այն հայերենից դուրս մղելու հավակնությամբ: Դեռ երեկ անթարգմանելի համարված *կոմպլեքս*, *կորպուս*, *կուլտուրայի պարկ*, *ունիվերսազ*, *շտանգա*, *շտանգիստ*, *հանդբոլ*, *սոլիստ*, *կոլգոտկա*, *դուեստ*, *դիրեկտոր* և այլ բառեր այսօր դարձել են *համալիր*, *մասնաշենք*, *զբոսայգի*, *հանրախանութ*, *ժամրաժող*, *ժամրոդր*, *ծեռնագնդակ*, *մենակատար*, *զուգագուլպա*, *զուգերգ*, *տնօրեն* և այլն:

Այս է լեզվի զարգացման բնական ընթացքը:

2

Հայերենի բառապաշարի հարստացման հիմնական ուղին, ինչպես տեսանք, մեր լեզվի բառաստեղծման հարուստ ու բազմազան միջոցներն են: Բայց միաժամանակ տեսանք, որ այդ միջոցներին զուգահեռ հնագույն ժամանակներից մինչև օրս հավասարապես գործում է օտար ազդեցությունների կամ փոխառությունների գործոնը, որի դերը ինչքան էլ կարևոր լինի, այնուամենայնիվ տարբեր լեզուներում, նույն լեզվի տարբեր շրջանակներում, նույնիսկ բառապաշարի տարբեր շերտերում միանգամայն տարբեր է:

Որոշ համակարգի լեզուներում օտար ազդեցությունները բառապաշարի հարստացման մեջ էական դեր չունեն, այլ տիպի լեզուներում կամ նույն համակարգի լեզուների ներսում այդ գործոնը բավականին վճռական դեր ունի: Ժողովուրդների պատմահասարակական հարաբերություններից կախված՝ նույն լեզվի մի շրջանում օտար ազդեցությունները շատ մեծ թիվ են կազմում, մի այլ շրջանում՝ շատ չնչին. նայած ազդեցությունների բնագավառին ու չափին՝ բառապաշարի մի շերտում օտարաբանությունները կարող են շատ ու շատ լինել, մի այլ շերտում՝ շատ քիչ: Այս բոլորը պատմական օրինաչափություններ են, լեզվի պատմական զարգացման արդյունք, ինչպիսին կարող է լինել որևէ լեզվի զարգացումն ու բարգավաճումը կամ հետադիմումն ու ծուլումը՝ ամբողջությամբ վերցրած:

Լեզվի, նրա այս կամ այն բաղադրիչի, ասենք, բառապաշարի զարգացման օրինաչափությունների մասին խոսելիս չի կարելի անտեսել զարգացման այս պատմականության սկզբունքը, առանց որի չի կարելի պատկերացնել ոչ լեզվի զարգացում, ոչ լեզվի համակարգայնություն: Դժբախտաբար, անգամ շատ մասնագետներ բառապաշարի զարգացման մասին խոսելիս հաճախ են տարվում լեզվի մասնակի շրջաններով ու փաստերով՝ մոռանալով դրանց հետևում տեսնել ամբողջ լեզուն, լեզվի ողջ պատմական ընթացքը: Հաճախ սկզբունքային ու կարևոր հարցերը փոխարինվում են առանձին բառաձևերի ու տերմինների ընտրության վեճով, որն ավելի շուտ նախասիրության, մասնագիտացման, օտար լեզուների իմացության, լեզվական ճաշակի հարց է և ոչ թե լեզվաշինության սկզբունքային հարց:

Կան հարցի էությանն անտեղյակ մարդիկ էլ, որոնք բառապաշարի հարստացման միջոցների քննության, սեփական բառակազմական միջոցների և օտարաբանությունների դերի գնահատման հարցում իրենց սուտ ու շփոթ մտքերը ճշմարտության տեղ անցկացնելու համար, լեզվական մի քանի հարմար օրինակ ճարելուց հետո (իսկ լեզուն ցանկացած տեսությունը հիմնավորելու համար մի քանի օրինակ միշտ էլ կարող է տալ), ապավինում են անցյալի հեղինակություններին՝ դիմելով ամենակարող մեջբերումներին:

Պիտի ասել, որ լեզուն այստեղ շատ դաժան է և ոչ մի հեղինակության առջև չի ստրկանում: Ձեր մեծարած հեղինակությունն այսօր կասի, որ այսօր ոչ օտար կամ ազգային բառը անհարմար է, նրա փոխարեն այնինչ բառը պիտի գործածել, բայց հարյուր տարի հետո կպարզվի, որ լեզուն, հակառակ ձեր ապավեն գիտունի ցանկության, հենց այսօր անհարմար բառն է շարունակել գործածել և բոլորովին մոռացել է այնինչ հարմար բառը: Ուրեմն այստեղ էլ կարևորը օրինաչափության ըմբռնումն է և ոչ թե մասնակի օրինակներից կառչելը:

Դարերով վիճել են և շարունակում են վիճել, թե մայրենի բառերի կողքին որտեղ և ինչ չափով կարելի է գործածել օտար բառեր: Քանի կան տարբեր լեզուներ ու լեզվական ազդեցություններ, կլինեն և այս վեճերը: Եթե կան մարդիկ, որոնք այս թեմայի շուրջը գրում են այդ վեճերին վերջ տալու նպատակով, ապա իզուր են գրում: Սա նշանակո՞ւմ է արդյոք, թե լեզվի զարգացումը մեր կամքից ու ցանկությունից բացարձակապես անկախ է, և մեր միջամտություններն ու դատողություններն այս մասին բոլորովին ավելորդ են: Ո՛չ, իհարկե:

Լեզվաշինական ճիշտ քաղաքականությունը շատ կարևոր նախապայման է լեզվի մաքրության ու հստակության, նրա համակարգի ազգային կերպարանքի պահպանման, սրանով պայմանավորված՝ լեզվի ուսուցումը հեշտացնելու համար:

Ուրախությամբ կարելի է արձանագրել, որ հայ նոր գրական լեզվի բառապաշարի մշակման ու հարստացման մոտ հարյուրիցիսունամյա պատմաշրջանում մեր լեզվաշինարարները վարել են միանգամայն ճիշտ քաղաքականություն: Այս մեծ գործի առաջին նախանձախնդիրները հայ նոր գրականության դասականներն էին, որոնք, սկսած Արուստանից մինչև Չարենց ու Պարույր Սևակ, դավանել են մեկ հիմնական սկզբունք՝ պահպանել մեր լեզվի ազգային ձևը, հարստացնել նրա բառապաշարը իր սեփական հարուստ բառակազմական միջոցներով՝ չխորշելով նաև անհրաժեշտ օտարաբանություններից:

Նոր գրական լեզվի քառագույլ Արուստանը, ընդգծելով ռուսաց լեզվի հմացության կարևորությունը, «Վերք Չայաստանի»-ում գրում է. «Ռուսաց լեզուն մեր տերությանն ա, պետք է ամենից առավել համարինք», բայց սրանից անմիջապես հետո ավելացնում էր. «Ախր ո՞վ ա լսել, թե ծծնոր կաթը՝ մոր կաթիցը լավ ըլի: Եսքան խառը լեզվի հետ դու էլ որ քո *փորքուլիվաթսան*, *մրոքուլիվաթսան* ես խառնում, ախր դրանից ինչ համ դուրս կգա... Գիտուն, լուսավորյալ մարդը նա է, որ ամեն լեզու քանի կարա, իստակ խոսա»*:

Մեծ լեզվաշինարար Միքայել Նալբանդյանը, մի կողմից զգուշացնելով մաքրասիրության ձգտմամբ աշխարհաբարը գրաբարին ստրկացնելու, նրա անհասկանալի բառերով ու ոճերով նոր հայերենը լցնելու վտանգից, մյուս կողմից պահանջում էր հայոց լեզվի իմացություն, պահանջում էր, որ գրական լեզուն անտեղի ու անճարակ օտարաբանություններով լցված բարբառային բանավոր խոսքի աստիճանին չիջեցվի:

«Անհնար է, եթե, ինչպես ասացինք, տարապայման մաքրասիրությամբ ստրկացնենք նորան հին լեզվին. անհնար է, թե աններելի անհոգությամբ, այո՛, շատ անգամ և տգիտությամբ և առանց բնավ հայ լեզուն ուսած լինելու, անկարգ, անկանոն, ինչ որ մեր բերնին գալիս է, գրենք թղթի վրա»**:

Սակայն Նալբանդյանը չի մերժում օտարաբանություններն ընդհանրապես. նա քաջ գիտի, որ նորաստեղծ գրական աշխարհաբարը առանց այդ օտար բառերի կարող է կտրվել ժողովրդից, իսկ մյուս կողմից՝ չի կարող գիտության լեզու դառնալ: «Ամենբեժիլ ճշմարտություն է,– գրում է նա,– թե մենք իջնելով հասարակ ժողովրդի կյանքի մեջ պիտի ստիպվինք բուն թուրքի բառեր էլ ներս առնուլ, ամենօրվա կյանքի, պետքերի և հասկացությանց որպես հայտարար, ինչպես գիտական առարկաներում ստիպված ենք եվրոպական բառեր առնուլ»***: Կարծես, ուշադրություն

*Ն. Արուստան, *Վերք Չայաստանի*, 1955, էջ 99–100:

**Մ. Նալբանդյան, *Երկու խոսք (Երկերի լիակատար ժողովածու, հ. 2, էջ 400)*:

***Մ. Նալբանդյան, *Սոս և Վարդիթերի կրիտիկա* (ԵԼԺ, հ. 3, էջ 186 - 187):

դարձրիք Նալբանդյանի «պիտի ստիպվինք» և «ստիպված ենք» բառերին: Այսօր էլ այս սկզբունքը ամեն մի ազգային լեզվի բառակերտման և տերմինաստեղծման այբուբենն է: Օտար բառը վերցնում կամ վերցրածը պահում են, երբ սեփական բառը չունեն, կամ օտար բառի համարժեքը չեն կարողանում ստեղծել. սա էլ հենց այդ ստիպումնքն է, որ երկու անգամ կրկնում է Նալբանդյանը: Այս միանգամայն ճիշտ սկզբունքն են դավանել նաև մեր մյուս անվանի լեզվաշինարարները:

Իր ֆելիետոններում *ծմերուկը մեղրապուպ* շինողներին ծաղրող Ռաֆֆին «Ձաիրումարի» հերոսի բերանով ասում էր. «Հայրց լեզուն այնքան ճոխ է, որ առանց ուրիշից փոխ առնելու էլ կարող է ստեղծել յուր բառերը»*:

Պարզ չէ*, որ Ռաֆֆին կռվում էր ոչ թե օտար բառերը հայացնելու դեմ, այլ դարավոր գործածությանը հայացած բառերը թարգմանելու դեմ, ամեն կարգի անշնորհք ու սխալ թարգմանությունների, աղավաղումների դեմ:

Յովհաննես Յովհաննիսյանը գայրույթով գրում էր, թե «Շատ անգամ հայերեն գրածը, եթե ռուսերենից է թարգմանած, պիտի նորից ռուսերենի շուռ տաս, որ հասկանաս, թե ինչ է ուզում ասել գրողը»**: Միաժամանակ Յովհաննիսյանը բողոքում էր հայ լրագիր ու գիրք հրատարակողներին՝ ասելով, թե «...Ես, մի օտար լեզուներ չիմացող հայ մարդ, պարտակա՞մ եմ հասկանալ... մի զավառական փոքրիկ թերթում տպված թղթակցության մեջ *ֆալսիֆիկացիա*, *մասսա*, *միսիա*, *դևիզ*, *մոմենտ* բառերը, երբ թղթակցության մեջ էլ խոսքը տիրացուի, գյուղական գրագրի, տանուտերի մասին է»:

Ուրեմն Յովհաննիսյանն էլ պայքարում է սխալ ու անհասկանալի թարգմանության դեմ, անտեղի օտարաբանությունների դեմ և ոչ թե քարոզում է օտար բառերի անթարգմանելիության տեսությունը:

Այս հարցում շատ են չարաշահում թունամյանի հեղինակությունը: Իսկ ինչ է ասում թունամյանը: «Եվ միշտ ավելի լավ է չունեցած բառը փոխ առնել, քան ճգնել անպատճառ ստեղծել կամ թարգմանել ու ֆրակը շինել պղնձագեստ, կոտլետը՝ կողիկներ կամ ռախատ լոխումը՝ հանգստապատահ:»

Անճիշտ կամ անշնորհք թարգմանություններն ավելի շատ են վնասում լեզուն, քան ուղղակի փոխառությունը: Հաճախ կտեսնեք, որ մեզանում նույնիսկ просвещение, цивилизация, культура թարգմանում են միևնույն բառով – *լուսավորություն*»***:

*Ռաֆֆի. *Երկ. ժող.*, 1958, հ. 2, էջ 136:

**Յովհ. Յովհաննիսյան, *Հրատարակչական ընկերության վարչություն* (Երկեր, մի-հատորյակ, 1959, էջ 359):

***Յովհ. *Թունամյան, Երկերի ժողովածու*, 1951, հ. 4, էջ 374–375:

Ո՛րն է այստեղ թուճամյանի սկզբունքը. մի՞թե այն, թե «միշտ ավելի լավ է չունեցած բառը փոխ առնել», որովհետև նրա թարգմանությունը աղավաղում է օտար բառը և «ավելի շատ է վնասում լեզվին, քան ուղղակի փոխառությունը»: Եթե այս է, ինչպես կարծում են մաքրամոլության դեմ պայքարող մի քանի անհատներ, ապա ստացվում է այնպես, որ թուճամյանը քարոզում է, թե կարիք չկա ջանք թափել օտար բառերը թարգմանելու, դրանք պատրաստի կան, պիտի վերցնել և օգտագործել, ուստի անթարգմանելի են ոչ միայն *ֆրակը, կոտլետը, ռահատ լոխումը*, այլև *просвещение-ն, дивинизация-ն, культура-ն*: Բայց չե՞ն վախճնում մեր նոր օտարամոլները մեծ թուճամյանին այսպիսի անմիտ կարծիք վերագրելուց: Մի՞թե թուճամյանի գրածը մեկնաբանությունների կարիք ունի, եթե մարդիկ միտումնավոր կերպով չեն ուզում աղավաղել այն: Մի՞թե «Անճիշտ կամ անշնորհք թարգմանություններն ավելի շատ են վնասում լեզվին, քան ուղղակի փոխառությունները» արտահայտությունը չի նշանակում, թե անհրաժեշտ է օտար բառը ճիշտ թարգմանել, իսկ եթե պիտի սխալ թարգմանենք, ապա ավելի նախընտրելի է օտար բառի գործածությունը: Եթե պիտի սխալվեք, եթե չեք կարողանում բառի ճիշտ համարժեքը գտնել, ապա մի՞ ճգնեք այն անպայման հայացնել:

Զե՛ որ թուճամյանն իր այդ միտքը հենց այդպես էլ ավարտել է՝ խոսքը կոնկրետացնելով հաջող փոխառության ու ճիշտ թարգմանության վրա:

«Եվ էսպետվ.— շարունակում է թուճամյանը.— լեզվի հաջող փոխառությունն ու ճիշտ թարգմանությունը մեծապես տաղանդի ու շնորհքի գործ են դառնում, բայց, դժբախտաբար, լեզվի վրա անշնորհք մարդիկ շատ են ազդում, և հասկացող ու կիրթ ճաշակի տեր մարդկանց միայն մնում է խոսելիս թե գրելիս, փոխ առնելիս թե թարգմանելիս զգույշ լինել ու բարեխիղճ, որովհետև ամեն մի հնչյուն, ամեն մի բառ, ամեն մի ձև կամ ոճ մի մեծ ստեղծագործություն է ու մի ամբողջ աշխարհք»*:

Հարկ կա՞ շարունակելու այս վկայակոչումները: Կա՞ մեկը, որ կասկածում է, թե լեզվաշինական նույն տեսակետին չէին նաև Աղայանն ու Մուրացանը, Պարոնյանն ու Օտյանը, Տերյանն ու Շիրվանզադեն և շատ ուրիշներ: Իսկ եթե սրանց և այդ ուրիշների մեջ եղել են այլ տեսակետներ դավանողներ, այդ դեպքում նմանները ճիշտ են եղել յուրովի, կամ պարզապես սխալվել են, որը նույնպես մարդկային է:

Զե՛ր սխալվում Աղայանը, որ, կարծեք, ամփոփելով այս վեճերը, գրում էր. «Ծայրահեղ մաքրասիրությունը ծայրահեղ օտարամոլության չափ արհամարհելի է: Մեզ առաջնորդ պետք է ունենանք մեր առողջ դատողությունը, որ մեզ թելադրում է, ինչ դեպքում ինչպես պետք է վարվել: Պետք

*Չ. Թուճամյան. *Նույն տեղում*, էջ 375:

չէ մժողկներ քամել և ուղտեր կուլ տալ»*: Այսօր, երբ աշխարհով մեկ տարածվող ու ամրապնդվող տնտեսական, քաղաքական, մշակութային կապերը իրենց հետ բերում են հազարավոր օտարաբանություններ, երբ գիտության առանձին ճյուղերի զարգացումը հարյուրավոր նոր տերմինների սկիզբ է դնում, երբ տեխնիկայի ու մեքենայացման հետ ամեն օր նոր հասկացություն ու բառ է մտնում ոչ միայն արտադրություն, այլև ամեն տուն ու ընտանիք, այլևս խոսք չի կարող լինել երկու հավասար ծայրահեղությունների՝ լեզվական օտարամոլության ու մաքրամոլության մասին:

Հավասար պայքարի կոչ անել ավելորդ օտարաբանությունների և մաքրամոլության դեմ նշանակում է, իրոք, «մժողկներ քամել և ուղտեր կուլ տալ»:

Դեռ նոր էինք *կերոսինկան* թարգմանել *նավթավառի*, իսկ *պրիմուսը* չէինք հասցրել թարգմանել, երբ սրանց փոխարինելու եկան *էլեկտրասալն* ու *գազօջախը*: *Ռադիոն* այդպես էլ չթարգմանեցինք, երբ մուտք գործեցին *ռադիոընդունիչն* ու *հեռուստացույցը*: Այսպիսով հիմնական տերմինաշինությունը:

Բառապաշարի այսպիսի արագ ու բազմակողմանի զարգացումը պահանջում է համազգային ուշադրություն և հոգատարություն մեր լեզվի բառագանձի նկատմամբ: Լեզվի բառապաշարի արագընթաց զարգացումը հրամայողաբար պահանջում է բոլոր հնարավոր միջոցների գործադրմամբ բառհոսովել հայերենը իր սեփական նորակերտ բառերով ու տերմիններով: Այսպիսի համազգային նշանակություն ունեցող հարցի լուծման ճանապարհին, փորփրելով անցյալի տերմինաշինական վեճերը, հավաքելով ինչ ու նոր սխալ ու անհաջող թարգմանություններ. *պրօչգզեստ* (*ֆրակ*), *հրասայլ* (*տանկ*), *ուսողություն* (*մաթեմատիկա*), *սպասկույտ* (*շտաբ*), *հակիրճակ* (*կոնսպեկտ*), *ախոյան* (*չեմպիոն*) և այլն, որոնց մեջ նույնիսկ կան կատակի համար հորինված բառեր, սրանց ավելացնելով իրենց դուր չեկող *երգահան*, *գրոսաշրջիկ* և այլն, ոմանք ամենայն լրջությամբ փորձում են մարդկանց հավատացնել, թե որոշ անհատների ջանքերով հայերենի տերմինաշինության ասպարեզում տարվում է նաև մաքրամոլության քաղաքականություն:

Օտար բառերի ու տերմինների թարգմանությունը, անհարկի օտարաբանությունների դեմ պայքարելը յուրաքանչյուր լեզվի բառակազմական ու տերմինաշինության ներքին օրինաչափություններից բխող կանոն է, լեզվի, որպես մտածողության ազգային ձևի, փիլիսոփայական դրույթից, լեզվի հասկանալիության անհրաժեշտությունից բխող կանոն:

Տերմինաշինության այս կանոնը միայն հայերենին չէ, որ հատուկ է: Վերջին երեսուն-քառասուն տարիներին տերմինաբանական հարցերին

*Ղ. Աղայան, *Երկերի ժողովածու*, 1963, հ. 3, էջ 300:

նվիրման քննարկի փուլում և առաջ այդ սկզբունքն է քարոզվել ու հաստատվել: 1961 թվականին Խորհրդային Միությունում գումարված այդպիսի մի գիտաժողովի որոշումներում ասված է. «...Նոր տերմիններ ստեղծելիս անհրաժեշտ է, նախ ամբողջությամբ օգտագործել տվյալ լեզվի բառային ֆոնդը և բառակազմական հնարավորությունները, և, երկրորդ՝ անհրաժեշտության դեպքում փոխ առնել համապատասխան միջազգային և ռուսերեն այնպիսի տերմիններ, որոնք ավելի տարածված ու ժողովրդական են, քան տվյալ լեզվի բառանյութից անհաջող կերպով ստեղծված քիչ հասկանալի տերմինները»:

Բայց լեզվական օրենքները քրեական օրենքներ չեն, որոնց կիրառումը կախված լինի միայն կիրառողի կամքից ու իմացությունից. սրանք օրենքներ են, որոնց իրագործումը, ինչպես լեզուն ինքը, հասարակական է: Եթե կանոնը ճիշտ թարգմանելն է, ապա ինքնին հասկանալի է, որ ազգային ճիշտ ու ընդունելի տերմին ստեղծելու ընթացքում անխուսափելի են մաս սխալներն ու աղավաղումները, որոնք պիտի մղեն ճիշտ ու հարմար տերմին գտնելուն և ոչ թե օտար ոչ պակաս անհասկանալի տերմինի գործածությանը:

Ակնառու է, որ լեզվի նկատմամբ վարչական միջամտությունների անցյալի սխալ քաղաքականության վերացմամբ, որի արտահայտությունը եղավ հայերեն *հեղափոխություն*, *կուսակցություն*, *սահմանադրություն* և այլ բառերի վերականգնումը, մեր անցյալի հոգևոր ժառանգության, մասնավորապես գրաբարով ստեղծված հարուստ մատենագրության նկատմամբ հասարակական նոր վերաբերմունքի մշակմամբ, Հայաստանի Հանրապետության և սփյուռքի հայության միջև մշակութային կապերի ամրապնդմամբ, ազգային տնտեսության ու մշակույթի ընդհանուր առաջադիմությամբ բնականորեն զարգացում է ապրում հայոց լեզվի բառաշինությունը, այդ թվում նաև սեփական միջոցներով բառակերտումը: Ավելի արդյունավետ է դարձել այս ասպարեզում հայերենի բարձրագույն խորհրդի գործունեությունը:

Ունանք մտավախություն ունեն, թե տերմինների հետևողական թարգմանությունը կարող է հանգեցնել ամեն ինչ հայացնելու անօգտակար սովորույթի:

Ասում են, թե նման լեզվաշինական քաղաքականությունը կվնասի ազգային լեզվի գիտական տերմինաբանությանը, վերջինս կդառնա ներամփոփ, կկտրվի միջազգային տերմինաբանական աղբյուրից և կդատապարտվի հետադիմության:

Նախ ոչ մի դարում սեփական բառակազմական միջոցներով ստեղծված, տվյալ լեզվի գրությանն ու արտասանությանը, իր ժողովրդի մտքին ու հիշողությանը հարազատ բառերն ու տերմինները երբեք չեն խանգարել այդ ժողովրդի առաջադիմությանը:

Ո՛վ կհավատա, թե հայերեն *ջրածին, թթվածին, ծծմբաթթու, քարածուխ, երկհիմնայնություն, հաղորդիչ, բացատ, լիցքավորում, վրադիր, հողմահարում, հավասարակշռություն, ճոճանակ, քթոսկր, ակնաբույժ, լնդախտ, վիրահատություն, գեղագիտություն, գրաքննադատություն, քերականություն, լեզվաբանություն, հասարակարգ, բարոյախոսություն* և այլ գիտական տերմինները իջեցնում են մեր գիտության մակարդակը, ավելի վատ են ծառայում հայերենին, քան փոխառյալ *բակտերիա, բալանս, վինիլիտ, հիպոքլորիտ, ռեյսմուս, ռեյսֆեդեր, բուտիրոմետր, գոոզլեա, լեթարգիա, կոնտրակտուրա, դեդուկցիա, պուբլիցիստիկա, պուանտի-լիզմ, էկլեկտիզմ* և այլ տերմինները:

Փոխարինեցեք սրանք հայերեն համարժեքներով, եթե ձեր երախտավոր նախնիները կամ ժամանակակիցները ստեղծել են այդպիսիք, և կրկին կհանդգնեք մայրենի բառաձևի առավելության մեջ ոչ միայն հասկանալիության, այլև գրության ու արտասանության հարազատության առումով (բալանս – *հաշվեկշիռ*, ռեյսմուս – *խազիչ*, ռեյսֆեդեր – *զծիչ*, բուտիրոմետր – *յուղաչափ*, գոոզլեա – *մանրէակույտ*, կոնտրակտուրա – *կծկանք*, դեդուկցիա – *արտածում*, պուբլիցիստիկա – *հրապարակախոսություն*):

Երկրորդ՝ այսպես կոչված միջազգային տերմինաբանությունը, որի երբեմնի աղբյուրը միջնադարյան եվրոպայում գիտության լեզու դարձած լատիներենն էր՝ հունարենով հարստացած, այժմ այդպիսի միասնական աղբյուր չունի: Այսօր չենք գտնի մի քանի տասնյակ գիտական տերմիններ, որոնք լեզվականորեն համաշխարհային ընդհանրություն ունենան:

Մեզ համար միջազգային համարված *գաստրոնոմ, հոմոդար, վագոն, վերսիա, դիալեկտիկա, դիսերտացիա, կապիտալիստ, կարիերա, կատեգորիա, կոմունիզմ, սոցիալիզմ, ինտերնացիոնալ, պլակատ* և այլ բառերից ոչ մեկը չկա արաբերենում, սրանք բոլորն էլ թարգմանվում են:

Միջազգային տերմինաբանության հարցն այսօր ոչ այնքան լեզվաշինական, գիտական-գործնական հարց է, որքան լեզվական դիվանագիտության հարց:

Հանուն գիտության ու միջազգային տերմինաբանության տարվող օտար բառերի անտեղի գործածության քարոզը խանգարել է մեզ՝ հայերենի բառակազմական և թարգմանական հարուստ միջոցներն ամբողջությամբ օգտագործելու, թույլ չի տվել ուղիներ որոնելու տերմինակերտման ու թարգմանական դժվարությունները հաղթահարելու համար: Այսպիսի լեզվաշինական քաղաքականության դեպքում չօգտագործվող բառակազմական միջոցները գնալով կաղքատանան, և մենք կվարժվենք ամեն օտար բառ նույնությամբ գործածելուն: Փոխանակ գրքեր ու հոդվածներ գրելու բառակերտման լեզվական հմտությունների մասին, առանձին դժվար թարգմանվող խոսքի մասերի (ինչպես բայերի) ու ոճերի թարգմանական դժվարությունները հաղթահարելու, թարգմանության ենթակա

տերմիններն ու բառերը հայացնելու, գործածության մեջ եղած հոմանիշ տերմիններից ընտրություն կատարելու մասին, փոխանակ մտածելու, թե ինչպե՞ս է եղել, որ խոսակցական հայերենի ամենագործածական բառերից են դարձել երկաթուղային *պասառկա*, *պերեսառկա*, *կոմպոստիրովկա* և այլ բնագավառների մասն հարյուրավոր բառեր, մեր որոշ մասնագետներ ու տերմինաշինարարներ զբաղված են տեսականորեն վաղուց լուծված կամ բնավ չլուծվող մանր վեճերով:

Երբեմն խոսք է լինում նաև տերմինաշինության, հայոց լեզվի բառային հարստության պահպանման հայրենասիրական կողմի մասին: Մեր լեզվի բառազանձը պահպանելու և հարստացնելու քաղաքականության մեջ ու մանց դժվարանում են ջոկել իսկական հայրենասիրությունը կեղծ հայրենասիրությունից: Այստեղ արդեն դատավորը պիտի ժողովուրդը լինի: Ահա ժողովրդի մարդու կարծիքը՝ արտահայտված Մուրացանի մի հերոսի բերանով սրանից մոտ մեկ դար առաջ:

«– Անցնենք,– ասացի ես և ապա դառնալով մեր հյուրընկալին՝ հարցրի.– ո՞րին են այդ սոսիները:

– Սոսին ո՞րն ա:

– Ա՛յ, այս ծառերը:

– Բա էդ չընար ա, դու խի՞ սոսի ես ասում,– հարցրեց նա:

– Հայերեն չինարիմ սոսի կասեն,– բացատրեցի ես:

– Որ ըստեց ա, բաս չընարը թուրքերեն ա՞:

– Այո՛,– հաստատեցի ես:

Գյուղացին գլուխը շարժեց և ապա նորեն դառնալով մեզ՝ հարցրեց.

– Ես մենք որ չընարու անունն էլ հայեվար ասելը գիտում չենք, մեր ճարն ի՞նչ կըլի, հավատաս, քանի գնանք՝ էնքան էվելի հայվան կդառնանք:

– Ի՞նչո՞ւ, բարեկամ, մի բառ չիմանալով՝ մարդ հայվա՞ն կդառնա,– հարցրի ես ժպտալով:

– Աղբաթիխեր, էսօր մի բառ կմոռանանք, էգուց էրկուսը, գալ օրն իրեքը. մին էլ են ա կտեսնես, որ խոսքի կեսը հայեվար ենք խոսում, կեսը՝ թուրքեվար: Մարդ որ իրա ազգի լեզվով խոսիլը գիտա ոչ՝ հայվան չի, բա ի՞նչ ա»*:

Այսպես, ուրեմն, ժողովրդի անգրագետ մարդն անգամ գիտի, որ ամեն ոք առաջին հերթին իր ազգի լեզվով պիտի խոսի և այդ լեզվով խոսելիս էլ պետք է գործածի մայրենի լեզվի բառն ու բառաձևը և ոչ թե օտարի: Այդ նույն ժողովրդի հանճարեղ բանաստեղծն էլ նշում է, որ օտար բառը չի կարելի գործածել միայն այն դեպքում, երբ այդ բառին լիարժեք փոխարինող է ստեղծված. իսկ այդպիսի բառի ստեղծումն էլ, ինչպես ասում է

*Մուրացան, *Երկերի ժողովածու. երեք հատորով, հ. 3, Երևան, 1976, էջ 255:*

բանաստեղծը, «շնորհքի գործ է»: Այսօր այդ շնորհքը գործադրելու համար, ցանկությունից բացի, պետք է նաև հայերենի տերմինակազմության գիտական սկզբունքի իմացություն:

Ի լրումն «Հայոց լեզվի նորմավորման ընդհանուր սկզբունքները» որոշման, որը հաստատվել է դեռևս 1939 թ., տերմինաբանական կոմիտեն 1986 թ. հունիսի որոշմամբ հաստատել է նաև «Հայերենի տերմինակազմության սկզբունքները»: Սույն տեղեկատուում հրապարակված այդ որոշումից կարելի է իմանալ, «թե ի՞նչ կոնկրետ սկզբունքներով պետք է առաջնորդվել ժամանակակից լեզվի բառակազմական միջոցներով տերմիններ կազմելիս և հնարավոր բառակազմական տարբերակներից որի՞ն պետք է գերադասություն տալ»:

Յ. Խ. ԲԱՐՍԵՂՅԱՆ

ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

1. ՀԱՅՈՑ ԼԵՋՎԻ ԿԱՆՈՆԱՐԿՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ*

Արտահայտելով հայ ազգի տնտեսության, մշակույթի, գիտության և արվեստի բուն զարգացումը՝ հայերեն գրական լեզուն ինքը ևս զարգանում ու հարստանում է: Կանխելու համար զարգացման այդ բնական ընթացքի հնարավոր շեղումները, միաժամանակ նպատակ ունենալով օժանդակելու գրական լեզվի անարգել զարգացմանը՝ Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր տերմինաբանական կոմիտեն որոշում է՝

1. Նկատի ունենալով, որ լեզվի քերականությունը զարգանում է իր ներքին օրենքներով, անհրաժեշտ համարել, առանց խախտելու այդ օրենքները, կանոնարկման ենթարկել հայերենի քերականությունը հետևյալ սկզբունքներով.

ա) Հայերենի քերականության մեջ գոյություն ունեցող զուգահեռ ձևերից ընտրել այն ձևերը, որոնք բացարձակ գերակշռություն ունեն գրական հայերենում, կամ որոնք ներկայացնում են առաջադեմ միտում և նպաստում են քերականական ձևերի միօրինակությանն ու պարզեցմանը:

բ) Բացի ոճական առանձին կիրառություններից, բացառել բարբառային և գրաբարյան այնպիսի ձևերը, որոնք զուգահեռները՝ ընդունված ու համաժողովրդականները, գոյություն ունեն ժամանակակից հայերենում:

գ) Թույլ չտալ այնպիսի ձևերի գործածությունը, որոնք խորթ են հայերենի քերականական կառուցվածքին, անհարիր են համաժողովրդական լեզվական մտածողությանը, չփոքում և խեղաթյուրում են հայոց լեզվի ներքին օրենքները և խանգարում նրա զարգացմանը:

2. Նկատի ունենալով, որ հայերենի ուղղագրությունը կառավարական միջոցառումներով հիմնականում կայունացված է, բայց բնականաբար առաջացել ու առաջանում են առանձին բառերի ուղղագրության կամ առանձին կանոնների երկվություններ, անհրաժեշտ համարել՝

ա) Լեզվականորեն հիմնավորված սկզբունքներով ճշտել երկվու-

*Նախագիծը կազմել է Գ. Սևակը: Հաստատվել է տերմ. կոմիտեի 1955 թ. հուլիսի նիստում:

քյուն ունեցող կամ առարկության հանդիպող ուղղագրական կանոնները կամ առանձին բառերի ուղղագրությունը՝ առաջնորդվելով միայն հայոց լեզվի և գրի առանձնահատկություններով:

բ) Կարգավորել հայերենի կետադրության վիճելի հարցերը՝ սահմանելով քերականական օրինաչափություններից բխող կանոնները:

գ) Հայոց լեզվի արտասանության օրենքների համաձայն կանոնավորել ուղղախոսությունը, ճանաչել ու հաստատել այնպիսի կանոններ, որոնք ունեն անվիճելի որոշակիություն:

3. Նկատի ունենալով, որ հայոց լեզուն հարստանում է նորակերտ բառերով ու տերմիններով, անհրաժեշտ համարել՝

ա) Թույլ չտալ հայերեն այնպիսի տերմինների ու բառերի փոխարինումը օտար տերմիններով, որոնք համաժողովրդական գործածության մեջ են, մտնում են բառային կազմի գործուն մասի, հատկապես բառային հիմնական ֆոնդի մեջ:

բ) Հայոց լեզվի բառակազմական օրենքներով կազմել նոր տերմիններ ու բառեր, որոնք անհրաժեշտ են գիտության, կենցաղի, հասարակական կյանքի, արվեստի ու արտադրության մեջ:

գ) Հայերենի բառապաշարի հարստացման աղբյուրը հիմնականում համարել ժամանակակից հայերենի բառային հիմնական ֆոնդը և բառային կազմը. գրաբարի և բարբառների բառապաշարը՝ իբրև օժանդակ աղբյուրներ, ըստ որում, խուսափել ազգային լեզվի մեջ գործածություն ունեցող բառերը բարբառային կամ գրաբարի բառերով փոխարինելուց և կամ վերջիններս ընդհանուր լեզվի բառերի պարտադիր հոմանիշը դարձնելուց: Անհրաժեշտ չափով օգտագործել նաև արևմտահայ գրական լեզվի բառային կազմը:

4. Հաշվի առնելով, որ լեզուները փոխադարձաբար օժանդակում և ազատորեն հարստացնում են միմյանց, որ հայերենի բառային կազմի հարստանալու և բազմակողմանի դառնալու միջոցներից մեկն էլ նոր փոխառություններն են, գտնել անհրաժեշտ՝

ա) Փոխ առնել այնպիսի տերմիններ ու բառեր, որոնց համարժեքը հայերենում չկա և հայերենի բառակազմական միջոցներով հաջող կազմել հնարավոր չէ:

բ) Փոխառությունները կատարել՝ նրանց տալով հայերենի արտասանական և ուղղագրական ձև, սակայն եթե հայերենի լեզվական միջոցները հնարավորություն են տալիս, այդ դեպքում բառի հայերեն ձևավորումը ըստ հնարավորին պետք է մոտեցնել փոխատու լեզվի արտասանությանը:

2. ՀԱՅԵՐԵՆԻ ՏԵՐՄԻՆԱԿԱՉՄՈՒԹՅԱՆ ՄԿՁՔՈՒՆՔՆԵՐԸ*

Տերմինաբանական կոմիտեի դեռևս 1939 թ. ընդունած որոշմամբ սահմանվել են գիտական և գիտատեխնիկական տերմինների մշակման, մասնավորապես, գործածության մեջ դրվող նոր տերմինների համար սեփական և օտար աղբյուրների, սեփական աղբյուրների դեպքում էլ՝ բարբառների, գրաբարի և ժամանակակից գրական լեզվի բառակազմական միջոցների միջև ընտրություն կատարելու հիմնական սկզբունքները: Սակայն առկախ է մնացել այն հարցը, թե ինչ կոնկրետ սկզբունքներով պետք է առաջնորդվել ժամանակակից լեզվի բառակազմական միջոցներով տերմիններ կազմելիս և հնարավոր բառակազմական տարբերակներից որին պետք է գերադասություն տալ:

ՀԱՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր տերմինաբանական կոմիտեն առաջարկում է տերմինաբանության մեջ առաջնորդվել հետևյալ հիմնական սկզբունքներով՝

1. Ժամանակակից հայերենի բառակազմական միջոցներով, հատկապես ածանցմամբ և բարդմամբ տերմիններ կազմել միայն այն դեպքում, երբ պարզվում է, որ տվյալ տերմինային իմաստների համար հայերենում լիովին համապատասխան բառեր չկան:

2. Պատմական ժառանգորդությունը չխախտելու նպատակով լայն գործածության մեջ գտնվող տերմինները այլ տերմիններով փոխարինել միայն ամենաանհրաժեշտ դեպքերում, մասնավորապես այն դեպքերում, երբ եղած տերմինների գործածությունը կարող է առաջ բերել թյուրըմբռնում և խստորեն հակասում է տերմինների արդի իմաստներին:

3. Հաշվի առնել գիտության տվյալ ճյուղի տվյալ բնագավառում գործածվող տերմինների կապը և համակարգային փոխհարաբերությունը, իմաստային հակադրությունները, հայերեն թե փոխառյալ լիներ, բառակազմական ընդհանուր գծերն ու առանձնահատկությունները՝ համակարգի համասեռությունը չխախտելու, հետագա տերմինակերտումը միևնույն սկզբունքներով շարունակելու և ընդհանրապես այդ բնագավառի հասկացությունների համակարգի տերմինային համակարգությունն ապահովելու համար:

*Նախագիծը կազմել է Գ. Ջահուկյանը: Հաստատվել է տերմ. կոմիտեի 1986 թ. հունիսի նիստում:

4. Հաշվի առնել տերմինների աղբյուր-լեզուների համեմատությամբ հայոց լեզվի բառակազմական համակարգի առանձնահատկությունները և հնարավորությունները, միևնույն արձատներից ծագող տերմինների բառակազմական փոքրիկ ներքին կապերը, պակասող ու հավելական (նույնանիշային) օղակները և խուսափել որևէ տեսակետից առավելություն չունեցող հավելությունային ու նույնանիշ տերմինների ստեղծումը:

5. Հաշվի առնել հարակից գիտությունների տերմինային համակարգերը՝ տարբեր գիտությունների մեջ գործածվող միաբնույթ (միևնույն բառից ծագող) տերմինների միջև բացարձակ խզում առաջ չբերելու և հայերենի տերմինային տարբերակները ավելորդ կերպով չբազմացնելու նպատակով: Գիտությունների մեծ մասում գործածվող միևնույն ծագման օտար տերմինի դիմաց նոր տերմին ստեղծել միայն ամենաանհրաժեշտ դեպքերում, երբ տվյալ գիտության մեջ գործածվող իմաստը խիստ պայմանականորեն է կապվում այլ գիտությունների մեջ գործածվող համապատասխան տերմինի առաջնային (սկզբնական) իմաստին:

6. Տերմինակազմական տարբերակների հնարավորության դեպքում առավելություն տալ այն տարբերակին, որը, մնացած պայմանների հավասարության դեպքում, ավելի կարճ է և դյուրահունիչ. ընդհանրապես խուսափել խիստ երկար, բազմաբաղադրիչ և դժվար արտասանելի տերմինների ստեղծումից:

7. Խուսափել հայոց լեզվի բառակազմական նորմաներից շեղվող, բառերի կամայական ստուգաբանության վրա հիմնվող, խիստ արհեստական և անհասկանալի տերմինների ստեղծումից և տերմինային տարրերի կամայական կրճատումից:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՏԵՐՄԻՆԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԱՌԱԴԱՐՉՈՒԹՅՈՒՆ

1. ՏԵՐՄԻՆԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԱՌԱԴԱՐՉՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵԿԱՐԱՎՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նախկին ՀԽՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր տերմինաբանական կոմիտեի ավելի քան 50 տարիների գործունեության մեջ յուրահատուկ տեղ են գրավել հատուկ անունների ու անվանումների տառադարձությանն ու գրությանը վերաբերող որոշումները: Ժողովուրդների քաղաքական, տնտեսական ու մշակութային լայն մերձեցումների անընդմեջ գործընթացը մասնագիտական տերմինների հետ միասին, անձնանունների որոշ մասը, իսկ տեղանունները համարյա ամբողջությամբ, անկախ իրենց լեզվական ծագումից ու պատկանելությունից, որպես անթարգմանելի միավորներ, համաշխարհային տարածում են ստանում: Հատուկ անունների ու անվանումների տառադարձությունն ու գրությունը, այսպիսով, դառնում են ազգային լեզուների ուղղագրության և տառադարձության ուշագրավ հարցերը: Մտնելով այլ լեզուների մեջ, ինչպես ամեն բառ, հատուկ անունները և ենթարկվում են այդ լեզվի արտասանական, քերականական, իսկ գրության մեջ՝ նաև ուղղագրական օրինաչափություններին: Դրա հետևանքով էլ նույն անունը կամ տերմինը տարբեր լեզուներում հաճախ ունենում է միանգամայն տարբեր արտասանություն և գրություն: Այսպես, *Մոսկվա* տեղանունը տարբեր լեզուներում գրվում և արտասանվում է *Մասկվա*, *Մոսկուա*, *Մոսկովի*, *Մոսքովա*, *Մոսկոու*, *Մոսկու*, *Մոսխա* և այլ բազմաթիվ ձևերով: Օտար անունների արտասանական այսպիսի տարբերակումների ու այլաձևությունների առաջացումը պատմականորեն անխուսափելի է, որքան էլ լեզուներն աշխատում են փոխառյալ տերմինն ու անունը, հնարավորին չափ, փոխատու լեզվի արտասանությանը հարազատ տառադարձել:

Սույն տեղեկատուում տեղ գտած՝ հատուկ անուններին վերաբերող

որոշումներում հետևողականորեն կիրառված են անունների տառադարձության այն բոլոր գիտական սկզբունքները, որոնք միաժամանակ սահմանված են տերմինաբանական կոմիտեի և հայերենի բարձրագույն խորհրդի տերմինաշինության և տերմինակազմության ընդհանուր դրույթներում:

1. Այդ որոշումներից առաջինը, որով, մասնավորապես, կանոններ են սահմանվում փողոցների և հրապարակների հայերեն անունների վերաբերյալ, դեռևս 1956 թ. ընդունված տարբերակով սահմանում է, որ «ա) փողոցների անունները, որպես հատուկ անուններ, չեն թարգմանվում. այսինքն՝ *Այգեստան, Աղյուսագործների, Կարմիր բանակի, Անտառային* անունները ռուսերեն տառադարձվում են՝ *улица Айгестан, Агюсагорцнери, Кармир Банаки, Антараин* և ոչ թե՛ *ул. Садовая, Кирпичников, Красной Армии, Лесная*»:

Այս որոշմամբ վաղուց վերացվել է նաև նախկինում գոյություն ունեցող՝ *Արուսյան փողոց – Արուսյանի փողոց, Թումանյան փողոց – Թումանյանի փողոց* երկվությունը: Հայերենի *յան, յանց* վերջացող ազգանուններով կոչված փողոցների անուններն իրենց որոշյալի հետ գործածվելիս սեռական-տրական հոլովի վերջավորություն չեն ստանում: Ինչպես որ ասում ենք *Մոսկովյան փողոց, Երիտասարդական փողոց, Կոմկոմսի փողոց, Հանրապետության հրապարակ* և այլն, այնպես էլ ասում ենք *Արուսյան փողոց, Նալբանդյան փողոց* և այլն: Հետևաբար սրանց *ի*-ով ձևերն անընդունելի են:

2. «Վրացական տեղանունների հայերեն տառադարձության մասին» որոշումը մասնավորապես վերաբերում է վրացական տեղանունների *ի* վերջնահնչյունի գրությանն ու արտասանությանը: Ինչպես հայտնի է, վրացերենում գոյականներն ստանում են *ի* վերջավորությունը: Այդ օրինաչափությանը ենթարկվում են նաև օտար բառերն ու անունները՝ *ցիրկի, կոմունիստի, Մոսկվայի, Էրևանի, Կարապետյանի, Նովիկովի* և այլն: Վրացական տեղանունների հայերեն ավանդական գրության մեջ՝ միայն վրացերենին հատուկ այդ վերջնահնչյունը, որն, ի դեպ, վրացերենի թեք հոլովածներում էլ չի պահպանվում (*Ախալքալաքի*, բայց *Ախալքալաքմա, Ախալքալաքիս, Ախալքալաքո* և այլն), չի գրվել, որովհետև բանավոր խոսքում չի էլ արտասանվել: Վրացերենի մեխանիկական ընդօրինակումով հայերենում մի ժամանակ տարածված և այժմ էլ սխալմամբ գործածվող *Բորժոմի, Քութայիսի, Սուրամի* *ի* մասնիկով ձևերը խորթ են այդ անունների հայկական ավանդական տառադարձությանը և, բացի այդ, ավելորդ դժվարություն են առաջացնում նման անունների թեք հոլովածների գրությանն ու արտասա-

նության մեջ, այն է՝ *Բորժոմիի, Բորժոմիից, Բորժոմիում* և այլն, փոխանակ՝ *Բորժոմի, Բորժոմից, Բորժոմում*։ Նախկին տերմինաբանական կոմիտեի այս որոշումը սահմանում է վրացական տեղանունների համար պահպանել հայերենի ավանդական գրությունը, այսինքն՝ գրել առանց *ի* վերջնահնչյունի՝ *Բաթում, Բորժոմ, Ախալքալաք, Թելավ, Սուրամ, Կարզախ, Սուխում, Սցխեթ, Բութայիս* (և ոչ թե՝ *Բութաիս*) և այլն, բացառությամբ *Թբիլիսի* անունից, որի գրությունը հաստատված է Վրաստանի կառավարության որոշմամբ։ Կանոնը չի տարածված *ի*-ով վերջացող վրացական այն տեղանունների վրա, որոնք հայերենում զուգածնություն չունեն և առանց *ի* վերջնահնչյունի չեն գործածվում. օրինակ՝ *Գորի, Կախի, Փոթի* և այլն։

3-4. Տերմինաբանական կոմիտեի ընդունած «Հայոց լեզվի նորմավորման ընդհանուր սկզբունքներում» օտար փոխառությունների հիմնական աղբյուրը համարված է ռուսաց լեզուն՝ որպես նախկին Խորհրդային Միության ազգային լեզուներից ամենաառաջավոր և սրանց միմյանց և այլ ժողովուրդների մշակութային նվաճումներին հաղորդակից դարձնող լեզու։ Սակայն նույն նորմաներով միաժամանակ սահմանված է, որ ռուսերենի միջնորդությամբ փոխառվող օտար բառերի հայերեն գրության ու արտասանության մեջ պետք է հաշվի առնել նաև սրանց մայրենի արտասանությունը, ինչպես և այդ բառերի հայերեն ավանդական տառադարձությունը, եթե այդպիսին կա։ Եվ քանի որ հնագույն ժամանակներից հայերենին անցած բազմաթիվ օտար տեղանուններ և անձնանուններ հայերենում ունեն այլ տառադարձություն, քան ռուսերենում, նոր ժամանակներում ռուսերենի ազդեցությամբ առաջացել և առաջանում են այդ կարգի անունների ուղղագրական և արտասանական զուգածնություններ ու շփոթ։ Դեռևս 1958 թ., ճանաչված թարգմանիչ և բառարանագիր, տերմինաբանական կոմիտեի նախկին անդամ Վ. Փոթեյանի նախագծերով ընդունված իր երկու որոշումներում տերմինաբանական կոմիտեն ճշգրտել ու հաստատել է ռուսերենում և հայերենում տարբեր գրություն ու արտասանություն ունեցող այդպիսի մոտ 800 աշխարհագրական տեղանունների ու պատմական անձնանունների տառադարձությունը։ Այդ որոշումներում, բացի բազմաթիվ տերմինների տառադարձության ճանաչումից (օրինակ՝ *Աֆղանստան, Հանկոու, Հուանհե, Շանհայ, Շմիդի կղզի, Լուար, Սեն* (գետեր), *Չաուջիկաու, Կզըլ Օրդա* և այլն), հիմնավորվել և հաստատվել է նույն հատուկ անվան համար հաճախ մեկից ավելի ձևերի գործածությունը։ Այսպես՝ *Արաքս, Արբեջան, Թբիլիսի, Ղափան, Կոլխիդա, Պորտուգալիա* և այլ անունների կողքին պահ-

պանվել են *Երասխ, Ատրպատական, Թիֆլիս* կամ *Տփղիս, Կապան, Կողքիս, Փորթուզալիա* ձևերը՝ որպես նույն վայրի պատմական անուններ:

Պահպանելով օտար լեզուների *Անտոնիոս, Արկադիոս, Աթանաս, Բարսեղ, Գաբրիել, Հեղինե, Կյուրեղ, Լեոնիդաս, Մարկոս, Մովսես, Նիկողայոս, Պողոս, Պետրոս* և այլ ավանդական տառադարձությունները, որպես պատմական անձերի անուններ, սրանց *Անտոնի, Արկադի, Աֆանասի, Վասիլի, Գավրիլ, Ելենա, Կիրիլ, Լեոնիդ, Մարկ, Մոխսել, Նիկոլայ, Պավել, Պյոտր* ռուսական տառադարձություններն ընդունված են որպես ռուսական նոր անուններ, որոնք, իհարկե, հայերենում վերոհիշյալ պատմական անունների փոխարեն չեն կարող գործածվել: Ասել է թե՛ Պետրոս Առաջինը, որ մեզ համար ավանդական գրություն ունեցող անձնանուն է, Պյոտր Առաջինի վերափոխվել չի կարող:

Այս որոշումների ընդունման ժամանակներից անցած տասնամյակների ընթացքում դրանցում տեղ գտած որոշ անունների թե՛ օտար, թե՛ ռուսերեն տառադարձություններում կատարվել են մասնակի փոփոխություններ(Կիրովաբադ – Գյանջա, Ղափան – Կապան): Այդ փոփոխությունների հաշվառումով ներկայացվող անվանացանկերում կատարվել են որոշ խմբագրումներ. այսպես՝ *Քիրմինգամ-Քիրմինհամ, Կապիտոլիոն-Կապիտոլիում, Հավաննա-Հավանա, Հուդսոն-Հուդզոն, Վենեցուելա-Վենեսուելա, Կոպերնիկոս-Կոպեռնիկոս, Կորնելիոս-Կոռնելիոս, Վալենտին-Վալենտինոս* և այլն: ճշգրտված է նաև Սուրավայի (այժմ՝ Սուրովա) մայրաքաղաքի անվան տառադարձությունը: Այդ անվան *Քիշինև* ձևը գալիս է նրա ռուսերեն տառադարձությունից. մոլորվացիներն իրենց քաղաքն անվանում են *Քիշև*, որն էլ կլինի այդ անվան հայերեն ճիշտ տառադարձումը:

5. Ռուսերեն-հայերեն, հայերեն-ռուսերեն լեզվական փոխանցումների տառադարձության հարցը պատմական տեղանունների և անձնանունների ոլորտներով չի սահմանափակվում: Այդ իրողությունը վերջին հարյուրամյակում մեր լեզվի կենդանի գործընթացի ամենաարդիական և հրատապ լուծում պահանջող հարցերից է եղել: Ռուսերենի լայն գործածությունը որպես նախկին Խորհրդային Միության բազմազգ ժողովուրդների հաղորդակցման միջոցի և պաշտոնական լեզվի՝ պահանջ է առաջացրել մտածելու ոչ միայն այն մասին, թե հայերենը ինչպես պիտի թարգմանություններ ու տառադարձություններ կատարի ռուսերենից, այլև այն մասին, թե ինչպես պետք է թարգմանություններ ու տառադարձություններ կատարել հայերենից ռուսերեն:

Այստեղ էլ այդ հարցադրումն առաջին հերթին վերաբերում է

չթարգմանվող բառերին՝ հատուկ անուններին: Սրանց մեջ էլ տեղանունների համեմատությամբ ավելի ազատ, մասամբ էլ քմահաճ ձևափոխություններով են ներկայանում գործող անձնանունները:

Ռուսերենի և հայերենի հնչային տարբերությունները, տառադարձության որոշակի սկզբունքների բացակայությունը, եղածների ոչ հետևողական կիրառությունը, մեկ գրադարձությամբ (գրին հետևելով), մեկ տառադարձությամբ (արտասանությամբ հետևելով) կատարված փոխանցումները պատճառ են դարձել հայկական նույն անձնանվան ռուսերեն երկու և ավելի համարժեքների առաջացման: Հայերեն *Հովհաննես*-ից ածանցված *Հովհաննիսյան*-ը ռուսերենում ունի Ованесян – Ованисян – Оганесян – Оганисян, այլև Иоанисян ձևերը:

Հայկական անունների ռուսերեն տառադարձության սկզբունքների գիտական մշակման առաջին քայլերը կատարել է Ն. Վարդապետյանը՝ 1961 թ. հրապարակելով իր «Ուղեցույցը» (Н. А. Вардапетян, Справочник по русской транскрипции армянских имен, фамилий и географических названий, Ереван, 1961):

Աշխատանքը շարունակելով՝ տառադարձության ամբողջական գիտական սկզբունքներ մշակեցին և դրանք գործնական կիրառման մեջ դրին ՀՀ ԳԱ լեզվի ինստիտուտի գիտնականները (ակադեմիկոս Գ. Զահուկյան, բան. գիտ. թեկնածու Ա. Խաչատրյան): Այս հեղինակների նախագծի հիման վրա՝ տերմինաբանական կոմիտեի ընդունած «Հայկական անձնանունների ռուսերեն տառադարձության սկզբունքները» որոշմամբ՝ հայկական անձնանունները ռուսերեն տառադարձելիս հաշվի է առնվում անվան արտասանությունը (հնչույթը) և ոչ թե գրությունը: Այն է՝ Ավագ–Авак, Սարգիս–Саркис, Նվարդ–Нварт, Շնորհիկ–Шнорик և այլն: Սակայն անունների տառադարձության այս հիմնական կանոնը երբեք այն գործնական արժեքը չէր ունենա, ինչ ունի այս որոշման մեջ, եթե չլինեին որոշման մյուս կետերն ու ծանոթությունները: Հայերենի ծայնավոր և բաղաձայն հնչյունների զուգադրմամբ և սրանց արտասանական տարբերությունների դեպքում հայերեն անունը ռուսերենով արտահայտելու կոնկրետ կանոնների սահմանումով ու, որպես օրինակ, բավականին մեծ թվով անունների վկայակոչմամբ՝ այս որոշումը ձեռք է բերել ոչ միայն տեսական, այլև գործնական տեղեկատու արժեք:

6–7. Երկու այլ որոշումներով, որոնք կազմվել են նախկին կոմիտեի հաստատած՝ հայկական անձնանունների ռուսերեն տառադարձության վերաբերյալ մշակված սկզբունքների հիման վրա, գործածու-

թյան մեջ են դրվել հայերենում գործածվող անձնանունների և զագսերին հանձնարարվող հայկական անձնանունների բավականին ծավալուն ցանկեր՝ ռուսերեն տառադարձություններով, որոնց գործնական արժեքը լրացուցիչ մեկնաբանության կարիք չունի:

Կերակուրների և մթերային ապրանքների հայերեն անունների մասին ընդունված որոշումներով, որոնք գործել են ավելի քան 4 տասնամյակ, ճշգրտվել ու հաստատվել են կերակուրների, տարբեր տեսակի ուտելիքների ու մթերային ապրանքների մոտ 750 անուններ:

ա) Այդ երկու որոշումներով այնպիսի բառերի հետ, ինչպիսիք են՝ *աղցան, ապուխտ, ապուր, բաղարջ, բոգբաշ, բորանի, գաթա, ծավար, ձվածեղ, կորկոտ, խաշ, խավիժ, խորոված, խավիար, հարիսա, մրգահյութ, մուրաբա, սպաս, տոլմա, փլավ, փոխինդ* և այլն, գրական հայերենում գործածվելու քաղաքացիություն են ստացել արդեն հասարակական խոհանոց մտած ժողովրդական կերակուրների և ուտելիքի զանազան տեսակների բազմաթիվ անուններ. այսպես, օրինակ՝ *ածիկ, խաշիլ, խաշաբ, խորովու, կլոճ, կաթնով, կոլոլիկ, կաթնահունց, ճլբուր, ձվջուր, մախտխ, մշոշ, մածնաբրդոշ, նագուկ, շիլա, տիալ, քրջիկ* և այլն:

բ) Իրենց նախկին իմաստներով գործածության մեջ են մտցվել մի քանի հնացած անուններ, ինչպիսիք են՝ *արգանակ, աղանդեր, ամիճ, քարխանա, չամչարակ* և այլն:

գ) Ուտելիքի և սննդամթերքի որոշ օտար անուններ թարգմանվել են ժողովրդի մեջ դրանց մոտավոր նշանակությամբ տարածված հայերեն անուններով, այն է՝ *крупa – ծավար, лапша – արիշտա, сливки – սերուցք, каша – քաշովի, суповой набор – ապուրի այենք, дрожжи – թթմոր, пирожок – կուտապ, сироп – օշարակ, слоеный пирог – թերթերուկ* և այլն:

դ) Գործածության են հանձնարարվել ուտելիքի, կերակուրների ու մթերքների օտար անունների փոխարեն բառարաններում ու մասնագիտական գրականության մեջ վերջին ժամանակներս ստեղծված ու դեռևս լայն տարածում չստացած բազմաթիվ անուններ, ինչպիսիք են՝ *ագդրապուխտ (окорок), խոզապուխտ (ветчина), խորտկերշիկ (кобаса закусочная), քանձրապուր (суп пюре), կողամիս (антрекот), կպրօծառ (мыло детярное), ձվօծառ (мыло яичное), մանրահարինգ (кильки), մրբերշիկ (сосиски), շղարշածկնիկ (тюлька), շոգեխաշու (пастинер), չորադողիկ (сушки), սևածավար (крупa гречневая), սպիտակածավար (крупa манная), փրփրահացիկ (вафли), փքաբլիթ (пончик), քաղցրաբլիթ (пряник), օղաբլիթ (бублик)* և այլն:

ե) Այդ բառացանկերով իրենց գործածության մեջ վերահաստատված են ռուսերենից, ինչպես նաև այլ օտար լեզուներից հայերենին անցած և արդեն գործնական դարձած այս կարգի բազմաթիվ անուններ, ինչպիսիք են՝ *բատոն, բուլկի, բիֆշտեքս, գուլյաշ, դրածե, իրիս, լանգետ, կարամել, կեֆիր, կվաս, կոմպոտ, կուտում (ծուկ), մարմելադ, մոմպաս, մակարոն, շնիցել, շոկոլադ, պելմեն, չանախ, չիրթմա, պյուրե, ռազու, ռոկֆոր, սալակա (ծուկ), սոուս, վոբլա (ծուկ)* և այլն:

Համարելով կերակուրների և մթերային ապրանքների անունների հայ-ռուսերեն տառադարձությունների փուլը հաղթահարված՝ սույն տեղեկատուում տեղ է գտել կերակուրների և այլ ուտելիքների հայերեն անունների նոր համակարգված ցանկ, ռուսերեն տառադարձությամբ՝ հաստատված հայերենի բարձրագույն խորհրդի կողմից:

Հասարակական-քաղաքական և այլ մասնագիտական տերմինների հայերեն թարգմանությանը և սրանց զուգահեռ ձևերին վերաբերող որոշումների մի մասը բովանդակում է օտար կամ ռուսերեն առանձին բառ ու բառակապակցություն տերմինների թարգմանության հարցը և լրացուցիչ մեկնաբանությունների կարիք չունի: Թեև այդ որոշումները քիչ կարևորություն չունեն, քանի որ նրանցում, օրինակ, վերահաստատված է հայերեն *կուսակցություն, հանրապետություն, սահմանադրություն, խորհուրդ* (Մինիստրների խորհուրդ) և այլ բառերի գործածության իրավունքը: Վերացված են *սեսիա-նստաշրջան, քննաշրջան, նակագ-պատվիրան, ռեզլամենտ-աշխատակարգ* տերմինային զուգածությունները՝ հօգուտ հայերեն ձևերի գործածության: Ճշգրտված է ռուսերեն *парадность* բառի հայերեն թարգմանությունը և *պարադայնություն, շքամոլություն* զուգահեռաբար գործածվող ձևերի փոխարեն հանձնարարված է գործածության *հանդիսամոլություն* ավելի հարմար տերմինը: Հաստատվել է կենցաղային որոշ տերմինների հայերեն թարգմանության մի համառոտ ցանկ:

Սակայն այս շարքի որոշումների հիմնական մասը, թեմատիկ բաշխմամբ, բովանդակում է բավականին ընդարձակ տերմինային ցանկեր և, ամբողջությամբ վերցված, վերաբերում է մի քանի հարյուր բառ ու բառակապակցություն տերմինների հայացման:

Երկաթուղային մի քանի տերմինների թարգմանությանը վերաբերող որոշմամբ հաստատվել են ռուսերեն մոտ քսան տերմինի ու բառակապակցության հայերեն թարգմանություններ: Այդ թվում *ուղեբեռ* (багаж), *պահասենյակ* (камера хранения), *կայարանապետ* (начальник станции), *կայանապետ* (начальник вокзала):

Ինչպես տեսնում ենք, вокзал անվան փոխարեն չունենալով հայե-

րեն համարժեք ձև՝ կոմիտեն հարկադրված է եղել գործածել *կայանապետ* բառը: Որոշումից հետո ընկած տարիներին БОКЗДА-ի փոխարեն գործածության մեջ մտավ *կայարանատուն* բառը, ըստ որի՝ որոշման նոր խմբագրված տարբերակում *կայանապետ*-ը փոխարինվել է *կայարանատան պետ* բառակապակցությամբ:

1961 թ., Հայկական ԽՍՀ ատլասի հրատարակման կապակցությամբ, ԳԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտի աշխարհագրական բաժնի գիտնականների նախագծով, տերմինաբանական կոմիտեն հաստատել է աշխարհագրական, երկրաբանական և այլ կարգի մասնագիտական մոտ 150 բառ ու բառակապակցություն տերմին (տես 1-ին կետը):

ա) Այդ բառացանկում կան հայերեն բազմաթիվ տերմիններ, որոնք վաղուց գործածության մեջ էին և կոմիտեի այդ որոշմամբ կրկին վավերացված են՝ իրենց բուն նշանակությամբ, իսկ երբեմն էլ՝ իմաստային նոր երանգով. *դրանցից են, օրինակ՝ ագրոկլիմայական, անջրդի, առողջարան, արևափայլ, բեկորային, գինեկույթ, գերիիմքային, գորգարդյունագործություն, դարավանդ, դարատափ, ենթողդղում, հողմէլեկտրակայան, հոսք, հրաքար, ճկվածք, միաթեք, մետաղագոյացում, նմանակ, շերտախուտք, ողողատ, վրաշարժ, սարավանդ* և այլն:

բ) Հաստատված ցանկում տեղ են գտել մի քանի տասնյակ հայերեն բառաձևեր, որոնց որպես տերմիններ իրենց այս նշանակությամբ այն ժամանակ դեռևս նոր գործածության մտած կամ բոլորովին նոր գործածության հանձնարարվող բառեր էին. *դրանցից են՝ արտածին, արևացուլք, գաղթաշարժ, գետնաջուր, ենթաջերմային, երկրաջերմային, գառիկող, ժայթքային, իջույթ, իջվածք, լեռկացում, ծանրահակ, կուտակումային կամարածալ(ք), կորածալ(ք), հաստույթ, հավելուկ, մակածին, ներծին, ներմուտ, ներժայթքային, ողողահուն, ջրաջերմային, սակավաթեք, վատահողեր, վարնետուկ, վերնետուկ, տարասեռ, փոխակերպային, քարաթափվածք* և այլն:

գ) Բառացանկում հաստատված և կրկին գործածության են հանձնարարված արդեն գործածության մեջ գտնվող ոչ քիչ թվով այնպիսի օտար տերմիններ, որոնց համարժեքները հայերենում կամ չկան, կամ էլ տվյալ իմաստով չեն գործածվում. *դրանցից են՝ ալյուվիալ, անտեցեդենտ, գրադիենտ, գրենա, էներգիա, կանյոններ, կառեր, կվարցիտ, կուլեստներ, մորեններ, պրոյուվիալ, ռելիեֆ, տրոգներ, տեկտոնական, օֆուլիտային* և այլն:

դ) Ցանկի վերջում հաստատված են մի շարք բառերի ու կապակցությունների հայերեն կրճատ գրության ձևեր:

Նախկին տերմինաբանական կոմիտեի ընդունած որոշումներից երկուսը՝ «Մի շարք տերմինների զուգահեռ ձևերի գործածության միասնականացման մասին» և «Ռուսերենից և այլ օտար լեզուներից փոխառյալ բառերի *ա* վերջնահնչյունի մասին», վերաբերում են նույն հասկացության համար զուգահեռաբար գործածվող որոշ թվով տերմինների ընտրությանն ու իմաստային սահմանազատմանը: Այդ բնույթի զուգահեռությունները, լինելով գիտությունների, գրականության և արվեստների զարգացման բնական հետևանք, հայերենի մասնագիտական բառապաշարի մեջ այնքան շատ են, որ բառարանների նյութ կարող են դառնալ, և իրականում դրանց քննությունը մասնագիտական կամ տերմինաբանական բառարանագրության խնդիր է: Ինչ վերաբերում է վերոհիշյալ որոշումներում տեղ գտած բառացանկերին, ապա դրանք կազմված են երկու բոլորովին տարբեր մոտեցումներով:

Ա վերջնահնչյուն ունեցող փոխառյալ բառերի մասին որոշման նախագիծը կազմվել է բառարաններից և մասնագիտական գրականությունից քաղված ամբողջական բառացանկի հիման վրա, ուստի և այդ որոշման առաջին կետում արդեն սահմանվում է, թե *թեորեմ-թեորեմա, բոհեմ-բոհեմա, բրիգադ-բրիգադա* ու այս կարգի մյուս բոլոր զուգահեռ ձևերի մեջ որն է նախընտրելի: Ըստ կանոնի՝ *ա* վերջնահնչյունը անհրաժեշտ է պահպանել՝ ա) այն դեպքում, երբ *ա*-ի սղումը առաջ է բերում բառապատկերի աղավաղում, ուրիշ բառերի հետ նույնացման վտանգ կամ բառավերջում դժվար արտասանելի կապակցություն, օրինակ՝ *մեխանիկա, մոզաիկա, պրեմիերա* չեն կարող գրվել *ա*-ի սղումով, որովհետև կնույնանան *մեխանիկ, մոզաիկ, պրեմիեր* բառերին, որոնք միանգամայն այլ նշանակություն ունեն. *բուրժուա, անտեննա, կապելլա* տիպի բառերում *ա*-ի սղումը՝ *բուրժու, անտենն, կապելլ*. կառաջացնի բառապատկերի աղավաղում և դժվար արտասանելիություն: Բացի այս, նույն կանոնի *բ* ենթակետում թվարկվում են այն տերմինները, որոնցում *ա*-ի գրությունը դարձել է ավանդական: Դրանք թվով 24 բառ են, որոնք համեմատաբար լայն տարածում ունեն ու առանց *ա* վերջնահնչյունի՝ *էստրադ, ամեռք, պրոպագանդ* ձևով գործածվել չեն կարող:

Մնացած բոլոր դեպքերում առաջարկվում է գրել առանց *ա* վերջնահնչյունի (*աքսիոմ, բալլադ, բրիգադ, դիագրամ, լեգենդ, թեորեմ, սյուիտ* և այլն): Այս որոշմամբ վերացվում է բավականին մեծ թիվ կազմող տերմինների *ա*-ով և առանց *ա*-ի ձևերի գործածության զուգահեռությունը, ընդ որում՝ *ա* վերջնահնչյուն չունեցող ձևերի օրինականացումը ոչ միայն վերացնում է այս հարցի շուրջը վերջին տասնա-

մյակներում մշտապես շարունակվող վեճերը, այլև ընտրում է ավելի կարճ ձևեր և, փոխանակ *լեզենդա, լեզենդայի, լեզենդայում* երկար ձևերի, հանձնարարում է այսուհետև գործածել *լեզենդ, լեզենդի, լեզենդում* կարճ ձևեր:

Նույն որոշման երրորդ կետով վերացված է *ա* վերջնահանջումով կամ առանց *ա*-ի գործածվող 58 օտար բառերի ու տերմինների և սրանց հայերեն նույնանիշ ձևերի գործածության զուգահեռությունը՝ *անկետա, ապրթեմա, մետեոր, պոմադա, ֆորմուլա, ֆորսունկա* և այլ օտար բառերի փոխարեն հանձնարարելով գործածել *հարցաթերթ, հարթագիծ, ասուկ, շրթնաներկ* կամ *շրթներկ, բանաձև, բոցամուղ* և այլ մայրենի բառեր:

Այս կետով սույն որոշումը լրացնում է «Մի շարք տերմինների զուգահեռ ձևերի գործածության միասնականացման մասին» որոշումը և, կազմված լինելով վերջինիս սկզբունքներին համապատասխան, ենթակա է նույն կարգի պարզաբանման:

Տերմինաբանական կոմիտեի՝ բառերի ու տերմինների զուգահեռ ձևերի գործածության միասնականացման մասին որոշումը, ի տարբերություն *ա* վերջնահանջում ունեցող բառերի մասին ընդունած որոշման, ունի սահմանափակ թվով բառերի ու տերմինների ընտրովի ցանկ:

Այս դեպքում բառացանկը կազմված է այնպիսի բառերից ու տերմիններից, որոնք մեր քաղաքական-հասարակական առօրյայում, մամուլում, ռադիոյի և հեռուստատեսության հաղորդումներում ամենօրյա գործածություն ունեն, և սրանց զուգահեռ ձևերի առկայությունն ու դրանց խառը, երբեմն շփոթ, գործածությունը հարցի լուծում էին պահանջում: Որոշումը վերաբերում է քաղաքական, վարչական, դիվանագիտական, արվեստի, ճարտարապետության, շինարարության ու սպորտի որոշ թվով տերմինների: Ինչպես հայտնի է, տերմինների զուգահեռ ձևերից ընտրությունը կատարելիս առաջին հերթին հաշվի են առնվում տերմինի հասկանալիությունը կամ հասկացություն արտահայտելու նրա հստակությունն ու ճշգրտությունը, ապա՝ գործածության հաճախականությունը, տերմինակազմության մեջ նրա արտադրողականությունը, կարճությունը, բարեհնչունությունը և այլն: Միևնույն տերմինի նույնանիշ ձևերի զուգահեռ գործածությունը լեզուն հանդուրժում է այնքան ժամանակ, քանի դեռ այդ ձևերի իմաստային վերջնական ճշգրտման և օտար բառի փոխարեն մայրենի ձևի տարածման և ամրապնդման ընթացքը լրիվ չի ավարտվել: Ահա թե ինչու, ինչպես միշտ, այնպես էլ տերմինաբանական կոմիտեի այս որո-

շումներում արտացոլված է տերմինագործածության այդ բնական ընթացքը, և եթե շատ տերմինների զուգահեռ ձևերից գործածության է հանձնարարված միայն մեկ ձև, օրինակ՝ *անկետա, հարցաթերթ(իկ) – հարցաթերթ(իկ)*, *բլոկադա, շրջափակում, պաշարում, համապաշարում – շրջափակում*, *էքստրեմիստ, ժայրահեղական – ժայրահեղական*, *կոմպրոմիս, փոխզիջում – փոխզիջում*, *պանորամա, համայնապատկեր – համայնապատկեր*, *պրիզմա, հատվածակողմ – հատվածակողմ*, *ֆիլիալ, մասնաճյուղ, բաժանմունք – մասնաճյուղ* և այլն, ապա հաճախ էլ փոխառյալ օտար մեկ տերմինի դիմաց հայերենում հանձնարարվում է գործածել երկու և ավելի տերմին, օրինակ՝ *դեմոնստրացիա – 1. ցույց, 2. շքերթ, 3. ցուցադրում*, *էկոնոմիկա – տնտեսություն, էկոնոմիկա. էսթետիկա – գեղագիտություն (էսթետիկա)* և այլն:

Սա նշանակում է, որ վերոհիշյալ տերմինների զուգահեռ գործածությունը լեզվում կամ անհրաժեշտություն է պայմանավորված տերմինի իմաստային տարբերակվածությամբ, կամ էլ միասնականացման դեռևս չավարտված ընթացքի հետևանք է: Հրապարակված որոշումներում համանիշ տերմիններից գործածության հանձնարարված երկու և ավելի ձևերը, ինչպես ցույց են տալիս բերված օրինակները, կամ համարակալված են, կամ բերված են հաջորդականությամբ և կամ էլ վերջին ձևը առնված է փակագծերի մեջ: Սրանցից յուրաքանչյուրը տերմինի տվյալ ձևի իմաստային անկախության և գործածության տարածվածության տարբեր աստիճանները որոշող սահմանազատում է: Եթե հանձնարարվող ձևերը համարակալված են, նշանակում է հայերենը տվյալ բնագավառում վերացրել է օտար տերմինի բազմիմաստությունը և առանձին նշանակությունների համար գործածում է տարբեր բառեր, որոնք իրար փոխարեն այդ տարբերակված նշանակություններով այլևս գործածվել չեն կարող: Այսպես, ասում ենք՝ *Փարիզի երկաթուղայինների ցույցը, մայիսմեկյան շքերթ, հայկական ֆիլմերի ցուցադրում*: Ռուսերենը այս բոլոր կապակցություններում *ցույց, շքերթ, ցուցադրում* բառերի փոխարեն կարող է գործածել *դեմոնստրացիա*, մինչդեռ հայերենում, առանց այդ կապակցությունների բովանդակությունը փոխելու, այս բառերը փոխատեղել չենք կարող: Այսպես էլ՝ *ճա իր միսիան կատարեց, և ճա զինվորական միսիայի անդամ է հայերենում կլինեն՝ ճա իր առաքելությունը կատարեց, և ճա զինվորական ներկայացուցչության անդամ է*: Նման տարբերակում կա համարակալմամբ ներկայացված մյուս տերմիններում: Փոխառյալ *կոնկուրս* բառին զուգահեռ այդ նշանակությամբ հայերենում գործածվում էին նաև *մրցույթ* և *մրցանակաբաշխություն* բառերը: Քա-

նի որ *մրցանակաբաշխություն*-ը գործածվում է ոչ միայն կոնկուրսի (մրցույթի), այլ նաև իր բուն նշանակությամբ, այսինքն՝ իբրև *մրցանակներ բաշխելը՝ հանձնելը*, *մրցանակաբաշխության արարողությունը*, բացի այս, *մրցույթ*-ը կարճ է, *կոնկուրս*-ի նշանակությամբ հանձնարարվում է գործածել *մրցույթ* (քաղաքական երգի մրցույթ, որևէ պաշտոնի համար հայտարարված մրցույթ), իսկ *մրցանակաբաշխությունը՝* գործածել իր բուն նշանակությամբ (քաղաքական երգի համար անցկացված մրցույթի մրցանակաբաշխության արարողությունը կլինի այսօր):

Պարկ բառի փոխարեն տարբեր՝ իմաստներով գործածում ենք՝ 1. *պուրակ*, *զբոսայգի* (Չաղթանակի զբոսայգի), (Սևանի ազգային պուրակ), 2. (մեք.) *համակազմ* (տրակտորային համակազմ, հաստոցների համակազմ), 3. (տրանսպ.) *հավաքակայան* (տրամվայի հավաքակայան, պարկ). *սխեմա*-ի փոխարեն 1. *ուրվագիծ*, *սխեմա* (զեկուցման ուրվագիծ, սխեմա), 2. *գծապատկեր* (նախադասության կառուցվածքի կամ խոսքի մասերի գծապատկեր). *տրանշե*-ի փոխարեն 1. *խրամ* (կրակակետերը միանում էին խրամով), 2. *առվափոս* (սիլոսի առվափոս), 3. *խրամուղի* (բերդը խրամուղով կապված էր գյուղին) և այլն:

Իմաստավորված այս տերմինների շարքում հաճախ իմաստի նեղացմամբ շարունակում են գործածվել նաև փոխառյալ բառերը:

Կոմիտեի հաստատած բառացանկում որոշ դեպքերում թարգմանված ձևերի կողքին փոխառյալ տերմինների (գալերա, կլոակա, սիբիլա, քիմեո, ֆալանգ) զուգահեռ գոյությունը պայմանավորված է վերջիններիս նախկին նշանակությամբ, իբրև պատմական անվանում, գործածվելու առանձնահատկությամբ: Այսպես, օրինակ, *գալերա* թարգմանվում է *թիանալ*. միջնադարում այսպես էին անվանում ռազմանավերը, որոնք թեև թիակներով էին վարվում, բայց խոշոր նավեր էին, ուստի այս նախկին նշանակությամբ *գալերա*-ն սովորական թիանալ չէ և թարգմանվել չի կարող: *Սիբիլա* թարգմանվում է *գուշակուհի*, բայց երբ այդ տերմինը գործածում են հին Հունաստանի և Հռոմի ժամանակաշրջանի համար, որտեղից ծագում է այդ անունը, իբրև պատմական անվանում, չեն թարգմանում: *Ֆալանգ*-ը մեր նախնիները գործածել են *փաղանգ* ձևով՝ *գորագունդ*, *գորաբանակ* նշանակությամբ: Այդ նշանակում է նաև մորմ (թունավոր սարդի մի տեսակ), բայց երբ *ֆալանգ*-ը գործածում են նախկին նշանակությամբ՝ որպես հունական գորամիավորի անվանում, չեն թարգմանում: Այս կարգի անվանումները որոշման մեջ ունեն *պատմ.* կրճատ նշումը:

Փոխառյալ որոշ թվով տերմինների դիմաց քննարկվող որոշումներում գործածության են համծնարարված երկու, հազվադեպ նաև երեք տերմիններ, որոնք բերվում են կողք կողքի, առանց համարակալման: Դրանք այն ձևերն են, որոնցում կամ իմաստային տարբերակումը դեռևս ավարտված չէ, և դրանք իրար փոխարեն կարող են գործածվել, կամ էլ առաջարկվող հիմնական տերմինի փոխարեն առանձին կապակցություններում ու ոճերում գործածվում է երկրորդ ձևը միայն: Սրանցում գործածության համծնարարվող հիմնական տերմինը առաջինը հիշատակվածն է, երկրորդը մնում է առանձին կապակցություններում և ոճերում, երբեմն էլ՝ այլ նշանակություններով:

Հաստատված բառացանկերում որոշ բառերի զուգահեռությունների թույլատրումը պայմանավորված է նրանով, որ այդ բառերը, բացի իրենց տերմինային գործածությունից, կարող են գործածվել իբրև սովորական բառեր. այդպիսի զուգահեռներ են, օրինակ, *հողակտոր-հողաբաժին*, *կլոր որդ-կլոր ճիճու*, *հնացածություն-լնացածություն*, *ցայգերգ-գիշերերգ-սերենադ* և այլն: Սրանք, բացի համապատասխանաբար տնտեսագիտական, կենսաբանական, հասարակագիտական, երաժշտական տերմիններ լինելուց, նաև սովորական գործածության բառեր են, և նրանցից, իբրև ընդհանուր գործածության բառերից, ընտրություն կատարել և երկուսից մեկը գործածությունից հանել չէր կարելի:

Զուգահեռաբար գործածվող համանիշ տերմիններից մի քանիսի համար գործածության համծնարարված տերմինների ու բառերի կողքին փակագծերում բերված ձևերը կամ գործածությունից արդեն դուրս եկող, կամ էլ փոխառյալ բառի հետ մրցակցության մեջ տարածման հեռանկար չունեցող ձևեր են: *Բարոյագիտություն (էթիկա)*, *գեղագիտություն (էսթետիկա)*, *համալիր (կոմպլեքս)*, *համալիրային (կոմպլեքսային)* զուգահեռություններում փակագծերում առնված օտար անվանումները դառնում են ավելորդ, բայց քանի որ առանձին կապակցություններում, երբեմն էլ որոշ նպատակով դեռևս գործածվում են, թողնված են փակագծերում: Այս դեպքում փակագծում առնված ձևերը մնում են տվյալ օտար բառի կամ տերմինի առանձին իմաստների թարգմանության համար միայն:

Բառապաշարին վերաբերող այս որոշումներում միաժամանակ լուծված է մի քանի տերմինների գրության և արտասանության միօրինակացման հարցը:

Դրսից օտար լեզվով մեր հանրապետություն եկող ամենօրյա տեղեկությունները նախ մտնում են Արմենպրես: Ահա թե ինչու տերմինա-

բանական կոմիտեին ներկայացված թարգմանական բառացանկերի ու որոշումների նախագծերի կազմման աշխատանքներին մշտապես ակտիվորեն մասնակցել են Արմենպրեսի թարգմանչական բաժնի աշխատակիցները: Վերջիններիս կազմած նախագծերով տերմինաբանական կոմիտեն ընդունել է ռուսերեն և այլ օտար տերմինների ու տերմինային բառակապակցությունների հայերեն թարգմանության վերաբերյալ երկու որոշում: Սրանցից առաջինով կոմիտեն հաստատել է 40 ռուսերեն և այլ օտար հասարակական-քաղաքական, գիտատեխնիկական և մարզական տերմինների հայերեն թարգմանությունը: Ընդ որում օտար *դեպոզիտար, ինֆրաստրուկտուրա, պրեմիա, անկլավ, ատոլ, դեֆլիացիա, դիսպլեյ, պերֆորարտ, պլանետարիում, ռեկուլտիվացիա, սերպենտարիում, սպլեդոլոգիա, տրենաժոր, շտամ անհասկանալի, ուղղագրական և արտասանական դժվարություններ հարուցող, մասամբ բազմիմաստ ու անորոշ տերմինների փոխարեն համապատասխանաբար գործածության են հանձնարարված հայերեն պայմանագրապահ, ենթակառուցվածք, պարզևավճար, միջտարածք, օդակղզի, տերևազերծում, տեսատիպ, սորաքարտ, 1. երկնացույց, 2. երկնացուցարան, մշակելիացում, օձաբուծարան, անձավագիտություն, մարզոց, մանրէափմբ, նույնիսկ առանց սահմանումների ու բացատրությունների հասկանալի ու մտապահվող նորաստեղծ տերմինները:*

Այդ որոշումը ճշգրտում է մտցնում կամ նոր թարգմանություն է առաջարկում ռուսերեն մի շարք տերմինների վերաբերյալ. այսպես, օրինակ՝ *вещизм — իրամոլություն, выборщик — քվեատու, детопатизация — թրթրադամացում, имперский — կայսերապետական, контр-адмирал — դերծովակալ, распродажа — սպառավաճառք, теплофикация — ջեռավորում, выездка — ծխամարզություն* և այլն:

Երկրորդ որոշմամբ հաստատված է ռուսերեն 23 տառակապացության հայերեն թարգմանությունը: Այդ թվում լայն տարածում ունեցող և հաճախակի գործածվող այնպիսի տերմինային կապակցությունների թարգմանությունը, ինչպիսիք են՝ *беседа один на один — առանձնազրույց, военный контингент — զորակազմ (զորախումբ), государственная приемка — պետընդունում, знак лауреата — դափնենշան, покоритель космоса — տիեզերանվաճ, проходная пешка — անցումակ զինվոր, эстафетный бег — փոխանցավազք* և այլն:

Տերմինաբանական կոմիտեի այս շարքի վերջին որոշումը վերաբերում է միջազգային տեղեկատու նյութերում գործածվող քաղաքական, տնտեսագիտական, ռազմական որոշ ռուսերեն և այլ օտար

տերմինների հայերեն թարգմանությամբ: Այդ որոշմամբ հաստատվել է 27 բառ ու բառակապակցություն տերմինի թարգմանությունը. վերացվել են դրանց թարգմանություններում գոյություն ունեցող առանձին զուգաձևությունները: Օտար *այլանս, դևալվացիա, էմիսար, կոմպետենտ, կոնտակտ, մոտիվ, պոլիգոն, ռեալ, ռեզենտ, ստատուս, սուվերեն* տերմինների փոխարեն համապատասխանաբար գործածության են հանձնարարված հայերեն *դաշինք, արժենվազում, հանձնակատար, 1. իրազեկ, 2. իրավասու, 1. շփում, 2. կապ, առնչություն, 3. հպում, 1. շարժառիթ, 2. պատճառաբանություն, զինափորձարան, իրական, խնամակալ (գահապահ), իրավիճակ (կարգավիճակ), ինքնիշխան* նախընտրելի և իմաստով տարորոշված տերմինները:

Այդ որոշմամբ հայերեն տարբերակված են *պայմանագիր* և *դաշնագիր, անդրազգային ընկերություններ* (транснациональные компании) և վերազգային ընկերություններ (наднациональные компании) և այլ տերմինային հասկացությունները:

Մաթեմատիկական, տեխնիկական, ֆիզիկայի տերմիններին վերաբերող որոշումների հիմնական մասը, որ հաստատել է տերմինաբանական կոմիտեն, մաթեմատիկական տերմինների մասին ընդունած որոշումներն են:

Շարունակելով միջնադարյան հայ մաթեմատիկոսների տերմինաչինական լավագույն ավանդույթները՝ մեր ժամանակակից մաթեմատիկոսները, իրենց նախորդների՝ տերմինակազմական տարբեր եղանակներով ստեղծած *թվաբանություն (համարողություն), հանրահաշիվ, երկրաչափություն, հարթաչափություն, տարածաչափություն, եռանկյուն, բազմանկյուն, զուգահեռ, բազմանիստ, զուգահեռանիստ* և այլ տերմիններին ավելացրել ու ավելացնում են սեփական ստեղծածները: Հայկական ԽՍՀ նախկին լուսավորության և բարձրագույն ու միջնակարգ մասնագիտական կրթության մինիստրություններին կից 1977 թվից գործող մաթեմատիկական տերմինների հանձնաժողովի ու նրա նախագահի, պրոֆ. Վ. Սաղաթեյանի ակտիվ գործունեության շնորհիվ տերմինաբանական կոմիտեն 1974-1987 թթ. ընթացքում ընդունել է մաթեմատիկական տերմիններին վերաբերող վեց որոշում, որոնցից երկուսը տեղեկատու են մտցվել առաջին անգամ: Այդ որոշումներում հայերենացված կամ ճշգրտված ու վերահաստատված են 300-ից ավելի բառ ու բառակապակցություն տերմիններ: Կոմիտեի ընդունած այդ որոշումներով վերացված են մաթեմատիկական նույն հասկացության համար գործածվող հայերեն և օտար բազմաթիվ տերմինների զուգաձևությունները: Հայերենով չստուգաբանվող, դժվար

արտասանվող ու գրվող, դժվարընկալելի, ուստի և դժվարհիշելի *դե-տերմինանտ, դիսկրիմինանտ, կոլինար, կոմպլանար, կոնգրուենտ (կոնգրուենտություն), պրիզմա, սիմետրիա, սիմետրիկ..., սֆերա, սֆերիկ..., տետրաէդր* և այլ օտար տերմինների փոխարեն համապատասխանաբար գործածության են հանձնարարված *որոշիչ, տարբերիչ, համագիծ, համահարթ, համընկնելի (համընկնելիություն), հատվածա-կողմ, համաչափություն, համաչափ..., զնդային մակերևույթ, զնդա-յին..., քառանիստ* հայերեն տերմինները:

Վերոհիշյալ 5-10 տարիների ընթացքում հունա-լատինական նախածանցներով կազմված տասնյակ տերմինների համակարգային-ամբողջական բարգձմանության նպատակով կատարված աշխատանքները հանգեցին մասնակի արդյունքի: Պարզվեց, որ հայերենի համապատասխան նախածանցներով այդ օտար տերմիններին համարժեք տերմիններ ստեղծելը տերմինակազմության չհաղթահարվող դժվարությունների հետ է կապված: Հայերեն համազոր *համա, միա, նման, նույնա* և այլ նախածանցները իմաստով իրար այնքան մոտ են, որ մաթեմատիկական վերացական և իմաստային նուրբ տարբերու-թյուններ ունեցող օտար տերմիններին համարժեք հայերեն տերմին-ներ ստեղծել չեն կարող: Հարկադրաբար առայժմ մասնագետները բավարարվել են այս կարգի տերմինների մի փոքր մասի հայացմամբ. այսպես՝ *կոռեկտ* (ած.), *կոռեկտություն, կոմպակտ* (ած., գոյ.), *կոմ-պակտություն, մոնոտոն* (ած.), *իզոտոն* (ած.), *անտիտոն* (ած.) և այլ օ-տար տերմինների ու սրանցից ածանցված ձևերի փոխարեն համա-պատասխանաբար գործածության են հանձնարարվել *ճշտորոշ* (ած.), *ճշտորոշություն, սերտ* (ած.), *սերտույթ* (գոյ.), *սերտություն, միընթաց* (ած.), *նույնընթաց* (ած.), *հակընթաց* (ած.) և այլ հայերեն նորակազմ կամ պատճենված տերմինները:

Մաթեմատիկական տերմիններին վերաբերող որոշումներում հա-ճախ ընտրություն է կատարված տերմինների հայերեն մի քանի զու-գածություններից՝ նախապատվությունը տալով տերմինի հասկա-ցությունը առավել ճշգրիտ անվանող ձևին: Այսպես՝ *զուգահեռագիծ–զուգահեռակողմ, թվարկություն–թվականություն–թվագրություն–թվակարգություն, տասնավորներ–տասնյակներ–տասեր, հաշվում–համրում–հաշվանք–դիտանք–հաշվարկ–հաշվարկում* և այլն ձևերից գործածության են հանձնարարված *զուգահեռակողմ, թվարկություն, տասնավորներ, հաշվում* և այլն ձևերը: Տասնյակ դեպքերում վերաց-վել է ռուսերեն տերմինների անխախտուսելի բազմիմաստությունը՝ դրանցից յուրաքանչյուրի տարբերակված հասկացության համար

գործածության հանձնարարելով հայերեն առանձին տերմին, այսպես օրինակ размер — չափ (որևէ բանի), օրինակ размер зарплаты — աշխատավարձի չափը, 2. չափս (որևէ բանի չափը որոշող տվյալների ամբողջությունը), օրինակ размеры комнаты — սենյակի չափսերը (երկարության և բարձրության չափերը): Դմնտ. նաև модуль-ի թարգմանությունը, որի մեջ հայերեն երկու նշանակությունների (1. բացարձակ մեծություն, մեծություն, երկարություն..., 2. գործակից...) կողքին օտար մոդուլ տերմինը շարունակում է պահպանվել՝ իմաստի նեղացմամբ՝ որպես «3. ելակետային ընդհանուր միավոր ծառայող չափ կամ թիվ» (թվերի տեսության, ճարտարապետության, մեքենաշինության մեջ), քանի որ այս իմաստի համար հայերենը սեփական բառածն դեռևս չունի:

6. Նոր ժամանակների տեխնիկական առաջընթացն իր հետ բերում է տեխնիկական տերմինաբանության աննախադեպ զարգացում: Տերմինաբանական կոմիտեն մի առանձին որոշումով ճշգրտել է տեխնիկական մոտ 70 բառ ու բառակապակցություն տերմինների հայերեն տառադարձությունը: Պահպանելով տերմինների բառակազմական միասնության ու համակարգայնության, կարծության ու հասկանալիության սկզբունքները՝ գործածության են հանձնարարվել նորակազմ բազմաթիվ տերմիններ: Ռուսերենում аѐт արմատով կազմված և մինչև հիմա ռուսերենից հայերեն անհաջող բառակապակցություններով թարգմանված տերմինների փոխարեն գործածության են հանձնարարված թռչող մարմինների և սարքերի թռիչքի տարբեր պահերն ու աստիճաններն արտահայտող վերթիռ, արտաթիռ, ներթիռ, անցաթիռ և այլն տերմինները: Ռուսերենում ход արմատով կազմված տերմինների դիմաց գործածության են հանձնարարված առմուտ կամ վայրէջքամուտ, արտանկում, падб արմատով կազմված մետաղաձուլական նշանակություն տերմինների դիմաց՝ հալում, հալք, երեսահալում, շրջահալում, հալույթ, համահալվածք, մետաղի ստանձակում, թեժամշակում, ջերմամշակում և այլն տերմինները:

7. Խորհրդային Միությունում ֆիզիկական մեծությունների միավորների միջազգային համակարգին անցնելու կապակցությամբ, ինչպես նաև հայերենում այդ միավորների կրճատ գրությունը միջազգային ստանդարտներին համապատասխանեցնելու և դրանց գրության զուգաձևությունները վերացնելու նպատակով՝ տերմինաբանական կոմիտեն 1981 թ. սեպտեմբերի նիստում հաստատել էր այդ կրճատ նշանակումների նոր ձևերը: Սակայն 1982 թ. հունվարի 1-ից Խորհրդային Միությունում գործածության մեջ է դրվել պետական նոր ստանդարտ

միայն իրականացվում է փոխառյալ բառի հայերեն ճիշտ տառադարձումը: Չնայած սահմանված որոշակի կանոնների (այսպես՝ «1. Անգլերենի *p, t, k*-ն և *k* արտասանվող *c*-ն տառադարձել բառասկզբում *փ, թ, ք*, մնացած դիրքերում՝ *պ, տ, կ...*», «2. Որպես մեկ խուլ բաղաձայն արտասանվող անգլ. *ch, ck, th* տառակապակցությունները տառադարձել *չ, կ, ք...*», «4. Անգլերեն *w(h)*-ն տառադարձել (հատկապես բառասկզբում) *ու* (ընդ որում՝ *wa*-ն՝ *ուտ*)...», «5. *U*-ի և *t*-ի միջին արտասանություն ունեցող անգլիական *a*-ն տառադարձել *ա...*» և այլն) ու վկայակոչված բավականաթիվ օրինակների՝ այդ կանոնների գործածության ոլորտները ճշգրտող լրացուցիչ սահմանափակումները, սրանցից հետո թվարկվող բացառություններն ու ավանդական տառադարձություն ունեցող շեղումները, մասնավոր անգլերենի չտիրապետող մարդու համար, դժվարացնում են կասկածելի տառադարձությունը ճշտելու փորձերը:

3. Հունական ծագում ունեցող բառերի տառադարձության մասին ընդունած նոր որոշումը, ի տարբերություն 1939 թ. որոշման, որտեղ երևույթը քննված է ընդհանուր առմամբ, կանոնը մասնավորում է հունական ծագման բառերի վերաբերյալ՝ հաշվի առնելով այդ կարգի տերմինների տարածվածությունն ու նոր հավելումների իրողությունը:

Առաջարկված է հունական ծագման *φ, θ, χ* (լատ. *ph, th, kh, ch*) հայերեն տառադարձել *ֆ, թ, խ* (*Ֆաներ, Ֆոսֆոր, թեորեմ, թեմա, խարտիա, մեխանիկա* և այլն)՝ իբրև շեղում պահպանելով ավանդական գրություն ունեցող *փասիան, փյունիկ, քարտուղար, քղամիդ, քառս, քիմիկոս, քլոր* և այլն բառերում *փ, ք*-ն *ֆ, խ*-ի փոխարեն:

4. Օտար և ռուսերեն բառերի կրկնակ բաղաձայնների տառադարձությանը վերաբերող որոշմամբ վերահաստատված է դրանք (կրկնակ բաղաձայնները) հայերենի արտասանության համաձայն մեկ բաղաձայնով տառադարձելու ընդհանուր կանոնը (*այեգրո, ակորդ, ամիակ, կոմունա, կոլեգիա* և այլն); կրկնակ բաղաձայններ հայերենում պահպանվում են միայն այն դեպքում, երբ դրանք ունենում են ուժգին կամ տևական արտասանություն (*բրուտտո, կապելլա, մասսա, էմմա, վաննա* և այլն):

5. Ճշգրտվել են կենդանիների որոշ անվանումների զուգաձևություններ:

II. ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

Ա. ՀԱՏՈՒԿ ԱՆՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԻ ՏԱՌԱԳԱՐՉՈՒԹՅԱՆ ՈՒ ԳՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

1. ՓՈՂՈՑՆԵՐԻ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿՆԵՐԻ ՀԱՅԵՐԵՆ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ*

1. Փողոցների և հրապարակների բաղադրյալ անունների գոյական կամ գոյականական բառակապակցություն լրացումը փողոց, պողոտա կամ հրապարակ լրացյալի հետ, որպես կանոն, գործածվում է սենական-տրական հոլովածով. օրինակ՝ Բակունցի փողոց, Արցախի փողոց, Ծերեթելու փողոց, Մաշտոցի պողոտա, Պուշկինի փողոց, Չարենցի փողոց, Բաֆֆու փողոց, Տպագրիչների փողոց, Աղբյուր Սերոբի փողոց, Հրաչյա Քոչարի փողոց, Տիգրան Մեծի պողոտա, Արշակունյաց փողոց, Մայիսի 9-ի փողոց, Գարեգին Նժդեհի հրապարակ, Համրապետության հրապարակ և այլն:

2. Փողոցների և հրապարակների բաղադրյալ անունների՝ -յան և -յանց ածանցներով կազմված ազգանուն լրացումը փողոց, պողոտա կամ հրապարակ լրացյալի հետ գործածվում է ուղղական հոլովածով. օրինակ՝ Աբովյան փողոց, Թումանյան փողոց, Սուրենյանց փողոց, Ալեք Մանուկյան փողոց, Հակոբ Պարոնյան փողոց, Մարշալ Բաղրամյան պողոտա, Շահումյան հրապարակ:

Ծանոթություն: Փողոցների և հրապարակների բաղադրյալ անունների իմջպես գոյական, այնպես էլ ածական լրացումները (Հանրապետության հրապարակ, Տպագրիչների փողոց, Երիտասարդական փողոց, Անտառային փողոց, Առափնյա փողոց, Մայիսյան փողոց, Մոսկովյան փողոց և այլն)՝ իբրև հատուկ անուններ այլ լեզուներով գործածվելիս չեն թարգմանվում:

*Նախագիծը կազմել է Հ. Բարսեղյանը:

Հաստատված է ՀՀ լեզվի պետական տեսչության պետի 1997 թ. ապրիլի 11-ի հ. 293 հրամանով: [Ապա նաև՝ 2000 թ. փետրվարի 1-ի հրամանով:]

2. ՎՐԱՅԱԿԱՆ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԵՐԵՆ ՏԱՌԱԳԱՐՉՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ*

Բացառությամբ *Թբիլիսի* անվան, որի գրության վերաբերյալ կա կառավարական առանձին որոշում, վրացական մյուս տեղանունների համար պահպանել հայկական ավանդական գրությունը, այսինքն՝ գրել առանց *ի* վերջնահնչյունի. այն է՝ *Թբիլիսի*, բայց՝ *Քաթում*, *Քործոմ*, *Ախալքալաք*, *Թելավ*, *Կարզախ*, *Սցխեթ*, *Սուխում*, *Սուրամ*, *Քուքախ* և այլն:

Ծանոթություն: Կանոնը չի տարածվում ի-ով վերջացող վրացական և այն տեղանունների վրա, որոնք հայերենում գրազանգված են չունեն և առանց ի վերջածանցիչների չեն գործածվում. օրինակ՝ Գորի, Կախի և այլն:

**3. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԵՐԵՆ
ՏԱՌԱԿԱԼՉՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ****

Հաստատել աշխարհագրական ներքոհիշյալ անունների հետևյալ հայերեն տառադարձությունը.

Աբիսսինյա	Հարեշտան
Авентинский холм	Ավենտինյան բլուր
Аваида	Սուլիս
Адана	Սդանա
Адмиралтейства острова	Ծովակալության կղզիներ
Аддис-Абеба	Սդիս Աբեբա
Адрианополь	Ադրիանապոլիս
Адриатическое море	Ադրիական (Ադրիատիկ) ծով
Азербайджан (Атропатена)	1. Ադրբեջան, 2. Ստրպատական (պատմ.)
Азия	Ասիա
Азовское море	Ազովի ծով
Алешпо (Халеб)	Հալեպ

*Նախագիծը կազմել է Հ. Բարսեղյանը: Հաստատվել է տերմ. կոմիտեի 1956 թ. սեպտեմբերի նիստում:

***Բառացանկը, հայերեն տառադարձությամբ, կազմել է Վ. Փոթեյանը: Հաստատվել է տերմ. կոմիտեի 1958 թ. փետրվարի նիստում:*

Алеутские острова
 Алма-Ата
 Альпы
 Анды
 Антильские острова
 Антиохия
 Антитавр
 Апеннинский полуостров
 Аравия
 Аракс
 Аральское море
 Арбелы
 Армения
 Аргонида
 Арзрум
 Ассирия
 Атлантический океан
 Афганистан
 Афины
 Ахайя
 Ахалцых, Ахалицихе
 Баб-эль-Мандебский пролив
 Багдад
 Баку
 Балеарские острова
 Балтийское море
 Баренцево море
 Батуми
 Баффинов залив
 Бейрут
 Белое море
 Белуджистан
 Бенгальский залив
 Беоция, Беотия
 Берингово море
 Бирмингем, Бирмингем
 Биробиджан
 Бискайский залив
 Ближний Восток
 Богемия
 Болгария

Ալեուքյան կղզիներ
 Ալմա Աթա (այժմ Ալմաթի)
 Ալպեր (Ալպյան լեռներ)
 Անդեր (Անդյան լեռներ)
 Անտիլյան կղզիներ
 Անտիոք (քաղաք)
 Անտիտավրոս
 Ապենինյան թերակղզի
 Արաբիա
 Արաքս (պատմ. Երասխ)
 Արալյան ծով
 Արբելա
 Հայաստան
 Արգոլիս
 տե՛ս Էրզրում
 Ասորեստան
 Ատլանտյան օվկիանոս
 Աֆղանստան
 Աթենք
 Աքայա
 Ախալցխա
 Բաբելմանդեբի նեղուց
 Բաղդադ
 Բաքու
 Բալեարյան կղզիներ
 Բալթիկ ծով
 Բարենցի ծով
 Բաթում
 Բաֆինի ծոց
 Բեյրութ
 Բալիկ ծով
 Բելուջստան
 Բենգալյան ծոց
 Բեոլիս
 Բերինգի ծով
 Բիրմինգհեմ
 Բիրոբիջան
 Բիսկայան ծոց
 Մերձավոր Արևելք
 Բոհեմիա
 Բուլղարիա

Босфор, Боспор
 Ботнический залив
 Вандея
 Везувий
 Вавилон
 Веймар
 Великобритания
 Вена
 Венгрия
 Венесуэла
 Венеция
 Вест-Индия (Западная Индия)

Византия
 Вифлеем
 Вогезы
 Гаага
 Габсбург
 Гавайские острова
 Гавана
 Гавгамелы
 Гавр
 Гадес (Кадис)
 Гаити
 Галикарнас
 Галилея
 Гамбург
 Ганг
 Ганджа
 Ганновер
 Гарц
 Гебридские острова
 Геджас
 Гейдельберг
 Геллада
 Геллеспонт
 Гельвеция
 Гельголанд
 Гельсингфорс
 Генуя

Բոսֆոր
 Բոտնիկ ծոց
 Վանդեա
 Վեզուվ
 Բաբելոն
 Վայմար
 Մեծ Բրիտանիա
 Վիեննա
 Յունգարիա
 Վենեսուելա
 Վենետիկ
 Վեստ Ինդիա (կղզանուն, որ
 նշանակում է Արևմտյան
 Յնդկաստան)
 Բյուզանդիա, Բյուզանդիոն
 Բեթղեհեմ
 Վոգեզներ
 Հաագա
 Հաբսբուրգ
 Հավայյան կղզիներ
 Հավանա
 Պավգամելա
 Հավր
 Հադես
 Հայիթի
 Հալիկարնաս
 Պալիլեա
 Համբուրգ
 Պանգ
 Պանձա
 Պաննովեր
 Հարց
 Հեբրիդյան կղզիներ
 Հեջաս
 Հայդելբերգ
 Թե'ս Զաադա
 Հելլեսպոնտ
 Հելվեցիա
 Հելգոլանդ
 Հելսինգֆորս
 Ջենովա

Герат
 Геркуланум
 Герцеговина
 Гессен
 Гибралтар
 Гималайские горы
 Гиндукуш
 Голгофа
 Голландия
 Гольштейн, Гольштиния
 Гондурас
 Гонконг
 Гонолулу
 Гордон
 Граник
 Греция
 Грузия
 Гудзон
 Гудзонов залив
 Гурон
 Дагестан
 Дамация
 Дальний Восток
 Дамаск
 Дарданеллы
 Джакарта
 Дельфы — дельфийский оракул

 Дерпт
 Доброй Надежды мыс
 Дзауджикау

 Добруджа
 Дунай
 Евфрат
 Египет
 Елеонская гора

 Желтое море
 Женева
 Закавказье

Հերաթ
 Հերկուլանում
 Հերցեգովինա
 Հեսսեն
 Տիբրալթար
 Հիմալայան լեռներ
 Հինդուկուշ
 Գողգոթա
 Հոլանդիա
 Հոլշտայն
 Հոնդուրաս
 Հոնկոնգ
 Հոնոլուլու
 Գորդոն
 Գրանիկոն
 Հունաստան
 Վրաստան
 Հուդզոն
 Հուդզոնի ծոց
 Հուրոն
 Դաղստան
 Դալմաթիա
 Հեռավոր Արևելք
 Դամասկոս
 Դարդանել
 Տակարտա
 Դելֆիս — դելֆյան
 պատգամախոս
 Դորպատ
 Բարեհուսո հրվանդան
 Ձառջիկաու (նախկինում Օրջոնի-
 կիձե, այժմ Վլադիկավկազ)
 Դոբրուջա
 Դանուբ
 Եփրատ
 Եգիպտոս
 Ձիթենյաց լեռ

 Դեղին ծով
 Ժնև
 Անդրկովկաս

Закаспийский край	Անդրկասպյան երկրամաս
Западная Двина	Արևմտյան Դվինա
Земля Франца-Иосифа	Ֆրանց Զոսիֆի երկիր
Золотой Рог	Ոսկեղջյուր
Зондский пролив	Չոնդյան նեղուց
Иерихон	Երիքոն
Иерусалим	Երուսաղեմ
Измир	Իզմիր (պատմ. Ջմյուռնիա)
Израиль	Իսրայել
Илион	Իլիոն
Имеретия	Իմերեթիա
Инд	Ինդոս
Индийский океан	Հնդկական օվկիանոս
Индия	Հնդկաստան
Индокитай	Հնդկասիա
Индостан	Հինդուստան (Ինդոստան, Հնդստան)
Иордан	Հորդանան (գետ)
Иордания	Հորդանան (երկիր)
Ирак	Իրաք
Ионическое море	Հոնիական ծով
Испания	Իսպանիա
Исса	Իսսոս
Исфахан (Испаган)	Սպահան
Итака	Իթակե
Иудея	Հրեաստան (Հուդա, որ նշանակում է Հրեաների երկիր)
Йемен	Եմեն
Кавказ	Կովկաս
Казахстан	Ղազախստան
Каир	Կահիրե
Кайсери (Цезарея)	Կեսարիա
Калькутта	Կալկաթա
Камбоджа	Կամբոջա
Канарские острова	Կանարյան կղզիներ
Кандагар	Ղանդահար
Канны (Канн)	Կանն (քաղաք Ֆրանսիայի հարավում)
Канны	Կաննե (քնակավայր Իտալիայի հարավ-արևելքում)
Капитолий	Կապիտոլիոն
Каппадокия	Կապադոկիա

Карибское море
 Каролинские острова
 Карс
 Карское море
 Карфаген
 Каспийское море
 Кафан
 Кельн
 Кембридж
 Керманшах
 Кефалония, Кефалиния
 Кзыл-Орда
 Кизляр
 Кипр
 Китай
 Кишинев
 Колхида
 Кольский полуостров
 Константинополь
 Копенгаген
 Кордильеры
 Коринф
 Красное море
 Крит
 Крым
 Кура
 Курдистан
 Курильские острова
 Кутаиси, Кутаис
 Кызыл-Кум
 Ладожское озеро
 Лаптевых море
 Лациум (Лаций)
 Лейпциг
 Лепид
 Ливан
 Ливия
 Лодзь
 Лозанна
 Локрида
 Лотарингия

Կարիբյան ծով
 Կարոլինյան կղզիներ
 Կարս
 Կարայի ծով
 Կարթագեն
 Կասպից ծով
 Ղափան (այժմ՝ Կապան)
 Քյոլն
 Քեմբրիջ
 Քիրմանշահ
 Կեֆալոնիա
 Կզըլ Օրդա
 Ղզլար
 Կիպրոս
 Չինաստան
 Քիշնև
 Կոլխիդա (պատմ. Կողքիս)
 Կոլալի թերակղզի
 Կոստանդնուպոլիս
 Կոպենհագեն
 Կորդիլերյան լեռներ, Կորդիլերներ
 Կորնթոս
 Կարմիր ծով
 Կրետե
 Ղրիմ
 Քուռ (այժմ՝ Կուր)
 Քրդստան
 Կուրիլյան կղզիներ
 Քութայիս
 Կզըլ Կում
 Լադոգա լիճ
 Լապտևների ծով
 Լացիում (հին Լատիոն)
 Լայպցիգ
 Լեպիդոս
 Լիբանան
 Լիբիա
 Լոժ
 Լոզան
 Լոկրիս
 Լոթարինգիա

Լуара	Լուարա (գետ)
Լуар	Լուար (Լուարայի վտակը)
Люксембург	Լյուքսեմբուրգ
Магелланов пролив	Մագելանի նեղուց
Малайский архипелаг	Մալայան արշիպելագ
Малая Азия	Փոքր Ասիա
Манчестер	Մանչեստր
Манчжурия	Մանջուրիա
Марафон	Մարաթոն
Марна	Մառն
Мексика	Մեքսիկա
Мемфис	Մեմփիս
Мертвое море	Մեռյալ ծով
Месопотамия	Միջագետք
Мидия	Մարաստան
Молуккские острова	Մոլուքյան կղզիներ
Монголия	Մոնղոլիա
Мраморное море	Մարմարա ծով
Нагорный Карабах	Լեռնային Ղարաբաղ
Назарет	Նազարեթ
Нахичевань-на-Дону	Ղոնի Նախիջևան
Никея	Նիկիա
Николаев-на-Амуре	Ամուրի Նիկոլաև
Нил	Նեղոս
Нинивия, Ниневия	Նինվե
Нисибей	Մծրին
Огайо, Огеё	Օհայո
Огненная Земля	Հրո երկիր
Океания	Օվկիանիա
Олимп	Օլիմպոս կամ Ոլիմպոս (պատմ. Ողիմպոս)
Онежское озеро	Օճեգա լիճ
Оркадские (Оркейские) острова	Օրկադյան կղզիներ
Ост-Индия (Восточная Индия)	Օստ Ինդիա (երկրանուն, որ նշա- նակում է Արևելյան Հնդկաստան)
Охотское море	Օխոտի ծով
Палестина	Պաղեստին
Париж	Փարիզ
Парфия	Պարթևաստան
Пенджаб	Փենջաբ
Персидский залив	Պարսից ծոց

Персия	Պարսկաստան
Пик Шмидта	Շմիդի գագաթ
Пинд	Պինդոս
Пиренейский полуостров	Պիրենեյան թերակղզի
Польша	Լեհաստան
Понт	Պոնտոս
Помпеи, Помпея	Պոմպեյ
Португалия	Պորտուգալիա (պատմ. Փորթուգալիա)
Поти	Փոթի
Рейн	Յոննոս
Рижский залив	Ռիգայի ծոց
Рим	Հռոմ
Родос	Հռոդոս
Рона	Ռոն (գետ)
Россия	Ռուսաստան
Ростов-на-Дону	Ղոնի Ռոստով
Рудные горы	Հանքային լեռներ
Русь	Ռուսիա
Саксония	Սաքսոնիա
Салоники	Սալոնիկ
Самарканд	Սամարղանդ
Сандвичевы острова	Սանդվիչյան կղզիներ (այժմ Հավայան կղզիներ)
Саудовская Аравия	Սաուդյան Արաբիա
Сахара	Սահարա
Святого Лаврентия река	Սուրբ Լավրենտիոսի գետ
Святой Елены остров	Սուրբ Էդիդենի կղզի
Северное море	Հյուսիսային ծով
Северный Ледовитый океан	Հյուսիսային սառուցյալ օվկիանոս (կամ Սառուցյալ օվկիանոս)
Сена	Սեն (գետ)
Сербия и Черногория	Սերբիա և Չեռնոգորիա
Сиракузы	Սիրակուզա
Скандинавский полуостров	Սկանդինավյան թերակղզի
Скифия	Սկյութիա
Смирна	Ջմյուռնիա (այժմ Իզմիր)
Средиземное море	Միջերկրական ծով
Стамбул	Ստամբուլ (պատմ. Կոստանդնու- պոլիս)
Стимфал — стимфальские птицы	Ստիմֆալիս — ստիմֆալյան թռչուններ

Стокгольм	Ստոկհոլմ
Страсбург (Страсбур)	Ստրասբուրգ
Суэцкий канал	Սուեզի ջրանցք
Тавр	Տավրոս
Таврида	Տավրիս
Тавриз, Тебриз	Թավրիզ
Таврические горы	Տավրիկյան լեռներ (այժմ Դրիմի լեռներ)
Тарент	Տարենթոն
Тбилиси	Թբիլիսի (պատմ. Տփղիս)
Тегеран	Թեհրան
Темза	Թեմզա
Тенедос	Թենեդոս
Термопилы (տե՛ս Фермопилы)	
Тертер	Թարթառ
Тибр	Տիբեր, Տիբերիս (գետ)
Тигр	Տիգրիս
Тир	Տյուրոս
Тифлис	Թիֆլիս
Тихий океан	Խաղաղ օվկիանոս
Трансиордания	Անդրիորդանան
Трапезунд (Трапезонд), Трабзон	Տրապիզոն
Тунис	Թունիս
Турция	Թուրքիա
Тюрингия	Թյուրինգիա
Урфа	Ուռֆա (Ուրֆա) (պատմ.Եղեսիա)
Фарос	Փարոս
Феодосия	Թեոդոսիա
Фермопилы	Թերմոպիլե
Фессалия	Թեսալիա
Фивы	Թեբե
Фиджи	Ֆիջի
Филиппинские острова	Ֆիլիպինյան կղզիներ
Филиппины	Ֆիլիպիններ
Финикия	Փյունիկիա
Финский залив	Ֆիննական ծոց
Фокея	Փոկիա
Фракия	Թրակիա
Франкфурт-на-Майне	Մայնի Ֆրանկֆուրտ
Франция	Ֆրանսիա
Фригия	Փռյուգիա

Хайфа	Հայֆա
Халдея	Քաղդեա
Халеб	Հալեպ
Халкидон	Քաղկեդոն
Хамадан	Համադան
Ханаан	Քանան
Ханькоу	Հանկոու
Хельсинки	Հելսինկի
Хенань	Հենան
Хеопс (Хуфу)	Քեոպս
Хиос	Քիոս
Хуанхе	Հուանհե
Хубей	Հուբեյ
Цезария (Кейсери)	Կեսարիա
Цефалония (Кефалония)	Կեֆալոնիա
Чарджоу	Չարջոու
Черное море	Սև ծով
Чудское озеро	Չուդ լիճ
Чукотский полуостров	Չուկոտյան թերակղզի
Шанхай	Շանհայ
Швеция	Շվեդիա
Шемаха	Շամախի
Шлезвиг-Гольштейн	Շլեզվիգ-Հոլշտայն
Шмидта остров	Շմիդի կղզի
Шуша	Շուշի
Эгейское море	Եգեյան ծով
Эдесса	Եդեսիա
Элада	Հելլադա
Эпир	Էպիրոս
Эрзурум	Էրզրում (հին Կարին)
Эриманф — эриманфский вебрь	Երիմանթոս — Երիմանթյան վարազ
Эфес	Եփեսոս
Эфиопия	Եթովպիա
Югославия	Հարավսլավիա
Ява	Ճավա
Ямайка	Ճամայկա
Япония	Ճապոնիա

Аристофан
Аристотель
Аркадий
Арминий, Армин
Арсений
Артемида
Архимед
Асканий
Асклепий տե՛ս Էսկուлаպ
Атилий Регул
Афанасий
Афина
Афродита
Ахилл (Ахиллес)
Аэций

Баатазар
Батый
Бахус տե՛ս Вакх
Бибул
Бетховен
Бонифаций
Брахма, Брама
Брут

Вакх
Валент (Флавий)
Валентиниан (Флавий)
Валериан
Вар
Варвара
Варнава
Варфоломей — варфоломеевская ночь

Василий

Велизарий
Вельзевул
Вениамин
Веспасиан
Вильгельм

Արիստոֆան (Արիստոփանես)
Արիստոտել
Արկադիոս, *Արկադի* (ռուս.)
Արմին (Հերման)
Արսեն, *Արսենի* (ռուս.)
Արտեմիս
Արքիմեդ
Ասկանիոս

Ատիլիոս Ռեգուլոս
Աթանաս, *Աթանասի* (ռուս.)
Աթենաս
Աֆրոդիտե
Աքիլլես
Այեցիոս

Բադդասար
Բաթու

Բիբուլոս
Բեթհովեն
Բոնիֆացիոս
Բրահմա
Բրուտոս

Բաքոս
Վաղես (Ֆլավիոս)
Վալենտինիանոս (Ֆլավիոս)
Վալերիանոս, *Վալերիան* (ռուս.)
Վարոս
Վարվառե, *Վարվառա* (ռուս.)
Վառնաբաս
Վարդուղիմեոս — թարդուղիմյան
գիշեր

1. Բարսեղ, 2. *Վասիլի* (ռուս.),
3. Վասիլ (Բուզանդիայի կայսր)
Քելիսարիոս
Քեհեղզեթուլ
Քենիամին, *Վենիամին* (ռուս.)
Վեսպասիանոս
Վիլիելմ

Виргилий

Վիրգիլիոս, Վերգիլիոս

Гавриил

Գաբրիել, Գավրիլ (ռուս.)

Галлей

Հալլեյ

Гамилькар

Համիլկար

Гамлет

Համլետ

Гамсун

Համսուն

Ганимед

Գանիմեդ

Ганнибал

Հաննիբալ

Гартман

Հարտման

Гарун аль-Рашид

Հարուն ալ Ռաշիդ

Гаструбал

Հաստրուբալ

Геба

Հեբե

Гегель

Հեգել

Гейне

Հայնե

Гекоба տե՛ս Гекуба

Гектор

Հեկտոր

Гекуба

Հեկուբ(ե)

Гелен

Հելենոս

Гельведий, Гельвециус

Հելվեցիոս, Հելվեցիոս

Гемос

Հեմոս

Генрих

Հայնրիխ

Гера

Հերա

Геракл, Гераклий

Հերակլես, Հերակլ

Гераклит

Հերակլիտ

Гербарт

Հերբարտ

Геркулес

Հերկուլես

Гермес

Հերմես

Гермиона

Հերմոնե

Геродот

Հերոդոտ

Герострат

Հերոստրատ

Гесиод

Հեսիոդոս

Гесперия

Հեսպերիա

Геспериды

Հեսպերյաններ

— яблоки гесперид

— հեսպերյան խնձորներ

Гесслер

Գեսլեր

Гёте

Գյոթե

Гефест

Հեփեստոս

Гипократ

Հիպոկրատ

Гиадинт

Հիացինտ

Гильдебранд

Հիլդեբրանդ

Гогенцоллерны

Гоббс

Голиаф

Гольбах

Гомер

Гонорий

Горацій

Гордий

— гордиев узел

Готфрид Булонский

Гракх

Григорий

Гус

Гюго

Давид

Даниил

Дарий Кодоман

Дарий Гистасп (Истасп)

Дезидерий

Демосфен

Диоген

Диомед

Диоклетиан

Дионис

Дионисий Фракийский

Доминик

Дон Кихот

Дорофея

Дуилий

Евсевий

Евгений

Еврипид

Ездегерд

Ездр

Елеазар

Елена

Елизавета

Елисей

Епифаний

Հոհենցոլլերներ

Հոբս

Գողիաթ

Հոլբախ

Հոմերոս

Հոնորիոս

Հորացիոս

Գորդիոս

— գորդյան հանգույց

Գոտֆրիդ Բուլոնացի

Գրակքոս

Գրիգոր, *Գրիգորի (ռու.)*

Հուս

Հյուգո

Դավիթ, *Դավիդ (ռու.)*

Դանիել, *Դանիիլ (ռու.)*

Դարեհ Կողոմանոս

Դարեհ Վշտասպյան

Դեսիդերիոս

Դեմոսթենես

Դիոգենես

Դիոմեդես

Դիոկլետիանոս

Դիոնիս (Բաքոս)

Դիոնիսիոս Թրակացի

Դոմինիկոս

Դոն Կիխոտ, Դոն Զիշոտ

Դորոթեա

Դուիլիոս

Եվսեբիոս

Եվգենիոս, *Եվգենի (ռու.)*

Եվրիպիդես

Հազկերտ

Եգր, Եգրաս

Եղիազար, *Ելեազար (ռու.)*

Եղիմե, *Ելեմա (ռու.)*

Եղիաաբեթ, *Ելիզավետա (ռու.)*

Եղիսե, *Ելիսեյ (ռու.)*

Եպիփանես

Еремей
Есфирь
Ефрем

Երեմիա, Երեմեյ (ռուս.)
Եսթեր
Եփրեմ, Եֆրեմ (ռուս.)

Захарий, Захария, Захар

Չաքար, Չաքարե, Չաքարիա,
Չախար, Չախարի (ռուս.)

Зевксис

Չևքսիս

Зевс

Չևս

Зеновий

Չենոբ

Зефир

Չեփյուռ

Зорававел

Չորաբաբել

Зороастр

Չրադաշտ

Иаков տե՛ս Яков

Иван Грозный

Իվան Ահեղ

Игнатий

Իգնատիոս, Իգնատի (ռուս.)

Иездегерт տե՛ս Ездегера

Израиль

Իսրայել

Иисус Навин

Հեսու Նավյա

Иисус Христос

Հիսուս Քրիստոս

Илия, Илья

Եղիա, Իլյա (ռուս.)

Инно(в)кентий

Ինո(վ)կենտիոս, Ինոկենտի (ռուս.)

Иоаким

Հովակիմ, Իոակիմ (ռուս.)

Иоанн

Հովհաննես, Իոան (ռուս.)

Иоанн Безземельный

Հովհան Անհող

Иоанна

Հովհաննա (Հռոմի կին պապ)

Иоанн Грозный տե՛ս Иван Грозный

Иоанн Златоуст

Հովհան Ոսկեբերան

Иов

Հովք, Հոբ

Иосиф

Հովսեփ, Իոսիֆ (ռուս.)

Иракл

Հերակլ

Иракий

Հերակլ, Էրեկլե (վրաց.)

Ирида

Իրիս

Ирод

Հերոդես

Иродот տե՛ս Геродот

Исаак, Исаакий

Իսահակ, Իսաակի (ռուս.)

Исав

Եսավ

Исаия, Исай

Եսայի

Исмена

Իսմենե

Кадам

Կադմոս

Каин

Կայեն

Կալիսո
 Кассий (Гай)
 Каутский
 Квинт
 Кир
 Кирилл
 Клавдий
 Колумб, Коломб
 Комнин
 Константин
 Конфуций
 Коперник
 Корнелий
 Красс
 Крез, Кресс
 Ксантиппа
 Ксенофонт
 Ксеркс
 Курий Дентат
 Кунктатор տե՛ս Բабий

Лаврентий
 Лазарь
 Лев, Леон
 Лев Толстой
 Леонид
 Леонтий
 Лепид
 Ликург
 Лот
 Лука
 Лукреций
 Лукулл
 Людовик
 Лютер
 Люций

Маврикий
 Магомет
 Маккавей
 Максимиан

Կալիփսե
 Կասիոս (Գայոս)
 Կաուցկի
 Քվինտոս
 Կյուրոս, Կիր (ռուս.)
 Կյուրեղ, Կիրիլ (ռուս.)
 Կլավդիոս
 Կոլումբոս
 Կոմենենոս
 Կոստանդին, Կոնստանտին (ռուս.)
 Կոնֆուցիոս
 Կոպեռնիկոս
 Կորնելիոս
 Կրասոս
 Կրեսոս
 Քսանտիպե
 Քսենոֆոն
 Քսերքսես
 Կուրիոս Դենտատոս

Լավրենտիոս, Լավրենտի (ռուս.)
 Ղազար, Լազար (ռուս.)
 Լևոն, Լև, Լեոն (ռուս.)
 Լև Տոլստոյ
 Լեոնիդաս, Լեոնիդ (ռուս.)
 Ղևոնդ, Լեոնտի (ռուս.)
 Լեպիդոս
 Լիկուրգոս
 Դոփո
 Դուկաս, Լուկա (ռուս.)
 Լուկրեցիոս
 Լուկուլլոս
 Լյուդովիկոս
 Լյութեր
 Լուկիոս

Մորիկ (Մավրիկիոս)
 Մահմեդ
 Մակաբե
 Մաքսիմիանոս

Маргарита
 Мария
 Марк
 Марк Аврелий
 Марк Твен
 Марий
 Маркел
 Марфа
 Матвей, Матфей
 Мафусаил
 Мельпомена
 Менелай
 Меценат
 Мильтиад
 Митридат
 Михаил
 Моисей
 Морфей
 Муммий
 Мухаммед *ևն՝ս* Магомет
 Муций Сцевола

Навуходоносор
 Нарцисс
 Неоптолем
 Николай
 Нина
 Нума Помпилий

Овидий
 Одиссей
 Окивий
 Октавиан
 Онорий
 Орест
 Ормузд
 Орфей
 Осип *ևն՝ս* Иосиф

Павел
 Паллада
 Патрокл

Մարգարիտ, *Մարգարիտա* (ռուս.)
 Մարիամ, *Մարիա* (ռուս.)
 Մարկոս, *Մարկ* (ռուս.)
 Մարկոս Ավրելիոս
 Մարկ Տվեն
 Մարիոս
 Մարկելոս
 Մարթա, *Մարթա* (ռուս.)
 Մատթեոս, *Մատթեյ* (ռուս.)
 Մաթուսաղա
 Մելպոմենե
 Մենելա(վ)ոս, Մենելայոս
 Մեկենաս
 Միլտիադես
 Միհրդատ
 Միքայել, *Միխայիլ* (ռուս.)
 Մովսես, *Մոիսեյ* (ռուս.)
 Մորփեոս
 Մումիոս

Մուկիոս Սցոլա

Նաբուգոդոնոսոր
 Նարկիս
 Նեոպտոլոմեոս
 Նիկողայոս, *Նիկոլայ* (ռուս.)
 Նունե, *Նինա* (ռուս.)
 Նումա Պոմպիլիոս

Օվիդիոս
 Ոդիսևս
 Օկտավիոս
 Օկտավիանոս
 Հոնորիոս
 Օրեստ
 Որմիզդ (Արամազդ)
 Օրփեոս

Պողոս, *Պավել* (ռուս.)
 Պալլաս
 Պատրոկլես

Пелей
 Пенелопа
 Персей
 Персефона
 Петр
 Петр Первый
 Пий
 Пилат
 Пиндар
 Пипин Короткий
 Пирр
 Пифагор
 Плутарх
 Помпей
 Полибий
 Понт
 Посейдон
 Приам
 Прометей
 Птоломей
 Публій

Ревекка
 Рем
 Ровоам
 Роман
 Ромул

Самуна
 Саул
 Секст
 Селевк
 Семирамида
 Септимий Север
 Сервий Тулий
 Сикст
 Сим
 Сиф
 Сократ
 Соломон
 Софокл

Պելևս
 Պենելոպե
 Պերսեոս, Պերսևս
 Պերսեֆոնե
 Պետրոս, Պյոտր (ռու.)
 Պետրոս Առաջին
 Պիոս
 Պիղատոս
 Պինդարոս
 Պիպին Կարճաճակ
 Պյուռոս
 Պյութագորաս
 Պլուտարքոս
 Պոմպեոս
 Պոլիբիոս
 Պոնտոս
 Պոսիդոն, Պոսեյդոն
 Պրիամոս
 Պրոմեթեոս
 Պտղոմեոս
 Պուբլիոս

Ռեբեկա
 Ռոմոս
 Ռոբոլամ
 Ռոմանոս
 Ռոմուլոս

Սամվել, Սամուիլ (ռու.)
 Սավուղ
 Սեքստոս
 Սելևկոս
 Շամիրամ
 Սեպտիմիոս Սևերոս
 Սերվիոս Տուլիոս
 Սիքստոս
 Սեմ
 Սեթ
 Սոկրատես, Սոկրատ
 Սողոմոն, Սղոմոն (ռու.)
 Սոֆոկլես

Сулла
Сцилла (Скилла) և Խарибда
Сципион

Тамара
Тамерлан
Тантаал
Тарквиний Гордый
Тацит
Тезей
Телемак
Терезия, Тереза
Теренций
Тиберий, Тиверий
Тимофей
Тимур *տե՛ս* Тамерлан
Тит
Тулаий

Фабий Кунктатор
Фабриций
Фабрициус Ян
Фаддей
Фалес
Феб
Фемида
Фемистокл
Феодор
Феодосий
Феофан
Феофанո
Фетида
Фидий
Филипп
Филипп Август
Филон (Александрийский)
Флавий
Фока
Фома
Фукидит

Սուլլա
Սցիլլա (Սկիլլա) և Քարիբդիս
Սկիպիոն

Թամար, *Տամարա* (ռուս.)
Լենկթեմուր, Լանկթեմուր
Տանտալոս
Տարկվինիոս Գոռոզ
Տակիտոս
Թեզևս
Տելեմաք
Թերեզա
Տերենտիոս, Տերենտ
Տիբերիոս
Տիմոթեոս, *Տիմոթեյ* (ռուս.)

Տիտոս, *Տիտ* (ռուս.)
Տուլիոս

Փաբիոս Դանդաղկոտ
Ֆաբրիկիոս, Ֆաբրիցիոս
Ֆաբրիցիոս Յան
Թադեոս, Թադևոս, *Ֆադեյ* (ռուս.)
Թալես (Թադես)
Ֆեբոս
Թեմիս
Թեմիստոկլես
Թեոդոր(ոս), *Ֆեոդոր* (ռուս.)
Թեոդոս
Թեոփանոս
Թեոփանես
Թետիս
Ֆիդիաս
Փիլիպոս, *Ֆիլիպ* (ռուս.)
Ֆիլիպ Օգոստոս
Փիլոն (Ալեքսանդրացի)
Ֆլավիոս, Փլաբիոս
Փոկաս
Թովմաս, Թովմա, *Ֆոմա* (ռուս.)
Թուկիդիտ(ես)

Хам	Քամ
Хафиз	Հաֆիզ
Херония	Քերոնիա
Хозрой	Խոսրով
Христофор	Քրիստափոր, <i>Խրիստաֆոր</i> (ռուս.)
Цезарь տե՛ս Юлий Цезарь	
Цельсий	Ցելսիոս
Цимисхий Иоанн	Չմշկիկ Հովհաննես
Шекспир	Շեքսպիր
Эвклид	Էվկլիդես
Эвмей	Եվմեոս
Эврипид (տե՛ս Еврипид)	Էվրիպիդոս (այժմ՝ Եվրիպիդես)
Эдип	Էդիպ(ոս)
Эет	Այեթոս
Эзекиил, Иезекиил	Եզեկիել
Эзоп	Եզոպոս
Эммануил	Էմանվել, <i>Էմանուիլ</i> (ռուս.)
Эней	Էնեաս
Эпифаний	Եպիփան
Эскулап	Էսկուլապ
Юлиан	Հուլիանոս
Юлий Цезарь	Հուլիոս Կեսար
Юлиус Фучик	Յուլիոս Ֆուչիկ
Юстин	Հուստինոս
Юстиниан	Հուստինիանոս
Язон (Ясон)	Յասոն, Յազոն
Яков	Հակոբ, <i>Յակով</i> (ռուս.)
Япет, Яфет	Հաբեթ

5. ՀԱՅԿԱԿԱՆ ԱՆՁՆԱՆՈՒՆԵՐԻ ՌՈՒՍԵՐԵՆ ՏԱՌԱԳԱՐՉՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ*

Արդի պայմաններում մեծապես ավելացել է թարգմանական գրականության տեսակարար կշիռը, ընդլայնվել են ազգային լեզուների անմիջական շփումներն ու առնչությունները: Սրա հետ կապված մեծացել են ազգային յուրահատուկ հասկացություններ արտահայտող բառերը թարգմանելու և տեղանուններն ու անձնանունները տառադարձելու դժվարությունները:

Ռուսերենից հայերեն և հայերենից ռուսերեն կատարվող թարգմանությունների ծավալի հսկայական աճի հետ կապված՝ առանձնահատուկ կարևորություն է ստանում հայերեն անձնանունների տառադարձման սկզբունքների մշակումը: Դժվարությունները մասնավորապես պայմանավորված են այդ երկու լեզուների հնչույթային համակարգերի անհամապատասխանություններով. հաճախ անհրաժեշտություն է առաջանում որոշել հայերենի տվյալ հնչույթի մոտավոր համարժեքը ռուսերենում:

Հայկական անձնանունները ռուսերեն տառադարձելիս հնարավոր է երկու մոտեցում. 1) գրադարձություն՝ անունը կամ ազգանունը գրվում է տառ առ տառ, 2) բուն տառադարձություն՝ հիմք է ընդունվում անվան կամ ազգանվան արտասանությունը:

модуль (величина или абсолютная величина) силы, скорости, ускорения
модуль (абсолютная величина) действительного, комплексного числа

տորի, ֆիզիկական վեկտորական մեծության, թվի)

- վեկտորի երկարություն (մոդուլ)
- ուժի, արագության, արագացման մեծություն կամ բացարձակ մեծություն (մոդուլ)
- իրական թվի, կոմպլեքս թվի բացարձակ մեծություն (մոդուլ),
բ) գործակից (մոդուլ) (նյութի բնորոշ հատկություն արտահայտող ֆիզիկական մեծություն կամ թիվ, հաշվումների մի համակարգից մի այլ համակարգի անցման հաստատուն բազմապատկիչ)

Օրինակներ՝

модуль (коэффициент) сжатия, растяжения, расширения
модули (коэффициенты) упругости

- սեղմման, ձգման, ընդարձակման գործակից (մոդուլ)

модуль стока воды
модуль перехода

- առաձգականության գործակիցներ (սահքի գործակից, Յունգի գործակից) (մոդուլ)
- ջրի հոսքի գործակից
- անցման գործակից (մոդուլ), օրինակ՝ մի հիմքով լուգարիթմների համակարգից մի այլ հիմքով համակարգի անցման գործակից,

Օրինակներ՝

модуль сравнения (чисел)
модуль

- զ) մոդուլ (եւակետային միավոր) (եւակետային ընդհանուր միավոր ծառայող չափ կամ թիվ՝ թվերի տեսության, ճարտարապետության, շինարարության, մեքենաշինության մեջ)

модульная система

- բաղդատման մոդուլ (թվերի)
- մոդուլ, եւակետային միավոր (ճարտարապետության, շինարարության, մեքենաշինության մեջ)
- մոդուլային՝ մոդուլների համակարգ
- մոդուլային մեթոդ՝ եղանակ

модульный метод

2. Ճշգրտել թվարկության համակարգերի և թվերի գրության մեջ կարգերի ու դասերի հայերեն անվանումները.

ա) Թվարկության համակարգերի անվանումները.

	Գործածվում են	Այսուհետև գործածել
счисление	թվարկություն, թվականություն, թվագրություն, թվակարգություն	- թվարկություն (թվերն անվանելու և նշանակելու եղանակ)
нумерация	թվարկություն, թվագրություն, համարակալում, համարագրում	- 1. թվարկություն (նույն իմաստով) - 2. համարակալում
система счисления (нумерация)		- թվարկության համակարգ
позиционная система счисления		- թվարկության դիրքային համակարգ
алфавитная система счисления		- թվարկության այբբենական համակարգ

բ) Թվերի գրության մեջ կարգերի (разряды) անվանումները

	Գործածվում են	Այսուհետև գործածել
единицы	միավորներ	- միավորներ
десятки	տասնավորներ, տասնյակներ, տասեր	- տասնավորներ
сотни	հարյուրավորներ, հարյուրներ, հարյուրակներ	- հարյուրավորներ
единицы тысяч	հազարավորներ, հազարների միա- վորներ, հազարա- վորների միավորներ, միավոր հազարավորներ	- հազարավորներ
десятки тысяч	տասնհազարավորներ, հազարների տաս- նյակներ, տասնյակ հազարներ	- տասնհազարավորներ

СОТНИ ТЫСЯЧ	հարյուրհազարավորներ, հազարների հարյուրակներ, հարյուրավոր հազարավորներ, հարյուր հազարյակներ	- հարյուրհազարավորներ
ЕДИНИЦЫ МИЛЛИОНОВ	միլիոնավորներ, միլիոնների միավորներ, միավոր միլիոնավորներ	- միլիոնավորներ
ДЕСЯТКИ МИЛЛИОНОВ	տասնմիլիոնավորներ, միլիոնների տասնյակներ, տասնյակ միլիոններ	- տասնմիլիոնավորներ
СОТНИ МИЛЛИОНОВ	(նույն ձևով)	- հարյուրմիլիոնավորներ

Ծանոթություն: Կարգերի անվանումները գրել միասին՝ որպես մեկ հասկացության ամբողջական անվանում, օրինակ՝ ութ հարյուրհազարավոր, և ոչ՝ ութ հարյուր հազարավոր:

գ) Սրանց համապատասխան, թվերի գրության մեջ դասերը (класс-сы) անվանել՝

класс единиц	- միավորների դաս
класс тысяч	- հազարավորների դաս
класс миллионов	- միլիոնավորների դաս

դ) Десятый, сотый, тысячный և նման մյուս թվականները, որոնք ռուսերենում գործածվում են երկու տարբեր իմաստներով՝ որպես դասական թվական և որպես ամբողջի մաս, հայերեն թարգմանել՝

1. տասներորդ, հարյուրերորդ, հազարերորդ... (դաս. թվակ.), օրինակ՝ տասներորդ դասարան, հարյուրերորդ էջ, հազարերորդ պտույտ...

2. տասներորդական (կամ կարճ՝ տասնորդական), հարյուրերորդական, հազարերորդական... (մաս),

օրինակ՝ երեք տասներորդական (տասնորդական), երեք հարյուրերորդական (3/100), երեք հազարերորդական (3/1000)...

ե) Սրան համապատասխան, տասնորդական կոտորակների գրության մեջ կարգերն անվանել՝

разряд десятых
разряд сотых
разряд тысячных

- տասներորդականների կարգ
- հարյուրերորդականների կարգ
- հազարերորդականների կարգ

3. ճշգրտել՝ считать, вычислить, счетный, вычислительный տերմինների հայերեն թարգմանություններն ու դրանց իմաստային գործառնությունը մաթեմատիկայում:

	Գործածվում են	Այսուհետև գործածել
считать	համրել, հաշվել, հաշվարկել	- 1. <i>համրել</i> (բնական թվերով մեկ առ մեկ), օրինակ՝ համրել մինչև 100, աթոռները համրել, 2. <i>հաշվել</i> (ցանկացած թվերով և ցանկացած գործողություններով ու միջոցներով), օրինակ՝ հաշվել դրամը, եկամուտները, ծախսերը
вычислить	համրել, հաշվել, հաշվարկել	- <i>հաշվել</i> (ցանկացած թվերով ու ցանկացած գործողություններով ու միջոցներով), օրինակ՝ հաշվել ֆունկցիայի արժեքը, շարքի գումարը
вычисление	հաշվում հաշիվ, հաշվարկ, հաշվարկում	- <i>հաշվում, հաշվելը</i> (նույն ձևով)
исчисление	հաշիվ, հաշվում, հաշվարկում	- 1. <i>հաշիվ</i> (գոյ.) (գիտության, գիտության բաժնի անվանում), օրինակ՝ դիֆերենցիալ հաշիվ, վեկտորական հաշիվ, 2. <i>հաշվում, հաշվարկ</i>

		կում (գործողություն), օրինակ ծախսերի հաշվում, արտադ- րանքի արժեքի հաշ- վարկում
счетный	հաշվիչ, հաշվային, հաշվելի, համրելի	- 1. <i>հաշվիչ</i> (ած.), <i>հաշվա-</i> (գործիք, սարք, մեքենա), օրի- նակ՝ <i>счетная маши-</i> <i>на</i> - հաշվամեքենա, <i>հաշվիչ մեքենա</i> , <i>счетная линейка</i> - <i>հաշվաքանոն</i> , 2. <i>համրելի</i> (որ կարե- լի է համրել), օրինակ՝ <i>счетное множество</i> - համրելի բազմու- թյուն
вычислительный	հաշվիչ, հաշվարկիչ, հաշվարկու, հաշվող, հաշվողական	- 1. <i>հաշվիչ</i> (ած.) <i>հաշ-</i> <i>վա-</i> (գործիք, սարք, մեքենա), 2. <i>հաշվողական</i> (հաշվումների համեմատաբար բարդ համակարգեր իրականացնող)
Օրինակներ՝		
вычислительная машина		- <i>հաշվիչ մեքենա, հաշվամեքենա</i>
вычислительное устройство		- <i>հաշվիչ սարք, հաշվասարք</i>
вычислительный центр		- <i>հաշվողական կենտրոն</i>
вычислительные методы		- <i>հաշվողական մեթոդներ</i>
вычислительный алгоритм		- <i>հաշվողական ալգորիթմ</i> (ընթացակարգ)
электронная вычислительная машина (ЭВМ)		- <i>էլեկտրոնային հաշվիչ մեքենա</i> (ԷՀՄ), <i>էլեկտրոնային հաշվամեքենա</i>
счетчик, вычислитель	հաշվիչ, հաշվարկիչ, հաշվող, հաշվարկող, հաշվարար, հաշվող	- 1. <i>հաշվիչ</i> (գոյ.) (գործիք, սարք), 2. <i>հաշվարար</i> , <i>հաշվող</i> (անձ.)

Օրինակներ՝

электрический счетчик

- էլեկտրական հաշվիչ,

счетчики переписи населения

էլեկտրահաշվիչ

работа вычислителя

- մարդահամարի հաշվարարներ

отсчет

հաշվում, համրում,
հաշվանք, դիտանք,
հաշվարկ,
հաշվարկում

- հաշվարարի աշխատանք

- հաշվում, հաշվա -

օրինակ՝ начало

отсчета - հաշվման

սկիզբ, հաշվասկիզբ

4. Շշգրտել ռուսերեն հետևյալ տերմինների հայերեն համարժեքների գործածությունը մաթեմատիկայում

отношение

- հարաբերություն (ամենաընդհանուր, նաև՝ վերացարկված իմաստներով, մասնավորապես՝ երկու թվերի, մեծությունների քանորդական հարաբերություն)

Օրինակներ՝

отношение эквивалентности

- համարժեքության հարաբերության

отношение **a** к **b**

- **a**-ի հարաբերությունը **b**-ին

соотношение

- առնչություն, հարաբերակցություն

(փոխադարձ կապ, գերազանցապես թվային, քանակական), օրինակ՝ соотношения между сторонами и углами треугольника - առնչություններ եռանկյան կողմերի և անկյունների միջև

множимое

- բազմապատկելի

множитель,

- բազմապատկիչ

(со)множители

(երկուսը միասին) - բազմապատկիչներ (արտադրիչներ)

простые множители

պարզ բազմապատկիչներ

разложить

- 1. վերածել (վերջավոր գումարի կամ արտադրյալի),

2. վերլուծել (անվերջ շարքի կամ անվերջ արտադրյալի)

разложение

- 1. վերածում, վերածելը,

2. վերլուծում, վերլուծություն,

վերլուծելը (նույն երկու դեպքերը),

	օրինակներ՝ թիվը, արտահայտությունը <i>վերածել</i> պարզ բազմապատկիչների ֆունկցիան <i>վերլուծել</i> աստիճանային շարքի, ֆունկցիայի <i>վերլուծումը</i> Ֆուրիեի շարքի, ֆունկցիայի <i>վերլուծության</i> մեջ...
приближение	- 1. <i>մոտավորություն</i> (մոտավոր արժեք), օրինակ՝ թվի տասնորդական մոտավորությունները, 2. <i>մոտարկում, մոտարկելը</i> (գործողություն), օրինակ՝ թվի մոտարկումը տասնորդական կոտորակներով, ֆունկցիայի մոտարկումը բազմանդամներով
теория приближений	- <i>մոտավորությունների՝ մոտարկումների</i> տեսություն
приближение с недостатком	- <i>պակասորդով մոտավորություն</i>
приближение с избытком	- <i>հավելորդով մոտավորություն</i> (ոչ ավելորդով, հավելորդով)
погрешность	- <i>սխալ</i> (գոյ.)՝ (ոչ՝ սխալանք, սխալմունք), օրինակ՝ բացարձակ սխալ, հարաբերական սխալ, քառակուսային միջին սխալ
среднее (сущ.)	- <i>միջին</i> (գոյ.)
среднее арифметическое	- <i>թվաբանական միջին</i>
среднее геометрическое	- <i>երկրաչափական միջին</i>
среднее квадратическое	- <i>քառակուսային միջին</i>
интегральное среднее	- <i>ինտեգրալային միջին</i>
измерение	- 1. <i>չափում, չափելը</i> (գործողություն), օրինակ՝ հատվածի չափում, հատվածը չափելը, չափումների արդյունքների մշակում, 2. <i>չափում</i> (գոյ.), (протяжение իմաստով), օրինակ, ուղիղը (հատ-

		վածք) ունի մեկ չափում, տարածությունը (մարմինը)՝ երեք չափում, 3. <i>չափում</i> (զոյ.), գերազանցապես հոգնակի՝ չափումներ (ուղղանկյան մի գագաթից ելնող երկու կողմերը, ուղղանկյուն զուգահեռանիստի մի գագաթից ելնող երեք կողմերը, ինչպես նաև դրանց երկարությունները՝ երկարությունը, լայնությունը, բարձրությունը)
пространство <i>n</i> измерений <i>n</i> -мерное пространство	}	- <i>n</i> - <i>չափումանի</i> , կարճ <i>n</i> - <i>չափանի</i> , <i>տարածություն</i> (որոշ մասնավոր դեպքերում ավելի կարճ՝ <i>միաչափ</i> , <i>երկչափ</i> , <i>եռաչափ</i> տարածություն)
мера		- <i>չափ</i> (որևէ մեծության), օրինակ՝ գծի չափ (երկարություն), մակերևույթի չափ (մակերես), մարմնի չափ (ծավալ), բազմության չափ, չափերի մետրական համակարգ
размер		- 1. <i>չափ</i> (որևէ բանի), օրինակ՝ размер заработной - աշխատավարձի չափը, в больших размерах - մեծ չափերով, 2. <i>չափս</i> (որևէ բանի չափը որոշող տվյալների ամբողջությունը), օրինակ՝ размеры комнаты - սենյակի չափսերը (երկարություն, լայնության և բարձրության չափերը), размер обуви, одежды - կոշիկի, հագուստի չափսը
размерность протяженность	}	- <i>չափականություն</i> , <i>չափայնություն</i> (պատկերի չափումների թիվը), օրինակ՝ գծի չափականությունը 1 է, մակերևույթինը՝ 2, մարմնինը՝ 3 (զումարել կարելի է միայն միևնույն չափականություն ունեցող մեծությունները)

4. ՈՌՈՍԵՐԵՆ ԵՎ ՕՏԱՐ ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՈՐՈՇ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ*

Որոսերեն և օտար մաթեմատիկական տերմինների հայերեն թարգմանությունը ճշգրտելու նպատակով ՀԽՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր տերմինաբանական կոմիտեն *որոշում է* ստորև բերվող աղյուսակի առաջին սյունակում բերված ռուսերեն և օտար տերմինների փոխարեն այսուհետև գործածել երրորդ սյունակում բերված տերմինները.

Որոսերեն և օտար տերմինները	Գործածվում են	Այսուհետև գործածել
база, базис	բազա, բազիս	բազիս, հենք
контрпример	հակաօրինակ, կոնտրօրինակ	ժխտօրինակ (որևէ վարկածի, պնդման ճշտությունը ժխտող օրինակ)
неравенство с неизвестными	անհայտներով անհավասարություն	անհավասարում (անհայտներ պարունակող անհավասարություն. հմմտ. հավասարում անհայտ պարունակող հավասարություն)
перебирать		հատարկել (հատ-հատ վերցնել)
метод перебора		հատարկման եղանակ

*Նախագիծը կազմել է Ա. Մաշուրյանը: Հաստատվել է տերմ. կոմիտեի 1986 թ. հունիսի նիստում:

**5. ՀՈՒՆԱ-ԼԱՏԻՆԿԱՆ ՃԱԳՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ
ՄԱԹԵՄԱՏԻԿԱՆ ՈՐՈՇ ՏԵՐՄՆԵՐ
ՀԱՅԵՐԵՆ ՀԱՄԱՐԺԵՔՆԵՐՈՎ ՓՈԽԱՐԻՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

Հունա-լատինական ժազման մաթեմատիկական որոշ տերմինների գործածության մեջ ճշգրտումներ մտցնելու և դրանց օտար ձևերը հայերեն համարժեքներով փոխարինելու նպատակով ՀԽՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր տերմինաբանական կոմիտեն *որոշում է* այսուհետև գործածել ներքոհիշյալ այդպիսի տերմինների հայերեն հետևյալ համարժեքները.

корректный (լատ. *կորեկցիո* - ուղղում, ճշտում, շտկում) - *ճշտորոշ, կորեկտ* (ած.)
корректность - *ճշտորոշություն, ճշտորոշ լինելը, կորեկտություն*

Օրինակներ՝

корректное, некорректное определение - *ճշտորոշ սահմանում, ոչ ճշտորոշ սահմանում*
корректная, некорректная задача - *ճշտորոշ խնդիր, ոչ ճշտորոշ խնդիր*
корректность задачи - *խնդրի ճշտորոշ լինելը՝ ճշտորոշությունը*
компактный (լատ. *կոմպակտուս* - սերտորեն միացած՝ կպած, կիպ, հավաք, համախմբված, զոդված) - *սերտ, կոմպակտ* (ած.)

Օրինակներ՝

компактное множество, пространство - *սերտ բազմություն, սերտ տարածություն*
компакт (сущ.) - *սերտույթ, կոմպակտ (զոյ.)*
компактность - *սերտություն, կոմպակտություն*
монотонный (հուն. *տոնոս* - լարում, բարձրացում, ընթացք) - *միընթաց* (մի ուղղությամբ ընթացողի մասին), *մոնոտոն* (ած.)
изотонный - *նույնընթաց* (նույն ուղղությամբ ընթացող տարբեր բաների մասին), *իզոտոն* (ած.)
антитонный - *հակընթաց* (հակառակ ուղղությամբ ընթացող տարբեր բաների մասին), *անտիտոն* (ած.)

Օրինակներ՝

монотонная функция, последовательность — *միընթաց ֆունկցիա, միընթաց հաջորդականություն*, изотонное, антитонное отображение - *նույնընթաց արտապատկերում, հակընթաց արտապատկերում*

*Նախագիծը կազմել է Վ. Սաղաթելյանը: Հաստատվել է տերմ. կոմիտեի 1987 թ. դեկտեմբերի նիստում:

(կարգավորյալ բազմության մույն կարգով կամ հակառակ կարգով արտա-
պատկերում)

концентрический - *համակենտրոն (ած.)*

гомоцентрический - *համակենտրոն (ած.)*

коаксиальный (соосный) - *համառանցք*

конфокальный (софокусный) - *համակիզակետ, համաֆոկուս (ած.)*

Օրինակներ՝

концентрические окружности - *համակենտրոն շրջագծեր*

гомоцентрический пучок лучей - *ճառագայթների համակենտրոն փունջ*

коаксиальные цилиндры - *համառանցք զլաններ*

конфокальные кривые - *համակիզակետ (համաֆոկուս) կորեր*

инвариант (լատ. *վարիացիա* - փոփոխում) - *անփոփոխակ,
ինվարիանտ (գոյ.)*

ковариант - *համափոփոխակ, կովարիանտ (գոյ.)*

контравариант - *հակափոփոխակ, կոնտրավարիանտ (գոյ.)*

инвариантный - *անփոփոխական, ինվարիանտ (ած.)*

ковариантный - *համափոփոխական, կովարիանտ (ած.)*

контравариантный - *հակափոփոխական, կոնտրավարիանտ (ած.)*

инвариантность - *անփոփոխականություն, ինվարիանտություն*

ковариация - *համափոփոխկում, կովարիացիա*

Օրինակներ՝

инвариантность (неизменяемость) формы дифференциала - *դիֆերեն-
ցիալի ձևի անփոփոխականություն, անվարիանտ կривой второго порядка -
երկրորդ կարգի կորի անփոփոխականներ, инвариантное подмножество - ան-
փոփոխական ենթաբազմություն*

ковариантный, контравариантный вектор - *անփոփոխական վեկտոր,
հակափոփոխական վեկտոր*

изолиния - *հավասարաժեշտության գիծ, մակարդակագիծ (գիծ, որը միաց-
նում է երկրաչափական, ֆիզիկական կամ այլ մեծության հավասար արժեք-
ներին համապատասխանող կետերը)*

изобара (изобарная линия) - *ճնշման հավասարաժեշտության գիծ՝
մակարդակագիծ*

изотерма (изотермическая линия) - *ջերմության մակարդակագիծ՝
հավասարաժեշտության գիծ*

изоклина - *հավասարաթեքության գիծ,
հավասարաթեք (գոյ.)*

изоклинный, изоклинический - *հավասարաթեքայնության*

гомоклинический - *համաթեքայնության*

гетероклаинический (հոււն. <i>հետերոս</i> - այլ, տարբեր) - տարաթեքայնության	
гомоскедастичность (հոււն. <i>սկեդայս</i> - ցրում, սփռում) - համացրիվություն	
гомоскедастичный	- համացրիվ (ած.)
гетероскедастичный	- տարացրիվ (ած.)
гетероскедастичность	- տարացրիվություն

Ծանոթություն: Հնարավոր համարել հայերեն որոշ տերմինների հետ ժամանակավորապես գործածել նաև օտար տերմինները, մինչև որ հայերեն տերմինները համընդհանուր գործածություն գտնեն:

6. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ՝ ԳՈՐԾԱԾՎՈՂ ՁՈՒԳԱՀԵՌ ՁԵՎԵՐԻ ՄԻԱՄՆԱԿԱՆԱՅՄԱՆ ԵՎ ՃՇԳՐՏՄԱՆ ՄԱՍԻՆ*

Տեխնիկական մի շարք տերմինների գործածության մեջ նկատված գուգահեռ ձևերը միասնականացնելու և նրանցում ճշգրտումներ նտցնելու նպատակով ՀԽՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր տերմինաբանական կոմիտեն *որոշում է*.

	Գործածվում են	Այսուհետև գործածել
<i>холодная обработка металла</i>	մետաղի սառը մշակում (ալիինքն՝ առանց ջերմություն տալու)	- մետաղի առնամշակում
<i>горячая обработка металла</i>	մետաղի տաք մշակում, շիկամշակում, քեժ մշակում	- մետաղի քեժամշակում
<i>термообработка</i>	ջերմային մշակում	- ջերմամշակում

*Նախագիծը կազմել է Ջ. Հացագործյանը: Հաստատվել է տերմ. կոմիտեի 1980 թ. միստում, վերահաստատվել՝ 1990 թ. մարտին:

<i>горячекатанный</i>	սաք զլցած, շիկագլցված	- քեժագլցած
<i>охлаждение двигателя</i>	շարժիչի սառեցում, հովացում	- շարժիչի հովացում
<i>охлаждение отработанной воды</i>	քանած ջրի սառեցում, հովացում	- քանած ջրի հովացում
<i>градирня</i>	սառնարան (սառնարան= ХОЛОДИЛЬНИК)	- ջրահովարան
<i>подвижный</i>	շարժական (շարժական= передвижной)	- շարժուն, շարժունակ
<i>переносный</i>	շարժական, փոխադրովի	- տանովի
<i>возимый</i>	փոխադրովի, շարժական	- փոխադրովի
<i>поток</i>	հոսք, հոսքնբաց, հոսանք (հոսանք=ток)	- հոսք
<i>поточный</i>	կոնվեյերային, հոսքային	- հոսքային
<i>сток</i>	1. հոսք, հոսանք, հոս (հոսք=поток, հոսանք=ток) 2. հոսարան, ջրափողրակ	- 1. հոս 2. հոսարան
<i>сточный</i>	հոսման, հոսելու	- հոսային, հոսա-
<i>сточные воды</i>	կեղտաջրեր	- 1. հոսաջրեր 2. կեղտաջրեր
<i>приток</i>	1. հոսում, առհոսում,	- 1. ներհոսում

	ներհոսում, ներհոսանք 2. վաակ	2. ներհոսք 3. (աշխ.) վաակ
<i>приточный</i>	առհոսող, ներհոսող	- 1. ներհոս (ած.) 2. ներհոսային, օրինակ՝ ներհոսային օդափոխություն (приточная венти- ляция)
<i>проточный</i>	հոսային, հոսանուս, հոսող	- հոսանուս, օրինակ՝ հոսանուս ջուր (проточная вода)
<i>взлет</i>	թռիչք (թռիչք=полет) թռչելով վեր բարձրանալը	- վերթիռ
<i>вылет</i>	1. (օդ.) թռիչք 2. (շին., մեք.) արտաթռիչք, արտածք	- 1. (օդ.) արտաթիռ 2. (շին., մեք.) արտածք օրինակ՝ ինքնաթիռի արտաթիռ (вылет самолета), էլեկտրոն- ների արտաթիռ (вы- лет электронов), ամրաթձիչի սլաքի արտածք (вылет стрелы крана)
<i>влет</i>	ներս թռչելը	- ներթիռ
<i>пролет</i>	1. (շին.) թռիչք, հենամեջ բացվածք, աչք (կամբջի) 2. (երկթղ.) կանգամեջ, կայարանամիջոց 3. (օդ.) թռչել անցնելը	- 1. (շին.) հենամեջ 2. (առան.) կայա- նամեջ 3. (օդ.) անցարիռ
<i>заход</i>	մտնելը, անցնելը	- առմուս, օրինակ՝ վայրէջքի առմուս,

վայրէջքանում
(заход на посадку)

проход

1. երթանցք, անցք, անց, անցատեղ, անցարան
2. արանք
3. անցամաս, անց

- **1. անցարան**
- 2. միջանցք**
- 3. (մեք.) անց**

проходной

1. միջանցիկ (միջանցիկ =сквозной), միջանցուկ
2. անցարդունան, քողանցման
3. անցահատ
4. (էլ.) անցումային

- **1. միջանցուկ**, օրինակ՝ միջանցուկ սենյակ (проходная комната)
- 2. անցա**— օրինակ՝ անցաանակ (проходная будка)
- 3. անցակտրիչ** (проходной резец)
- 4. (էլ.) անցումային**, օր.՝ անցումային մեկուսիչ (проходной изолятор)

проходка

1. (հանք.) անցում, հորատանցում, հորատում (հորատում=бурение, անցում=переход),

- **1. (հանք.) հորատանցում**

2. (մեք., շին.) անցահատում

- 2. (մեք., շին.) անցահատում**

переход

1. անցում, անցատեղ, անցարան
2. տարանցում
3. տարանցք

- **1. անցում**
- 2. տարանցում**
- 3. տարանցք**, օրինակ՝ ստորգետնյա անցում (подземный переход), լայնուկով տարանցք (переход с раструбом)

<i>сход</i>	1. (տերստ.) դուրս ընկնելը (թելի՝ մասրայից) 2. (սվտ.) զուգամիտում (անիվների)	- 1. (տերստ.) ադտանկում 2. (սվտ.) զուգամիտում
<i>главка</i>	1. հալում 2. հալվածք	- 1. հալում 2. հալք
<i>оплавление</i>	շրջահալում	- երեսահալում, շրջահալում
<i>расплав</i>	հալույթ	- հալույթ
<i>сплав</i> ¹	ծուլվածք, համածուլվածք (ծուլվածք=литье), միահալվածք	- համահալվածք
<i>сплав</i> ²	լուղարկում, լաստառաքում	- լաստառաքում
<i>отливка</i>	1. ծուլում 2. ծուլույթ, ծուլվածք, (ծուլում=литье)	- 1. ծուլակաղապա- րում, լցակաղապա- րում 2. ծուլույթ, լցույթ
<i>сварка</i>	զոդում (զոդում=пайка) եռակցում, եռք	- 1. եռակցում 2. եռակցույթ
<i>спекание</i>	1. եռակալում, խտացում 2. շեղջաքարացում	- եռակալում
<i>выносливость</i>	դիմացկունություն, սոկունություն	- դիմացկունություն

долговечность

երկարակեցություն,
հարատևություն,
երկարատևություն
(=долгота)

- երկարակեցություն

ресурс

պաշար, միջոց, ռեսուրս

- 1. (սնտ.) պաշար,
ռեսուրս, միջոց
2. (մեք.) գոյապաշար,
գոյատևություն,
օրինակ՝ ավտոմե-
քենայի գոյատևու-
թյուն (ресурс авто-
машины)

высотный

1. բարձրության,
բարձր-

- 1. բարձրա-,
բարձրային

2. բարձրաբերձ

2. բարձրաբերձ,
օրինակ՝ բարձրա-
բույր (высотный
полет), բարձրաշենք

(высотное здание)

высотность

- 1. բարձրացություն
(սեղանքի)
- 2. բարձրաբերձու-
թյուն (շենքի)

коэффициент высоты

- բարձրացության
գործակից

оборудование

1. սարքավորում
2. սարքավորություն,
սարք (сарք=прибор)

- 1. սարքավորում
2. սարքավորանք

прибор

1. գործիք (գործիք=
инструмент), փորձա-
սարք, սարք

- 1. սարք

	2. սպար, պարագաներ	2. սպար , օրինակ՝ չափիչ սարք (измерительный прибор), անիվներու սպար (бритвенный прибор)
<i>устройство</i>	1. սարք (սարք=прибор), հարմարանք 2. սարքում, շինում	- 1. սարքածռ , սարքվածք 2. սարքում
<i>изыскание</i>	հետազոտություն, հետախուզություն (հետազոտություն= исследование, հետախուզություն= разведка)	- հետազոտություն , օրինակ՝ ճանապարհի ծրագծի հետազոտություն (изыскание дорожной трассы)
<i>изыскательский</i>	հետախուզական (հետախուզական= разведочный)	- հետազոնական
<i>геологоразведочный</i>	երկրաբանական-հանքախուզական	- երկրահետախուզական
<i>хозяйственный</i>	1. տնտեսական 2. տնտեսավարական 3. տնտեսությանն անհրաժեշտ	- 1. տնտեսական 2. տնտեսավարական 3. տնտեսային , օրինակ՝ տնտեսային խանութ (хозяйственный магазин)
<i>операция</i>	1. գործողություն 2. (ֆին., առևտ.) գործառնություն	- 1. գործողություն 2. գործույթ 3. (ֆին., առևտ.) գործառնություն
<i>многооперационный</i>		- բազմագործույթ

воздействие

ներգործություն,
ազդեցություն

- **ներգործություն**,
օրինակ՝ հողմային
ներգործություն
(ветровое воздей-
ствие)

влияние

ազդեցություն,
ներգործություն

- **ազդեցություն**,
օրինակ՝ ազդեցու-
թյան գիծ (линия
влияния)

замораживание

սառեցում

- **1. սառեցում**
2. սառում
3. սառնապահում
օրինակ՝ բետոնի
սառեցում (замора-
живание бетона),
շարժիչի սառում
(замораживание
двигателя), մոթի-
ների սառնապա-
հում (заморажи-
вание шкур)

вымораживание

1. սառեցնելով
ախտահանելը,
սառեցնելով ոչնչացնելը
2. ցրտացմամբ կամ
ցրտաչոր անելը

- **սառնահարում**

морозостойкость

ցրտակայունություն,
ցրտադիմացկունություն

- **1. (շին.) սառնակա-
յունություն**
2. (գյուղատ.)
ցրտակայունություն

размораживание

սառեցրածը հեռ
բերելը՝ հալեցնելը

- **1. ապասառեցում**
2. ապասառում

изделие

արաադրանք, շինված
բան, ապրանք,
պատրաստվածք,
գործվածք, աշխատանքի
արդյունք, կերտվածք

- 1. արտադրանք
2. շինվածք
3. ապրանք
4. իր
5. -եղեն, օրինակ՝
արդյունաբերական
արաադրանք
(промышленное
изделие), բետոնե
շինվածք (бетон-
ное изделие), լայն
սպառման անարկա
(изделие широкого
потребления), կա-
նույրի իր (изделие
мебели), հրուշակե-
ղեն (кондитерское
изделие)

выход

1. ելք
2. արդյունք, բերք

- 1. ելք
2. ելուստ, օրինակ՝
պահեստային ելք
(запасный выход),
բետոնի ելք (выход
бетона), արմատա-
կան ապարների
ելուստ (выход
коренных пород)

полировка

ողորկում, կռկում

- ողորկում

лощение

փայլեցում, հղկում,
ողորկում

- կռկում

шлифовка

հղկում, կռկում, ողորկում

- հղկում

заполнитель

լցանյութ, լցիչ

- լցանյութ

наполнитель

լցիչ, լցանյութ, լցուկ

- լցափուշի

Չանգված	M	կիլոգրամ	կգ	кг	kg	<i>Կիլոգրամ</i> ՝ զանգվածի միավոր, հավասար կիլոգրամի միջազգային նախատիպի զանգվածին:
Ժամանակ	T	վայրկյան	վ	c	s	<i>Վայրկյան</i> ՝ ժամանակի միավոր, հավասար ցեզիում – 133-ի ատոմի հիմնական վիճակի երկու գերբարակ մակարդակների միջև անցմանը համապատասխանող ճառագայթման 9 192 631 770 պարբերության:
Էլեկտրական հոսանքի ուժ	I	ամպեր	Ա	A	A	<i>Ամպեր</i> ՝ այն անփոփոխ հոսանքի ուժը, որը, անցնելով վակուումում իրարից 1 մ հեռավորության վրա դասավորված անվերջ երկար և չնչին մեծության շրջանային լայնական հատույթի մակերեսներ ունեցող երկու զուգահեռ ուղղաձիգ հաղորդիչներով, այդ հաղորդիչների միջև երկարության յուրաքանչյուր մետրի վրա առաջացնում է $2 \cdot 10^{-7}$ Ն-ի հավասար փոխազդեցության ուժ:
Ջերմադինամիկական ջերմաստիճան	Θ	կելվին	Կ	K	K	<i>Կելվին</i> ՝ ջերմադինամիկական ջերմաստիճանի միավոր, հավասար քիլեռակի կետի ջերմադին-

Նյութի քանակ	N	մոլ	մոլ	10^{-3} mol	mol	նախնական ջերմաստիճանի 1/273, 16 մասին:
						Մոլ` նյութի քանակի միավոր, հավասար այն համակարգի նյութի քանակին, որում պարունակվում են այնքան կառուցվածքային տարրեր (ատոմներ, մոլեկուլներ, իոններ, էլեկտրոններ և այլ մասնիկներ կամ մասնիկների հատկորոշված խմբեր), որքան ատոմներ են պարունակվում 0,012 կգ ածխածին – 12-ում:
Լույսի ուժ	J	կանդելա	կդ	кд	cd	Կանդելա` լույսի ուժի միավոր, հավասար 540.10^{12} Հց հաճախությամբ միագույն ճառագայթում արձակող աղբյուրի լույսի ուժին տրված ուղղությամբ, որի ճառագայթման ուժն այդ ուղղությամբ 1/683 Վտ/սռ է:

2. Լրացուցիչ միավորներ

Հարթ անկյուն	-	ռադիան	ռադ	рад	rad	Ռադիան` անկյուն շրջանագծի երկու շառավիղների միջև, որը շրջանագծից հատում է երկարությամբ շառավիղին հավասար աղեղ:
--------------	---	--------	-----	-----	-----	---

Մարմնային անկյուն	-	ստեռա- դիան	սո	ср	sr	<i>Ստերոսդիան</i> ՝ այն մարմնային անկյունը, որի զագաթը գտնվում է զնդի կենտրոնում, և որը զնդային մակերևույթից հատում է երկարությամբ շառավղին հավասար կողմ ունեցող քառակուսու մակերեսին հավասար մակերես:
-------------------	---	----------------	----	----	----	--

3. Առանձնակի անուններ ստացած ածանցյալ միավորներ

Ուժ	LMT^{-2}	նյութոն	Ն	H	N	<i>Նյութոն</i> ՝ ուժի միավոր, հավասար այն ուժին, որը 1 կգ զանգված ունեցող մարմնին հաղորդում է 1 մ/վ ² արագացում իր գործողության ուղղությամբ:
Ճնշում	$L^{-1}MT^{-2}$	պասկալ	Պ	Па	Pa	<i>Պասկալ</i> ՝ ճնշման միավոր, հավասար այն ճնշմանը, որն առաջացնում է 1 Ն ուժը՝ հավասարաչափ բաշխվելով իրեն ուղղահայաց 1 մ ² մակերես ունեցող մակերևույթի վրա:
Աշխատանք, էներգիա, ջերմության քանակ	L^2MT^{-2}	ջոուլ	Ջ	Дж	J	<i>Ջոուլ</i> ՝ աշխատանքի, էներգիայի և ջերմության քանակի միավոր, հավասար այն աշխատանքին, որը կատարում է 1 Ն ուժն իր գործողության ուղղությամբ մարմինը 1 մ տեղափոխելիս:

Հզորություն	L^2MT^{-3}	վատտ	Վտ	Вт	W	Վատտը՝ հզորության միավոր, հավասար այն հզորությանը, որի դեպքում 1 Ջ աշխատանքը կատարվում է 1 վ-ում:
Պարբերական գործընթացի հաճախություն	T^{-1}	հերց	Հց	Гц	Hz	Հերց՝ պարբերական գործընթացի հաճախության միավոր, հավասար այն պարբերական գործընթացի հաճախությանը, որի դեպքում գործընթացի մեկ շրջապտույտը կատարվում է 1 վ-ում:
Էլեկտրականության քանակ (Էլեկտրական լիցք)	ТІ	կուլոն	Կլո	Кл	C	Կուլոն՝ էլեկտրականության քանակի միավոր, հավասար էլեկտրականության այն քանակին, որը 1 Ա ուժ ունեցող հոսանքի դեպքում հաղորդչի լայնական հատույթով անցնում է 1 վ-ում:
Էլեկտրական լարում, պոտենցիալ, պոտենցիալների տարբերություն, էլեկտրաշարժ ուժ	$L^2MT^{-3}I^{-1}$	վոլտ	Վ	B	V	Վոլտ՝ Էլեկտրական լարման միավոր, հավասար այն էլեկտրական լարմանը, որն էլեկտրական շղթայում առաջացնում է 1 Վտ հզորությանը 1 Ա ուժ ունեցող հաստատուն հոսանք:
Էլեկտրաունակություն	$L^{-2}M^{-1}T^4I^2$	ֆարադ	Ֆ	Ф	F	Ֆարադ՝ էլեկտրաունակության միավոր, հավասար այն կոնդենսատորի էլեկտրաունակությանը, որի 1 Կլոն լիցքի դեպքում

Էլեկտրական դիմադրություն	$L^2MT^{-3}I^{-2}$	օհմ	Օմ	Ω	նրա շրջադիրքների միջև լարումը 1 Վ է: Օհմ՝ էլեկտրական դիմադրության միավոր, հավասար այն հաղորդչի դիմադրությանը, որի ծայրերի միջև 1 Ա ուժ ունեցող հոսանքի դեպքում առաջանում է 1 Վ լարում:
Էլեկտրահա- ղորդականու- թյուն	$L^{-2}MT^{-2}I^{-1}$	սինենս	Ս	C_M	Սինենս՝ էլեկտրահա- ղորդականության միա- վոր, հավասար է 1 Օմ դիմադրությանը հաղորդչի էլեկտրահաղորդակա- նությանը:
Մագնիսական հոսք	$L^2MT^{-2}I^{-1}$	վեբեր	Վբ	Bb	Վեբեր՝ մագնիսական հոսքի միավոր, հավա- սար այն մագնիսական հոսքին, որի միջև գրո- նվագելու դեպքում, նրան հարակցված 1 Օմ դիմա- դրությանը էլեկտրական շղթայի հաղորդչի լայնա- կան հատությամբ անցնում է 1 Կլն էլեկտրականու- թյան քանակ:
Մագնիսական ինդուկցիա	$MT^{-2}I^{-1}$	տեսլա	Տ	Ta	Տեսլա՝ մագնիսական ինդուկցիայի միավոր, հավասար այն մագնի- սական ինդուկցիային, որի դեպքում լայնական հատությի 1 մ² մակերե- սով անցնում է 1 Վբ մագնիսական հոսք:

Ինդուկտիվություն	$L^2MT^{-2}I^{-2}$	հենրի	Հ	Γ_H	H	Հենրի ՝ ինդուկտիվության միավոր, հավասար այն էլեկտրական շղթայի ինդուկտիվությանը, որին հարակցվում է 1 Վբ մագնիսական հոսք՝ շղթայով 1 Ա ուժ ունեցող հաստատուն հոսանք անցնելիս:
Լուսային հոսք	J	յումեն	լմ	ΔM	lm	Լյումեն ՝ լուսային հոսքի միավոր, հավասար այն լուսային հոսքին, որն արձակում է 1 կդ լույսի ուժ ունեցող կետային աղբյուրը՝ տեղավորված 1 սմ մարմնային անկյան զազաբում:
Լուսավորվածություն	$L^{-2}J$	յուքս	լք	ΔK	lx	Լյուքս ՝ լուսավորվածության միավոր, հավասար այն մակերևույթի լուսավորվածությանը, որի 1 մ ² մակերեսի վրա հավասարաչափ ընկնում է 1 լմ լուսային հոսք:
ճառագայթման (ճառագայթման կլանման) քանակ	L^2T^{-2}	գրեյ	Գր	Γp	Gy	Գրեյ ՝ ճառագայթման (ճառագայթման կլանման) քանակի միավոր, հավասար ճառագայթման այն քանակին, որը համապատասխանում է ցանկացած տեսակի իոնացնող ճառագայթումով ճառագայթահարված 1 կգ զանգված ունեցող նյութին հաղորդված 1 Ջ էներգիային:

Նուկլիդի ակտիվություն ռադիոակտիվ աղբյուրում	T ⁻¹	բերքերել	Բք	Եκ	Եզ	<i>Քերպերեզ</i> ՝ նուկլիդի ակտիվության միավոր ռադիոակտիվ աղբյուրում, հավասար նուկլիդի այնպիսի ակտիվությանը ռադիոակտիվ աղբյու- րում, որտեղ տրոհման մեկ գործողությունը կատարվում է 1 վ-ում:
--	-----------------	----------	----	----	----	--

Ե. ՌՈՒՍԵՐԵՆ ԵՎ ՕՏԱՐ ԾԱԳՈՒՄ ՌԻՆԵՑՈՂ ԲԱՌԵՐԻ ՏԱՌԱԴԱՐՉՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

1. ՌՈՒՍԵՐԵՆ ԵՎ Ի ՀԱՅԵՐԵՆ ՏԱՌԱԴԱՐՉՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ*

Ռուսերեն եւ-ն տառադարձել հայերեն *իե*. օրինակ՝ Вьетнам-Վիետնամ, премьер-պրեմիեր, премьера-պրեմիերա, Поволжье-Պովոլժիե, Моабер-Մոլիեր, фелбетон-ֆելիետոն և այլն:

2. ԱՆԳԼԵՐԵՆ ԲԱՌԵՐԻ ՀԱՅԵՐԵՆ ՏԱՌԱԴԱՐՉՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

Վերջին ժամանակներս մեր գրականության մեջ և մամուլում ակնհայտ հակում է նկատվում օտար բառերի և հատուկ անունների տառադարձության վերաբերյալ տերմինաբանական կոմիտեի 1939 թվականին հաստատած կանոնները չըջանցելու և տառադարձությունն ավելի մոտեցնելու փոխառության աղբյուրի արտասանական առանձնահատկություններին: Այդ բանը հատկապես նկատելի է անգլերեն բառերի ու անգլերենում գործածվող հատուկ անունների տառադարձության մեջ: Այսպես, ի տարբերություն լատինագիր լեզուների *p, t, k* (c)-ն հայերենում *պ, տ, կ* տառադարձելու մասին տերմինաբանական կոմիտեի հաստատած կանոնի՝ վերջին ժամանակներս անգլիական *p, t, k* (c)-ն սկսել են տառադարձել *փ, թ, ք*, ընդ որում նույնիսկ այն դիրքերում, երբ շնչեղությունն ուժեղ չէ: Ի տարբերություն անգլ. *w*-ն *վ* տառադարձելու վերաբերյալ կանոնի՝ միտում է նկատվում այն *ու* տառադարձելու: Նկատվում են նաև բազմաթիվ այլ շեղումներ, որոնք առաջ են բերում գրության երկվություններ:

Ելնելով վերոհիշյալից և նպատակ ունենալով միասնականացնել անգլերեն բառերի և անգլերենում գործածվող հատուկ անունների տառադարձության սկզբունքները՝ Հայկական ԽՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր տերմինաբանական կոմիտեն հանձնարարում է ամենից ավելի մեծ դժվարություններ հարուցող դեպքերի համար առաջիկայում ղեկավարվել հետևյալ կանոններով.

*Նախագիծը կազմել է Ա. Ղաթիբյանը: Հաստատվել է տերմ. կոմիտեի 1957 թ. մայիսի նիստում:

**Նախագիծը կազմել է Գ. Ջահուկյանը: Հաստատվել է տերմ. կոմիտեի 1983 թ. սեպտեմբերի նիստում:

1. Անգլերեն *p, t, k*-ն *k* արտասանվող *c*-ն տառադարձել բառասկզբում *փ, թ, ք*, մնացած դիրքերում *պ, տ, կ*, վերջին դեպքում կրկնավորները ևս տառադարձել մեկ բաղաձայնով. օրինակ՝ Փիռլ Հարբոր (Pearl Harbor), Փիտ (Pitt), Փայկ (Pike), Փեյն (Paine), Թաֆտ (Taft), Թեյլոր (Taylor), թենիս (tennis), թիմ (team), Թոյնբի (Toynbee), Թուկ (Tooke), Քարտեր (Carter), Քենեդի (Kennedy), Զլարկ (Clark), Լիպման (Lippman), բադմինտոն (badminton), Դուայտ (Dwight), միստեր (mister), Ռուզվելտ (Roosevelt), Սկոտ (Scott), Ֆուտբոլ (football), Լասկի (Laski), Հոկ (Hawke) և այլն:

Ծանոթություն 1: Արդեն լայն տարածում գտած բառերի և հատուկ անունների ավանդական ուղղագրությունը թողնել անփոփոխ, օրինակ՝ կոնգրեսմեն (congressman), կու-կլուքս-կլան (Ku Klux Klan), (փիխկ. քու-քլուքս-քլան), Նյու Յորք (փիխկ. Նյու Յորկ), Տվեն և այլն:

Ծանոթություն 2: Բառակազմի *p, t, k* (*c*)-ի տառադարձության ընդհանուր կանոնը տարածել այն բաղադրյալ բառերի և հատուկ անունների երկրորդ բաղադրիչների վրա, որոնց բաղադրիչները լիովին գիտակցվում են (մասնավորապես, եթե դրանք միացվում են ապաթարցով, գծիկով կամ զրկվում անջատ)։

օրինակ՝ Ջորջթաուն (Georgetown), Օ'Քեյսի (O'Casey), Օ'Քոնոր (O'Connor), Մակ-Թավիշ (MacTavish), Մակ-Քինլի (MacKinley), Մակ-Քորմիկ (McCormick), Փորտ Փատրիկ (Port Patrick), Լեյկ Փլեյսիդ (Lake Placid) և այլն:

2. Որպես մեկ խուլ բաղաձայն արտասանվող անգլ. *ch, ck, th* տառակապակցությունները տառադարձել *չ, կ, թ*. օրինակ՝ չարտիզմ (chartism), չեմպիոն (champion), Բակ (Buck), Լոկ (Lock), հոկեյ (hockey), նոկդաուն (knock down), Թոմսոն (Thomson), Սմիթ (Smith), Փլիմութ (Plymouth) և այլն:

3. Չայնեզ բաղաձայններից հետո *q* արտասանվող անգլ. *s*-ն տառադարձել *ս*. օրինակ՝ «Թայմս» (Times), Ջեյմս (James), Ուելս (Wales) և այլն:

Ծանոթություն: Ավանդաբար *q*-ով գրվող և արտասանվող բառերը թողնել *q*-ով. օրինակ՝ Թեմզա (Thames), Չարլզ (Charles):

4. Անգլիական *w(h)*-ն տառադարձել (հատկապես բառասկզբում) *ու* (ընդ որում *wa*-ն՝ *ուռ*), բացի այն դեպքերից, երբ հայերենում իրար կողքի կարող են հանդիպել երկու *ու* (անգլ. *wu, wo, woo*), այս դեպքում գրել և արտասանել *վու*. օրինակ՝ Ուոլտոն (Walton), Ուայտհոլ (Whitehall), Ուայտ (White), Ուայլդ (Wilde), Ուիլկինսոն (Wilkinson), Ուոլստրիտ (Wall Street), Բրոդուեյ (Broadway), Դուայտ (Dwight),

Փորտ Քոնուեյ (Port Conway), բայց՝ Վուդ (Wood), Վուդրո (Woodrow), Վուլֆ (Wolfe) և այլն:

Ծանոթություն: Ավանդաբար վ-ով տառադարձված՝ լայն տարածում ունեցող բառերի և հատուկ անունների վ-ն պահպանել. օրինակ՝ Վալտեր Սկոտ (Walter Scott), Վաշինգտոն (Washington), վատտ (Watt), Վիլյամ (William), Դարվին (Darwin):

5. Ա-ի և Է-ի միջին արտասանություն ունեցող անգլիական a-ն տառադարձել ա. օրինակ՝ Ադամս (Adams), Ալեն (Allen), Ալիս (Alice), Բաքստեր (Baxter), Հարիսոն (Harrison), Մաքսուել (Maxwell), Նանսի (Nancy), Սանֆորդ (Sanford), Ֆրանկլին (Franklin) և այլն:

Ծանոթություն: Արդեն տարածված բառերի և անունների ավանդական ուղղագրությունը թողնել անփոփոխ. օրինակ՝ դենդի (dandy), Թրումեն (Truman), Լենդլորդ (landlord), չեմպիոն (champion) և այլն:

6. Բաց վանկերում և որոշ դիրքերում որպես *ei* արտասանվող անգլ. a-ն տառադարձել ե. օրինակ՝ Բեկոն (Bacon), Դեվիս (Davis), Ջեմս (James), Ուելս (Wales), Քեմբրիջ (Cambridge) և այլն:

Ծանոթություն: Էյ արտասանվող անգլ. *ey, ai, ay* կապակցությունները տառադարձել եյ. օրինակ՝ Լեյտոն (Leyton), Դեյտոն (Dayton), Թեյլոր (Taylor), Փեյն (Paine) և այլն:

7. Բաց և երկար *o* (օ) արտասանվող անգլիական a-ն տառադարձել բառակազմում *o* և բառամիջում *ո*, ըստ հայերենում *o*-ի և *ո*-ի գրության ընդհանուր կանոնի. օրինակ՝ օլդերման (alderman), Բոլդուին (Baldwin) և այլն:

Ծանոթություն: Ավանդաբար ա-ով գրվող բառերը թողնել անփոփոխ. օրինակ՝ Բալտիմոր (Baltimore), Վալտեր Սկոտ (Walter Scott) և այլն:

8. Անգլերեն բառերի չեղչված վանկերի թուլացող և ը-ին մոտեցող ձայնավորները տառադարձել ինչպես շեշտի տակ գտնված դիրքում ոչ ը-ով. օրինակ՝ Բայրոն և ոչ՝ Բայրըն (Byron), Բեկոն (Bacon), Լիպման (Lippman), միստեր (mister), Օլստեր (Ulster) և այլն:

Ծանոթություն: Թույլատրելի համարել Սանչեստր (Manchester) բառի ավանդական ոչ ե-ով գրությունը:

9. Անգլերեն բառերում հետձայնավորային դիրքում գրվող, բայց չարտասանվող *r*-ն, հազվադեպ նաև գրվող, բայց չարտասանվող *f*-ն հայերենում գրել և արտասանել. օրինակ՝ Ջեֆերսոն (Jefferson), Փիռլ Հարբոր (Pearl Harbor), Քարտեր (Carter), Ֆոլկներ (Faulkner) և այլն:

10. Անգլերենում գործածվող օտարազգի բառերը և օտարների և օրվող հատուկ անունները գրել և տառադարձել ըստ հայերենում

դրանց համար ընդունված գրության և տառադարձության ընդհանուր կանոնների՝ խարտիա, խոլերա, մեխանիկա, փղշտացի, քիմիա, ֆիզիկա, ֆուսֆոր, Անտոնիոս, Դավիթ, Հովսեփ, Ժոզեֆ, Յոսիֆ, Մատթեոս, Սողոմոն, Կանտ, Կարլ, Կոպեռնիկոս, Պլատոն, Պուլչինի, Տոսկա և այլն:

Ծանոթություն: Աստվածաշնչային, հունական, լատինական և այլ ծագման այն հատուկ անունները, որոնք տրվում են անգլիալեզու ժողովուրդների՝ պատկանող անձերի, տառադարձել ըստ անգլերենի տառադարձության կանոնների՝ Բենջամին (Benjamin), Դեվիդ (David), Ջոզեֆ (Joseph), Սոլոմոն (Solomon) և այլն:

3. ՀՈՒՆԱԿԱՆ ԾԱԳՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԲԱՌԵՐԻ ՏԱՌԱԳԱՐՉՄԱՆ ՄԱՍԻՆ*

Հայկական ԽՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր տերմինաբանական կոմիտեի 1939 թ. հոկտեմբերին ընդունած «Ռուսերեն և օտար բառերի տառադարձության նորմաների» մեջ *ph, th, kh, ch* կապակցությունների տառադարձության մասին ասված է ընդհանուր առմամբ՝ առանց հունական ծագման բառերի նկատմամբ կանոնի մասնավորման: Հաշվի առնելով, որ հունական ծագման բառերը մեր տերմինաբանության մեջ զգալիորեն ավելացել են, և շատ հեղինակներ, անտեղակության հետևանքով, շրջանցում են տերմինաբանական կոմիտեի հիշյալ որոշումը, տերմինաբանական կոմիտեն *հանձնարարում է*.

Հունական ծագում ունեցող բառերի *φ, θ, χ* (լատ. *ph, th, kh, ch*) տառադարձել *ֆ, թ, խ*. օրինակ՝ *Ֆաներ, Ֆենոմենալիզմ, Ֆանտաստիկական, ֆիլատելիստ, ֆիլիարմոնիա, ֆոսֆոր, ամորֆ, ամֆիբիա, թեմա, թեոկրատիա, թեորեմ, թերմոդինամիկա, պնեմոթորաքս, խարտիա, խոլերա, խրոնիկա, մեխանիկա, սխեմա* և այլն:

Ծանոթություն 1: Հունարենից կատարված հին փոխառություններում և նրանցից կազմված բառերում պահպանել *փ, ք-ք*՝ փոխանակ *ֆ, խ-խ*, օրինակ՝ փասիան, փյունիկ, քարտ, քարտուղար, քլամիդ և այլն:

*Լախագիժը կազմել է Գ. Ջահուկյանը: Հաստատվել է տերմ. կոմիտեի 1985 թ. սեպտեմբերի նիստում:

Ծանոթություն 2: Զ-ն պահպանել նաև նոր ժամանակներում փոխառված, բայց ավանդաբար փ, ք ունեցող և նրանցով կազմված բառերում. օրինակ՝ քառս, քննիկոս (ֆիզքնիա, կենսաքնիա), քլոր (քլորոֆիլ), քրոն և այլն:

4. ՕՏԱՐԱԶԳԻ ԲԱՌԵՐԻ ԿՐԿՆԱԿ ԲԱՂԱՉԱՅՆՆԵՐԻ ՀԱՅԵՐԵՆ ՏԱՌԱԳԱՐՉՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ*

Օտարազգի բառերի և հատուկ անունների հայերեն տառադարձության մեջ միօրինակություն հաստատելու նպատակով ՀԽՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր տերմինաբանական կոմիտեն *հանձնարարում է*.

1. Օտարազգի և ռուսերեն բառերի կրկնակ բաղաձայնները հայերենի արտասանությանը համապատասխան, որպես կանոն, տառադարձել մեկ բաղաձայնով. օրինակ՝ *ակորդ, ակրեդիտիվ, ալեգրո, ալիգատոր, ամիակ, ամոնիում, Բարբյուս, կլասիցիզմ, կոլեգիա, կոլեկտիվ, կոմունիզմ, կոմունիստ* և այլն:

2. Կրկնակ *րր-ը* (ռուս. рр) ի ձայնավորից առաջ տառադարձել *ր*. օրինակ՝ *բարիկադ, տերիտորիա* և այլն, մնացած դեպքերում՝ *ռ*. օրինակ՝ *Մառ, Պյոռոս, տեռոր* և այլն:

3. Կրկնակ բաղաձայնների՝ հայերենում երկար կամ ուժգին արտասանվելու դեպքում դրանք գրել կրկնակ բաղաձայնով. օրինակ՝ *բրուտո, Ջեմմա, մասսա, նետո, պաննո, վաննա, վատո*:

5. ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՈՐՈՇ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԿԱՐԳԱԲԱՆԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ՉՈՒԳԱՀԵՈՉՎԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆՑՄԱՆ ԵՎ ՃՇԳՐՏՄԱՆ ՄԱՍԻՆ**

Կենդանիների որոշ անվանումների և կարգաբանական տերմինների հայերեն գործածության ավելորդ զուգաձևությունները վերացնելու և դրանցում ճշգրտումներ մտցնելու նպատակով Հայկական ԽՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր տերմինաբանական կոմիտեն *որոշում է*.

*Նախագիծը կազմել է Գ. Զահուկյանը: Հաստատվել է տերմ. կոմիտեի 1985 թ. սեպտեմբերի նիստում:

**Նախագիծը կազմել են Զ. Գրիգորյանը, Ս. Ստեփանյանը և Դ. Գրիգորյանը: Հաստատվել է տերմ. կոմիտեի 1987 թ. դեկտեմբերի նիստում:

1. Կենդանիների ռուսերեն հետևյալ անվանումների փոխարեն այսուհետև գործածել վերջին այումակում բերված տերմինները:

<i>Տերմինի ռուսերեն անվանումը</i>	<i>Գործածվում է</i>	<i>Այսուհետև գործածել</i>
миксин	միքսին	լործուն
чайка	ճայ, որոր	որոր
сойка	ճայ,	ճայ
галка	անտառային կաչաղակ արջնագռավ, ճայեկ (ճայակ)	ճայեկ (ճայակ)
чёрная ворона	արջնագռավ, սև ագռավ, տուլաշ	սև ագռավ
цапля	ծկնկուլ	տառեղ
баклан	ջրագռավ	ծկնկուլ
тур	վայրի ցուլ, վայրի եզ, վայրի տավար, տուր, թուր, քարայծ	1. տուր (անհետացած կենդանի), 2. քարայծ
дикобраз	խոզուկ, փշախոզ, ասեղնախոզ, մացառախոզ, վայրենակերպ	փշախոզ

2. Կենդանիների կարգաբանական հետևյալ ռուսերեն տերմինների փոխարեն այսուհետև հայերենում գործածել վերջին այումակում բերված տերմինները.

мягкотелье	կակղամորթեր, կակղամաշկեր	կակղամարմիններ, փափկամարմիններ
парнокопытные	զույգ սմբակավորներ, զուգամատ սմբակավորներ	կծղակավորներ
непарнокопытные	անզույգ կամ կենտ սմբակավորներ,	սմբակավորներ

բօճ

միասնբակավորներ
սեռ, ցեղ

ցեղ

բօրօճ

տոհմացեղ,
տոհմատեսակ

ցեղատեսակ

**6. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ
ԽՈՐՀՐԳԻՆ ԱՌԵՆԹԵՐ ՏԵՐՄԻՆԱԲԱՆԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ
ՈՐՈՇՈՒՄԸ «ՆԱԽԱՐԱՐ» ԲԱՌԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱԿԱՆԳՆՍԱՆ ՍԱՍԻՆ***

Վերջին ժամանակներում Հայաստանի Հանրապետության մամուլում, պաշտոնական և այլ հրատարակություններում, ինչպես նաև ռադիոհեռուստատեսային հաղորդումներում և հրապարակային ելույթներում *մինիստր* բառի փոխարեն հաճախ գործածվում է *նախարար* բառը:

Տերմինագործության ավելորդ զուգահեռությունը վերացնելու նպատակով և հաշվի առնելով հանրապետության բուհերի համալսարանական ամբիոնների, թերթերի, ամսագրերի, խմբագրությունների, հրատարակչությունների, կոմիտեի տեղական տերմինաբանական հանձնաժողովների, ինչպես նաև առանձին անհատների մեծամասնության կարծիքը՝ Հայաստանի Հանրապետության Նախարարների խորհրդին առընթեր տերմինաբանական կոմիտեն որոշում է.

«Մինիստր և նրանով կազմված մինիստրություն, մինիստրական, մինիստրների խորհուրդ և նման այլ բառերի ու բառակապակցությունների փոխարեն այսուհետև գործածել նախարար, նախարարություն, նախարարական, նախարարների խորհուրդ և նման այլ բառերն ու բառակապակցությունները:

**Նախագիծը կազմել է Դ. Բարսեղյանը: Հաստատվել է տերմ. կոմիտեի 1991 թ. սեպտեմբերի միստում:*

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՈՒՂՂԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԵՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՈՒՂՂԱԳՐԱԿԱՆ-ՈՒՂՂԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ԿԵՏԱԴՐԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. Ուղղագրական-ուղղախոսական բնույթի որոշումների ներքին ստորակարգությունը խիստ պայմանական է, քանի որ ուղղագրության հիմքում, որպես նրա առաջին և հիմնական հիմունք, դրվում է բառերի արտասանությունը. իսկ գրավոր լեզվի արտասանությունը ինքն իր հերթին կախման մեջ է գտնվում ուղղագրությունից: Գրության և արտասանության տարբերությունները շեղումներ են: Այսուամենայնիվ տերմինաբանական կոմիտեի այս շարքի որոշումներից երեքը (1-3) առավելապես բառերի արտասանությանը, ասել է թե՛ ուղղագրությանը վերաբերող որոշումներ են:

1. Երբ 1960-ական թթ. քննվում էր «Ռուսական և օտարազգի հատուկ անձնանունների շեշտադրության մասին» որոշման նախագիծը, լեզվաբանական գրականությունից ու բառարաններից կարելի էր օրինակներ քաղել՝ հիմնավորելու, որ հայերենում ոչ միայն անձերի օտար հատուկ անունները, այլև շատ հասարակ անուններ պահում են հայերենին խորթ իրենց մայրենի շեշտադրությունը: Այսպես, օրինակ, Կ. Սեփենսկու «Երաժշտական տերմինների համառոտ բառարանի» (1955 թ.) հայերեն թարգմանության մեջ, ինչպես ռուսերենում, պահպանված է երաժշտական տերմինների օտար շեշտադրությունը: Այստեղ հայերենի վերջնավանկների կայուն շեշտի փոխարեն կարող եք տեսնել շեշտված ցանկացած վանկ, ինչպես՝ *ա՛րփա, բո՛ւրբեն, օ՛պերա, բիլի՛նա, ժալե՛յկա, կապե՛լա, օկտա՛վա, կոնսեր՛վատորիա, չոնգո՛րի*, նույնիսկ կրկնաշեշտ *մե՛ծափո՛չե, մե՛ծոսոպրա՛նո* և այլն:

Օտար շեշտադրությունը համարելով հայերենի հնչերանգին խորթ, նրա խոսքի առոգանության ու ռիթմի ազգային բնույթը խաթարող երևույթ՝ տերմինաբանական կոմիտեն իր որոշումը սահմանափակել է հատուկ անձնանունների վերաբերյալ՝ այն էլ հնարավոր համարելով անվան օտար շեշտադրությունը պահպանել միայն նրա ուղիղ ձևում, այսպես՝ Լե՛րմոնտով, Մայակո՛վսկի, Զիկոբա՛վա, բայց՝ Լերմոնտովի՛, Մայակովսկու՛, Զիկոբավայի՛:

2. Ուղղախոսական-ուղղագրական նշանակություն ունի տերմինաբանական կոմիտեի՝ «Հայերենին անցած օտար բառերում $\alpha(n)$ ձայնավորի գրության և արտասանության մասին» ընդունած որոշումը: Այդպիսի բառերում $\alpha(n)$ -ի գրությունն ու արտասանությունը մի միասնական կանոնի ենթարկելու նկատառումով տերմինաբանական կոմիտեն սովետ, բոլշևիկ, Մոսկվա, պրոֆեսոր և այլ բառերի օրինակով, որոնցում գրում ենք n և կարդում α , որոշել է n գրել և α կարդալ մաս կոստյում, պոմիդոր, մոնայոր, միկրոֆոն, Նապոլեոն և այլ բառերում: Որոշման այս կետը չի կատարվում, և շարունակում է տիրապետող մնալ այդ բառերում n -ն α արտասանելու (կաստյում, պամիդոր, մամայոր, միկրաֆոն, Նապալեոն) սովորույթը: Այս ուղղախոսական խնդրի լուծումը հավանաբար պատկանում է մեր լեզվի զարգացման հաջորդ փուլին կամ գալիք սերունդներին: Այս տիպի չէ, սակայն, նույն կարգի բառերում հայերենին օտար հնչմամբ մեր նույնիսկ զարգացած ու գրագետ մտավորականների կողմից, որոշման խախտմամբ, փոխառյալ բառերի $\alpha(n)$ -ն p արտասանելու երևույթը: Հայերենի գրական ու ժողովրդական արտասանությանը խորթ է և անընդունելի *պրոֆեսոր, դիրեկտոր, տրակտոր, կոմպոզիտոր* հայահունչ ձևերը *պրաֆեսըր, դիրեկտըր, տրակտըր, կոմպոզիտըր* ձևերով փոխարինելը: Ցավոք սրտի, մեր մտավորականության զգալի մասն անգամ չի հետևում իր մայրենի լեզվի ուղղախոսությանը կամ արտասանական կանոններին: Տառասխալով գրելը կրթություն ստացած մարդու համար անոթալի է, նրա այդ կարգի սխալներն ուղղվում են, մինչդեռ նրա թույլ տված արտասանական սխալներն անուշադրության են մատնվում: Լեզվի գործող նորմաներին համապատասխան անսխալ գրելն ու արտասանելը մարդու գրագիտության առաջին և տարրական չափանիշներն են, այդ բնույթի սխալները չպիտի հանդուրժվեն:

3. Հայկական ԽՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր տերմինաբանական կոմիտեի՝ հայերենի ուղղախոսությանը նվիրված որոշումներից մեկն էլ, որ ներկայացվում է սույն ժողովածուում, վերաբերում է *ժամանակակից հայերենի եռաշարք բաղաձայնների ուղղախոսությանը*: Ինչպես գիտենք, գրական հայերենի սեփական բառապաշարի գրության և արտասանության տարբերությունների բացարձակ մեծամասնությունը վերաբերում է եռաշարք բաղաձայններին: Գրաբարի հնչյունական համակարգի հետագա նեղ բարբառային հնչյունափոխությունները թեև գրական արևելահայերենին չանցան, սակայն հայերենի ընդհանուր բառապաշարի լայն գործածության շատ բառեր նրան անցան ոչ թե գրաբարյան, այլ բարբառային, ժողովրդական

հնչմամբ: Ընդհանրապես պահպանելով գրաբարի ուղղագրությունը և այդ կարգի բառերի արտասանության մեջ հետևելով բարբառին կամ ընդհանուր տերմինով ասած՝ աշխարհաբարին, գրական հայերենը ժառանգեց գրության և արտասանության տարբերություններ ունեցող տասնյակ արմատներ և սրանցից կազմված մի քանի հարյուր բառեր, որոնցում գրաբարի համեմատությամբ արձանագրվում է դիրքային մասնակի հնչյունափոխություն՝ ծայնավորներից և *բ, դ* բաղաձայններից հետո: Այդ բառարմատներում ու բառերում գրաբարի ծայնեղները փոխված են շնչեղ խուլերի, իսկ մասամբ էլ՝ խուլերի (*գարդ-գարթ, աջ-աչ, դեղծ-դեխց, աղբ-ախա*): Եվ քանի որ այս հնչյունափոխությունները համակարգային չեն, այսինքն չեն ընդգրկում լեզվի ամբողջ բառապաշարը, այլ վերաբերում են նույն հնչյունակապակցությունն ունեցող առանձին բառերի միայն, սրանց վերաբերյալ հորինված կանոնները պիտի զուգորդվեն, երևույթն ընդգրկող բառացանկերով, որպիսի համգամանք տեսնում ենք աշխարհաբարի հին և նոր քերականություններում:

Գրական աշխարհաբարի քերականները, սակայն, բաղաձայնների գրության և արտասանության տարբերությունները ներկայացնելիս, սրանց ուսուցման մեջ շեշտը միշտ դրել են ուղղագրության վրա և ներկայացրել են ուղղագրական արժեք ունեցող բառացանկեր միայն: Այս մոտեցման հիմնական պատճառը գրական աշխարհաբարի ուղղախոսության անմշակվածությունը և սրա հետևանքով արտասանական որոշակի կանոնների բացակայությունն ու քերականների ձեռքի տակ վիճակագրական տվյալների կամ ճշգրտված բառացանկերի բացակայությունն էին: Մինչև վերջերս դպրոցական դասագրքերում տեղ գտած ուղղախոսությունը, իբրև այդպիսին, համարյա թե չէր ուսուցվում: Տրվում էին այս կամ այն դիրքում գրությամբ և արտասանությամբ նույնական բառերի ցանկերը (ասենք՝ *բ*-ից հետո *խ* ենք լսում և *խ* գրում հետևյալ բառերում), իսկ գրության և արտասանության տարբերություններ ունեցողների ցանկերը չէին ներկայացվում, քանի որ ունենալով միատեսակ, նախորդ ցանկից տարբերվող գրություն (ասենք՝ *բ*-ից հետո մյուս բոլոր բառերում, եթե լսում ենք *խ* գրում ենք *դ*), սրանք ըստ արտասանության խճավորման ենթարկվելու կարիք չէին զգում: Բայց այս հավասարապես *դ*-ով գրվող բառերի մեջ ե՞րբ է, որ *դ*-ն *դ* է արտասանվում, երբ՝ *խ*, այս ուղղախոսական նշանակության կանոնը և նրա համապատասխան բառացանկը մնում էին ուսուցումից դուրս: Դպրոցական նոր դասագրքում, 1966 թ. սկզբից, պրոֆ. Էդ. Աղայանը դպրոցական ուսուցման որոշակի առարկա

դարձրեց նաև ուղղախոսությունը՝ դասագրքի համապատասխան բաժնում զետեղելով ոչ միայն օտար բառերին, այլև հայերենի սեփական բառապաշարին վերաբերող ուղղախոսական նշանակության բառացանկեր ու կանոններ:

Տերմինաբանական կոմիտեի «*ր-ից, դ-ից և ձայնավորներից հետո ք, գ, դ, ձ, ջ տառերի արտասանության մասին*» որոշումը իր մատով ճշգրտեց և օրինականացրեց դասագրքի այդ ուղղախոսական բառացանկերն ու կանոնները:

Գրությունից տարբերվող արտասանություն ունեցող եռաշարք բաղադրանքներ ունեցող բառերի ցանկերի ճշգրտումներից նախ պարզվեց, որ միշտ «և այլն»-ով ներկայացվող այդ բառացանկերը այնքան էլ երկար չեն: Դեռ ավելին, երբեմն այդպիսի ուղղախոսական տարբերություններ ունեցող բառերի թիվը շատ ավելի քիչ է, քան դրանց դիմաց ներկայացվող նույն գրությունն ու արտասանությունն ունեցող բառերի թիվը: Այնուհետև բացահայտվեցին հայերենի հնչյունաբանության պատմական զարգացմամբ պայմանավորված ուղղախոսական որոշ միտումներ: Այսպես՝ *ր-ից, դ-ից և ձայնավորից* հետո ժամանակակից հայերենի ձայնեղների խուլ-շնչեղացման հնչյունական իրողությունը, իբրև բարբառային հնչյունափոխական իրողություն, գործունե հնչյունափոխական երևույթ չէ: Այդ հնչյունափոխությանը չեն ենթարկվել գրաբարից աշխարհաբարին անցած ոչ բարբառային-ժողովրդական, այլ գրական արժեք ունեցող բառերը (*արբանյակ, արբշիռ, արգահատանք, արգավանդ, լորձ, խարձ, հորձանք, անուրջ, աղբյուս, գեղձ, բաղձանք, գաղջ, բղջախոհ, աբեթ, ազի, բագին, դեգերել, առոգանել, աղամանդ, ալոջ, գեղջ, խոխոջ, մարմաջ և այլն*): Այդ հնչյունափոխությանը չեն ենթարկվել ու չեն ենթարկվում միջին ու նոր շրջանի փոխառությունները, որ նշանակում է, թե հայերենի բարբառներում էլ այդ հնչյունափոխությունը գործել է միայն վաղ միջին դարերում: Միջին և նոր շրջանի փոխառյալ (*շարբաթ, նարգիզ, բարդան, դարդ, կարդինալ, սարդար, քուրդ, մարջան, խարջ, խուրջին, նաբաթ, չոբան, դագա, բադ, վեջ, հաջի, օգոստոս, գերբ, կարբիդ, էներգիա, լորդ, հորդ, զոր, կաբարե, պրորբեմ, դոգմա, լիզա, մագնիս, վագոն, լեդի, մոդա, սոդա և այլն*) բառերում այդ հնչյունափոխությունը նույնպես չի գործել:

Վերջին տասնամյակներում բարբառների թուլացման ու սրանց ուլորտների սահմանափակման, գրական հայերենի խոսակցական գործառության ուլորտների ընդլայնման հետևանքով գրական լեզվի արագ տարածումը առաջ բերեց գրության և արտասանության տարբե-

րություններ ունեցող բառերի գրային արտասանության միտում: Եթե մի ժամանակ լեզվաբանները ոչ միայն հնարավոր, այլև ճիշտ էին համարում *արծան, արծանագրություն, դագաղ, ճառագայթ, ճագար* ու նման բառերի արժան, արժանագրություն, դաքաղ, ճառաքայտ, ճաքար արտասանությունները, ապա վերջին տասնամյակներում վիճելի դարձան նաև *ներփող, համերք, մարքագետին, միրք, երիտասարթ, խորանարթ, մրջյուն, երչանիկ, արեքակ, նվաք, աչակցել, հաչող, միչ-նակարգ* և այլ բառերի մեջ ձայնեղների այս շնչեղ խուլ արտասանությունը, քանի որ գնալով տարածվեց սրանց ներքող, համերգ, մարգագետին, միրգ, երիտասարդ, խորանարդ, մրջյուն, արեգակ, նվագ, աչակցել, հաչող, միջնակարգ գրային արտասանությունը: Տերմինաբանական կոմիտեի այս որոշումը արտասանական այդ զուգահեռությունների վերացման մեջ իրավացիորեն նախապատվությունը տալիս է սրանց գրային արտասանությանը, որ մի կողմից, արտասանությունը գրությանը մոտեցնելով, կանոնավորում է ուղղախոսությունը, իսկ մյուս կողմից փակում է այդ տարբերությունների հետևանքով առաջացող ուղղագրական սխալների ճանապարհը:

4. Ռուսերենից վերջին տասնամյակներում հայերենին անցել էին հունական *էլեկտր* արմատով բաղադրված մի շարք բառեր՝ *էլեկտրոտեխնիկա, էլեկտրոններգիա, էլեկտրոմոնտոր* և այլն: Հետագայում նույն արմատով հայերենում կազմվեցին *էլեկտրոկայան, էլեկտրոցանց, էլեկտրոսարքավորում* և այլ բառեր, որոնցում *ռ*-ի գործածությունը հայերենում *ա* հոդակապի փոխարեն, գալիս էր ռուսական փոխառությունների մեխանիկական ընդօրինակումից: Ուստի և շուտով տարածվեցին նաև *էլեկտրակայան, էլեկտրացանց, էլեկտրահաղորդիչ, էլեկտրասյուն* հայերենի բառակազմության օրենքով ստեղծված ձևերը՝ առաջացնելով նույն բառերի երկտեսակ գրություն: Քանի որ հայերենում *էլեկտր* արմատը գիտակցվում էր որպես անկախ արմատ և նրանով կազմվում էին նորանոր բառեր, ապա կոմիտեի այս որոշման մեջ սահմանված է *էլեկտր* արմատից հետո գործածել *ա* հոդակապ այն բոլոր բաղադրություններում, որոնց բաղադրիչները հայերենում գիտակցվում են որպես արմատներ: Այսպես՝ *էլեկտրամեխանիկա, էլեկտրահաղորդիչ, էլեկտրակայան, էլեկտրաէներգիա, բայց՝ էլեկտրոլիզ, էլեկտրիֆիկացիա:*

5. ՀԽՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր տերմինաբանական կոմիտեի վերջին տարիներին ընդունած որոշումներից մի քանիսը ուղղագրական-կետադրական բնույթի են: Այդ շարքի՝ «*Հայերենի տառային հապավումների գործածության մասին*» որոշմամբ վերացվում

է հատկացուցչի պաշտոնում տառային հապավումները մեկ *ի* հոլովակա-
կան վերջավորությամբ (*ՀՀ-ի բնակչություն, ՀՀ-ի ծրագիր*), մեկ էլ ա-
ռանց հոլովակա՜ն վերջավորության գործածելու անհիմն զուգահեռու-
թյունը: Հայերենի տառային հապավումները, որ բաղադրյալ անուննե-
րի սկզբնատառերի միացություններ են (*ՄԱԿ=Միավորված ազգերի*
կազմակերպություն), ի տարբերություն ռուսերենի հապավումների,
հոլովվում են. օրինակ՝ *ԽՍՀՄ-ը բազմազգ պետություն է, բարելավ-*
վում են ԽՍՀՄ-ի և ճապոնիայի հարաբերությունները, այդ ժամին
տիեզերաճանվան անցնում էր ԽՍՀՄ-ով, բազմատեսակ ապրանքներ են
արտահանվում ԽՍՀՄ-ից, մարդիկ խաղաղ են ապրում ԽՍՀՄ-ում:
Չնայած այս ընդհանուր կանոնին ռուսերենի նմանողությամբ հայե-
րենը կայուն կապակցություններ կազմող և հաճախակի գործածու-
թյան մեջ եղող տառային որոշ հապավումներ գործածում է առանց հո-
լովակա՜ն վերջավորության. օրինակ՝ *ԽՍՀՄ Գերագույն խորհուրդ,*
ԽՄԿԿ Կենտկոմ, ՀամԼԿԵՄ Կենտկոմ, ՌԽՖՍՀ ֆինանսների մինիստ-
րություն, ՌԽՍՀ Մինիստրների խորհուրդ, ՀԽՍՀ պետպլան, ԼՂԻՄ
Ստեփանակերտի քաղաքվետ և այլն: Տառային հապավումները հատ-
կացուցչի պաշտոնում ուղիղ ձևով գործածելու այս երևույթը դուրս է
եկել վերոհիշյալ բնույթի կայուն կապակցությունների սահմաններից
և այժմ տարածվել է գործունեության մեղ ոլորտ ունեցող այնպիսի
տառային հապավումների վրա, ինչպիսիք են *ԳԱ, ԵԳՄ, ԺՏԵՑ, ԿՄԸ,*
ՌԴՇՋ և այլն (ԳԱ լեզվի ինստիտուտ և ոչ թե ԳԱ-ի լեզվի ինստիտուտ):
Ահա, տառային հապավումների գործածության այս երևույթը ընդիմա-
րացնելով՝ տերմինաբանական կոմիտեն որոշել է տառային հապավ-
ման և նրան անմիջապես հաջորդող հատկացյալի կապակցության
մեջ հապավումը ուղիղ գործածել, եթե այն չի արտասանվում իբրև սո-
վորական բառ (բաղաձայնների և ձայնավորների հնչյունակապակ-
ցություն), այլ կարդացվում է տառերի (ամբողջական կամ մասնակի)
անկախ հեգումով, այսպես՝ *ԽըՍըՀըՄը, ՀըԼըԿԵՄ, ԲըԺըՀը, ԳըՄ, Եը-*
ԳըՄը: Սովորական արտասանություն ունեցող տառային հապավում-
ները հատկացուցչի պաշտոնում հոլովվում են. օրինակ՝ *ՄԱԿ-ի գլխա-*
վոր քարտուղար, ԱՄՆ-ի կոնգրես, ՏԱՄՍ-ի թղթակից, ՖԻԴԵ-ի որոշում,
ՌԵՖԱ-ի գավաթ, ՆԱՏՕ-ի հրամանատարություն, Հայկական ԱԷԿ-ի
բանաձևն: Իսկ անկախ տառային արտասանություն ունեցող հապա-
վումները, երբ անմիջապես դրված են հատկացյալի վրա, վերցվում են
ուղիղ ձևով. օրինակ՝ *ԽՍՀՄ բնակչություն (տարածք, պետություն, քա-*
ղաքացի, աշխարհագրություն...), ԽՄԿԿ ծրագիր (կանոնադրություն,
անդամ...), ՌԽՖՍՀ ֆուտբոլի հավաքական (ժողովրդական արտիստ,

վաստակավոր արտիստ, վաստակավոր մարզիչ...), ՀԽՍՀ գյուղատնտեսություն (բնակչություն, վաստակավոր տնտեսագետ...), ԳԳՀ դեսպան (քաղաքացի, տնտեսություն...), ՉԽՍՀ կանցլեր, ՉԽՍՀ դեսպանություն (տերիտորիա, բնակիչ...), ԳՍՄԿ անդամ (ծրագիր, համագումար), ՈՒՇՁ (ուսանողական շինարարական ջոկատ) դեկավար, ԺՏՆՑ տաղավարներում և այլն:

6. Այս բաժնի համար 6-ի տակ ներկայացվող որոշումը հայերենում -*ցի*, -*ացի*, -*եցի* ածանցներով կազմված տեղաբնակ նշանակող գոյական անունների զուգահեռ ձևերի (*Շիրակացի-շիրակցի*, *Կողբացի-կողբեցի*, *Օձնեցի-օձունցի*, *Նժդիսեցի-նժդիսեցի*, *Գորիսեցի-գորիսցի*, *Ֆրանսացի-ֆրանսիացի* և այլն) անհարկի գործածությունից խուսափելու և լեզվում գործող կանոնների հիման վրա դրանցից ճիշտ ընտրություն կատարելու մասին ընդունած որոշումն է:

Ձուգածությունների առաջացման պատմական ակունքների թեթև ծանոթացումից պարզ երևում է, որ հայերենի զարգացման տարբեր փուլերում վերոհիշյալ ածանցները բառակազմական տարբեր ակտիվություն են ցուցաբերել: Հին մատենագրության մեջ տեղաբնակ նշանակող անունները, անկախ սրանց նախատիպ գոյականի հնչյունական պատկերից, հիմնականում կազմված են -*ացի* ածանցով (*Ալեքսանդրացի*, *Բյուզանդացի*, *Կեսարացի*, *Կողբացի*, *Մակեդոնացի*, *Մոկացի*, *Շիրակացի* և այլն): Հետագա դարերում առավել գործուն է -*եցի* ածանցը (*Դավրիժեցի*, *Խաչենեցի*, *Ճահկեցի*, *Սանահնեցի*, *Սևանեցի*, *Օձնեցի* և այլն): Այսպիսի կազմությունները, դառնալով մարդկանց մականուններ, ավանդաբար անցել են հաջորդ սերունդներին և պատճառ դարձել նույն տեղանուն գոյականից առաջացած երկու-երեք ձևերի (*Տարոնացի-Տարոնեցի-Տարոնցի*, *Խաչենացի-խաչենեցի-խաչենցի*): Իբրև պատմական անձերի մականուններ, սրանք ավանդաբար անցնում են նոր ժամանակներին, որպես անհրաժեշտաբար պահպանվող ձևեր:

Այս կարգի ավանդական անուններ են դարձել երկրների անուններից ածանցված տեղաբնակ նշանակող անունները (*խտալացի*, *գերմանացի*, *խսպանացի*, *աբխազացի* և այլն):

Որոշումը, առանձնացնելով վերոհիշյալ ավանդական կազմությունները, սահմանում է ժամանակակից հայերենում գործող երկու կանոն՝ ա) բազմավանկ գոյականներից տեղաբնակ նշանակող անուններ են կազմվում -*ցի* ածանցով (*հարավ-հարավցի*, *արևելք-արևելքցի*, *Դիլիջան-դիլիջանցի*, *Վրաստան-վրաստանցի*, *Մոսկվա-մոսկվացի*, *Ասիա-ասիացի*), բ) միավանկ գոյականներից

տեղաբնակ նշանակող անուններ են կազմվում *-եցի* ածանցով (*դաշտ-դաշտեցի, սար-սարեցի, Կողբ-կողբեցի, Մուշ-մշեցի, Լոծ-լոծեցի*): Այս ընդհանուր կանոնից շեղվում են վերջնականի ավանդաբար հնչյունափոխվող ձայնավոր ունեցող հայերեն բազմավանկ տեղանուններից և բառավերջի *ի, ո, ու* անհնչյունափոխ ձայնավոր ունեցող օտար բազմավանկ տեղանուններից կազմված գոյականները: *Փարպի-փարպեցի, Էջմիածին-էջմիածնեցի, Քարազուխ-քարազխեցի, Մաստարա-մաստարեցի, Հաճն-հաճնեցի* տիպի կազմություններում բաց վանկի *ի, ա* ձայնավորները շեշտափոխության հետևանքով, ընդհանուր կամ բարբառային հնչյունափոխմամբ նախկինում գործող կանոնների համաձայն, փոխվել են *ե-ի, որը, միանալով -ցի* ածանցին, դարձել է *-եցի* (*Մարտունի-մարտունեցի, Մագրա-մագրեցի*): Փակ վանկի *ի, ու, ք* ձայնավորները շեշտը կորցնելիս ավանդական հնչյունափոխությամբ սղվել են բառավերջում առաջացնելով բաղաձայնների կուտակում (*Կարին-կարն..., Էջմիածին-էջմիածն..., Պոլիս-պոլս..., Օծուն-օծն..., Ջահուկ-ջահկ..., Աղծ(ը)ն-աղծն...*): Եթե բազմավանկ գոյականներից գործող կանոնով լեզվում այս հիմքերից *-ցի* ածանցով գոյականներ կազմվեին, կունենայինք *կարնցի, էջմիածնցի, ջահկցի* և այլ անբարեհունչ ձևերը: Ահա թե ինչու, կանոնից շեղվելով, հնչյունափոխվող վերջնականի ունեցող այս տիպի տեղանուններից գոյականներ են կազմվում ոչ թե *-ցի*, այլ *-եցի* ածանցով (*կարնեցի, էջմիածնեցի, օծնեցի, ջահկեցի* և այլն): Քանի որ վերջնականի ձայնավորի վերը նկարագրված հնչյունափոխությունը ժամանակակից հայերենում գնալով դադարում է գործելուց, ուստի ընդունելի և անսխալ ձևեր են դառնում այդ տիպի անհնչյունափոխ հիմքերից կազմված *նորագավիթցի, թալինցի, ջահուկցի, ջերմուկցի* և այլ ձևերը, և անհամաձայնարարելի կամ սխալ են *գորիսեցի, նորագավիթեցի, թալինեցի, ջահուկեցի, ջերմուկեցի* ձևերը:

Ինչ վերաբերում է *-ի, -ո, -ու* բաց վերջնականի ունեցող բազմականի օտար տերմիններից *-եցի* ածանցով կազմված գոյականներին, ապա այս տիպի կազմությունների կանոնից շեղվելը բացատրվում է նրանով, որ եթե այդ բառերից գոյականներ կազմվեին *-ցի* ածանցով, բառավերջում կստացվեին *-իցի, -ոցի, -ուցի* հնչյունակապակցություններ (*գորկիցի, մեխիկոցի, պերուցի*): Այսպիսի ձևերը խորթ են հայերենի տեղաբնակ նշանակող գոյականների ավանդական կազմությանը, ուստի և այդ տիպի օտար հիմքերից ևս գոյականներ են կազմվում *-եցի* ածանցով (*գորկեցի, մեխիկոցեցի, պերուցեցի*):

Սույն որոշումը արձանագրում և գործածության հանձնարարական

է տալիս վերոհիշյալ ածանցներով երկրների անուններից կազմված գոյականներում գործող մի կանոնի և: Եթե տեղանվան *-իա* վերջնավանկին նախորդում է բազմավանկ արմատ, սրանցում գործող ավանդական *-ացի* ածանցից առաջ *-իա*-ն դուրս է ընկնում, օրինակ *Խտալիա-խտալացի, Ռումինիա-ռումինացի, Յունգարիա-հունգարացի*, իսկ եթե տեղանվան *-իա* վերջնավանկին նախորդում է միավանկ արմատ, *-իա*-ն դուրս չի ընկնում, այլապես գոյականը կդառնար անճանաչելի, օրինակ *Ասիա-ասիացի, Լատվիա-լատվիացի, Դանիա-դանիացի, Բելգիա-բելգիացի* և այլն:

7. «Ժամանակակից հայերենի *հետ (ետ)* արմատի և նրանով կազմված բառերի գրության և արտասանության մասին» որոշումը, մասամբ կապված լինելով հայերենի պատմական հնչյունափոխության ու բառակազմության հետ, սոսկ ուղղագրական որոշում լինելուց բացի, ձեռք է բերում նաև հնչյունաբանական և բառագիտական արժեք:

Գրաբարի բառակազմի՝ ձայնավորին նախորդող *յ* հնչյունի *ի-ի* փոխվելու հետևանքով *Յակոբ-Յակոբ, յետին-հետին, յիշատակ-հիշատակ* հնչյունափոխվել է նաև *յետ (ետ)* արմատը, որը գրաբարում բազմիմաստ նախդիր ու մակբայ էր: *Յետ*-ը, արտասանվելով *հետ* դարձել է *հետ* նախադրությունը (այժմ՝ հետադրություն-կապ համաճարում բառ): Այդ հնչյունափոխությամբ առաջացել են *հետ-յետ, հետազնաց-յետազնաց, հետակայ-յետակայ, հետամուտ-յետամուտ, հետև-յետև, հետո (ի հետո)-յետոյ, հետընթաց-յետընթաց* և այլն համաճարում, քանի որ զուգահեռ շարքերի *յ*-ով սկսվող ձևերը ուղղագրությամբ են միայն տարբերակված նախորդներից, արտասանականորեն այդ շարքերը վաղուց արդեն նույնն են:

1950-60-ական թթ. որոշ շարժում սկսվեց *հետ (ետ)* մակբայը *հետ* կապից տարբերակելու համար, թեև դրանք թե՛ իրենց բառային իմաստով կամ խոսքիմասային արժեքով և թե՛ շարահյուսական գործառությանը որոշակիորեն տարբերակված են և ոչնչով չեն շփոթվում միմյանց, մանավանդ որ *հետ* կապով այժմ մոր բառեր չեն կազմվում:

Այդ տարբերակման գործին ուղղված ջանքերը հանգեցրին այն բանին, որ 1947 թ. հրատարակված դպրոցական ուղղագրական բառարանում տեղ գտած *ետ (=յետ)* արմատով կազմված երեք բառերի (*ետ, ետածգել, ետնալեզվային*) դիմաց նույն բառարանի 1981 թ. հրատարակության մեջ *ետ* գրությամբ են հանձնարարվում *ետադաս, ետազդում, ետընթաց, ետճաշա, ետմահու, ետմամուտք, ետպատերազմյան, ետև, ետևից* բառերը: Իսկ թե ինչո՞ւ *հետադեն, հետին, հետընթացիկ, հետհոկտեմբերյան, հետնորդ* և այլն չեն դառնում *ետա-*

դեն, ետին, ետընթացիկ, ետհոկտեմբերյան, ետնորդ, մնում է անհասկանալի: Այս ուղղագրական շփոթը այնքան տարածվեց, որ նույն արմատից կազմված կամ պարզապես նույն բառերը սկսեցին գրվել երկու տարբեր ուղղագրություններով (*ետ մնալ – հետամնաց, ետ դնել – հետադրություն, ետ ընթանալ – հետընթաց, ետմահու – հետմահու, ետծննդյան – հետծննդյան* և այլն):

ետ, ետև, ետո և այլ ձևերը բարբառային ձևեր են. մի բան, որ հաստատել են դեռևս Հայկազյան բառարանի հեղինակները (տես *Հետև – ռամկ. ետև*): Ժամանակակից հայերենում *ետ* ձևի բարբառային լինելը հավաստում է նաև Ստ. Մալխասյանը իր բացատրական բառարանում: Ասում են, թե Հովհ. Թումանյանը տարբերակել է *ետ*-ն ու *հետ*-ը գրելով «*ետ եկե՛ք... դարձեք իրար հետ եկե՛ք...*», ապա մենք ինչո՞ւ չտարբերակենք: Թումանյանը պարզապես գրական հետ (հին ուղղագրությամբ՝ *յետ*) ձևի փոխարեն գործածել է *ետ* բարբառային-ժողովրդական ձևը և գործածել է շատ անգամ («Քանի գեղին մոտենում ենք, գելերը *ետ* են ընկնում», «Գրում է, նամակը տալիս սուրհանդակին, *ետ* դրկում» և այլն): Բայց Թումանյանը գործածում է նաև *գել, գեղ, դրկում*, մի՞թե մենք էլ պիտի *գայլ, գյուղ, ուղարկել* գրական ձևերը դրանց բարբառային համարժեքներով փոխարինենք: Պարզ է. Թումանյանի ստեղծագործության մեջ այդ ձևերը գեղագիտական արժեք ունեն և գտնվում են իրենց տեղում, նրանց ձեռք չենք տա: Թումանյանն ինքը լավ գիտի, թե երբ գրական ձև պիտի գործածի, երբ՝ բարբառային: Հերոսի խոսքում գործածվում է բարբառային *ետո*-ն («Կըսպանեն, *ետո* պատասխանը դուք կտաք, - բարձրաձայն սպառնում էր Սիմոնը», Երկ., հ. 3, էջ 20), իսկ իր խոսքում՝ գրական *հետո*-ն («Թեչում էր բարձր ամպերի տակ, *հետո* թռիչքը մեղմելով, սկսեց ներքև իջնել», Երկ. հ. 2, էջ 60):

Վերոհիշյալ ուղղագրական և արտասանական շփոթը և բոլորովին անիմաստ ուղղագրական զուգաձևությունները վերացնելու համար տերմինաբանական կոմիտեն որոշել է՝ «Այսուհետև *հետ* (*ետ*) արմատը ամենուրեք, անցատ թե բաղադրյալ, գրել և արտասանել *հետ*, իսկ *ետ, ետո, ետ մնալ, ետնամուտք* և այլ ժողովրդական-բարբառային ձևերի գործածությունը հնարավոր համարել գեղարվեստական գրականության մեջ՝ խոսքի ոճավորման նպատակով:

II. ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

Ա. ՈՒՂՂԱԳՐԱԿԱՆ-ՈՒՂՂԱԽՈՍԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

1. ՌՈՒՄԱԿԱՆ ԵՎ ՕՏԱՐԱԶԳԻ ՀԱՏՈՒԿ ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՀԵՇՏԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ*

Ռուսական և օտարազգի հատուկ անձնանունների շեշտը հայերենում նույնությամբ պահպանել միայն ուղղական ձևում. օրինակ՝ *Պոլշկին, Լերմոնտով, Մայակովսկի, Չիկոբավա, Ծերեթելի* և այլն: Մյուս բոլոր դեպքերում առաջնորդվել գրական հայերենի շեշտադրության կանոններով. օրինակ՝ *պոլշկինյան, Պոլշկինի, Լերմոնտովի, Մայակովսկու* և այլն:

2. ՀԱՅԵՐԵՆԻՆ ԱՆՑԱԾ ՕՏԱՐ ԲԱՌԵՐՈՒՄ Օ(Ո) ԶԱՅՆԱՎՈՐԻ ԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՏԱՍԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

Նոր շրջանի եվրոպական և ռուսական փոխառյալ բառերում *օ(ո)* ձայնավորի գրության և արտասանության մասին տերմինաբանական կոմիտեի դեռևս 30-ական թվականներից գործող որոշման խախտման հետևանքով հայերենում առաջացել են *կոստյում–կաստյում, կոմ–ֆետ–կանֆետ, պոմիդոր–պամիդոր, միկրոֆոն–միկրաֆոն, դիրեկտոր–դիրեկտոր, Ռոստով–Ռաստով, Նապոլեոն–Նապալեոն, Խարկով–Խարկըվ* արտասանական զուգահեռ ձևերը: Սրանցում միօրինակությունն սահմանելու նպատակով տերմինաբանական կոմիտեն որոշում է.

Ա. Հայերենի նորագույն փոխառությունների գրության ու արտասանության մեջ միասնականություն պահպանելու համար, սրանցում *օ(ո)* ձայնավորի *ա* կամ *ը* արտասանությունը համարելով ընդունված արտասանական կանոնների խախտում, այդ բառերում շարունակել գրել և արտասանել *օ(ո)*, այն է՝ *ակորդեոն, կոստյում, կոմֆետ, կոլեկտիվ, միկրոֆոն, մոնտյոր, մորալ, պոմիդոր, պրոպագանդա, սովետ, բոլշևիկ, սովխոզ, դիրեկտոր, պրոֆետոր, տրակտոր, ռեկտոր* և ոչ թե՝

*Նախագիծը կազմել է Ա. Ղարիբյանը: Հաստատվել է տերմ. կոմիտեի 1957 թ. դեկտեմբերի նիստում:

**Նախագիծը կազմել է Գ. Բարսեղյանը: Հաստատվել է տերմ. կոմիտեի 1963 թ. հուլիսի նիստում:

ակարդեոն, կաստյուն, կանֆետ, կալեկտիվ, միկրաֆոն, մանտյոր, մարալ, պամիդոր, պրապագանդա, սավետ, բալչևիկ, սավիտզ, դի-րեկտոր, պրաֆեսոր, տրակտոր, ռեկտոր և այլն:

Բ. Սույն կանոնը պահպանել նաև հատուկ անունների գրության և արտասանության մեջ. գրել և արտասանել՝ *Նապոլեոն, Վիկտոր, Վիլ-տոն, Տոլստոյ, Վորոշիլով, Կոզլով, Կոսիգին, Մոսկվա, Ռոստով, Վորո-նեժ, Խարկով, Սևաստոպոլ, Սիմֆերոպոլ* և ոչ թե՝ *Նապալեոն, Վիկ-տոր, Վիլսոն, Տալստոյ, Վարաշիլով, Կազլով, Կասիգին, Մասկվա, Ռաստով, Վարոնեժ, Խարկըվ, Սևաստապոլ* կամ *Սևաստոպոլը, Սիմֆե-րոպոլը* և այլն:

3. Բ-ԻՑ, Դ-ԻՑ ԵՎ ՉԱՅՆԱՎՈՐՆԵՐԻՑ ՀԵՏՈՐ Բ, Գ, Դ, Զ, Զ ՏԱՌԵՐԻ ԱՐՏԱՍԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ*

Հայերենի ուղղախոսության նորմավորման, բաղաձայնների ար-տասանությունը աստիճանաբար գրությանը մոտեցնելու և սրանց տարբերությունների հետևանքով առաջացող ուղղագրական սխալնե-րը վերացնելու նկատառումներով ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին ա-ռընթեր տերմինաբանական կոմիտեն *որոշում է*.

1. Ա. Բ տառը Բ-ից հետո հետևյալ արմատներում և նրանցից կազմված բառերում արտասանվում է Փ

դարբին (դարենել, դարբնոց), երբ (երբեք, երբեմն), լիրբ (լրբանալ, լրբություն), խրբուկ (բսբ.), հարբել, նուրբ (նրբություն, նրբաճաշակ), որբ (որբանալ, որբանոց), սուրբ (սրբագործել, սրբազան), սրբել (սրբիչ, սրբագրել), ուրբաթ (ուրբաթախոս):

Մնացած բառերում, այդ թվում հատկապես միջին և նոր շրջանի փոխառություններում Բ-ից հետո Բ-ն արտասանվում է Բ. օրինակ՝ *արբանյակ, արբունք, բորբ (բորբոքել), բարբաջանք, բարբարոս, գերբ, կարբիդ, հերբարիում, շարբաթ, սերբ, տուրբին, ուրբանիզմ* և այլն:

Բ. Արբել (*արբենալ, արբեցողություն, ջրարբի, ջրարբել*), բորբել, ծերբակալել (*ծերբազատել*), ներբող (*ներբողել*) արմատներն ու նրանցից կազմված բառերն ունեն երկակի արտասանություն՝ *արբել-արփել (արբեցողություն-արփեցողություն, ջրարբի-ջրարփի), բորբել-բորփել, ծերբակալել-ծերփակալել, ներբող-ներբփող*:

*Սխալագիծը կազմել է Հ. Բարսեղյանը: Հաստատվել է տերմ. կոմիտեի 1969 թ. հուլիսի նիստում:

Նկատի ունենալով հայերենի բաղաձայնների գրային արտասանության տարածման միտումը, ինչպես նաև լեզվի նորմավորման, ուղղափոսական և ուղղագրական սխալների վերացման համար արտասանությունը գրությանը մոտեցնելու նպատակահարմարությունը՝ ուսուցման և ռադիո-հեռուստատեսային հաղորդումների ժամանակ նախապատվությունը տալ այդ բառերի գրային (արբել, արբեցողություն, արբենալ, ջրարբի, բորբել, ձերբակալել, ներբող) արտասանությանը:

2. Ա. Գ տառը Բ-ից հետո հետևյալ արմատներում և նրանցից կազմված բառերում արտասանվում է Բ՝ երգ (երգել, երգիչ, երգեցողություն), թարգման (թարգմանել, թարգմանություն), կարգ (կարգադրել, կարգին, օրակարգ), մարգարե, մարգարիտ, պարզ (պարզատել):

Գ-ն Բ-ից հետո Բ է արտասանվում նաև Գևորգ, Մարգար, Մարգիս անձնանուններում:

Մնացած բառերում, այդ թվում հատկապես միջին և նոր շրջանի փոխառություններում Բ-ից հետո Գ-ն արտասանվում է Գ. օրինակ՝ անարգ (անարգել, անարգանք), արգահատանք, արգանդ, արգասիք, արգավանդ, բարգավաճել, բուրգ, գիրգ, գորգ, զարգանալ, ներգո (ներգոյական), ողբերգու, քնարերգու, հարգել (հարգանք), մարգ (մարգախոտ), արգոսիզմ, էներգիա, թարգ տալ, մարգարին, նարգիզ, ֆուրգոն և այլն:

Բ. Արգելք (արգելակել, արգելել), համերգ, (մեներգ, գովերգ), մարգագետին, միրգ (մրգանուշ, մրգաշատ, մրգավան) արմատներն ու նրանցից կազմված բառերը, ինչպես նաև՝ Թորգոմ անձնանունը ունեն երկակի արտասանություն՝ արգելք-արբելք (արգելակ-արբելակ), համերգ-համերք (մեներգ-մեներք), մարգագետին-մարքագետին, միրգ-միրք (մրգանուշ-մրքանուշ), Թորգոմ-Թորքոմ:

Վերհիշյալ (տես՝ կետ 1Բ) նկատառումներով այդ բառերի արտասանության մեջ նախապատվությունը տալ սրանց գրային (արգելք, արգելակ, համերգ, մեներգ, գովերգ, մարգագետին, միրգ, Թորգոմ) արտասանությանը:

3. Ա. Դ տառը Բ-ից հետո հետևյալ արմատներում և նրանցից կազմված բառերում արտասանվում է Թ՝ արդար (արդարև), արդեն, արդյոք, արդյունք, արդյունաբերել, բարդ (բարդել, բարդություն), բարդոց, բերդ (բերդապահ), բրդել (բրդում, բրդոշ), բուրդ, դրդել (դրդապատճառ), երդ (երդիկ, երդակից), երդում (երդվել), զարդ, զերդ, լերդ (լերդանալ, լերդացավ, լերդապատառ), լյարդ, խորդուբորդ, կարդալ, կոկորդ, հաղորդ (հաղորդել, անհաղորդ), մարդ (տմարդի), նյարդ,

որդ (որդակեր, որդնել), որդի, ջարդ (ջարդել), վաղորդյան, վաղորդայն, վարդ, վարդապետ, վրդովել (վրդովմունք, անվրդով), օրիորդ, -որդ (-երորդ, -րորդ), -ուրդ վերջածանցներով կազմված բառերում առաջնորդ, գնորդ, զուգորդել, լծորդ, հաջորդ, ձախորդ, մախորդ, երկրորդ, հինգերորդ, արծակուրդ, ժողովուրդ, խառնուրդ, խորիուրդ և այլն:

Դ-ն Բ -ից հետո թ է արտասանվում նաև Ջարդար, Բարդուղիմեոս, Նվարդ, Սիրվարդ, Վարդան, Վարդևան, Վարդգես, Վարդուհի անձնանուններում:

Մնացած բառերում, այդ թվում հատկապես միջին և նոր շրջանի փոխառություններում Բ-ից հետո Դ-ն արտասանվում է Դ. օրինակ՝ անջրդի, արդ («գարդ»), բարդի, դղիրդ (դղրդալ, ահագնադղորդ), խարդալ (բսբ.), խարդախ, խարդավանել, խլուրդ, խորդ (խորդածագ), խորդենի, կորդ (կորդանալ), կցուրդ, հագուրդ, հարդ, հորդ (հորդել, հորդանալ) հրդեհ, սարդ (սարդոստայն), սարդել, սրդողել, տորդիկ (կենդ.), աբսուրդ, ակորդ, ավանգարդ, բարդան, դարդ, լորդ, կարդինալ, կրոսվորդ, միլիարդ, հորդա, մարդի, սարդար, քուրդ, օրդեր, ինչպես նաև Միիրդատ, Մերդին, Վերդի, Թարվերդի, Ֆորդ և այլն:

Բ. Արդ (արդի, արդիական), աճուրդ, ապարդյուն, գեղարդ, գմբեթարդ (խորանարդ, կորնթարդ, սեղանարդ, կոնարդ, ծվարդ), երիտասարդ, թակարդ, կախարդ, հարդար (հարդարել, հարդարանք), մակարդ, մակարդակ, մավասարդ արմատներն ու նրանցից կազմված բառերը, ինչպես նաև Տրդատ անձնանունը ունեն երկակի արտասանություն՝ արդ (արդի)–արթ (արթի), աճուրդ–աճուրթ, ապարդյուն–ապարթյուն, գեղարդ–գեղարթ, գմբեթարդ–գմբեթարթ, խորանարդ–խորանարթ, երիտասարդ–երիտասարթ, թակարդ–թակարթ, կախարդ–կախարթ, հարդարել–հարթարել, մակարդ–մակարթ, մակարդակ–մակարթակ, մավասարդ–մավասարթ, Տրդատ–Տրթատ:

Վերսիիշյալ (տես կետ 1. Բ.) նկատառումներով այդ բառերի արտասանության մեջ նախապատվությունը տալ սրանց գրային (արդ, արդի, աճուրդ, ապարդյուն, գեղարդ, գմբեթարդ, խորանարդ, երիտասարդ, թակարդ, կախարդ, հարդար, հարդարել, մակարդ, մակարդակ, Նավասարդ, Տրդատ) արտասանությունը:

4. Ա. Չ տառը Բ-ից հետո հետևյալ արմատներում և նրանցից կազմված բառերում արտասանվում է Յ՝ արծակ (արծակուրդ, ընդարծակ, համարծակ, բացարծակ), բարծ (մանկաբարծ), բարծել (ամբարծիչ, վերամբարծ), բարծիթողի, բարծր (բարծրաբերծ, բարծունք), դարծ (դարծյալ, դարծնել, դարծվածք, վերադարծ, իրադարծություն, դիմադարծ), դերծակ, դերծան, խուրծ, հանդերծ (հանդերծյալ, հան-

դերձանք, հանդերձարան), հարձակվել (հարձակում, հարձակողական), համբարձում, ործ (ործակոտոր, ործատել), ործա (բազմործա) (բւբ.), վարծ (վարձատրել, օրավարծ), վարձակ («հարճ»), փործ (փործել, փործագետ, փործանք):

Մնացած բառերում Բ-ից հետո Ջ-ն արտասանվում է Ջ. օրինակ՝ արծագանք, ամործի, լործ (լործաթաղանք, լործունք), խարծ (1. «եղեգնուտ», 2. «ճումբ»), խլործ (բւբ.), հերծ (հերծել, հերձամահ, պեհերծ), հորձան (հորձանք, հորձանուտ), ձործ (ձորձաբեր, ձործեղեն), մերծ (մերձավոր, մերձակա), ուղերծ, քուրծ (քրձագգեստ, քրձեղեն):

Բ. Արձան (արձանագործ, արձանագրություն), արվարձան, վրձին արմատներն ու նրանցից կազմված բառերն ունեն երկակի արտասանություն՝ արձան (արձանագործ, արձանագրություն)–արցան (արցանագործ, արցանագրություն), արվարձան–արվարցան, վրձին–վրցին:

Վերոհիշյալ (տե՛ս կետ 1. Բ.) նկատառումներով այդ բառերի արտասանության մեջ նախապատվությունը տալ սրանց գրային (արձան, արձանագործ, արձանագրություն, արվարձան, վրձին) արտասանությանը:

5. Ա. Ջ տառը Բ-ից հետո հետևյալ արմատներում և նրանցից կազմված բառերում արտասանվում է Ջ՝ արջ (արջաքուն, արջուտ, արջածառ), թրջել, վերջ (վերջին, վերջաբան, վերջիվերջո):

Մնացած բառերում, այդ թվում հատկապես միջին և նոր շրջանի փոխառություններում Բ-ից հետո Ջ-ն արտասանվում է Ջ. օրինակ՝ անուրջ, արջն (արջնաթույր), բաղարջ, լուրջ, կամուրջ, հաղարջ, շուրջ (շրջան, շրջադարձ), որջ, ստերջ, ստրջանալ (ստրջանք), խարջ, խուրջին, մարջան և այլն:

Բ. Արջառ, արջասպ, երջանիկ (երջանկություն), մրջյուն (մրջնանոց, մրջնակեր, մրջնաթթու), քրջիկ, քուրջ (քրջաթուղթ, քրջահավաք, քրջոտ)՝ արմատներն ու նրանցից կազմված բառերն ունեն երկակի արտասանություն՝ արջառ–արչառ, արջասպ–արչասպ, երջանիկ (երջանկություն)–երչանիկ (երչանկություն), մրջյուն (մրջնանոց, մրջնակեր, մրջնաթթու)–մրչյուն (մրչնանոց, մրչնակեր, մրչնաթթու), քրջիկ–քրչիկ, քուրջ (քրջաթուղթ, քրջահավաք, քրջոտ)–քուրչ (քրչաթուղթ, քրչահավաք, քրչոտ):

Վերոհիշյալ (տե՛ս կետ 1. Բ.) նկատառումներով այդ բառերի արտասանության մեջ նախապատվությունը տալ սրանց գրային (արջառ, արջասպ, երջանիկ, երջանկություն, մրջյուն, մրջնանոց, մրջնակեր, մրջնաթթու, քրջիկ, քուրջ, քրջահավաք, քրջոտ) արտասանությանը:

6. ԴԲ տառակապակցությունը հետևյալ արմատներում և նրանցից կազմված բառերում արտասանվում է *խԴ՝ աղբ (աղբակույտ), աղբյուր, եղբայր, ողբ (ողբանվագ, ողբասաց, ողբերգություն):*

Մնացած բառերում ԴԲ տառակապակցությունը արտասանվում է ԴԲ. օրինակ՝ *աղբաղբուկ (բսբ.), աղբյուս, բողբոջ (բողբոջել), կուղբ (կենդ.), շեղբ* և այլն:

7. ԴԳ տառակապակցությունը շաղգամ բառում արտասանվում է *խԿ:*

8. ԴԴ տառակապակցությունը *խեղդ* արմատում և նրանցից կազմված բառերում (*խեղդել, խեղդամահ, բքախեղդ*) արտասանվում է *խՏ:*

9. ԴՂ տառակապակցությունը հետևյալ արմատներում և նրանցից կազմված բառերում արտասանվում է *խՏ՝ դաղծ, դեղծ (դեղծենի, դեղծաշիր), դեղծան, դեղծանիկ:*

Մնացած բառերում ԴՂ-ն արտասանվում է ԴՂ. օրինակ՝ *ատաղծ (ատաղծագործ), գեղծ, գուղծ, բաղծ (բաղծալ, բաղծանք, հայրենաբաղծ), իղծ, հեղծ (հեղծամահ, ջրահեղծ), մաղծ (մելամաղծոտ), մղծավանջ, փղծկալ* և այլն:

10. ԴՅ տառակապակցությունը հետևյալ արմատներում և նրանցից կազմված բառերում արտասանվում է *խԶ՝ աղջիկ, աղջակատակ (բսբ., «փիփերք»), ամբողջ, ողջ (ողջանալ, ողջուն, ողջակեզ, ողջություն, առողջ):*

Մնացած բառերում ԴՅ-ն արտասանվում է ԴՅ. օրինակ՝ *աղջամուղջ, գաղջ (գաղջանալ, գաղջություն), գեղջուկ (գեղջկուհի), բղջախտի, եղջերու, եղջյուր (երջրաթաղանթ, եղջերավոր), զղջալ (զղջում, զղջահար), շեղջ (շեղջել, շեղջակույտ), չղջիկ:*

11. Ա. Բ տառը ձայնավորից հետո հետևյալ արմատներում և նրանցից կազմված բառերում արտասանվում է Փ՝ *արխազ (արխազական, արխազերեն), իբր (իբրև), խաբել (խաբուսիկ, խաբեություն, խաբեբա), հակոբենի, հակոբուկ (բսբ.), շաբաթ (երկուշաբթի, երեքշաբթի):*

Բ-ն ձայնավորից հետո արտասանվում է Փ նաև *Գաբրիել, Դակոր, Սերոր, Քերոր* անձնանուններում:

Մնացած բառերում, այդ թվում հատկապես միջին և նոր չղջանի փոխառություններում Բ-ն ձայնավորից հետո արտասանվում է Բ. օրինակ՝ *աբա, աբբա, աբեթ, գուբ, լոբի, աշխարհաբար (պատահաբար, ընկերաբար), քերորեն (քերովբեն), դաբաղ, զոր, կաբարեն, հորեյար, հորոյ, յակոբին, նաբաթ, չոբան, պորբլեն, ինչպես նաև Աբել, Աբգար, Ձենոբ, Ջաբել, Դաբեթ, Դոր, Ռուբեն* և այլն:

Բ. Գրաբար բառը ունի երկակի արտասանություն՝ *գրաբար-գրա-*

փար: Վերոհիշյալ (տե՛ս կետ 1.Բ.) նկատառումներով նախապատվությամբ լինելու տալ այս բառի գրային գրաբար, արտասանությամբ:

12. Ա. Գ տառը ձայնավորից հետո հետևյալ արձատներում և նրանցից կազմված բառերում արտասանվում է Բ՝ ալֆազ, զազս, զուզել (–վել), էզ (իզական), էզուց, թազավոր, ծազել (ծազում, արևածագ), ծեզ (ծեզին), կարազ, հազնել, (հազը, հազուստ), հոզ (հոզաբարձու, հոզատար, հոզալ), հոզնել, հոզի (հոզեառ, հոզեբանություն), հոզնակի, ծազ (ծազուկ), ձիզ (ձգել, ձգձգել, հրաձիգ), ճիզ (ճգնել, ճգնաժամ), ճրազ, ճրագու, մարազ, մուզ (մզանալ), նորոզ (նորոզել, նորոզում), շոզ, շոզի, ոզի, պատարազ, սուզ (սզալ, սզավոր), տեզր (տազր), ուրազ, օզնել (օզնական, օզնություն), օզուտ (օզտակար, օզտագործել):

Գ–ն ձայնավորից հետո արտասանվում է Բ Գրիգոր և Օզսեն անձնանուններում:

Մնացած բառերում, այդ թվում հատկապես միջին և նոր շրջանի փոխառություններում Գ–ն ձայնավորից հետո արտասանվում է Գ. օրինակ՝ ազահ, ազարակ, ազի, ազռավ, ահագին, արազ, արեզնափայլ, բազին, գազաթ, դազաղ, դեզերել, եղեզ(ն), թազ (թազադրել, թազակիր), հազենալ, հեզ («վանկ»), հեզել («վանկատել»), հեզնանք, ծազար (ծազարածև), ծազար, ծառազայթ, մեզ (միզամած), նվազ («անգամ»), դազանակ, ոզել (առոզանել), ոզորել, ոռոզել, որոզայթ, սազ (սազարած), սեզ (սիզապանծ, սիզաճենմ), վազր, տեզ, փափազ, դազա, դոզմա, դազանակ, զիզզազ, լիզա, կազոր, մազնիս, միզրացիա, վազոն, օգոստոս և այլն:

Գ–ն ձայնավորից հետո Գ է արտասանվում նաև Գարեգին, Գրիգորիս, Գազիկ, Տիգրան և այլ անձնանուններում:

Բ. Արեզ (արեզակ), գոզ (գոզավոր, գոզնոց), երկրպազել, զուզվել (զուզս, զուզաբաժին), զուզադիպել (զուզահեռ, զուզակցել, զուզադիպություն, զուզընթաց), թազուհի, հեզ («խեղճ»), մոզ (մոզական, մոզպետ), նվազ (նվազարան, նվազել), վարազույր արձատներն ու նրանցից կազմված բառերն ունեն երկակի արտասանություն՝ արեզ (արեզակ)–արեք (արեքակ), գոզ (գոզավոր, գոզնոց)–գոք (գոքավոր, գոքնոց), երկրպազել–երկրպաքել, զուզվել (զուզս, զուզաբաժին)–զուքվել (զուքս, զուքաբաժին), զուզահեռ (զուզակցել, զուզընթաց)–զուքահեռ (զուքակցել, զուքընթաց), թազուհի–թաքուհի, հեզ–հեք, մոզ (մոզական, մոզպետ)–մոք (մոքական, մոքպետ), նվազ (նվազել)–նվաք (նվաքել), վարազույր–վարաքույր:

Վերոհիշյալ (տե՛ս կետ 1.Բ.) նկատառումներով նախապատվությամբ

նը տալ այդ բառերի գրային (*արեգ, արեգակ, գոգ, գոգավոր, գոգնոց, երկրպագել, զուգահեռ, զուգընթաց, թագուհի, հեգ, մոգ, մոգպետ, նվագ, վարագույր*) արտասանվանը:

13. Ա. Դ տառը ձայնավորից հետո *դադար (դադարել), դադրել, օդ* արմատներում և նրանցից կազմված բառերում, ինչպես նաև *Թադևոս* անձնանվան մեջ արտասանվում է *Թ*:

Անացած բառերում, այդ թվում հատկապես միջին և նոր շրջանի փոխառություններում Դ-ն ձայնավորից հետո արտասանվում է Դ. օրինակ՝ *ադամանդ, ադամորդի (ադամամուր), բադ, դոդոշ, գոդ (գոդել), ծղրիդ, հոդ (հոդորոշ), ադաթ, անող (էլ.), կատող (էլ.), իդեա, լեդի, լիդեր, լիմոնադ, մարինադ, մոդա, մեթոդ, յոդ, շոկոլադ, ռադիո, սադաֆ, սոդա, օդեկոլոն* և այլն:

Դ-ն ձայնավորից հետո Դ է արտասանվում նաև *Ադամ (Ադամյան), Թողիկ, Թեողիկ, Թեոդոս, Թեոդորոս, Մադոյան* և այլ անձնանուններում:

Բ. *Վառող* բառը և *Սեդրակ* անունը ունեն երկակի արտասանություն՝ *վառող-վառոթ, Սեդրակ-Սեթրակ*:

Վերոհիշյալ (տե՛ս կետ 1.Բ.) նկատառումներով նախապատվությունը տալ այդ բառերի գրային (*վառող, Սեդրակ*) արտասանությանը:

14. Չ տառը ձայնավորից հետո օձ արմատում և նրանից կազմված բառերում (*օձածուկ, օձածև, օձաբույս*) արտասանվում է *Ց*:

15. Ա. Չ տառը ձայնավորից հետո հետևյալ արմատներում և նրանցից կազմված բառերում արտասանվում է *Չ՝ աջ (աջակողմ), առաջ (առաջարկ, առաջին, առաջնորդ, առաջիկա, առաջուց), առջև, առէջք (վայրէջք), մեջ, մեջք, ոջիլ, քաջք*:

Անացած բառերում, այդ թվում հատկապես միջին և նոր շրջանի փոխառություններում Չ-ն ձայնավորից հետո արտասանվում է *Չ*. օրինակ՝ *ալոջ (կենդ.), գեջ, դողդոջ, էջ (էջկապ, էջակալում), խոխոջ (խոխոջուն), իաջորդ, մաթմաջ, շեջ (հրշեջ, անշեջ), վեջ (վեջս չէ), քաջ, քրքիջ, քուջուջ, գաջ, դաջ (դաջել), հաջի* և այլն:

Բ. *Աջակցել, իջնել (իջևան, իջևանատուն, իջեցում), հաջող (հաջողակ, հաջողություն)* արմատներն ու նրանցից կազմված բառերը, *մեջ* արմատից կազմված *անմիջական, միջակ, միջակետ, միջանկյալ, միջանցք, միջատ, միջոց, միջքաղաքային, միջադեպ, միջնակարգ, միջև, միջամտել, ընդմիջում, անընդմեջ* և այլ բառերը, ինչպես նաև *ՈՅ* հոլովիչով հոլովվող բառերը՝ *ջրոջ, կնոջ, ընկերոջ* և այլն, ունեն երկակի արտասանություն՝ *աջակցել-աչակցել, գիջել-գիչել, իջնել-իչնել, հաջողություն-հաչողություն* միջակ-միչակ, միջանցք-մի-

չանցք, միջամտել–միջամտել, ընդմիջում–ընդմիջում, քրոջ–քրոջ, կնոջ–կնոջ և այլն:

Վերոհիշյալ (տե՛ս կետ 1.Բ.) նկատառումներով նախապատվությունը տալ այդ բառերի գրային (աջակցել, զիջել, իջնել, հաջողություն, միջակ, միջանցք, ընդմիջում, քրոջ, կնոջ և այլն) արտասանությանը:

4. «ԷԼԵԿՏՐ» ԱՐՄԱՏՈՎ ԲԱՐԴԱԾ ԲԱՌԵՐԻ ԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ*

Էլեկտր փոխառյալ արմատով բարդված բոլոր բառերում բաղադրիչից առաջ դնել *ա* հոդակապը. այն է՝ էլեկտրատեխնիկա, էլեկտրացանց, էլեկտրաէներգիա և այլն:

5. ՀԱՅԵՐԵՆԻ ՏԱՌԱՅԻՆ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ԳՐԾԱԾՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

Որոշակի կանոնների և միասնական մոտեցման բացակայության հետևանքով՝ ա) հայերենի լայն գործածության տառային հապավումները հատկացուցչի պաշտոնում հանդես են գալիս մասամբ ուղիղ, մասամբ՝ թեք ձևով. օրինակ՝ ՍՄՀՄ Մինիստրների խորհուրդ, ՄՄԿԿ Կենտկոմ, ՀՍՄՀ ԳԱ լեզվի ինստիտուտ, Ուկրաինական ՍՄՀ առևտրի մինիստրություն, բայց նաև՝ ԱՄՆ-ի կոնգրես, ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար, ՍՄՀՄ-ի բնակչություն, ՏԱՍՍ-ի թղթակից և այլն. բ) որոշ դեպքերում էլ նույն պաշտոնում միևնույն հապավումը գրվում է մերթ ուղիղ, մերթ թեք ձևով. օրինակ՝ ՍՄՀՄ բնակչություն–ՍՄՀՄ-ի բնակչություն, ՍՄՀՄ ներկայացուցիչ–ՍՄՀՄ-ի ներկայացուցիչ, ՄՄԿԿ ծրագիր–ՄՄԿԿ-ի ծրագիր, ՊԱՊ համալիր–ՊԱՊ-ի համալիր և այլն:

Տառային հապավումների վերոհիշյալ ձևերի գործածության մեջ միօրինակություն սահմանելու նպատակով ՀՍՄՀ Մինիստրների խորհրդին առընթեր տերմինաբանական կոմիտեն որոշում է.

1. Ուղիղ ձևով (առանց հոլովական վերջավորության) գործածել միայն հատկացուցչի պաշտոնում կիրառվող այն տառային հապավումները, որոնց բաղադրիչ տառերն արտասանվում են առանձին-ա-

*Որոշումն ընդունվել է տերմ. կոմիտեի 1957 թ. ապրիլի միստում:

**Նախագիծը կազմել են Գ. Ջախուկյանը և Դ. Բարսեղյանը: Հաստատվել է տերմինաբանական կոմիտեի 1975 թ. նոյեմբերի միստում:

ռանձին (բաղաձայններն ուղեկցվում են չգրվող *ը-ով*)։ օրինակ՝ ՍՄՅՄ
 Գերագույն սովետ, ՍՄՅՄ պաշտպանության մինիստրություն (մի-
 նիստր), ՍՄԿԿ Կենտկոմ, ՍՄԿԿ համագումար, ԳԴՅ ժողովրդական
 պալատ, ԲԺՅ ժողովրդական ժողով, ՉԺՅ Կենտրոնական ժողովրդա-
 կան վարչական խորհուրդ, Յայկական ՍՄՅ (ՅՍՄՅ) Մինիստրների
 խորհուրդ, Վրացական ՍՄՅ ֆինանսների մինիստրություն (մինիստր),
 ՅՍՄՅ Նոյեմբերյանի շրջան, ՌՍՖՍՅ կուլտուրայի մինիստրություն,
 ՅամԼԿԵՄ Կենտկոմ, ՅԼԿԵՄ Սպիտակի շրջկոմ, ՍՄՅՄ ժողովրդական
 տնտեսության նվաճումների ցուցահանդես, Էստոնական ՍՄՅ
 պետական ֆիլիարմոնիա, Յայկական ՍՄՅ պարի պետական ան-
 սամբլ, ՍՄՅՄ ժողովրդական արտիստ, ՍՄՅՄ տիեզերագնաց օդաչու,
 սպորտի վաստակավոր գործիչ, ՍՄՅՄ պատմություն (բնակչություն,
 տերիտորիա, պատվիրակություն, ներկայացուցիչ, պետական հիմն,
 քաղաքացի, դեսպան), ՍՄԿԿ անդամ (ծրագիր, կանոնադրություն) և
 այլն։

2. Մնացած դեպքերում տառային հապավումները գործածել տվյալ
 հոլովներին հատուկ վերջավորություններով։ օրինակ՝ ՍՄՅՄ-ի և ԳՖՅ-
 ի միջև, ՄԱՆ-ի կոնգրես, ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար, ՏԱՍՍ-ի թղթա-
 կից, ԴՕՍԱԱՖ-ի կենտրոնական խորհուրդ, ՌԵՖԱ-ի մրցաշար, ՊԱՊ-
 ի համալիր, ՍՄՅՄ-ում ԳՖՅ դեսպան և այլն։

6. ԳՅՅԵՐԵՆՈՒՄ -ՑԻ, -ԱՑԻ, -ԵՑԻ ԱԾԱՆՑՆԵՐՈՎ ԿԱԶՄԱԾ ՏԵՂԱՐՆԱԿ ՆՇԱՆԱԿՈՂ ԳՈՅԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԻ ԶՈՒԳԱՅԵՈ ՉԵՎԵՐԻ ՄԱՍԻՆ*

Յայերեն *-ցի, -ացի, -եցի* ածանցները լեզվի զարգացման տարբեր
 փուլերում ցուցաբերել են բառակազմական տարբեր ակտիվություն,
 կապված տեղանվան վերջնավանկի ձայնավորի հնչյունափոխության
 հետ։ Յին մատենագրության մեջ տեղաբնակ նշանակող անունները,
 սակավ բացառություններով, կազմված են *-ացի* ածանցով (Մակեդո-
 նացի, Մոկացի, Կեսարացի, Շիրակացի, Կողբացի և այլն)։ Յետագա-
 յում հավասարապես գործածական է նաև *-եցի* ածանցը (Սանահինե-
 ցի, Խաչենեցի, Օձնեցի, Սևանեցի, Բնայրեցի և այլն)։ Յին և միջնադա-
 րյան մատենագրությամբ մեզ հասած վերոհիշյալ կազմությունները
 ժամանակակից հայերենում գործածվում են որպես ավանդական ձե-

*Նախագիծը կազմել է Դ. Բարսեղյանը։ Յաստատվել է տեղմ. կոմիտեի 1983 թ.
 հունիսի միստում։

վեր, իսկ այժմ տեղաբնակ նշանակող անունները կազմվում են *-ցի*, մասամբ էլ *-եցի* ածանցներով՝ երբեմն առաջացնելով զուգաձևություններ. այսպես՝ *շիրակցի, դափանցի, սևանցի, կողբեցի* և այլն ժամանակակից կանոնավոր ձևերի կողքին պահպանվում են նաև Անանիա *Շիրակացի*, Եզնիկ *Կողբացի*, Տիրան վ. *Կապանցի*, Սարգիս վ. *Սևանեցի* տիպի ավանդական ձևերը:

Զուգահեռ ձևեր են առաջանում հատկապես նախատիպ գոյականի վերջնավանկի ձայնավորի հնչյունափոխական կանոնի փոփոխության հետևանքով. այսպես՝ *Էջմիածին-էջմիածնեցի* և *էջմիածինցի, Կարին-կարնեցի* և *կարինցի, Ջահուկ (Ճահուկ)-ջահկեցի* և *ջահուկցի, Օծուն-օծնեցի* և *օծունցի, Որոտան-որոտնեցի* և *որոտանցի, Չորագլուխ-ծորագլխեցի* և *ծորագլուխցի*:

Այս կազմությունների նմանակությամբ առաջացել են նաև չհնչյունափոխվող *ի* ձայնավորով վերջնավանկ ունեցող նախատիպ գոյականներից կազմված անունների զուգահեռ ձևեր. այսպես՝ *Գորիս-գորիսցի* և *գորիսեցի, Թալին-թալինցի* և *թալինեցի, Նորագավիթ-նորագավիթցի* և *նորագավիթեցի, Սարիղամիշ-սարիղամիշցի* և *սարիղամիշեցի* և այլն:

Հայերենում գոյական նախատիպ հիմքերից *-ցի, -ացի, -եցի* ածանցներով կազմված անունների ամհարկի զուգաձևություններից խուսափելու և եղած ձևերից ճիշտ ընտրություն կատարելու համար ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր տերմինաբանական կոմիտեն *որոշում է* այսուհետև առաջնորդվել տեղաբնակ նշանակող գոյական անունների կազմության՝ ժամանակակից հայերենում գործող հետևյալ կանոններով.

1. *-Ցի* ածանցով տեղաբնակ նշանակող գոյական անուններ են կազմվում.

ա) բաղաձայնով վերջացող անհնչյունափոխ բազմավանկ հասարակ և հատուկ տեղանուններից. օրինակ՝ *հյուսիս-հյուսիսցի, հարավ-հարավցի, արևելք-արևելցի, Աշտարակ-աշտարակցի, Եղեգնաձոր-եղեգնաձորցի, Շիրակ-շիրակցի, Սևան-սևանցի, Վրաստան-վրաստանցի, Կիև-կիևցի, Փարիզ-փարիզցի, Ալժիր-ալժիրցի* և այլն.

բ) *ա, ե*, ձայնավորներով վերջացող անհնչյունափոխ բազմավանկ օտար տեղանուններից. օրինակ՝ *Ամերիկա-ամերիկացի, Աֆրիկա-աֆրիկացի, Եվրոպա-եվրոպացի, Բարսելոնա-բարսելոնացի, Մոսկվա-մոսկվացի, Դուշանբե-դուշանբեցի, Ֆրունզե-ֆրունզեցի* և այլն.

գ) *-իա*-ով վերջացող միավանկ արմատ ունեցող օտար տեղանուն-

ներից. օրինակ Ասիա-ասիացի, Բելգիա-բելգիացի, Դանիա-դանիացի, Անգլիա-անգլիացի, Չամբիա-չամբիացի, Լատվիա-լատվիացի, Սիրիա-սիրիացի և այլն:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1: գ) կետի կանոնից շեղվում են -իա-ով վերջացող բազմավանկ արմատ ունեցող տեղանուններից -ի ածանցով կազմված անատոլիացի, ավստրալիացի, կոլումբիացի, նորմալաթիացի և այլ նորակազմություններ:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 2: Գորիսցի-գորիսեցի, փարիզցի-փարիզեցի և այլն զուգահեռ ձևերից առավելություն տալ առաջիններին:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 3: ը գաղտնավանկ ունեցող օտար տեղանունների հայերեն երկակի արտասանության հետևանքով առաջացած ֆրանսիացի-ֆրանսացի, ավստրիացի-ավստրացի զուգահեռ ձևերից առավելություն տալ առաջիններին:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 4: Իբրև բացառություն թույլատրելի համարել լեռ միավանկ բառից -ցի ածանցով կազմված լեռնցի ձևը:

2. -եՑԻ ածանցով տեղաբնակ նշանակող գոյական անուններ են կազմվում.

ա) միավանկ հասարակ և հատուկ տեղանուններից. օրինակ դաշտ-դաշտեցի, տուն-տնեցի, սար-սարեցի, խոյ-խոյեցի, Կարս-Կարսեցի, Կողբ-Կողբեցի, Կոշ-Կոշեցի, Վան-Վանեցի, ինչպես նաև Լոձ-Լոձեցի, Նանտ-Նանտեցի, Սիմ-Սիմեցի, Չոպ-չոպեցի և այլն:

բ) վերջնավանկի ավանդաբար հնչյունափոխվող (սղվող) ի, ու, հազվադեպ նաև ք, ա ձայնավոր ունեցող բազմավանկ տեղանուններից. օրինակ՝ Անի-անեցի, Լոռի-լոռեցի, Մարտունի-մարտունեցի, Պոլիս-պոլսեցի, Էջմիածին-էջմիածնեցի, Բաքու-բաքվեցի, Քարազլուխ-քարազլխեցի, Մաստարա-մաստարեցի, Մազրա-մազրեցի, Չաճն-հաճնեցի.

գ) բառավերջի անհնչյունափոխ ի, ո, ու ձայնավոր ունեցող օտար և հայացած բազմավանկ տեղանուններից. օրինակ՝ Գորկի-գորկիեցի, Գորի-գորիեցի, Սոմալի-սոմալիեցի, Մեխիկո-մեխիկոեցի, Կեմերով-կեմերովիեցի, Կամո-կամոեցի, Լերմոնտով-լերմոնտովեցի, Բենգալուրու-բենգալուրուեցի, Պերու-պերուեցի, Տեգու-տեգուեցի և այլն:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ: -եՑԻ ածանցով են կազմված վերիոշյալ կանոններին չհամապատասխանող և հին հայերենից ավանդաբար անցած իսաչեցեցի, Կապանեցի, Ջուղայեցի, Սևանեցի, Տարոնեցի, այլև՝ Կարնեցի, Որոտնեցի, Օձնեցի, Գողթնեցի, Աղձնեցի և այլ մականուններ:

3. -ԱՑԻ ածանցով տեղաբնակ նշանակող գոյականներ են կազմվում

ա) գավառ, գյուղ, երկիր, տեղ, քաղաք գոյականներից՝ գավառացի, գյուղացի, երկրացի, տեղացի, քաղաքացի.

բ) *-իա*-ով վերջացող բազմական արմատ ունեցող օտար տեղանուններից՝ *-իա*-ի սղմամբ. օրինակ՝ Աբխազիա-աբխազացի, Բուլղարիա-բուլղարացի, Գերմանիա-գերմանացի, Էստոնիա-էստոնացի, Իտալիա-իտալացի, Ալեքսանդրիա-ալեքսանդրացի, Կեսարիա-կեսարացի և այլ:

ՃԱՆՈՒԹՈՒԹՅՈՒՆ: -ԱՅԻ ածանցով են գործածվում հին հայերենից ժամանակակից հայերենին անցած վրացի, չինացի, խորեմացի, Շիրակացի, Կողբացի, Երուսաղեմացի, Տաթևացի, Տարոնացի, Պոնտացի և այլն հասարակ և հատուկ անունները:

7. ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆ ԻՆՏ (ԵՄ) ԱՐՄԱՏԻ ԵՎ ՆՐԱՆՈՎ ԿԱԶՄ-ՎԱԾ ԲԱՌԵՐԻ ԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՏԱՍԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ*

Գրաբարի բառակազմի *յ* հնչյունի՝ հետագայում *հ*-ի փոխվելու հետևանքով (յանցանք-հանցանք, Յակոբ-Հակոբ, յետին-հետին, յիշատակ-հիշատակ, յոռի-հոռի, յուշ-հուշ և այլն) այս կարգի այլ համանունների թվում առաջացել են նաև *հետ* նախադրության և *յետ*-ից առաջացած *հետ* մակբայի ու սրանցով կազմված որոշ բաղադրյալ բառերի արտասանական համանուններ:

Մասամբ *հետ* (գրաբար՝ *յետ*) մակբայը (*Արամից հետ (ետ) մնաց*) *հետ* կապից (*Արամի հետ մնաց*) տարբերակելու և դրանց համանունությունը վերացնելու նպատակով, մասամբ էլ բարբառների ու արևմտահայերենի ազդեցությամբ՝ վերջին տասնամյակներում անջատ գրությամբ և որոշ բաղադրություններում *հետ (ետ)* արմատը նաև գրվում և արտասանվում է *ետ*: Այս արտասանական և ուղղագրական նորանվազությունը իր անհետևողական կիրառությամբ առաջ է բերել այդ արմատի և նրանով կազմված բառերի արտասանության և ուղղագրության անհարկի զուգաձևություններ ու շփոթ: Այսպես՝ անջատ գրությամբ և որոշ բաղադրություններում *հետ (ետ)* արմատը գրվում և արտասանվում է *ետ՝ ետ գնալ, ետ բերել, ետ տանել, ետ ու առաջ, ետադրություն և այլն*. Բաղադրություններից շատերում գրվում և արտասանվում է *հետ հետին, հետնյալ, հետադիմական, հետնորդ, հետահայաց, հետահաս, հետածգել, հետգրություն, հետքաշում և*

*Նախագիծը կազմել է Դ. Բարսեղյանը: Հաստատվել է տեղմ. կոմիտեի 1986 թ. սեպտեմբերի նիստում:

այլն. բաղադրությունների մի զգալի մասում էլ մեկ գրվում և արտասանվում է *ետ*, մեկ *հետ* *ետընթաց–հետընթաց*, *ետնալեզվային–հետնալեզվային*, *ետծննդյան–հետծննդյան*, *ետպատերազմյան–հետպատերազմյան*, *ետևից–հետևից* և այլն:

Նկատի ունենալով, որ՝

ա) *ետ* ձևը հակասում է այդ կարգի բառերում կատարված *յ–հ* ընդհանրական հնչյունափոխությանը (նույնիսկ գրաբար բնագրերում *յետ*-ը կարդացվում է *հետ*):

բ) արտասանությամբ ավանդական դարձած և ավելի տարածված *հետին*, *հետայսու*, *հետնորդ*, *հետածգել*, *հետադիմել*, *հետահար*, *հետամնաց*, *հետահայաց*, *հետգրություն...*, նորակազմ *հետաճուկ*, *հետընծյուղ*, *հետպահում*, *հետնուղեղ*, *հետփորձական*, *հետքաշում* և այլ բառերը նպատակահարմար չէ արհեստականորեն դարձնել *ետին*, *ետայսու*, *ետնորդ*, *ետածգել*, *ետադիմել*, *ետահար*, *ետամնաց...* և այլն:

գ) *հետ* հետադրությունը չի դառնում բարդ բառերի բաղադրիչ և չի կարող շփոթվել *հետ* (*ետ*) մակբայի *հետ*, *-հետ* (*ետ*) արմատի ու նրանով կազմված բառերի գրության և արտասանության անհարկի զուգաձևությունից ազատվելու և միօրինակություն սահմանելու նպատակով Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր տերմինաբանական կոմիտեն որոշում է:

Այսուհետև *հետ* (*ետ*) արմատը ամենուրեք, անցատ քե բաղադրյալ, գրել և արտասանել *հետ*. այն է՝ *հետ դառնալ*, *հետ մնալ*, *հետև*, *հետադրություն*, *հետադարձ*, *հետաճուկ*, *հետընթաց*, *հետծննդյան*, *հետմահու*, *հետմաշյա*, *հետնալեզվային*, *հետնորդ*, *հետո*, *հետիոկտեմբերյան*, *հետպատերազմյան*, *հետնուղեղ*, *հետփորձական*, *հետքաշում* և այլն:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ: Թույլատրելի գրական երկերի մեջ խոսքի ոճավորման նպատակով գործածել ետ-ով կազմված ետևանց, ետիտես, ետմա, ետնուց, ետք, այլև՝ գրական համարժեք ունեցող ետ եկած, ետ մնալ, ետնաբակ, ետնակին, ետնանուտք, ետնափակ և այլ բարբառային ձևերը:

Բ. ԿԵՏԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

8. ԳԾԻԿԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ*

Գծիկի միասնական գործածությունն ապահովելու և դրանով իսկ բաղադրյալ բառերի ու բառածևների ուղղագրությունը հեշտացնելու նպատակով Հայկական ՄՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր տերմինաբանական կոմիտեն որոշում է գծիկով գրել՝

1. Բառերի հարադրական կրկնությունները, օրինակ՝ *գույն-գույն, զույգ-զույգ, արագ-արագ, մեկ-մեկ, ինչ-ինչ, կամաց-կամաց, բարակ-մարակ, մանր-մունր, ոլոր-մոլոր, պարապ-սարապ, աման-չաման* և այլն:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1: Այն կրկնավոր բարդությունները, որոնց բաղադրիչներից մեկը քարացած քերականական ձև է, գրվում են միասին, օրինակ՝ տնետուն, գյուղեգյուղ, ամսեամիս, բերնեբերան, օրեցօր, տարեցտարի և այլն:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 2: Կրկնությամբ կազմված այն կապակցությունները, որոնց թեքված բաղադրիչի հոլովական իմաստը գիտակցվում է, գրվում են առանց գծիկի՝ *անցատ, օրինակ՝* քաղաքից քաղաք, գյուղից գյուղ, երկրից երկիր, մեջք մեջքի, ձեռք ձեռքի, ուս ուսի և այլն:

2. Միևնույն խոսքի մասին պատկանող բառերի այն միացությունները, որոնց բաղադրիչները պահպանում են իրենց հարաբերական անկախությունը (սովորաբար նաև շեշտը) լրացնելով իրար և բնութագրելով կամ ներկայացնելով առարկան (անձը, իրը, երևույթը) տարբեր կողմերից՝ ա) *մարքսիզմ-լենինիզմ, հասարակական-քաղաքական, ազդեցություն-մասսայական, զաղափարական-դաստիարակչական*, բ) *ինժեներ-մեխանիկ, գեներալ-մայոր, գ) տուն-թանգարան, վագոն-ռետտորան, դ) հյուսիս-արևելք, հյուսիս-արևմուտք, հարավ-արևելք, ե) ուտել-խմել, ասել-խոսել, գնալ-գալ, լինել-չլինել, զ) կիրովատտ-ժամ, լիտր-վարկյան, տոննա-կիլոմետր, մարդ-օր, մեքենա-օր, է) Նիկոլակա-Տերեշկովա, Սալտիկով-Շչեդրին, Գալկինա-Ֆեդորով, Դուրյան-Արմենյան, Գվինեա-Բիսաու, Էլզաս-Լոթարինգիա, Կամենեց-Պոդոլսկ, ը) աշակերտ-աշակերտուհի, ուսանող-ուսանողուհի, ուսուցիչ-ուսուցչուհի* և այլն:

*Նախագիծը կազմել է Ս. Արախամյանը: Հաստատվել է կոմիտեի 1976 թ. ապրիլի միստում:

3. Բառերի այնպիսի միացությունները (առաջին բառի վերջածանցի կրճատումով), որոնք արտահայտում են տարբեր կողմերի հարաբերություններ (լեզուների, ժողովուրդների, պետությունների և այլն). օրինակ՝ ա) *հայ-անգլերեն, ռուս-գերմաներեն, հայ-ռուս-լատիներեն, ռուս-ճապոնական, չին-տիբեթական, թուրք-թաթարական, ֆրանս-գերմանական, բ) սովետա-չեխական, գերմանա-իտալական, եգիպտա-սիրիական, գ) անգլո-ամերիկյան, իբերո-կովկասյան* և այլն:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1: Գոյականայ ունեցող բարդ բառերը, այդ թվում նաև հետադաս բաղադրիչներով կազմվածները, գրվում են առանց գծիկի՝ միասին. օրինակ՝ լեզվագրական, գիտահետազոտական, դրամաիրալին, նյութատեխնիկական, ռազմածովային, ժողովրդատնտեսական, բառաքերականական, ուսումնադաստիարակչական, աղետամոռսային և այլն:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 2: Տարբեր հասկացություններ արտահայտող դրվորը և պրոֆեսոր բառերը համատեղ գործածվելիս գրվում են անջատ և բաժանվում ստորակետով:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 3: Այն կապակցությունները, որոնց առաջին բաղադրիչն արտահայտված է որոշչի դեր կատարող ածականով կամ գոյականով, գրվում են առանց գծիկի՝ անջատ. օրինակ՝ ա) ալ կարմիր, բաց դեղին, բաց կապույտ, մուգ կարմիր, բ) Նոր Զելանդիա, Նոր Նախիջևան, Սեծ Պարսի, Վերին Թալին, Զեռավոր արևելք, Փոքր Ասիա, գ) թղթակից անդամ (հմմտ. իսկական անդամ), տիեզերագնաց օդաչու և այլն: Բ կետում նշված տեղանուններից կազմված ածականները գրվում են միասին. օրինակ՝ նորգելանդական, հեռավորարևելյան, փոքրասիական և այլն:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 4: Անձի անվան և նրա գործունեությունն այս կամ այն առումով բացահայտող հետադաս գոյականի կապակցությունը գրվում է առանց գծիկի՝ անջատ, օրինակ՝ լուսնայան քննադատը, Շիրվանզադե դրամատուրգը, Բաֆֆի վիպասանը և այլն:

4. Որևէ անունից (կամ ազգանունից) տեր, մելիք, բեկ, միրզա ու նման բաղադրիչներից կազմված անձնանունները (կամ ազգանունները), երբ նշված բաղադրիչներն արտասանվում են առանձին, օրինակ՝ *Տեր-Գաբրիելյան, Մելիք-Մուսայան, Միրզա-Ավագյան, Դավիթ-Բեկ* և այլն:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1: Նշված բաղադրիչները անձնանվան (կամ ազգանվան) մյուս բաղադրիչի հետ միասին արտասանվելու դեպքում գրվում են առանց գծիկի՝ միասին, օրինակ՝ Մելիքբեկյան, Մելիքջանյան, Բեկնազարյան, Բալաբեկ, Սիրախանյան, Սիրաբեկյան և այլն:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 2: Տեր, բեկ, մելիք և նման բառերը հատուկ անվան հետ որպես որոշիչ գործածվելիս գրվում են առանձին, օրինակ՝ տեր Սահակ, մելիք Ավան, Խոսրով բեկ և այլն:

5. Վայ, ուռա բառերով և գոյականներով բաղադրված բառերը, որոնք արտահայտում են հեզնական իմաստ. օրինակ՝ վայ-առաջադիմականներ, ուռա-հայրենասիրություն և այլն:

6. Ինչ դերանունով բաղադրված և անորոշության իմաստ արտահայտող բառերը. օրինակ՝ ինչ-որ, փոքր-ինչ, դույզն-ինչ:

7. Ավանդաբար գծիկով գրվող հատուկ անունները, օրինակ՝ Գամառ-Քաթիպա, Նար-Դոս, Սայաթ-Նովա, Խնկո-Ապեր, Չաքի-Մուրադ, Թամարա-Խանում, Շահ-Աբաս և այլն:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1: Առանց գծիկի՝ անջատ են գրվում երկու կամ ավելի առանձին բաղադրիչներից կազմված հետևյալ օտարազգի հատուկ անունները.

ա) արևմտյան դա, դը, դե, դել, դը լա, վան, ֆոն, սան, սենտ և նման այլ բաղադրիչներ ունեցող անձնանունները. օրինակ՝ Լեոնարդո դա Վինչի, Լյուդվիգ վան Բեթհովեն, Աստուան դը սենտ Էջգուպերի, Վիլիելմ ֆոն Յոմբուրգտ, բ) արևելյան ալ, էլ, եդ, են և նման այլ բաղադրիչներ ունեցող անձնանունները. օրինակ՝ Չարուն ալ Ռաշիդ, Նահր էլ Բարիդ, «Ալ Սիրամ» թերթ, էլ Քաբրիտ, էլ Ջաուֆ, Նուր էդ Դին, գ) չինական, կորեական, վիետնամական անձնանունները. օրինակ՝ Չուա Գոֆեն, Սուն Յաթսեն, Մեն Ցզի, Կիմ Իր Սեն, Յո Շի Սին և այլն, դ) 2-րդ կետի է ենթակետում չնշված օտարազգի բաղադրյալ տեղանունները՝ Նյու Յորք, Նյու Ջերսի, Բուենոս Այրես, Ալմա Աբա, Լա Մանչ, Լե Կրեզո, Սանտ Յագո, Սան Ֆրանցիսկո և այլն:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 2: Արևելյան տեղանունները, որոնց կազմության մեջ կան քենդ, սու, չայ, դուզ, թափա և նման այլ բաղադրիչներ, գրվում են առանց գծիկի՝ միասին. օրինակ՝ Շուշիքենդ, Մուրադսու, Բոյուքդուզ, Շիշթափա, Ալինջաչայ, Կրիսուլալ և այլն:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 3: Փոխ, էքս, վիցե, օբեր բաղադրիչներով կազմված բառերը գրվում են միասին. օրինակ՝ փոխգնդապետ, փոխծովակալ, փոխարքա, էքսչեմպիոն, վիցեպրեզիդենտ, օբերլեյտենանտ և այլն:

8. Կրճատ գրվող բառը, եթե պահպանվում է բառի վերջնամասը. օրինակ՝ դ-ր (դոկտոր), պ-ն (պարոն) և այլն:

9. Թվականների այն կապակցությունները, որոնք արտահայտում են մոտավորության իմաստ. օրինակ՝ տասը-տասնհինգ (10-15) մարդ, չորս-հինգ (4-5) ժամ, քսան-քսանհինգ (20-25) գիրք, երեսուն-քառասուն (30-40) օր և այլն:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ: Թվականների նույնպիսի կապակցությունը գրվում է առանց գծիկի՝ անջատ, եթե առաջին բաղադրիչն արտահայտվում է բացառական հոլորվով, օրինակ՝ ուրիշ տասը տարի, չորսից յոթ տարեկան, տասից տասնհինգ մետր և այլն:

10. Տառերով արտահայտված պայմանանիշների, այլև բառերի և նրանց հետ գործածվող թվանշանների կապակցությունները, օրինակ՝ *Ա-93* բենզին, *Տու-134* ինքնաթիռ, «*Սոյուզ-6*» տիեզերանավ, «*Օրբիտա-2*» ուղեծրակայան և այլն:

11. Անկախ չգործածվող բառամասերը (ածանցներ, վերջավորություններ, հիմքեր, տառեր), այդ թվում՝ այն բառերի առաջին բաղադրիչները, որոնց երկրորդ բաղադրիչը բաց է թողնվում՝ գործածվելով միայն վերջին բառում. օրինակ՝ ա) *-ից, -ական, բ)մակրո-, մեգա-, միկրոաշխարհ* և այլն:

12. Այն բառածևերը, որոնց հիմքերը գրված են թվանշաններով, տառային կամ վանկատառային հապավումներ են, փոխանուններ են կամ առնված են չակերտների մեջ, օրինակ՝ ա) *2-ից, 8-ի, 200-ը, X-ի, XV-ից, բ) ՍՄԴՄ-ում, ՍՄԿԿ-ին, ԱՄՆ-ից, ԴամԼԿԵՄ-ին, ՄԱԿ-ում, ՆԱՏՕ-ի* և այլն, գ) «*Գարուն*»-ի վերջին համարը, «*Լենինյան ուղիով*»-ի խմբագրությունը և այլն, դ) *երեքը* թվական է, *գարունը*-ը երկվանկանի բառ է, *մարդը*-ը գրվում է *դ*-ով, բայց կարդացվում է *թ*-ով, *քաղաքից*-ը *քաղաք*-ի բացառական ձևն է և այլն: Այսպես են գրվում նաև այն բաղադրյալ բառերը, որոնց առաջին բաղադրիչն արտահայտված է թվանշաններով. օրինակ՝ *12-ամյա, 100-ամյակ, 2-րդ, 10-ական* և այլն:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ: Ինքնուրույն բառի վերածված տառային հապավումների վերջավորությունները գրվում են առանց գծիկի՝ միասին. օրինակ՝ բուսի, զագսից, գեսի և այլն:

9. ԾԱԿԵՐՏՆԵՐԻ ՄԵՋ ԱՌԵՎՈՐ ԱՆՈՒՆՆԵՐԻ ԴՈՒՈՎԱԿԱՆ ՎԵՐՋԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴՈՂԵՐԻ ԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ*

Զակերտներում առնվող անունների հոլովական վերջավորությունների ու հոդերի գրության մասին որոշակի կանոնների բացակայության և եղած կանոնները հետևողականորեն չկիրառելու հետևանքով

*Նախագիծը կազմել է Դ. Բարսեղյանը, խմբագրել են Գ. Ջահուկյանը և Ն. Պառնապյանը: Հաստատվել է տեքստ. կոմիտեի 1978 թ. նոյեմբերի միստում:

ստեղծվել է երկվորություն. միևնույն անունների հոլովական վերջավորություններն ու հոդերը առանց հետևողականության գրվում են երբեմն չակերտներում, երբեմն չակերտներից դուրս («Գրական թերթի»–«Գրական թերթ»–ի, «Սասմա Միերում»–«Սասմա Միեր»–ում, «Սասունցի Դավթի»–«Սասունցի Դավթ»–ի, «Սպանված աղավնուց»–«Սպանված աղավնի»–ից, «Պրավդայի»–«Պրավդա»–ի, «Եռանկյունին»–«Եռանկյունի»–ն, «Արարատը»–«Արարատ»–ը)։

Չակերտներում առնվող անունների հոլովական վերջավորությունների և հոդերի գրության անհարկի զուգահեռությունները վերացնելու նպատակով ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր տերմինաբանակն կոմիտեն որոշում է.

1. Չակերտներում առնվող անունների հոլովական վերջավորություններն ու հոդերը, որպես կանոն, գրել չակերտներում անվան վերջին բաղադրիչին միացած. օրինակ՝ «Մայրենի լեզվի» վերջին հրատարակությունը, «Փարիզը» «Մայայաց աղավնու» հակառակորդն էր, Հովհաննիսյանը ոգևորված էր Շահագզի «Լևոնի վշտով», «Շունն ու կատվի» բարբառային լեզուն, հատված «Սպանված աղավնուց», «Անուշի» առաջին տարբերակը, Հր. Քոչարի «Գեներալի քրոջ» հերոսների նախատիպերը, Վ. Անանյանի «Հայրենի թփի» թարգմանությունը, Իսահակյանի «Մեծ հաղթանակի օրվա» ռիթմը, «Պեպոյի» գլխավոր դերակատարը, Դեմիրճյանին հարցրին՝ սա «Վարդանանքիդ» ո՞ր հրատարակությունն է, «Գրական թերթի» հասցեն, «Պրավդայից» ստացված նամակ, Բեկենբաուերն ընդդեմ «Բավարիայի», Մոսկվայի «Դինամոն» հաղթեց «Լոկոմոտիվին», «Արարատի» պաշտպանը գրավեց «Սպարտակի» դարպասը, «Հառաչանքը» աչքի է ընկնում իր ռեալիստական կոլորիտով, «Հրազդանը» լեփ-լեցուն էր, «Արմենիայի» նավապետը մոտեցավ մեզ։

2. Չակերտներում առնվող անունների հոլովական վերջավորություններն ու հոդերը գրել չակերտներից դուրս՝ զծիկով անջատված, միայն այն դեպքում, երբ անվան և վերջավորության կամ հոդի միացած գրությունը առաջ է բերում հայերենի համար անսովոր ձևեր կամ դժվարացնում է բնագրի ընկալումը. մասնավորապես՝

ա) եթե անունը արտահայտված է ամբողջական նախադասությամբ. օրինակ՝ «Ղազարը գնում է պատերազմ»–ի գլխավոր դերակատարը, հատվածներ Բ. Հովսեփյանի «Սերմնացանները չվերադարձան»–ից, «Արև, արև, եկ, եկ»–ի երաժշտությունը, տեսարան «Քանի դեռ սայլը շուռ չի եկել»–ից, լեզվով շատ է նման «Մեռան չկորան»–ին, օրինակներ «Մայիտակին է տալիս առագաստը մենավոր»–ի թարգմա-

նությունից, հեղինակը «Այն Լոռու ծորն է»-ն փոխել է «Էն Լոռու ծորն է»-ով, Գ. Սարյանի «Դուք ո՞ւր եք գնում, ծիծեռնակներ»-ի բանաստեղծական շունչը, «Եղբայր եմք մեք»-ը վաղուց է երգվում:

բ) Եթե անունը (բաղադրյալ լինելու դեպքում վերջին բաղադրիչը) կամ բառի հոլովական ձև է, կամ չհոլովվող բառ, կամ անձնական ու ցուցական դերանուն. օրինակ՝ երգեցին «Ամաի տակից»-ը, Իսահակյանի «Հին ու նոր երգ ու վերքերից»-ի բնագիրը, քաղվածքներ «Բուշնիկյան դրոշով»-ից, «Վարդապետարան կրոնի հասարակաց հայախոսությամբ»-ի հեղինակը, Վ. Վաղարշյանի «Արշալույսին»-ի բեմադրությունը, «Անտառում»-ի տաղաչափական արվեստը, Գ. Չոիրապի «Կարծեն թե»-ի հերոսի հոգեբանությունը, «Լենինգրադ, քեզ համար»-ը հեղինակին ճանաչում բերեց, «Հայաստանը երգերի մեջ»-ը բանաստեղծաշարի խորագիրն է, «Երգ մեր քարերի մասին»-ի տաղաչափությունը, Նար-Դոսի «Ես և նա»-ի հերոսը, քառատող Դուրյանի «Նէ»-ից, Պուշկինի «Դու և ես»-ի թարգմանությունը:

գ) Եթե անունը բերված է օտար կամ կրճատ գրությամբ, անվան վերջին բաղադրիչը թվանշան կամ տառային հապավում է. օրինակ՝ «Современник»-ի լենինյան քննադատությունը, «Ս. Հ.»-ի փոստից, «Օլիմպիադա-80»-ի նախապատրաստությունները, հաղորդում «Սոյուզ-31»-ից, «Երգ-77»-ի հաղթողները, «Միգ»-ի օդաչուն, «Հայաստանի պատվիրակությունը մեկնեց ԲԱՄ»-ը մրցանակ շահած ակնարկ է:

ՃԱՆՈՒԹՈՒԹՅՈՒՆ 1: Իբրև բացառություն կարելի է հոլովական վերջավորությունը կամ հոդը չակերտներից դուրս գրել նաև այն դեպքում, երբ վերջավորության կամ հոդի անջատ գրությամբ անհրաժեշտ է առանձնացնել անվան ուղիղ ձևը՝ այն հստակ ու հասկանալի դարձնելու նպատակով. օրինակ՝ այս պատմափիլիսոփայությունը գալիս է «Վահագն»-ից, «Ազգային երազ»-ից, «Անակնկալ հանդիպում»-ից, «Ուտրկեր»-ի վերջին հոդվածը մեծ հետաքրքրություն առաջ բերեց:

ՃԱՆՈՒԹՈՒԹՅՈՒՆ 2: Նախադասությամբ արտահայտված կամ հոլովված բառով վերջացող որոշ անունների հոլովական վերջավորություն կամ հոդ ավելացնելու դեպքում երբեմն առաջանում են անվան ընկալումը դժվարացնող ու հայերենին անսովոր ձևեր: Նման անսովոր ձևերից խուսափելու համար խորհուրդ է տրվում անվան հետ գործածել համապատասխան լրացյալ, այսինքն՝ փոխանակ գրելու «Ձիմվորը վերադառնում է տուն»-ի կամ «Ձիմվորը վերադառնում է տան» դերակատարները, «Վրաց ժողովրդին»-ի տաղաչափական արվեստը, արտասանեց «Նվեր մայրիկիս»-ը, հատվածներ «Մատյան ողբերգության»-ից, գրել՝ «Ձիմվորը վերադառնում է տուն» կինոնկարի դերակատարները, «Վրաց ժողովրդին» բանաստեղծության տաղաչափական արվեստը, արտասանեց «Նվեր մայրիկիս» բանաստեղծությունը, հատվածներ «Մատյան ողբերգության» պոեմից:

**10. ԽՈՍՔԻ ՀԵՏ ՔԵՐԱԿԱՆՈՐԵՆ ՉԿԱՊՎՈՂ ԵՎ ԱՆԿԱՆ
ԳՈՐԾԱԾՎՈՂ ԲԱՌԵՐԻ, ԲԱՌԱԿԱՊԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԵՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՒՂԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ***

Խոսքի հետ քերականորեն չկապվող և անկախ գործածվող բառերի, բառակապակցությունների և նախադասությունների (վերնագրերի, թվարկումների, անվանողական ու տեղեկատու բնույթի արտահայտությունների և այլն) կետադրությունը և ուղղագրությունը միասնականացնելու նպատակով Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր տերմինաբանական կոմիտեն որոշում է.

1. Խոսքի հետ քերականորեն չկապվող բառերից, բառակապակցություններից ու նախադասություններից հետո, բացառությամբ շարադրանքին անմիջապես նախորդող տողասկզբի վերնագրերի, տրոհության որևէ նշան չդնել: Խոսքի հետ քերականորեն չկապվող այդպիսի միավորներն են

ա) վերնագրերը (այդ թվում՝ նախադասությամբ արտահայտված վերնագրերը), օրինակ՝

***Ավանդույթին հավատարիմ
Եթերում է երևանը
Բարձր պարզևը պարտավորեցնում է***

բ) ինքնուրույն կիրառություն ստացած կոչերը և տեղեկատու իմաստ արտահայտող նախադասությունները. օրինակ՝

***Փառք ՍՍԿԿ-ին
Պրոլետարներ՝ բոլոր երկրների, միացե՛ք
Հրատարակվում է 1920 թվականի դեկտեմբերի 5-ից
Տպագրվում է ՀՍՄՀ գիտությունների ակադեմիայի պատմության
ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ***
գ) ազդագրերի, նկարների, քանդակների անվանումները և այլն.
Օրինակ՝

*Նախագիծը կազմել է Ս. Աբրահամյանը: Հաստատվել է տերմ. կոմիտեի 1982 թ. հունիսի նիստում:

Այսօր

Վ. Պետրոսյան

Վերջին ուսուցիչը

Սկիզբը՝ ժամը 20-ին

Անանային տեսարան

Քաղաքի ընդհանուր տեսքը

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ: Եթե նկարի տակ գրվում է նկարում (նկարներում) բառը, ապա վերջինս նկարի անվանումից բաժանվում է բոլորով:

Օրինակ՝

Նկարում «Ձվարթնոց» օդանավայականի համալիրի բացումը

Նկարներում՝ աշխարհի չեմպիոնները՝ ՍՍՀՄ կանանց ու տղամարդկանց հավաքական թիմերը

դ) հողվածի (ստեղծագործության) հեղինակի, պաշտոնական հաղորդման (որոշման, հրամանագրի, ժանուցման, հայտարարության և այլն) պատասխանատու անձի, կազմակերպության և ղեկավար մարմնի անունները, ինչպես և մեջբերված աղբյուրի անվանումը. օրինակ՝

... Միայն այդ դեպքում մենք կարող ենք ասել, որ լավ ենք աշխատում:

Գ. Հարությունյան

Միավորման գլխավոր դիրեկտոր

... Քննարկված հարցի առթիվ պլենումն ընդունեց համապատասխան որոշում:

(Արմենպրես)

Ամենուրեք ներդնել որակի կառավարման կոմպլեքսային համակարգեր:

(Հայաստանի կոմկուսի XXVII համագումարի բանաձևից)

... Հետագա յուրաքանչյուր հազարյակում չափում են հաշիվների այն նույն համարները, որոնք չափել են առաջին հազարյակում:

Խաղարկության համեմատողովի մախագահ՝ Գորիսի շրջսովետի գործկոմի մախագահի տեղակալ Ն. Խ. Իսախանյան

... Դրանցից մեկն է՝ ապահովել սպասարկման իսկական կուլտուրան և գերազանց որակը, բավարարել սովետական մարդկանց կենսական պահանջմունքները:

(«Պրավդայի» ապրիլի 1-ի առաջնորդողը)

... Պայմաններին մանրամասն կարելի է ծանոթանալ տեխնիկումում:

Դիրեկցիա

ե) գրքերի, թերթերի և այլ հրատարակությունների մատենագիտական ու այլ կարգի տեղեկատու տվյալները. օրինակ՝

Խմբագիր՝ Մ. Բ. Չևորգյան

Լուսանկար՝ Ա. Եսայանի

Չայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1981

Օրգան Հայաստանի կոմկուսի Կենտկոմի, Չայկական ՍՍՀ Գերագույն սովետի և Մինիստրների խորհրդի

զ) բառերի, բառակապակցությունների իրար տակ կատարվող պարզ թվարկումները. օրինակ՝

Բառերով արտահայտված
տերմիններ

Բառակապակցություններով
արտահայտված տերմիններ

ազոտ

հրթիռ

հոլով

երկրաբանություն

տիեզերական բժշկություն

ատոմային սուզանավ

ֆիզիկական քիմիա

հարաբերական ածական

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1: Տրոհության հատուկ նշան՝ վերջակետ, դնել միայն այն տողասկզբի վերնագրից հետո, որին անմիջապես հաջորդում է շարադրանքը. օրինակ՝

Սկանային հյուսվածքներ: Սկանային հյուսվածքը կազմվում է մկանաթելերից, որոնք խիստ ձգված բջիջներ են:

Տեսական և գեղարվեստական մտածողություն: Իրականության երևույթների և կապերի բազմազանությունը պայմանավորում է նրանց ճանաչողության արտացոլման տարբերությունները:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 2: Խոսքի հետ քերականորեն չկապված բառակապակցություններում ու նախադասություններում կետադրական մնացած նշանները գործածվում են ընդհանուր կանոններով: Օրինակ՝

Հող, օջախ, խաղաղություն
Անուններ, որ միշտ մեզ հետ են
Անասնապահությունը՝ հարվածային ճակատ

2. Խոսքի հետ քերականորեն չկապվող բառերը, բառակապակցությունները, նախադասությունները գրվում են մեծատառով, բացառությամբ՝

ա) իրար տակ թվարկվող բառերի, բառակապակցությունների.

բ) ներդրյալ մեկնական դերով հանդես եկող անկախ գործածվող և փակագծերի մեջ առնվող բառերի և բառակապակցությունների. օրինակ՝

Երևան այսօր

(շաբաթօրյուն)

Ամմոռաց տպավորություններ

(գրողի ծոցատետրից)

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ: Գծապատկերներում և առհասարակ սխեմաների ձևերով ներկայացվող թվարկումներում գիտական բնութագրումներն սկսել մեծատառով, իսկ դրանց հիման վրա առանձնացվող միավորները կամ դրանց համար բերվող օրինակները՝ փոքրատառով: Օրինակ՝

Դերբայ	Չիմք	Վերջավորություն
Անորոշ	սովոր հավատ	ել ալ
Անկատար	սովոր հավատ	ում ում

ԳԼՈՒԽ ՀՈՐՐՈՐԴ

Ա. ՏԵՐՄԻՆԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԱՌԱԳԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՏԵՐՄԻՆԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԱՌԱԳԱՐՉՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու»-ի սույն հրատարակության չորրորդ գլուխը բովանդակում է ՀՀ Կառավարության առընթեր հայերենի բարձրագույն խորհրդի 1990 – 2003 թվականներին ընդունած որոշումներն ու սրանց վերաբերող մեկնաբանությունները:

Ինչպես առաջին երեք գլուխներում, այստեղ ևս որոշումները բաշխված են նախ թեմատիկ, այսինքն՝ ըստ գիտաճյուղերի, ապա նաև՝ ըստ որոշման ընդունման ժամանակային հաջորդականության: Այս բաժնում դրանք ներկայացված են 14 կետերով: Առաջին երեք որոշումները հասարակական-քաղաքական և պետական-վարչական նշանակության տերմիններն են: Դրանց երկուսում ներկայացված են 30 (13+17) օտար տերմիններ՝ իրենց 38 հայերեն համարժեքներով:

1. Առաջին որոշմամբ ռուսերեն *геополитика, гуманизация, декларация, диссидент, плюрализм, рекет* տերմինների փոխարեն համապատասխանաբար գործածության են հանձնարարված *աշխարհաքաղաքականություն, մարդկայնացում, 1. հռչակագիր, 2. հայտարարագիր, այլախոհ, 1. բազմակիություն, 2. բազմակարծություն, բռնաշորթում* հայերեն համարժեքները:

2. Նույն մոտեցմամբ՝ երկրորդ կետում բերված որոշմամբ օտար *ագրեսիա, ագրեսիվ, ագրեսոր, բրիֆինգ, դեմոկրատիա, էլիտա, էլեկտրոտա, իմիջ, լիբերալիզմ, մեդիա, մենտալիտետ, պոպուլիզմ, ռեյտինգ, տոտալիտարիզմ* տերմինների փոխարեն համապատասխանաբար գործածության են հանձնարարված սրանց՝ *նախահարձակում, հարձակողական, նախահարձակ, ճեպագրույց, ժողովրդավարություն, 1. ընտրանի, 2. վերնախավ, ընտրազանգված, կերպար, ազատականություն, լրատվամիջոց, 1. մտածելակերպ, 2. խելք, ամբոխահաճություն, վարկանիշ, ամբողջատիրություն* հայերեն համարժեքները:

3. Այս շարքի երրորդ որոշումը սովորական տերմինային որոշում

չէ. սա պետական-վարչական նշանակության որոշում է, որում արտացոլված են խորհրդային իրավակարգի փոփոխման հետևանքով Հայաստանի Հանրապետության վարչատարածքային մարմինների անվանումներում տեղի ունեցած համակարգային փոփոխությունները: Որպես վարչատարածքային նոր բաժանումների անուններ բերված են՝ *մարզ, համայնք, քաղաք* անունները, սրանց ղեկավարի՝ *մարզպետ, համայնքապետ, քաղաքապետ*, վերջիններիս աշխատակազմի՝ *մարզպետարան, համայնքապետարան, քաղաքապետարան* անվանումները, ապա նաև ներկայացուցչական մարմնի *ավագանի* անվանումը՝ սրանց բոլորի ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն թարգմանություն-հավաստումներով:

Այս գլխի հաջորդ երկու որոշումները (4, 5) վերաբերում են տնտեսագիտական օտար տերմինների հայերեն թարգմանությանն ու ճշգրտմանը:

4. Չորրորդ կետով բերված որոշմամբ հայացվել են օտար 24 տերմիններ, այդ շարքում՝ *բիզնես* (գործարարություն), *բիզնեսմեն* (գործարար), *բորսա*, *բիրժա* (սակարան), *դեֆիցիտ* (պակասուող), *դիվիդենդ* (շահաբաժին), *ինվեստիցիա* (ներդրում), *մենեջմենտ* (կառավարում), *վալյուտա* (արժույթ), *ինվալյուտա* (արտարժույթ), *ցիկլ* (պարբերաշրջան), *լոմբարդ* (գրավատուն), *կոմերցիոն* (ստևտրային) և այլն:

5. Ըստ հինգերորդ կետի որոշման՝ հաստատված են 13 օտար տերմինների հայերեն համարժեքները, այդ թվում՝ *մոնոպոլիա* (1. *մենաշնորհ*, 2. *մենատիրություն*), *մոնոպոլիստ* (1. *մենաշնորհյալ*, 2. *մենաշնորհատեր*), *օլիգոպոլիա* (1. *խմբաշնորհ*, 2. *խմբատիրություն*), *ֆիսկալ* (զանծարանային), *քվտա* (բաժնեմաս, մասնորդ), *սուբսիդիա* (լրահատկացում) օտար տերմինները՝ մեր կողմից փակագծում նշված հայերեն թարգմանությամբ:

Թեմատիկ առանձին խումբ են կազմում մարզական տերմինները, որոնք ներկայացվել և հաստատվել են տարբեր ժամանակներում: Սրանք բերված են 6, 7, 8 կետերով:

6. Վեցերորդ որոշման մեջ մարզական օտար բառացանկում 13 տերմիններ են իրենց հայերեն համարժեքների վկայակոչմամբ. այն է՝ *բոբսլեյ* (դեկասահնակ), *մեմորիալ* (հուշամրցում), *սլալոմ* (ոլորասահք), *սինիսրոն լոդ* (զեդալող), *ստարտ* (մեկնարկ), *ստարտյոր* (մեկնարկիչ), *տրասա* (սահուղի), *տրեննաժոր* (մարզասարք) և այլն: Տերմինային ընտրությունը այստեղ կատարված է նաև հայերեն համանիշնեռից մեկն ընտրելու սկզբունքով (օրինակ՝ *սինիսրոն լոդ*, *համալող*, *գեղալող*):

7. Յոբերորդ կետով բերված մարզական տերմիններին վերաբերող որոշումը օտար տերմինների և սրանց հայերեն համարժեքների ցանկ չէ: Այն կազմված է հանձնարարվող հայերեն տերմինի և նրա համապատասխան ռուսերեն անվան մեջբերումով, ապա՝ սրա սահմանում-մեկնաբանությամբ. օրինակ՝ «մրցափորձ — попытка — մրցումների ժամանակ մարզիկին տրվող փորձի հնարավորությունը»: Այսպես նախագիծը կազմողի կողմից թվարկվում և ռուսերեն թարգմանվում ու սահմանվում-մեկնաբանվում են 20 բառ-տերմիններ:

8. Այստեղ թվարկմամբ բերվում են հայերենում գործածվող օտար և հայերեն թարգմանությամբ գործածվող մարզական անվանումները, տրվում են սրանց ռուսերեն համարժեքները, ապա՝ գործածության հանձնարարվող հայերեն տերմինները. օրինակ՝ «1. Ելման դրություն — исходное положение — ելադիրք, 2. Հիմնական կանգ — основная стойка — հիմնականգ» և այլն:

Այսպես քննված են մարզական 27 տերմիններ, որոնք ներկայացնում են մարզիկի մարմնական-շարժումնային շուրջ երեք տասնյակ ձևափոխությունները:

Չորրորդ գլխի իններորդ և տասներորդ կետերով բերված որոշումները վերաբերում են մաթեմատիկական տերմինաբանությանը:

9. Իններորդ կետով ներկայացված որոշմամբ հայերեն *ֆիզիկոս, մաթեմատիկոս, քիմիկոս* գիտաճյուղերի անունների անմոռոտությամբ գործածության է հանձնարարվում նաև *մեխանիկոս* օտար անվանումը, քանի որ *մեխանիկ* ասելով հայերենում հասկացվում է *ավտոմոբիլային արհեստավոր*: Այդ որոշմամբ համալսարանի մեխանիկայի ֆակուլտետն ավարտած ուսանողն ստանում է ոչ թե *մեխանիկի*, այլ *մեխանիկոսի* վկայագիր (դիպլոմ): Այդ որոշման կարիքը հայերենը չէր ունենա, եթե գործածեինք հայերենում արդեն գոյություն ունեցող *մեխանիկագետ* շատ հարմար բառ-տերմինը:

10. Հաջորդ տասներորդ կետով ներկայացված «Հավանականության տեսության, մաթեմատիկական վիճակագրության և ընդհանուր մաթեմատիկայի որոշ օտար տերմիններ հայերեն համարժեքներով փոխարինելու մասին» որոշմամբ անգլերենում և ռուսերենում գործածվող այդ բովանդակության ինը տերմինի՝ *կոռելյացիա, հիստոգրամ, տիպ, էկոնոմետրիկա, կոմբինատորիկա, դիսպերսիա, կովարիացիա* և հայերեն *պատահական պրոցեսների տեսություն, մաթեմատիկական սպասում* տերմինների փոխարեն համապատասխանաբար գործածության են հանձնարարված *հարաբերակցություն, սյունապատկեր, վեկտորի կազմ, տնտեսաչափություն, համակցաբանու-*

թյուն, ցրվածք, համացրվածք, պատահական ընթացքների տեսություն, սպասելի միջին արժեք հայերեն համարժեքները:

11. «Հունա-լատինական -իտ, -ոգ, -պաթիա, -մատոգ, -ոմա վերջածանցներով կազմված բժշկական տերմինները հայերեն համարժեքներով փոխարինելու մասին» որոշումը բացառիկ կարևորություն ունի իր գործառույթի միջազգային ճանաչմամբ և օտար տերմինների հայացման իր մասնագիտական ընդհանրացում-կանոնարկումներով: Որոշման նախագծի հեղինակ Ալ. Սարաֆյանը, որպես նախկին տերմինաբանական կոմիտեի, ապա նաև հայերենի բարձրագույն խորհրդի բժշկագիտական տերմինաբանության մասնաճյուղի նախագահ, այդ բնագավառի քաջ գիտակներից էր: Նրա ներկայացրած նախագիծը բժշկագետների կողմից ենթարկվել է մասնագիտական քննարկման և արժանացել է հավանության: Այդ որոշմամբ հունա-լատինական ծագման 103 տերմիններից 100-ը հայերենացվել են, և միայն երեք օտար (նարկոզ, հիպնոս, ռեմատիզմ) տերմինների գործածությունը հանձնարարելի է:

Հանձնարարված վերոհիշյալ հայերեն համարժեքների վերաբերյալ առարկություններ չեն կարող չլինել: Եթե հանուն համակարգվածության որոշման նախագծի հեղինակը *ախտ* արմատով բաղադրված 15 տերմին է ընդունում (*այլումինախտ, հողախտ, մաշկախտ, ճիծվախտ, նյարդախտ, երկկամախտ, գունախտ, երկաթախտ, թոչնախտ* և այլն), բայց մի այլ դեպքում առաջարկում է *հողախտ (հողաբորբ), խոսելախտ, մաշկախտ (մաշկաբորբ)* տերմինների փոխարեն գործածել *հողախտություն, խոսելախտություն, մաշկախտություն*, ապա նրա հիմնավորումը այս դեպքում այն է, որ սույն օրինակներում օտար տերմինը բաղադրված է ոչ թե *-ոգ* (ախտ) ածանցով, այլ *-պաթիա* (ախտություն) օտար ածանցով: Այսպիսին են որոշման հեղինակի կատարած օտար անվանումների հայերեն թարգմանություններն ու սրանց ողջ համակարգումը:

Աեզ մնում է ևս մեկ լրացում: Հայերեն *-ություն* վերջածանցով բաղադրված ախտանունները (*անոթախտություն, հողախտություն, խոսելախտություն, մաշկախտություն* և այլն) պետք է արտասանվեն հայերեն ճշգրիտ վանկատմամբ, այն է՝ *ա-նո-թախ-տու-թյուն, հո-դախ-տու-թյուն, մաշ-կախ-տու-թյուն* և այլն. սխալ վանկատմամբ արտասանելիս (*հողա-խըտություն, անոթա-խըտություն, մաշկա-խըտություն*) *ախ-տու-թյունը* դառնում է *ա-խըտություն*, որի բառային իմաստը բոլորովին այլ է: Այս պարագայում առարկող կողմը առաջարկում է այս ախտանունների հայերեն անվանումները գրել երկու *ա-ով* (*հո-*

դասախտություն, անոթախտություն, մաշկախտություն և այլն), ինչի անհրաժեշտությունը բնավ չկա, քանի որ հայերենում գործում են ճիշտ վանկատման վերոհիշյալ կայուն կանոնները:

12. «Գիտական աստիճանների շնորհման հետ կապված տերմինների միասնականացման մասին» որոշումով հայերենի բարձրագույն խորհուրդը հայերենացրել է օտար ութ տերմին (*ավտոռեֆերատ – սեղմագիր, դիպլոմ – վկայագիր, դիսերտացիա – ատենախոս, դիսերտացիա – ատենախոսություն, էքսպերտ – փորձագետ, էքսպերտիզա – փորձաքննություն, կոնսուլտացիա – խորհրդատու, օպոնենտ – ընդդիմախոս*) ու ճշգրտել է հայերեն գիտական քարտուղար (և ոչ թե՛ գիտնական քարտուղար) և մասնագիտական խորհուրդ (և ոչ թե՛ մասնագիտացված խորհուրդ) բառակապակցություն անվանումները:

13. «Տարբեր բնագավառների վերաբերող մի քանի անվանումների հայերեն համարժեքների ճշգրտման մասին» որոշմամբ հայացվել են երեք տնտեսագիտական (*բրուտո քաշ – համաքաշ, նետո քաշ – զտաքաշ, վաուչեր – հավաստագիր*), երկու քաղաքական – վարչական (*լեգիտիմ – օրինական, կոնդոմինիում – համատիրություն*), չորս տպագրական սարքերի (*դիսկետ – պնակիտ, պրինտեր – տպիչ, սկաներ – պատկերամուտ, քսերոքս – պատճենահան*) անվանումները: Տնտեսագիտական *հասարակական սնունդ* բառակապակցության փոխարեն գործածության է հանձնարարվել *հանրային սնունդ* բառակապակցությունը:

14. «Տարբեր բնագավառների վերաբերող մի շարք հասկացությունների հայերեն անվանումների միօրինակացման և ճշգրտման մասին» որոշմամբ հայերենի բարձրագույն խորհուրդը հայերենացրել է հասարակական, պետական-վարչական ինը (*կուլեգիա – վարչանի, դիսպետչեր – կարգավար, օֆերտա – գործարկ, օֆերենտ – գործարկու, կուրատոր – խնամարկու, կոնցեպցիա – հայեցակարգ, պրեզենտացիա – շնորհանդես, կոնտրակտ – պարտավորագիր, կոմվենցիա – համաձայնագիր*), ինչպես նաև հայերեն *պայմանագիր* և *լրագրող (ժուռնալիստ)* անվանումները: Այս շարքը ավարտվում է բժշկագիտական (*շոկային թերապիա – ցնցաբուժություն*) տերմինով: Ամբողջությամբ հայերենացվել է 12 տերմին:

15. «Ինֆորմացիա» տերմինի և նույն արմատով այլ տերմինների հայերեն համարժեքների մասին:

XX դարի կեսերից ինֆորմացիայի մասին գիտությունը՝ ինֆորմատիկան սկսեց և այժմ էլ շարունակում է զարգանալ: Ինֆորմատիկայի զարգացումը բնականաբար նշանակում է նրա հասկացությունների

համակարգի, դրա հետ կապված էլ՝ տերմինների համակարգի զարգացում: Դժբախտաբար, մենք զգալիորեն հետ մնացինք այս բնագավառում, և այդպես էլ չնշակվեց ինֆորմատիկայի հայերեն տերմինների այնպիսի համակարգ, որը բավարարեր ժամանակակից պահանջներին:

ՀՍՄՀ ԳԱ լեզվի ինստիտուտի քառահատոր բացատրական բառարանի 2-րդ հատորում (1972) *ինֆորմացիա* բառը հղվում է *հաղորդագրություն* և *հաղորդում* բառերին, որոնք բնավ պիտանի չեն *ինֆորմացիա* գիտական հասկացությունը նշանակելու համար: *Լրատվություն*, *տեղեկատվություն*, *իրազեկում* բառերի բացատրությունների մեջ նույնպես արտացոլված չէ ինֆորմացիայի գիտական ըմբռնումը: Եդ. Աղայանն իր բացատրական բառարանում (1976) տալիս է ինֆորմացիայի գիտական ըմբռնումն արտահայտելու կոչված, *իրազեկ* արձատվ կազմված բառերի մի համակարգ, որը, սակայն, անընդունելի է:

«Ինֆորմատիկայի հայ-ռուսերեն համառոտ տերմինաբանական բառարանում» (1983), «Ինֆորմատիկայի և հաշվողական տեխնիկայի հիմունքների հայ-ռուսերեն համառոտ տերմինաբանական բառարանում» (1985) և «Ռուս-հայերեն ինֆորմատիկայի տերմինաբանական բառարանում» (1985) *ինֆորմացիա* տերմինը չի թարգմանվում, *информирование* տերմինը թարգմանվում է «իրազեկում», իսկ *ինֆորմատիվություն*, *ինֆորմատիզացիա* կարևոր տերմիններն ընդհանրապես չկան, չկա հայերեն *տեղեկատվություն* տերմինը, վերջին բառարանում *дезинформирование* բառի դիմաց տրվում է «դեզինֆորմացիա», իսկ փակագծերում տրվում է «մոլորեցում» անհաջող տարբերակը, փոխանակ, գոնե, «ապատեղեկատվություն»:

Այսպիսով՝ *ինֆորմացիա* տերմինի և նույն արձատվ կազմված այլ տերմինների հայերեն համարժեքների համակարգը, որը պետք է կազմի ինֆորմատիկայի հայերեն տերմինաբանության հիմքը, առայսօր մնում է չնշակված:

Այստեղ հիմնական դժվարությունը բուն *ինֆորմացիա* տերմինի հայերեն թարգմանությունն է: Եղած տարբերակներն են՝ «տեղեկություն», «տեղեկատվություն», «լուր», «լրատվություն», «իրազեկում»: *Լուր* բառը *տեղեկության* համեմատությամբ ավելի պարզունակ է, ունի ավելի նեղ իմաստային դաշտ, ավելի շեշտված կենցաղային երանգ, ուստի *լուր* և *լրատվություն* բառերը պակաս պիտանի են *ինֆորմա-*

* Մեկնաբանությունը՝ Վ. Բաղդասարյանի և Վ. Ա. Սարգսյանի:

ցիա տերմինի թարգմանության համար: Իսկ *իրազեկում* բառը ոչ թե *տեղեկություն* բառի համեմատությամբ պակաս պիտանի է, այլ ընդհանրապես պիտանի չէ *ինֆորմացիա*-ի թարգմանության համար: Իրար հետ համեմատելով այս բառերի *տեղեկ* և *իրազեկ* արմատները (մենք այստեղ վերանում ենք *տեղեկ* = *տեղյակ* = *տեղ+ի +ակ*, *իրազեկ* = *իր+ա+զեկ* ստուգաբանություններից) տեսնում ենք, որ *իրազեկ*-ն ունի բառիմաստ, ինքնուրույն բառ է և նշանակում է «տեղյակ», *իրազեկություն*-ը նշանակում է «տեղյակություն», ոչ թե «տեղեկություն», *իրազեկում*-ն էլ նշանակում է «տեղեկացում», չի նշանակում և չի էլ կարող նշանակել «տեղեկություն», ուստի պիտանի չէ որպես *ինֆորմացիա*-ի համարժեքը: Մինչդեռ *տեղեկ*-ը ներկայումս բառիմաստ չունի, բառ չէ, և դա այստեղ նրա առավելությունն է: *Տեղեկություն*-ը չի նշանակում «տեղյակություն» (չնայած ստուգաբանորեն պետք է նշանակեր), ուստի կարող է դառնալ *ինֆորմացիա*-ի համարժեքը: Կարող է, բայց ոչ այնքան լիարժեք համարժեք:

Այստեղ հարկ է նշել մի արտառոց իրողություն: *Ինֆորմացիա* բառը ռուսերենում և այլ օտար լեզուներում ունի երկու իմաստ. առաջին՝ հիմնական, իմաստով նշանակում է «сведѣние», «տեղեկություն», իսկ երկրորդ՝ ածանցյալ, իմաստով՝ «տեղեկության հաղորդում, տեղեկատվություն» (ռուսական բառարանն այս իմաստով *ինֆորմացիա*-ի համար գրում է. «То же, что информирование»: *Տեղեկատվություն*-ը հաջող կազմված բառ է երկրորդ իմաստի համար: Բայց այս բառը հետզհետե սկսեց ընկալվել որպես առհասարակ *ինֆորմացիա*-ի համարժեք, այսինքն գործածվել այդ բառի նաև մյուս՝ հիմնական, իմաստով. սովորական են դարձել այնպիսի կոպիտ լեզվական սխալները, ինչպես՝ «Այս քերթը տալիս է կեղծ տեղեկատվություն», փոխանակ, գոնե, «տեղեկություն»: Հայերենի քառահատոր բառարանն էլ, ինչպես նշեցինք, *ինֆորմացիա* բառը փաստորեն թարգմանում է «հաղորդագրություն», «հաղորդում», որ նույն սխալն է: Կարծես թե *ինֆորմացիա*-ն բոլորովին տեղեկություն չի նշանակում, միայն տեղեկության հաղորդում է նշանակում: Սրան ավելանում է նաև այն հանգամանքը, որ չկա *տեղեկություն* գոյականից կազմված ածական (*տեղեկային* բառ չունենք), որով թարգմանենք *ինֆորմացիոն* բառը: Արդեն այս հանգամանքները նշանակում են, որ *տեղեկություն* բառը չի ընկալվում և չի էլ կարող ծառայել որպես *ինֆորմացիա*-ի հիմնական իմաստն արտահայտող լիարժեք տերմին:

Բայց այստեղ կա մեկ ուրիշ՝ ավելի նշանակալից, հանգամանք: Ժամանակի ընթացքում *ինֆորմացիա* հասկացությունը բարդացավ,

նրա առարկայական դաշտը խիստ ընդլայնվեց, և նրա սահմանման հարցը խիստ դժվարացավ: Աննախադեպ աճեց ինֆորմացիայի դերը գիտության մեջ և հասարակական կյանքում. XXI դարն արդեն կլինի ինֆորմացիայի դար, այդ դարում պատերազմները կդառնան ինֆորմացիոն պատերազմներ: Խորհրդային մեծ հանրագիտարանը գրում է. «Ինֆորմացիա – սկզբնապես՝ տեղեկություններ (сведения)», որոնք հաղորդվում են մարդկանցից մարդկանց բանավոր, գրավոր կամ այլ ձևերով: Բայց XX դարի կեսերին, ինֆորմացիոն պայթյունից հետո, առաջ եկավ ինֆորմացիայի նկատմամբ գիտական մոտեցման անհրաժեշտություն: Դա հանգեցրեց նրան, որ այդ հասկացությունն ընդլայնվեց, սկսեց ներառել տեղեկությունների փոխանակումը ոչ միայն մարդու և մարդու միջև, այլև մարդու և ավտոմատի, ավտոմատի և ավտոմատի միջև, ազդանշանների փոխանակումը բուսական և կենդանական աշխարհում, ինչպես նաև հատկությունների փոխանցումը գեների միջոցով բջից բջիջ, օրգանիզմից օրգանիզմ... «Ինֆորմացիա» հասկացությունն առայժմ մեկ-միասնական սահմանում չունի» (ԽՄՅ, հ. 10, 1972): Ուշադրություն դարձրեք, թե ինչ է գրում խորհրդային հանրագիտարանը 1972 թվականին, և ինչ է գրում մույն թվականին մեր բացատրական բառարանը, որն ինֆորմացիան համարում է ընդամենը հաղորդագրություն, այսինքն՝ տեղեկատվություն: Մեկ այլ հեղինակ էլ գրում է. «Ինֆորմացիան նյութական առարկաների և գործընթացների հատկությունն է՝ առաջ բերելու, փոխանցելու, պահպանելու բազմազան վիճակներ, որոնք կարող են արտացոլման տարբեր ձևերով հաղորդվել մի օբյեկտից մյուսին և դրոշմվել նրա կառուցվածքում»: Ընդհանրացնելով այս հարցադրումը՝ խորհրդային ինֆորմատիկներն ինֆորմացիան դիտում էին իբրև ընդհանրապես մատերիալի հատկություն, իսկ ինֆորմացիայի հասկացությունը՝ որպես ընդհանուր գիտական (և ոչ թե մի որոշակի գիտության) հասկացություն: Ի վերջո, մի հեղինակ էլ հուսահատված հայտարարում է. «Ինֆորմացիան գիտության անսահմանելի հասկացություն է»:

Արդ, մենք կարո՞ղ ենք ասել. «Գեների միջոցով մի բջից մյուսին, մի բույսից մյուսին են անցնում զանազան լուրեր (ուրախ կամ տխուր), իրազեկումներ, հաղորդագրություններ, տեղեկություններ», կամ «Երբ մուրճով հարվածում ենք քարին, երկուսի վրա էլ (երկուսի մասին էլ) մնում են որոշակի լուրեր, տեղեկություններ»: Տեղեկություն (сведения) չի մնում, իսկ ինֆորմացիա մնում է: Պարզ է, որ այստեղ կա որոշակի լեզվական անբավարարություն:

Այս իրավիճակում մենք կարծում ենք, որ *ինֆորմացիա*-ի դիմաց

պետք է գործածել մի նոր բառ: Այդ բառն արդեն կազմված է և կազմված է նույն *տեղեկ* արմատով և *ոյթ* վերջածանցով *տեղեկոյթ*: *Տեղեկոյթ*-ը պիտի նշանակի ոչ միայն տեղեկություն, այլև տեղեկության կարգի, բայց ավելի բարձր կարգի, համընդհանուր կարգի մի այլ բան, հենց այն, ինչ պետք է ժամանակակից ըմբռնմամբ ինֆորմացիան արտահայտելու համար: *Տեղեկոյթ*-ի կիրառությունից հետո էլ *տեղեկատվություն*, *տեղեկացում*, *տեղեկատու*, *տեղեկունակ* և այլ բառեր կընկալվեն որպես *տեղեկոյթ*-ից կազմված, և կստացվի համակարգ:

Այսպիսով *ինֆորմացիա* նշանակում է «1.տեղեկություն, 2. տեղեկատվություն»: *Տեղեկատվություն* բառը այժմ լայն կիրառում ունի: Իսկ *տեղեկություն* բառի փոխարեն, ինչպես արդեն ասացինք, կիրառում են *լուր*, *իրազեկում*, *հաղորդագրություն* և այլն, որոնք բնավ էլ ինֆորմացիա չեն նշանակում: Պարզապես ինֆորմացիայի տեսակներ են: Ինչպես ժամանակին կար *սովորություն*, այնուհետև առաջացավ *սովորույթ*, *ավանդություն-ավանդույթ*, *բնություն-բնույթ* և այլն: Առաջարկն է, որ *տեղեկության* փոխարեն այս դեպքում գործածվի *տեղեկույթ*, որն ավելի չեզոք բառ է, ընդգրկուն կերպով արտահայտում է *ինֆորմացիա* բառի բոլոր իմաստները և հեշտ բառածանցվում ու բառաբարդվում է:

Օգտվելով առիթից՝ ասենք, որ այժմ ասում և գրում են *զանգվածային լրատվության միջոցներ*՝ *ՁԼՄ*, որը ճիշտ չէ. պետք է լիներ *ՁՏՄ*, քանի որ ամեն մի տեղեկություն չէ, որ *լուր* է: Երբեմն համառում և ասում են *զանգվածային լրատվամիջոցներ*, որն արդեն կոպիտ սխալ է, քանի որ *զանգվածայինը* ոչ թե միջոցներն են, այլ տեղեկույթը, տեղեկությունը: Այնպես որ, ճիշտ կլինի ասել *զանգվածային տեղեկատվության միջոցներ*՝ *ՁՏՄ*:

Բ. ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ-ՈՒՂՂԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԵՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՈՒՂՂԱԳՐԱԿԱՆ-ՈՒՂՂԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ԿԵՏԱԴՐԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵԿՆԱՔԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. «*Ի վայր (վար), ի վեր* հետադրություններով կազմված բառակապակցությունների և բառերի գրության մասին» որոշումը հայերենի բարձրագույն խորհրդի 1997 թ. ապրիլին ընդունած և լեզվի պետական տեսչության 2000 թ. փետրվարի 1-ի հրամանով վերահաստատված որոշում է:

Որոշումն ունի օրինակներով և մեկնաբանություններով օժտված «Ծանոթություններ», ուստի լրացուցիչ մեկնաբանությունների կարիք չկա:

2. «Հայերեն գրավոր և բանավոր խոսքում դասական թվականների գործածության միասնականացման և ճշգրտման մասին» որոշումը նույնպես օժտված է մեկնաբանող մի քանի «Ծանոթություն»-ներով, ուստի լրացուցիչ մեկնաբանման կարիք չունի:

3. «Երկրակի գրություն ունեցող մի շարք բառերի ուղղագրության միօրինակացման մասին» որոշումը հայերեն ուղղագրական գուգահեռություններ ունեցող 12 բառերի ուղղագրական միօրինակացմանն է վերաբերում: Սա ճշգրտված բառացանկ է և նույնպես լրացուցիչ մեկնաբանման կարիք չունի: Սակայն, երբ ռուսախոս հայը աղավաղում է հայերեն *ռ* և *ր* գրերի արտասանությունը, որով *բրթել* (հրել) բառը դարձնում է *բռթել* (կտրատել), *ծեծկռտել*-ը՝ *ծեծկրտել*, իսկ *ազաթ* թանկարժեք քարը գրում է երեք ուղղագրությամբ (*ազաթ*, *ազատ*, *ալպաթ*), միջամտությունը դառնում է անխուսափելի:

Իսկ որ մշտապես կրկնվող հեռուստագովազող *Նոյ* անվանը *-յան* ածանց չի ավելացնում և մոտ տասը տարի շարունակում է *Նոյյան*-ի փոխարեն գրել *Նոյան*, մեզ հարկադրում է մեկնաբանություն տալ վաղուց կանոնարկված և մեկնաբանված լեզվական իրողությանը:

4. Հայերենի բարձրագույն խորհուրդը ժամանակակից հայոց լեզվում *Լոռի* և *Գյումրի* տեղանունների հոլովական հարացույցը միօրինակացնելու և *Լոռի* – *Լոռու* – *Լոռվա*, *Գյումրի* – *Գյումրու* – *Գյումրվա* ուղղագրական, այլև քերականական խառնաշփոթը վերացնելու նպատակով, որոշել է՝ «Այսուհետև գրական լեզվում հանձնարարել սեռական – տրական հոլովի ու-ով՝ *Լոռու*, *Գյումրու* ձևերը»:

Ձևակերպման մեջ ասված է. «Գրական լեզվում», դա նշանակում է, որ որոշ գործառնություններում կարող են պատահել նաև բարբառային հոլովածներ: Այսինքն՝ եթե գրական լեզվում ունենք՝

ուղղ.-հայց.	<i>Լոռի</i>	<i>Գյումրի</i>
սեռ.-տրակ.	<i>Լոռու</i>	<i>Գյումրու</i>
բացառ.	<i>Լոռուց</i>	<i>Գյումրուց</i>
գործ.	<i>Լոռով</i>	<i>Գյումրով</i>
ներգ.	<i>Լոռում</i>	<i>Գյումրում,</i>

ապա չի բացառվում, որ այդ տեղանունների որոշ բարբառային հոլովածները գործածված լինեն պատմական, աշխարհագրական, սննդապաշարեղենի բնագավառներում. այսպես, օրինակ՝ *Լոռիի բերդ, Լոռվա բերդ, Լոռիի հովիտ, Լոռիի Ս. Լուսավորիչ վանք, Լոռվա սարահարթ* (տես՝ Տեղանունների բառարանը), *Լոռվա բոգբաշ (կոլոլակ), Գյումրվա խաշ (խորոված)*, որոնց գրական ձևերում կունենանք *Լոռու* կամ *Գյումրու* հոլովածը: Իսկ ինչ վերաբերում է *Լոռիից, Լոռիով, Լոռիում, Գյումրիից, Գյումրիով, Գյումրիում* ձևերին, ապա սրանք բարբառային, անհամաձայնարարելի ձևեր են, թեև այդպես հաճախ լսում ենք շատերի բերանից:

5. ՀՀ Կառավարության առընթեր լեզվի պետական տեսչության հայերենի բարձրագույն խորհրդի՝ ուղղագրական-ուղղախոսական, կետադրական որոշումների շարքում ընդգրկուն արժեք ունի «Արևելահայերենի այբուբենի և գրանշանների համապարփակ հավաքածուի մասին» որոշումը, որն ընդունվել է ԼՊՏ-ի հայերենի բարձրագույն խորհրդի 1998 թ. նոյեմբերի 13-ի նիստում:

Այդ որոշմամբ (նախագծի հեղինակ՝ ակադեմիկոս Ս. Աբրահամյան) լուծվել են հետմետրոպայան գրական հայերենի գրաբանության հետևյալ վիճահարույց հարցերը:

1. Արևելահայերենում վերականգնվել է մետրոպայան այբուբենի «մեկ հնչյունին՝ մեկ գիր» սկզբունքը, այսինքն՝ լեզվական օրենք է ճանաչվել արևելահայերենի դասագրքերում, բառարաններում, գիտական գրականության մեջ՝ տասնամյակներ առաջ կատարված այն կանոնարկումը, ըստ որի՝

ա) հայերենի այբուբենից հանվել է գրաբարի՝ իր առանձին հնչույթի արժեքը վաղուց կորցրած *վյուն-ը (f, z)*.

բ) *ու* գիրը դադարել է իր հնչմանը չհամապատասխանող երկու առանձին գիր (*ո + լ*) համարվել և այբուբենում դրվել է *վյուն-ի*՝ դատարկ մնացած տեղում՝ պահպանելով վերջինիս թվային արժեքը (7000):

2. Այբուբենի տառային շարքից իրավացիորեն հանվել է *և -ը*, որը

պատմականորեն՝ միջնադարում առաջացած կցագիր է ($t + 1$) և չունի առանձին, այլ գրերով չարտահայտվող հնչում: Տեղ և ժամանակ խնայելու նպատակով առաջացած այդ կցագիրը, որն այբուբեն է մտել՝ որպես միջնադարում ավելացած *օ*, *ֆ* գրերը մեսրոպյան այբուբենին միավորող շաղկապ, լեզվի խնայողության օրենքով, շարունակում է պահպանվել գրանշանների շարքում, որովհետև, բացի այլ խնայումներից, *և* -ի կիրառման շնորհիվ բավականաչափ թուղթ է խնայվում:

3. Հայերենի գրանշանների հավաքածու մտած 38 տառերից բացի, որպես հավելյալ տառեր, պահպանված են *է*, *ւ* («վուն») և *և* («եվ») տառանշանները: Վերջում թվարկված են հայերենի կետադրական նշանները:

Այսպիսով, ինչպես իրավացիորեն մատնանշում է իր հիմնավոր մեկնաբանություններում Ս. Աբրահամյանը, այս որոշմամբ, բացի գրաբանական պատմական իրողությունների ճշգրտումից, գործող միջազգային տեխնոլոգիաներին ներկայացվում է գրանշանների մի այնպիսի համակարգ, որը համապատասխանում է միջազգային հիմնօրինակին (ստանդարտին), և որով հնարավոր է դարձել արտահայտել գրական հայերենի բոլոր տարբերակները՝ հին գրական հայերեն, միջին հայերեն, արևելահայերեն և արևմտահայերեն:

6. Հայերենի ուղղագրության վերաբերյալ տերմինաբանական կոմիտեի ընդունած որոշումներից մեկն էլ «Քաղաղրյալ հատուկ անուններում մեծատառերի գործածության մասին» որոշումն է:

Հայերենի բաղադրյալ հատուկ անունների մեծատառերի գրության վերաբերյալ նախկին Նախարարների խորհրդին առնթր տերմինաբանական կոմիտեի՝ դեռևս 1963 թ. ընդունած որոշումը կայացվել է չորս շատ հեղինակավոր նախագծերի երկարատև քննարկումներից հետո: Անցած 40 տարիների ընթացքում, մինչև այս նոր որոշման ընդունումը, այդ հարցի շուրջ բանավեճերն ու մասնակի բարեփոխումները երբեք չեն դադարել: Այդպիսի փոփոխականությունը պայմանավորված է հետևյալ հանգամանքներով:

Մեծատառերը փոքրատառերից տարբերվում են իրենց գրության չափսով, իսկ որոշ տառեր՝ նաև գծագրությամբ: Հնչյունային գրության երևան գալու շրջանում տարբեր ժողովուրդներ իրենց համար ստեղծել են մի տեսակի գրություն ունեցող գրեր. մեծատառերի և փոքրատառերի զանազանումը, իբրև գրի տեսակների, շատ ժողովուրդների մեջ երևան է եկել համեմատաբար ուշ ժամանակներում: Եթե հունական այբուբենում այդ տարբերակումը գալիս է վաղ ժամանակներից, ապա լատինական այբուբենում ժամանակակից հասկացողությամբ

մեծատառերի գործածությունն սկսվում է XV դարից միայն, իսկ ռուսերենում XVII դարից:

Մինչև XII դարը հայերեն ձեռագրերն ու վիմական արձանագրությունները գրվել են մեսրոպյան երկաթագրերով, որոնք հետագայում մնացին որպես մեծատառեր, իսկ սրանց՝ դեռևս VII-VIII դարերից սկսված գրչական ձևափոխություններից ստեղծվեցին փոքրատառերը: XII դարից սկսած մեսրոպյան երկաթագրերն իրենց հիմնական գործածությամբ դարձան գլխագրեր, այսինքն՝ մեծատառ:

Արաբերեն, պարսկերեն, վրացերեն, հինդի և այլ լեզուներում մեծատառերի և փոքրատառերի տարբերակում ընդհանրապես չկա, իսկ գերմաներենում մեծատառով են գրվում բոլոր գոյականները: Հետևաբար, մեծատառերի գործածությունը լեզուների համար միատեսակ և պարտադիր երևույթ չէ, այլ գրության մեջ մտնող սովորական պայմանական միջոց է, գրության տվյալ համակարգի պատմական զարգացման արդյունք:

Գրերն ու գրության տեսակները զարգացվել, կատարելագործվել են տեղ ու ժամանակ խնայելու, գրությունը պարզեցնելու, գրավոր խոսքը հեշտ ու հասկանալի դարձնելու սկզբունքներով: Հետևաբար, մեծատառեր զանազանող ժամանակակից լեզուներում փոքրատառ գրերի կողքին մեծատառերը միայն օժանդակ միջոց են գրավոր խոսքից օգտվելը հեշտացնելու համար:

Մեծատառ ունեցող շատ լեզուների պես հայերենում էլ մեծատառով սկսում ենք գրել խոսքը, պարբերությունը, առանձին նախադասությունները, մեջբերվող ուղղակի խոսքը և նման շարահյուսական միավորները՝ սրանով տեսանելիորեն անջատելով ու ընդգծելով լեզվական այդ միավորների անկախությունը, սրանց տրոհումը միմյանցից, որ բանավոր խոսքում կատարվում է առոգանությամբ: Մեծատառով է սկսվում պոետական խոսքի յուրաքանչյուր տող՝ տեսանելի դարձնելով ո՞րքմիկ խոսքի արտասանական սահմանագծումները: Մեծատառերը գործածում ենք նաև առանձնահատուկ ոճական նշանակությամբ՝ այդպիսի գրությամբ ընթերցողի ուշադրությունը դարձնելով տվյալ բառի կամ նրա տվյալ բնագրային նշանակության վրա՝ այն դարձնելով մեզ համար մի տեսակ հատուկ անուն: Ահա թե ինչպես է անում այդ հանճարեղ թունանյանը.

*Բերանն արնոտ Մարդակերը էն անբան
Հազար դարում հազիվ դառավ Մարդասպան.
Չեղբերն արնոտ գնում է նա դեռ կամկար,
Ու հեռու է մինչև Մարդը իր ճամփան:*

Մեծատառով գրում ենք հատուկ անունները, որոնք այդ գրությամբ նախ ընդգծվում են որպես մտքի հիմնական առարկաներ, ապա՝ հեշտացվում է անծանոթ անվան տարբերակումը. այլապես այն փոքրատառ գրությամբ կարող էինք ընդունել հասարակ, թարգմանելի անվան տեղ և նրա մեջ ինչ-որ իմաստ որոնել, որը բնագիրը կդարձներ անհասկանալի, և վերջապես՝ հատուկ անվան մեծատառ գրությունը հեշտացնում է անվանացանկերի օգնությամբ ցանկացած անվան մասին եղած տեղեկությունների արագ գտնելը, առանց այդ էջն ամբողջությամբ կարդալու:

Հայերենում մի ժամանակ մեծատառով էին գրվում ցեղերի, ժողովուրդների անունները, բոլոր տեսակի միությունների, կազմակերպությունների ոչ պայմանական և չտեղայնացված անվանումները, իսկ սրանց թիվն առաջներում շատ էր: Նորագույն ժամանակներում մեծատառերի գործածության սահմանները գնալով ընդլայնվեցին, նրանց գրությունը տարածվեց բոլոր տիպի՝ աճող հիմնարկությունների, ձեռնարկությունների, միությունների ու կազմակերպությունների բաղադրյալ անվանումների վրա, շատ սովորական կայուն բառակապակցությունների վրա. մեծատառ գրությունը, կարծես, դարձավ նաև բառը, բառակապակցությունը ընդգծելու սովորական միջոց, վերաբերմունքի արտահայտության միջոց: Սրանց ավելացավ մասնուկում ամեն օր հրապարակվող դիվանագիտական և պաշտոնական փաստաթղթերում, հոգևոր-եկեղեցական գրական ու պաշտոնական հրապարակումներում ազատորեն ու ինքնակամ գործածված մեծատառերի գրությունը: Այնպես որ մեծատառերի գործածությունը գրավոր խոսքից օգտվելը հեշտացնելու իր դերը, կարծեք, սկսեց կորցնել:

Ինչպես նախկին տերմինաբանական կոմիտեի 1963 թ. հունվարին ընդունած որոշումը, այնպես էլ ՀՀ կրթության և գիտության նախարարության լեզվի պետական տեսչության հայերենի բարձրագույն խորհրդի՝ 2003 թ. մարտի 8-ին հրապարակված որոշումը, նպաստակ ունեն բաղադրյալ հատուկ անուններում մեծատառերի գործածությունը հեշտացնելու և սրանց գրության մեջ միօրինակություն սահմանելու, սակայն այդ որոշումները վերաբերում են միայն բաղադրյալ հատուկ անուններին, իսկ պարզ հատուկ անունների մեջ մեծատառերի գործածության կանոնները որոշակի են:

Նշված որոշումներում մեծատառով գրվող բաղադրյալ անունները բաժանված են երկու խմբի: Առաջին խմբի մեջ մտնում են այն բաղադրյալ հատուկ անունները, որոնց բոլոր բառերն սկսվում են մեծատառով, իսկ երկրորդի մեջ մտնում են այն անունները, որոնց միայն ա-

ռաջին բառն է սկսվում մեծատառով:

Նոր որոշումը, ինչպես և նախորդը, իր դասակարգումների համապատասխան օրինակների թվարկումը միշտ ավարտում է «և այլն»-ով, քանի որ նման համաշխարհային առարկայացանկ ունեցող երևույթների լիակատար անվանական թվարկումն անհրազոր թել է. պակասը լրացվում է մասնագիտական տեղեկատուներով և գրականությամբ միայն:

Բոլոր բառերը մեծատառով գրվող բաղադրյալ անունները ներկայացվում են այնպիսի համակարգմամբ և լրացնող մեկնաբանություններով, որ մեր պարագայում հարկ կա խոսելու միայն նորամուծությունների և ուղղագրական վերափոխումների մասին:

Որոշումում «1. Բոլոր բառերն սկսել մեծատառով» կանոնարկումը գործում է՝

«Ա. Բոլոր պետությունների պաշտոնական անուններում:

Բ. Բոլոր բաղադրյալ այն անձնանուններում և մականուններում ու ծածկանուններում, որոնց մեջ՝

ա) բոլոր բաղադրիչներն առանձին-առանձին հատուկ անուն են.

բ) լրացյալը հատուկ անուն է, իսկ լրացումը (նախադաս, թե հետադաս)՝ մականուն:

Գ. Բոլոր բաղադրյալ այն աշխարհագրական անուններում, որոնց մեջ՝

ա) բոլոր բաղադրիչներն առանձին-առանձին հատուկ անուն են.

բ) հասարակ անուն լրացումը նախադաս է, իսկ հատուկ անուն լրացյալը՝ հետադաս.

գ) լրացումն ու լրացյալը օտարալեզու, բոլոր բաղադրիչները մեծատառով գրվող (վերոհիշյալ որևէ տեսակի) անուններ են.

դ) երկու բաղադրիչներն էլ հասարակ անուններ են, բայց պայմանական կամ փոխաբերական գործածությամբ դառնում են հատուկ անվան բաղադրիչ և գրվում մեծատառ:

Դ. Հոգևոր-պատմամշակութային այն բաղադրյալ հատուկ անուններում, որոնց մեջ բոլոր բաղադրիչներն առանձին-առանձին կամ «Սուրբ» մականվան հետ միասին հատուկ անուն են»:

Սա որոշում է առաջին կետի ողջ բովանդակությունը՝ համապատասխան օրինակներով ու լրացուցիչ մեկնաբանություններով հանդերձ: Այս մասում, բաղադրյալ հատուկ անուններն ըստ բովանդակային և բառակապակցական հատկությունների տարանջատելուց և դրանք օրինակների առատությամբ հիմնավորելուց զատ, կատարվել է երկու հավելում: Մեկը հոգևոր-պատմամշակութային անուններում

«Սուրբ» բառի հաճախ փոքրատառով գրվելու (*Անգղա սուրբ Նշան – Անգղա Սուրբ Նշան վանք*) երկվությունը վերացնելուն է վերաբերում: Մյուսը, որ ոճանց համար մնում է վիճահարույց, բաղադրյալ հատուկ անվան պայմանական կամ փոխաբերական իմաստով գործածված բաղադրիչի մինչև այժմ փոքրատառ գրությունը մեծատառ դարձնելուն է վերաբերում:

«Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում Հենրիկ Գալստյանը հարցնում է, թե մինչև հիմա գրում ու հիմնավորում էիք, թե *Մերձավոր արևելք*, *Հայկական պար*, *Մեծ արջի համաստեղություն* գրելն է ճիշտ, այդ ինչպե՞ս եղավ, որ այս *արևելք*, *պար*, *արջ* հասարակ անունները դարձրիք հատուկ անվան մեծատառով գրվող բաղադրիչ:

Այս որոշումն ընդունող հայագետների պատասխան-հիմնավորումը հետևյալն է եղել: Աշխարհի յուրաքանչյուր լեզու ունի մեծատառ-փոքրատառ գրելու իր «տրամաբանությունը»: Հայերենը բացառություն չէ: Տրամաբանությունից ու տրամաբանական դասակարգումից բացի, լեզվի զարգացման ընթացքին շատ հարազատ է մաս ձևաիմաստային մշտական կատարվող փոփոխությունը, այն էլ, մասնավոր, գրության մեջ: 1963 թ. ընդունված որոշումից մինչև 2003 թ. չեղավ որևէ հրատարակիչ, որևէ լրագրող, որևէ աշխարհագրական, պատմական գիրք, որ կիրառած լիներ այդ կանոնը. բոլորը միաբերան շարունակեցին «Մերձավոր արևելք, Հեռավոր արևելք» գրելու փոխարեն գրել «Մերձավոր Արևելք, Հեռավոր Արևելք»: Այս մեկնաբանությունը պարզ է: «Արևելքը» այս կապակցության մեջ դադարում է միայն արևելք լինելուց, նա դառնում է աշխարհագրական մի ամբողջ տարածքի, երկրամասի պաշտոնական դարձած անվան տարբերակիչ բաղադրամաս: Այնպես որ ճապոնիայի ու Չինաստանի համար էլ ոչ թե արևելք է, այլ արևմուտք: Ահա թե որն է այդ բառի պայմանական, փոխաբերական գործառույթ ունենալու տրամաբանությունը: Զնոռանանք ինչե՞լ, որ Ղարիբյանը իր «Դպրոցական ուղղագրական բառարանում» դեռևս 1970-ականների վերջերից հանձնարարում է գրել *Մերձավոր, Հեռավոր Արևելք*:

Այսպիսի գործածությամբ էլ «Հայկական պար լեռնաշղթան» «Հայաստանի տեղանունների բառարանում» մասնագետների ձեռքով դարձել է «Հայկական Պար լեռնաշղթա», իսկ «Մեծ Արջի համաստեղություն, Փոքր Արջի համաստեղություն» բաղադրյալ անուններում էլ հայ աստղաֆիզիկոսներն են այդ երկինք բարձրացած արջին իջեցրել երկրի վրա և նրան փոխարինել երկնային «Արջով», արջն ու արջակերպ աստղակույտն իրար չխառնելու համար: Բացի այս, հայերենում

մեծ, փոքր որոշիչները սովորաբար հատուկ անվան վրա են դրվում. գրում ենք *Մեծ Մասիս, Փոքր Մասիս, Մեծ Պարնի, Փոքր Պարնի* (գյուղ): Իսկ թե ինչն՞ու նույն տրամաբանությամբ *Վայոց ձորի մարզ, Հյուսիսային սառուցյալ օվկիանոս* և այլ նման բաղադրյալ անուններում այս տրամաբանությունը չի գործում, այդ հարցն էլ ունի իր հիմնավոր պատասխանը: *Վայոց ձոր* աշխարհագրական տեղանունը հարյուրամյակների գործածություն ունի: Կան *Վայոց ձորի գոգահովիտ, Վայոց ձորի լեռնաշղթա, Վայոց ձորի կիրճ*, ինչպես նաև՝ *Վայոց ձորի մարզ* նորակազմություն բաղադրյալ անունները: Սրանցում «ձորը» շարունակում է պահել իր բառային նշանակությունը և վերը հիշատակված *Արեւելք, Պար, Արջ* մեծատառ գրվածների շարքին չի դասվում: Ինչ վերաբերում է հիշատակված «*Հյուսիսային սառուցյալ օվկիանոս*» օրինակին, ապա այդ անվան *սառուցյալ* բաղադրիչը այնքան մենիմաստ է, որ հաճախ կրճատ ձևով ուղղակի գրվում է «*Սառուցյալ օվկիանոս*»:

Իզուր է այս երկու-երեք փոփոխություններին Գալստյանը խառնում «Տրդատի թախտ, Բաղակի քար»՝ իր ասելով «լեզվական նույն կաղապարն ունեցող անունները»: Այդ կաղապարի բազմաթիվ անուններ կան պատմական Հայաստանի տարածքում, որոնց ուղղագրությունը դարձել է ավանդական թե գրաբար, թե աշխարհաբար ձևերով:

Այնպիսի անուններ, ինչպիսիք են *Հայոց ձոր* (գավառ, գետ, գյուղ), *Հրազդանի կիրճ* (հանգստավայր), *Գեղամի դաստակերտ* կամ *Տրդատի թախտ* (ամրոց, ավան, բերդաքաղաք), *Հավուց թառ* (գյուղ, վանք), *Անահտա աթոռ* (լեռնագագաթ, հեթանոսական տաճար), *Բաղակի քար* (բերդ, ամրոց) և այլն, ըստ երկրորդ հասարակ անուն բաղադրիչի որքանով էլ իմաստավորված լինեն, միևնույն է, այս հարյուրավոր տեղանունների ավանդական ուղղագրությունը դեռևս պիտի պահպանվի. գրաբարը միայն կարող էր իր շարադասությամբ գրել *Թախտ Տրդատա(յ), Աթոռ Անահտա(յ), Թարն Բաղակու*, և ոչ՝ աշխարհաբարը:

Մեկնաբանվող որոշման երկրորդ մասը վերաբերում է միայն առաջին բաղադրիչը մեծատառով գրվող բաղադրյալ անուններին: Սրանցում էլ կատարվում է անունների բովանդակային և գործառական հատկանիշներով կատարված, բազմաստիճան խմբավորում:

«2. Միայն առաջին բառն սկսել մեծատառով (դրանց կազմում հատուկ անուն լինելու դեպքում պահպանելով նաև այդ անվան մեծատառով գրությունը)»,– այսպես է վերնագրվում այդ մասը, որի Ա, Բ, Գ կետերում համապատասխանաբար խմբավորվում են՝ ֆիզիկաաշխարհագրական, պետությունների վարչատարածքային հին ու նոր,

պետությունների խմբերի (դաշինքների, միավորումների) այն անունները, որոնց մեջ լրացյալը առանձին վերցված հատուկ անուն չէ: Համապատասխան օրինակներից են՝ *Աղթամար կղզի*, *Հյուսիսային սահույցյալ օվկիանոս*, *Արագածոտնի մարզ*, *Ստալրոպոլի երկրամաս*, *Արաբական պետությունների լիգա*, *Երեք կայսրերի դաշինք* (բայց նաև՝ *Մեծ կամ խաղաղ օվկիանոս*, *Կարսի Բագրատունիների թագավորություն*, *Անկախ Պետությունների Համագործակցություն*):

Այստեղ էլ բերված օրինակների առատությունը՝ կանոնարկումը հասկանալի դարձնելու և լայն տեղեկատվության համար է:

Բազմաբնույթ և բազմաբովանդակ են Դ կետի «Չակերտների մեջ առնվող անվանումները»: Բերված մեկնաբանության կարիք չունեցող օրինակներից են՝ ա) «*Պատերազմ և խաղաղություն*», «*Գրական բերք*», բ) «*Ազգային միաբանություն*» կուսակցություն, «*Նաիրիտ*» գործարան, «*Դինամո*» մարզական ընկերություն, «*Գերազանցիկ ֆինանսիստ*» կրծքանշան:

Երկրորդ մասի հաջորդ՝ Ե, Ձ, Է, Ը կետերում խմբավորվում և համապատասխան օրինակներով հավաստվում են համաշխարհային ու համապետական մրցանակների ու շքանշանների, համաշխարհային կազմակերպությունների, միությունների, հաստատությունների, բոլոր պետությունների կենտրոնական ղեկավար օրենսդիր, գործադիր և դատական բարձրագույն մարմինների, պատմահասարակական նշանավոր անցքերի ու շրջափուլերի, պաշտոնական ու ազգային-ավանդական տոների բաղադրյալ անունները:

Այս հատվածում ամենաեական նորույթն այն է, որ որոշման նախագիծը մշակող հայերենի բարձրագույն խորհուրդը աշխատել է քննվող հարցը դուրս բերել խորհրդային իշխանության տարիների միակուսակցական, սուբյեկտիվ մոտեցման մտայնության տեսադաշտից: Որոշման մեջ իրենց տեղն են գտել և՛ հայերենի, և՛ օտար կուսակցությունների, և՛ հեղափոխական, և՛ ոչ հեղափոխական՝ ազգային-ավանդական, եկեղեցական-ժիսական, տոների, և՛ պետական-պաշտոնական, և՛ միջազգային պատմական նշանավոր անցքերի ու տոների բաղադրյալ անունները: Այսինքն՝ վերացված է *Հայրենական մեծ պատերազմը*՝ մեծատառ, իսկ *Առաջին համաշխարհային պատերազմը*՝ փոքրատառ, *Կոմունիստական կուսակցությունը*՝ մեծատառ, *Լեյբորիստական կուսակցությունը*՝ փոքրատառ (երկուսն էլ դարձել են փոքրատառ), *Մայիսի մեկը*՝ մեծատառ, *Սուրբ ծննդի տոնը* (*Սուրբ ծնունդը*), *Համբարձման տոնը* փոքրատառ գրելու խտրականությունը:

Կատարվել են մի քանի մասնակի փոփոխություններ ևս:

Նախորդ որոշմամբ՝ առաջին բաղադրիչը մեծատառով գրվող անունների եռաշարքը այսպիսին էր՝ կուսակցական, պետական, կառավարման բարձրագույն մարմիններ, այն է՝ ՀԿ(Բ)Կ Կենտկոմ, ՀԽՍՀ Գերագույն խորհուրդ, ՀԽՍՀ Մինիստրների սովետ: Նոր որոշմամբ պետությունների, այդ թվում և Հայաստանի Հանրապետության կենտրոնական ղեկավար բարձրագույն մարմինների եռանկյունում կուսակցական գերագույն մարմինը փոխարինված է դատականով, այսինքն՝ ունենք օրենսդիր (ՀՀ Ազգային ժողով), գործադիր (ՀՀ Նախարարների խորհուրդ կամ Կառավարություն) և դատական (Սահմանադրական դատարան, Վճռաբեկ դատարան): Դատախազությունը վերահսկողական մարմին է և այս եռանկյունուց դուրս է: Այս կանոնարկմամբ *կոմգորես, սենատ, պառլամենտ, սեյմ, մեջլիս, դումա, ռադա, խուրալ, կառավարություն* բառարանային հասարակ անունները, իբրև տարբեր պետությունների պետական կենտրոնական ղեկավար մարմնի անուն, գրվում են մեծատառով (*ԱՄՆ-ի Կոնգրես* կամ *Սենատ, ՌԴ Պետդումա* կամ *Դումա, ՀՀ Կառավարություն, ԱՀ Մեջլիս, ԼՀ Սեյմ, ՄՀ խուրալ* և այլն):

Ոմանց համար վիճահարույց է դարձել որոշման երկրորդ մասի հետևյալ՝ «Ե. Համաշխարհային կամ համապետական ճանաչման հաստատության, մրցանակի կամ բարձրագույն պատվավոր կոչման, ինչպես նաև պետություններից շնորհվող շքանշանների և մեդալների բաղադրյալ անուններում», կետի տակ *Մատենադարան, ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա* անունների հայտնվելը: *Մատենադարան*-ը իրոք հասարակ անուն է և իր բոլոր տեղայնացումներում գրվում է փոքրատառով: Նախկին տերմինաբանական կոմիտեն առանձին որոշմամբ *Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան մատենադարան* բառակապակցություն-անվան փոխարեն հնարավոր համարեց գործածել միայն *Մատենադարան* մեծատառ գրությամբ:

Հիմնավորումն այն էր, որ սա սովորական գրապահոց չէ, այլ հին ձեռագրերի և հնատիպ գրականության ուսումնասիրման գիտահետազոտական ինստիտուտ է, այսինքն՝ ինստիտուտ-մատենադարան: Մեծատառ գրությամբ *Մատենադարանը* ձեռք էր բերում այդ բովանդակությունը առարկայացնող, տեղայնացված հատուկ անվան արժեք:

Նոր որոշման մեջ այդպիսի բացառություն-հավելում է ՀՀ *Գիտությունների ազգային ակադեմիա* բառակապակցությունը՝ այդ հաստատության անվան մեծատառ գրությամբ: Հիմնավորումը եղել է այն, որ *գիտությունների ակադեմիա* կայուն բառակապակցությունը, ինչպես

և գրողների միություն, թատերագիրների միություն և այլ հաստատությունների, կազմակերպությունների անունները տեսակի, փոքրատառով գրվող անուններ են: Մինչդեռ ՀՀ գիտությունների ակադեմիան իրեն մասնավորել, տեղայնացրել է՝ անվանը հավելելով *ազգային* որոշիչը: Իհարկե, կասեն, թե հիմա օպերան ազգային է, հանրային գրադարանը ազգային է, «ուշու» մարզածեն անգամ ազգային է, հապա սրա՞նք ինչպես գրենք: Պատասխանը մեկն է՝ Գիտությունների ազգային ակադեմիան այդ շարքում չէ. նա բացառություն է:

Մեծատառ գրությամբ տարբերակով որոշիչներ են *միջազգային*, *համաշխարհային* ածականները: Երբ ասում ենք՝ *Շախմատի միջազգային ֆեդերացիա*, *Արհեստակցական միությունների համաշխարհային ֆեդերացիա*, այլևս չենք հարցնում ո՞ր երկրի: Սրանք ամբողջ աշխարհին են, բոլոր ազգերին են, ուստի և եզակի են, այլ տեղայնացում չունեն: Մինչդեռ *արհեստակցական միությունների կենտրոնական խորհուրդ*, *շախմատի հանրապետական ֆեդերացիա* ասելիս սրանց տեղայնացումը, մասնավորումը կարող ենք իմանալ միայն այդ անունների իրադրային գործածությամբ, ոչ անվանապես: Դրա համար էլ դրանց համար ամեն իմացող-չիմացող կարող է հարցնել՝ ո՞ր պետության, ո՞ր հանրապետության: Սրանց պատասխանը կլինի՝ Ռուսաստանի Դաշնության, Հայաստանի Հանրապետության, Վրաստանի Հանրապետության: Ահա թե ինչու սրանք ընդհանուր են, եզակի չեն:

Առարկություն կա նաև սույն որոշման 3-րդ կետի վերաբերյալ, որը ձևակերպված է այսպես՝

«3. Դիվանագիտական և պաշտոնական փաստաթղթերի ու հաղորդագրությունների մեջ, Հայոց եկեղեցու պաշտոնական լեզվում, հեղինակային վերաբերմունքի՝ քաղաքավարական և մեծարման ոճերում թույլատրվում է մեծատառի ազատ գործածություն՝ ըստ ընդունված կարգի»:

Կարդալով այս հստակ ձևակերպումը՝ գրախոսը գրում է. «Տարօրինակ է... եթե ազատ գործածություն է թույլատրվում անգամ պաշտոնական հաղորդագրությունների մեջ, ապա էլ ո՞նց համար են այս կանոնները: Միայն ուսուցիչների ու լրագրողների՞»: «Հետևությունը սա է.՝ շարունակում է Գալստյանը.՝ խտրություն չդնել «համաշխարհային» ու «հանրապետական» կամ «բարձրագույն» ու «ցածրագույն» հատուկ անունների գրության մեջ»:

Վերը բերված 3-րդ կետը մեծատառ գրության կանոնարկման մեջ բնավ էլ նորություն չէ: Դեռևս 1963 թ. ընդունված որոշման մեջ առանձին կետով գրված է.

«5. Դիվանագիտական և պաշտոնական փաստաթղթերի ու հաղորդումների մեջ թույլատրվում է մեծատառերի ազատ գործածությունը ըստ ընդունված կարգի»: Ինչպես տեսնում ենք, նոր որոշման մեջ հավելումը վերաբերում է միայն «Հայոց եկեղեցու պաշտոնական լեզվին», իսկ մյուս «ազատությունները» գործում են շատ վաղուց: Եկեղեցու իրավունքի և անկախության հարցն էլ ոչ թե մեծատառի, այլ, ինչպես ասվեց, համապետական հարց է:

Ո՞ր ուսուցիչն ու լրագրողը կարող են զարմանալ այն բանի վրա, որ դիվանագիտական պաշտոնական փաստաթղթերում թույլատրվում է մեծատառի ազատ գործածություն: Ով չգիտե, որ Հայոց եկեղեցին, շարունակելով իր դարավոր ավանդույթները, իր պաշտոնական հաղորդումներում գրում է «Ամենայն Հայոց Հայրապետն ու Մեծի տանն Կիլիկիո Կաթողիկոսը ողջունեցին «Հայաստան-Սփյուռք» համաժողովի մասնակիցներին»։ Կամ «Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհավորական ուղերձը Հայաստանի Հանրապետության Սահմանադրության օրվա առթիվ» (էջմիածին», 2002 թ., նոյեմբեր-դեկտեմբեր, էջ 171):

Ուրեմն, մեծատառերի գործածության մեջ «խտրականություն» դնող-չդնող մենք չենք, դա ասում են իրական կյանքն արտացոլող լեզուն և լեզվական կանոնարկված ավանդույթը: Ո՞վ չգիտե, որ բոլոր Տիգրանները չէ, որ Տիգրան Մեծ են, բոլոր Գրիգորները չէ, որ Գրիգոր Լուսավորիչ են, բոլոր Դավիթները չէ, որ Դավիթ Անհաղթ են, Բոլոր Հայկերը չէ, որ Հայկ Նահապետ են, Բոլոր Արաները չէ, որ Արա Գեղեցիկ են: Այս և մման անճանաչումների վրա դրվող՝ մեծատառով գրված վերոբերյալ մականունները ոչ թե սովորական, ըստ իրադրության, մշտափոխ որոշիչներ են, այլ այդ անուններին ծուլված՝ նրանց անձը մասնավորող, եզակիացնող հատկանուն բաղադրիչներ են: «Եզակի» ասելով մենք այդ ենք հասկանում: «Բարձրագույն», «ցածրագույն» ասելով՝ պետականորեն սահմանված գերագույն իշխանությունների աստիճանականությունն ենք տարբերակում: Վաղվա պատմաբանը, առանց *ավագ, կրտսեր* ածական-որոշիչների, չի կարողանալու տարբերակել Ջորջ Բուշ Ավագին Ջորջ Բուշ Կրտսերից, ուրեմն՝ այդ մականունների մեծատառ գրությունը մեծատառ-փոքրատառ զանազանող ժողովուրդների համար դարձել է լեզվական համաշխարհային իրողություն, հետևաբար, ոչ միայն որոշումները, այլև սրանց քննադատությունն էլ պետք է «տրամաբանություն» ունենան:

Սույն որոշման 4-րդ կետով սահմանված է՝

«4. Վերոհիշյալ կանոնների մեջ չմտնող բաղադրյալ անվանումներ-

րը, եթե չեն տեղայնացված, որպես հասարակ անուններ, գրել փոքրատառով»:

Բերված է այդպիսի անվանումների բավականին լայն ցանկ, որպեսզի դրանց գրության մեջ այլևս սխալներ թույլ չտրվեն:

Որոշման 5-րդ կետով կանոնարկվում է «Հապավումների մեջ մեծատառերի գրությունը»: Այստեղ վիճելի հարցեր համարյա չկան: Կայուն բառակապակցությունների հապավման մեջ ընդհանրացնող, կարևոր կանոնն այն է, որ թե՛ բոլոր բաղադրիչները, թե՛ միայն առաջին բաղադրիչը մեծատառով գրվող, թե՛ բոլոր բաղադրիչները փոքրատառով գրվող բաղադրյալ անունների հապավումները գրվում են մեծատառ: Փոքրատառ տառային հապավում չի լինում: (Փոքրատառ գրությամբ հապավումները գիտակցվում են իբրև առանձին բառ, օրինակ՝ գէս, զագս, նէպ, բուհ):

Այսպես՝ ա) Ամերիկայի Միացյալ Նահանգներ-ի հապավումն է ԱՄՆ, Ռուսաստանի Դաշնության հապավումը՝ ՌԴ, Հայաստանի Հանրապետությանը՝ ՀՀ, բ) Միավորված ազգերի կազմակերպությանը՝ ՄԱԿ, Խաղաղության համաշխարհային խորհրդինը՝ ԽՀՄ, գ) Փոխադարձ օգնության կոմիտեինը՝ ՓՕԿ, մեքենատրակտորային կայանինը՝ ՄՏԿ, կրթության և գիտության նախարարությանը՝ ԿԳՆ:

Բաղադրյալ հատուկ անուններում մեծատառ՝ թե՛ փոքրատառ գրելու՝ աշխարհի, գնալով մերձեցող, լեզուների բացարձակ անմիասնականությունն ու հակասականությունը, հայերենում այդ ասպարեզում կայուն, միասնական ավանդույթի բացակայությունը անհնար են դարձրել վերոհիշյալ բազմաբովանդակ ու ընդգրկուն անուններում և անվանումներում մեծատառերի գրության հստակ կանոնարկման և սրա հետևողական կիրառման իրականացումը: Այնուամենայնիվ, և՛ հրատարակիչը, և՛ ուսուցիչը որոշումների տրամաբանականություն և սովորելու ու սովորեցնելու հնարավոր հեշտացում են ակնկալում: Որոշումն ընդունողների «արդարացումը», եթե դրա հարկը կա, հետևյալն է: Լեզուն սա է, լեզվական իրողությունները սրանք են: Բողոքել կարելի է լեզվաբանների դեմ, բայց ոչ լեզվի: Լեզուն սովորում են, ընդ որում՝ սովորում են գիտակցական ամբողջ կյանքի ընթացքում:

Մեծատառ, թե փոքրատառ գրելու գործընթացն սկսվում է տառաձանաչողությունից և շարունակվում է մինչև գրագետ ու գրահրատարակիչ, ուսուցիչ ու գիտնական դառնալը: Առաջին դասարանի տառաձանաչ դարձած երեխան արդեն գիտի իր անունը, ազգանունը, հայրանունը, ինչպես նաև իր երկրի ու ծննդավայրի աշխարհագրական

անունները մեծատառով գրելու կանոնը և դրա գործադրումը: Մնացածը նա սովորում է՝ դասարան առ դասարան բարձրանալով: Սովորում է հայոց լեզվի ու հայ գրականության, հայ ժողովրդի ու ընդհանուր պատմության, աշխարհագրության ու բնագիտության, նաև՝ մնացած բոլոր հասարակագիտական, բնագիտական ու ճշգրիտ գիտությունների առարկաների դասաժամերին:

Իսկ թե ի՞նչ մեթոդներով և ծրագրային հաջորդականությամբ է սովորում, դրանք ծրագրի ու դասագրքի, ուսուցչի ու մեթոդիստի հոգածության առարկաները պիտի լինեն: Միայնների ուղղման, գնահատման չափանիշների սահմանման և այլ կարգի հարցերի լուծումները ոչ թե այս որոշման մեջ, այլ դպրոցների մանկավարժական և առարկայական խորհուրդներում, բուհերի ամբիոններում ու գիտխորհուրդներում և, վերջապես, ՀՀ կրթության և գիտության նախարարության այդ գործի իրավասու բաժիններում են իրականացվում:

7. «ՏՈՂԱԴԱՐՁԻ ՄԱՍԻՆ» որոշումը մնում է ուղղագրության չլուծված հարցերից մեկը:

Տողադարձի և մանավանդ *ք* գաղտնավանկ ունեցող բառերի տողադարձման դժվարությունները, դժբախտաբար, ուսումնական գրականության և ուղղագրական տեղեկատվություն սահմանված կանոններով չեն հաղթահարվում: Ծույլ ուսուցիչն ու աշակերտը, խմբագիրն ու հրատարակիչը, եթե այլ դեպքերում չեն համաձայնվում ուղղագրական կանոնները փոխել կամ դրանք չկիրառել, ապա այս դեպքում նրանց համարձակությունը հասնում է ուղղագրական ուրացության: Նման կանոնազանցները միշտ որևէ լեզվի իրենց արդարացնող օրինակ են գտնում:

«Լսել եմ,— գրում է Աճառյանը,— որ անգլիացիք (ոմանք), հատկապես տողադարձի ժամանակ գրաշարական դժվարությունները նկատի ունենալով, սկսել են տպագրության մեջ իսպառ վերացնել տողադարձը: Լսել եմ, բայց չեմ տեսել նման մի հրատարակություն: Տեսել եմ սակայն հայերեն մամուլօրինակ մի գիրք, որ է Հ. Շեքերջյան. «Թղթակցական կուրս» (հիպնոտիզմ և այլն սովորեցնելու համար, երկրորդ հրատարակություն, Թիֆլիս, 1913): Այս գրքում ոչ մի տողադարձ չկա, բառերը ամբողջապես մնում են տողի վերջում կամ ամբողջովին անցնում են հաջորդ տողի սկիզբը: Այս գրությունը անհարմար չէ անգլերենին, ուր ընդհանրապես բառերը շատ կարճ են, բայց հայերենի համար, ուր երկար բառեր շատ կան, կարծում եմ, որ ոչ մի օգուտ չկա»*:

*Հ. Աճառյան, *Լիակատար քերականություն*, հ. 6, էջ 280:

Տողադարձի դժվարությունները հիմա էլ համակարգչային շարվածքին վերագրող հայ հրատարակիչները թղթի գինը լավ գիտեն և այս օրինակին չեն հետևում: Չեն հետևում նաև Աճառյանին հայտնի հայ գրողներից մեկի՝ Ս. Քամալյանի օրինակին, որը «առաջարկում է գրել անգիր (իմա՝ գաղտնավանկ, – Յ. Բ.)» ք-երը և իր առօրյա գրությանց մեջ էլ այդպես է գործածում», – շարունակում է Աճառյանը: Այս դեպքում թղթի ծախսը էլ ավելի մեծ կլինի: Մեր գիտունիկները թուղթ խնայելու հեշտ միջոց են գտել, վանկատմամբ տողադարձ չեն անում և տողադարձի մեջ ք չեն գրում, ուստի, եթե անցյալ դարի վերջերին և այս դարի սկզբներին, Աճառյանի հավաստմամբ, անգետ հրատարակիչները կարող էին գրել և գրում էին *կորսն-ցընել, փնտ-ռելու, խորհրդաւոր, բաժնու-իլդ, պատ-ռըտելով, հարցմուն-քներ, վըստա-հուքիւնը, քզգու-շութիւնները, անմըտու-թեան, դըժբաղ-դաբար, Պա-րըսկաստան, թար-գմանութիւններ, թար-գմանիչն*, ապա դարավերջի խելոքացած հրատարակիչները տողադարձի ժամանակ ոչ մի ք էլ չեն գրում: Դե գնա ու սխալ գտիր: Նրանք քո այս *կորսնցը-նել, փնտ-ռելու* սխալագրությունները կփոխարինեն *կոր-սնցնել, կորս-նցնել, կորսնց-նել, փ-նտռելու, փնտռ-ելու* և նման, առանց վանկի ու ք-ի տողադարձերով: Իսկ եթե դու ք են ուզում մտցնել, գնա, որ վանկում ուզում ես, մտցուր: Նրան ի՞նչ փուլթ, որ դու և քո դպրոցական թոռնիկը ձեր լրագրի *պա-տկեր* տողադարձված բառը, որ հայերեն կարդացվում է *պա-տըկեր*, երեք անգամ կարդալուց հետո էլ չեք կարողանում հասկանալ, որ այդտեղ ուտելու ոչ մի բան էլ չկա, և որ դա մարդավարի կամ հայավարի տողադարձելիս պարզապես նշանակում է պատկեր:

Բայց չկարծեք, թե անցնելով այս «անտողադարձ» գրությամբ, հրատարակիչների ու խմբագիրների անդորրը փոխանցվում է նաև մեզ՝ ուսուցիչներին ու դասախոսներին: Ո՛չ, մեզ համար վանկի ու տողադարձի կանոնները դեռևս, բարեբախտաբար, գործում են, իսկ տողադարձի մեկ սխալ թույլ տված դիմորդն էլ համալսարանից դուրս չձնալու համար իր իրավունքները պաշտպանում է դատարանում:

Դեռևս 1960-ական թվականներին՝ տպագիր խոսքում տողադարձի կանոնների սկիզբ առած խախտումների, ինչպես նաև դպրոցական գրավորների գնահատման ժամանակ տողադարձի սխալների հաշվառման մեջ չափազանցումներից առաջացած դժգոհությունների կապակցությամբ, նախկին տերմինաբանական կոմիտեն տողադարձի նոր կանոնարկման հարցը դարձրեց հրապարակային քննարկման առարկա:

Լայն քննարկումից հետո տերմինաբանական կոմիտեն 1971 թ.

դեկտեմբերին որոշում ընդունեց հայերենի տողադարձի մասին: Հարցի նախնական քննարկմանը մասնակցած բուհերի հայոց լեզվի ամբիոնների, հայագիտական և մանկավարժական որոշ հաստատությունների համապատասխան բաժինների, լեզվի ու գրականության ուսուցիչների, առանձին հայագետների՝ մամուլում հրապարակած և տերմինաբանական կոմիտեին ներկայացրած կարծիքներում տողադարձի մասին որոշման նախագիծը հիմնականում վերլուծված և քննարկված էր տողադարձը հեշտացնելու, տողադարձի սխալները նվազագույնի հասցնելու նկատառումով: Սակայն այդ կարծիքներում տարբեր էին նույն նպատակին ձգտող վերոհիշյալ կոլեկտիվների ու անհատների՝ հարցի լուծման համար ընտրված ուղիները: Դրանցում առկա էին երկու հակադիր միտումներ՝ ա) տողադարձի հեշտացման և սխալների վերացման հասնելու որոշակի և հետևողականորեն կիրառվող կանոնների սահմանմամբ, բոլոր կարգի բացառությունների և տողադարձի երկվություն թույլատրող կանոնների վերացմամբ, բ) նույն բանին հասնելու՝ ազատ տողադարձի հնարավորությունները սահմանափակող որոշակի կանոնները վերացնելու, բառերը տողադարձելու լրիվ ազատություն և, ըստ այդմ, կանոնների բազմազանություն թույլատրելու եղանակով:

Երկրորդ մոտեցումը կասկածի տակ է առնում հայերենի պատմության մեջ վերջին հարյուրամյակների ընթացքում տողադարձի մշակված կանոնների լեզվական, մանկավարժական-մեթոդական արժեքը և հայերենի գրությունը այս նկատառումով փոխադրում է X-XI դարեր, երբ չկար բառանջատ գրություն, չէր գործում տողադարձի որևէ որոշակի կանոն:

Դեռևս XIII դարում, ինչպես արձանագրում են այս հարցի պատմությանն անդրադարձող հայագետները (Հ. Աճառյան, Գ. Ջահուկյան, Ս. Գյուլբուրդյան և այլք), Գևորգ Սկևռացին նկատում է գրավոր խոսքի համար վանկատմամբ տողադարձ կատարելու անհրաժեշտությունը և սովորեցնում է, թե «Հեզքս են պատճառ արուեստին գրադարձութեան»*: Սկևռացու այն եզրակացությունը, թե «Լավ է երկու տառի տեղը տողի վերջում դատարկ թողնել, քան սխալ վանկատուծով տողադարձ անել»**, ընկալվ տողադարձի հետագայում ավանդական դար-

*Տես Ս. Վ. Գյուլբուրդյան, Հայերենի ուղղագրության պատմություն, Երևան, 1973, էջ 170:

**Նույն տեղում, էջ 272:

ծած կանոնների հիմքում, որն ինքնին նշանակում է, թե Սկևռացին իր ժամանակին լեզվական, մանկավարժական-մեթոդական տեսակետներից ճիշտ է վարվել՝ վանկատումը դարձնելով տողադարձի հիմնական սկզբունք։ Իհարկե, հայերեն գրավոր խոսքն ու սրա ուսուցումը, որ գոյություն է ունեցել և առաջադիմել է նաև այն դարերում, երբ չկային ոչ տողադարձի կանոնները, ոչ էլ, նույնիսկ, բառանջատ գրություն, այժմ առավել ևս կարող է «յուլա գնալ» առանց տողադարձի պարտադիր կանոնների ու նրա շուրջը ծագած վեճերի։ Ճշմարիտ է, որ *սկսել, Մկրտիչ, գրեմզալ, համալսարան, տարեմտի, դարագլուխ, կուրծք, քղանցք* և այլն ինչպես էլ որ տողադարձենք, ի վերջո, պիտի կարդանք այնպես, ինչպես այդ բառերն արտասանվում են հայերենում։ Բայց ճիշտ է նաև այն, որ այդ բառերի առանց գաղտնավանկ ք-ի նշան կամ առանց վանկատման կատարված տողադարձը, այն է՝ *սկ-սել, ս-կսել, Մկ-րտիչ, գր-եմզալ, համալս-արան, տարեմ-տի, դարագ-լուխ, կուր-ծք, քղա-նցք*, ոչ միայն տարրական դասարանների աշակերտներին, որոնք նոր են սովորում ճիշտ գրել ու կարդալ, այլև գրագետ մարդկանց էլ կարող է շփոթեցնել և արտասանական աղավաղումների աղբյուր դառնալ, էլ չենք խոսում հայերեն սովորող այլազգի մարդկանց մասին։ Բոլորովին անհիմն է ոճանք այն պնդումը, թե տողադարձն ընդհանրապես ուղղախոսության կամ բառերի արտասանության հետ կապ չունի, ուստի և տողադարձի պարտադիր կանոններ կարող են և չլինել։ Իհարկե, կան լեզուներ, որոնցում գործում են տողադարձի նաև բառակազմական սկզբունքով սահմանված կանոններ, ընդ որում՝ հաջորդ տողը փոխադրում են բաղադրյալ բառի կազմությանը մասնակցող արմատ, ածանց, այլև՝ վերջավորություն։ Այս դեպքում էլ, սակայն, բառերի ստուգաբանական տողադարձը, ըստ հնարավորին, լրացնում է վանկային տողադարձն և ոչ թե հակադրվում է նրան։ Բացի այս, հայտնի է նաև, որ առանձին լեզուներ (արաբերեն, պարսկերեն), ելնելով իրենց գրության և արտասանության առանձնահատկություններից, ընդհանրապես տողադարձ չունեն, քանի որ վերջինս անընթեռնելի է դարձնում գրությունը։ Վրացերենում, որի տողադարձը հիմնականում նույնպես վանկային է, նկատի ունենալով *բղ, դղ, փխ, ծղ, ճղ, ցք, տկ, ճկ* և նման տառակապակցությունների արտասանական առանձնահատկությունները, սրանք, որպես բաղաձայնների հարմոնիկ խմբեր, տողադարձի ժամանակ իրարից չեն անջատվում։ Ուրեմն այլ լեզուների օրինակով տողադարձը ընթերցանությունից կամ բառերի արտասանությունից ընդհանրապես անջատելը ևս հիմնավորված չէ։

Նախկին տերմինաբանական կոմիտեն, տողադարձի մասին որոշման նախագծի վերջնական տարբերակը խմբագրելիս, նկատի ունենալով վերոհիշյալ հանգամանքները, մերժել է որևէ կանոն չճանաչող, ազատ ու քմահաճ տողադարձ պահանջող և դրանով իսկ տողադարձի ավանդական կանոնները մերժող առաջարկները: Կոմիտեն մերժել է նաև տողադարձը բոլոր դեպքերում արտասանությանը ծառայեցնելու և բացառություններ ու զուգահեռություններ չհանդուրժող մի քանի սահմանափակ թվով կանոնների շրջանակում ամփոփելու, գործնականում բառերը տողադարձելու ավելի լայն հնարավորություններ տվող կանոններից հրաժարվելու առաջարկները:

Այժմ կոմիտեի հաստատած որոշմամբ, ինչպես նաև հայերենի բարձրագույն խորհրդի կողմից այդ որոշման նոր խմբագրմամբ, օրինականացված է հայերենում բառերի տողադարձը հիմնականում վանկատմամբ կատարելու ավանդական դարձած սկզբունքը: Ըստ այդ կանոնների՝ հայերենում ծայնավորների միջև ընկած բաղաձայններից մեկը վանկ է կազմում հաջորդ ծայնավորին միացած և նրա հետ անցնում է մյուս տողը (*Ա-րա-գած, բարձ-րա-նալ, անձ-րև, խընդ-րել*): Տողադարձի մյուս բոլոր կանոնները կամ այս կանոնի մասնավոր դեպքերն ու դրա լրացումն են, կամ առանձին շեղումներ են:

Ընդունված որոշման առաջին կետի բ) ենթակետով նաև որոշված է բաղաձայնին հաջորդող *յա, յո, յու* տառակապակցություններում *յ*-ի տողադարձի հարցը: Նշված դիրքում նկատվում է արտասանական երկվություն: Եթե այսպիսի հնչյունակապակցություններ ունեցող բառերում *յ*-ին նախորդում է մեկ բաղաձայն, ապա վերջինս սովորաբար մնում է նախորդ վանկում, իսկ *յ*-ն ծայնավորի հետ անցնում է հաջորդ վանկը՝ *Արամ-յան, ար-յուն, մատ-յան, սին-յոր*: Իսկ եթե *յ*-ին նախորդում են երկու և ավելի բաղաձայններ, ավելի բնական է դառնում վերջին բաղաձայնը *յ*-ի հետ հաջորդ վանկին միացած արտասանությունը՝ *ան-կյուն, աղ-բյոր, հըն-չյուն, Մկըրտ-յան, վրըն-ջյուն*: Նկատի ունենալով այս կարգի բառերի երկակի վանկատման հնարավորությունն ու տողադարձի սովորույթը (*մատ-յան/մա-տյան, սին-յոր/սինյոր, անկ-յուն/ան-կյուն, հընչ-յուն/հըն-չյուն*), ինչպես նաև նման բառերում տողադարձի հնարավոր սխալներից խուսափելու համագամանքը՝ ընդունված է վերոհիշյալ երկակի վանկատումներն ու սրանց համապատասխան տողադարձը ճիշտ համարել:

Այս կանոնը չի գործում այն կարգի բաղադրություններում միայն, որոնցում *յ*-ն արտասանականորեն նախորդ բաղաձայնից չի անջատվում և այդ բաղադրությունների վանկային ու բառակազմական տո-

դադարձումները (ամենա-հյուրասեր, ան-հյուրընկալ, լեռնա-գյուղ) նույնամուն են:

Առաջին կետի բ) ենթակետով թույլատրված է ձայնավորից առաջ ընկած սղագիր *և-ը*, ըստ հնչման, *եվ* գրելն ու տառամջատ (*ե-վ*) տողադարձելը (*Երե-վան, բարե-վել*):

Վանկատմամբ կատարվող տողադարձի մասնավոր դրսևորումն է գաղտնավանկ *ը-ն* տողավերջի և հաջորդ տողի սկզբի վանկերում գրելու կանոնը (*ըս-կըսել, գը-րական, ժողո-վըրդի, լի-տըր*), որն էլ տողադարձի ամենից վիճելի կետերից է: Անկախ այդ վեճերից, ընդունված որոշման 2-րդ կետում պահպանված է *ը* գաղտնավանկը տողադարձի ժամանակ գրելու սովորույթ դարձած վերոհիշյալ կանոնը թույլատրելով դարձյալ կանոն դարձած երկու բացառություն ա) *զը, զգ, շտ, սկ, սպ* և նման տառակապակցությամբ սկսվող հատուկ անուններում բառասկզբի գաղտնավանկ *ը-ն* չգրել, ուստի տողադարձել *Սպար-տակ, Ստրաս-բուրգ* և ոչ թե *Ըս-պարտակ, Ըստ-րասբուրգ*, բ) բարդ բառերը տողադարձելիս սրանց *ը* գաղտնավանկով սկսվող երկրորդ բաղադրիչի *ը-ն* չգրել, ուստի տողադարձել *դարա-գլուխ, առաջա-դրություն* և ոչ թե *դարա-գըլուխ, առաջա-դըրություն*: Նույն կանոնով պետք է տողադարձել կրկնավոր հնչյունափոխված բարդությունները, օրինակ՝ *քաշ-քշել, վազ-վզել, վառ-վռում, ճրդ-ճղալ* և այլն:

Որոշման 2-րդ կետի գաղտնավանկ *ը-ին* վերաբերող կանոնարկումներում նոր խմբագրությամբ կատարվել են ճշգրտում-լրացումներ ևս: Այդ կետի կանոնարկումներով հստակեցվել ու ճշգրտվել են բաղաձայնական կրկնություններում, ինչպես նաև *ի, ու* ձայնավորները մեկ *ը-ի* հնչյունափոխվող, մեկ սղող բաղադրություններում առաջացած արտասանական և տողադարձի երկվությունները՝ հետևյալ խմբագրմամբ.

ա) կրկնաբաղաձայն բայեր՝ *զը-նը-նել//զըն-նել, պը-տը-տել//պըտ-տել, քը-նը-նել//քըն-նել* և այլն.

բ) բազմավանկ այլ բառեր՝ *աղ-ջը-կա//աղջ-կա, ար-ճը-ճի//արճ-ճի, մար-մը-նի//մարմ-նի* և այլն.

գ) պատճառական և երկու բաղաձայնից հետո *վ* ածանց ունեցող կրավորական բայեր՝ *թըռ-ցը-նել//թըռց-նել, խաղացը-նել//խաղաց-նել, վազեցը-նել//վազեց-նել, թըր-ջը-վել//թըրջ-վել, կազմը-վել//կազմ-վել* և այլն:

Այս արտասանական զուգաձևություններից գրական հայերենում թեև գնալով հարազատ են դառնում համառոտած *ը-ն* սղած, ձևերը, սակայն ժողովրդախոսական ոճում և, մասնավոր, բանաստեղծու-

թյան մեջ այս զույգերից ը-ն չսղած բառերի գործածությունը և ըստ այդմ կատարված տողադարձը կանոնիկ չհամարելը ճիշտ չէր լինի:

Տես, օրինակ՝ Անապատում մի բեղվին
Շողքն է տեսել մի աղջըկա գեղեցիկ...
(Ավ. Իսահակյան)

Որոշման երրորդ կետը վերաբերում է նախածանցավոր և բարդ բառերը նաև ըստ բառակազմության տողադարձելու կանոնների սահմանմանը:

Վանկատման հիման վրա սահմանված կանոններով տպագրության մեջ տեխնիկական նոր դժվարություններ չստեղծելու և հայերենի տողադարձի կանոններում անօգտակար սահմանափակումներ չմտցնելու համար որոշման այդ կետով թույլատրված է մասամբ տողադարձ կատարել բառակազմական սկզբունքով: Ըստ այս կանոնի՝ հաջորդ տող կարելի է փոխադրել բարդ և նախածանցավոր բառերի երկրորդ բաղադրիչը՝ արմատը կամ ամբողջական բառը (*արագ-ընթաց, գետ-ափ, ծով-եզր, միջ-անցք, ան-օգուտ, գեր-խնդիր*): Այս կանոնը չի տարածված վերջածանցների և վերջավորությունների վրա, չի հանձնարարվում հաջորդ տողը տանել այդ տիպի մասնիկներ, այսինքն՝ վանկատումը հաշվի չառնելով տողադարձել՝ *դպրոց-ական, հիվանդանոց, խոս-ում, զրընգ-ում, դաշտ-ում, քաղաք-ից, գետ-ով*:

Երրորդ կետում, առանձին պարբերությամբ առանձնացված են այն բաղադրությունները, որոնց երկրորդ բաղադրիչի սկզբնավանկի ը-ի սղման հետևանքով բառն ըստ կազմության չի տողադարձվում (*գերբնական, համալ-սարան և ոչ թե՝ գեր-բնական, համա-լսարան*):

Տողադարձի այս կարգի բառակազմական սկզբունքի ընդլայնումը, որ իսկադրվում է վանկատմամբ տողադարձելու ընդհանուր կանոնին, կիսանգարի վերջինիս հետևողական կիրառմանը, նորից անորոշություն կստեղծի, դուռ կբանա բառի կազմությունը դեռևս չիմացող աշակերտից ստուգաբանական տողադարձի անհիմն պահանջի և, վերջապես, ցածր դասարաններում ինչ-որ չափով կիսանգարի սահուն և անսխալ առոգանությամբ ընթերցանությամբ: Առանց այն էլ բառարմատների կամ բառամասերի հաջորդ տողը տանելու կանոնը ուղղախոսական որոշ մտահոգություն առաջացնում է ուսուցիչների համար: Այսպես, եթե *բարձ-րորակ, թիկ-նոսկր, ա-նորոշ, ծո-վեզր, մա-կերես, մի-ջերկրական* վանկատմամբ կատարված տողադարձը չի խանգարում այդ բառերի ճիշտ արտասանությանը, ապա բառակազմական

սկզբունքով կատարված բարձր-որակ, թիկն-ոսկր, ան-որոշ, ծով-եզր, մակ-երես, միջ-երկրական տողադարձը ստիպում է ուսուցչին հետևելու աշակերտների ընթերցանությանը, որպեսզի բառերի այսպիսի տրոհման պատճառով դրանք չարտասանվեն բարձրվորակ, թիկն-վոսկր, անվորոշ, ծովեզր, մակյերես, միջերկրական:

Ուղղախոսական տեսակետից ուշադրության է արժանի եա, եո, իա, իե, իու տառակապակցություն ունեցող բառերի տողադարձը:

Որոշմամբ չի արգելված տողադարձի ժամանակ նման տառակապակցություններն անջատել, այսինքն կարելի է տողադարձել՝ Ան-դրե-աս, ռե-ալիզմ, թե-որեմ, Նապոլե-ոն, սոցի-ալիզմ, Մարի-ամ, հե-քի-աթ, Ֆելի-ետոն, չեմպի-ոն, միլի-ոն, կալցի-ում, հելի-ում և այլն: Այս դեպքում, սակայն, չի կարելի ուշադրություն չդարձնել այդ բառերի հնարավոր արտասանական աղավաղումների վրա: Վերոհիշյալ տառակապակցությունները հայերենում մասամբ կարդացվում են անանջատ, միասնական արտաբերմամբ, իսկ հիմնականում դրանց ե և ի բաղադրիչներն արտասանվում են յ (ռյալիզմ, Նապոլյոն, սոցյալիզմ, հեքյաթ, Ֆելյետոն, չեմպյոն, կալցյում և այլն): Ուրեմն ձայնավորին նախորդող ե, ի գրերը, արտասանվելով յ, առանձին վանկ չեն կազմում, թեև տողադարձվում են որպես վանկարար ձայնավոր:

Լեզվական ոչ մի կանոն գրավոր խոսքում այնքան հաճախակի չի գործածվում, որքան տողադարձի կանոնները: Այդ պատճառով էլ ուսուցման ընթացքում հաճախ հանդիպում ենք նաև տողադարձի սխալների, որոնք որոշ ուսուցիչների համար դառնում են գրավորը ճիշտ գնահատելուն խանգարող հանգամանք: Տողադարձի սխալը չպետք է դարձնել գրավորի գնահատման չափանիշ: Քննական գրավոր աշխատանքները գնահատելիս, սխալների խմբավորման սկզբունքով, տողադարձի կրկնվող բոլոր սխալները պետք է համարել մեկ կամ, տարաբնույթ ու հաճախ կրկնված լինելու դեպքում, երկու ուղղագրական սխալ: Ը գաղտնավանկի հետ կապված բառի արտասանությունը չաղավաղող վրիպումը կարելի է և սխալ չհամարել:

Մեր այս շարադրանքից կարող է այնպես թվալ, թե հայերենի տողադարձը չունի հստակ կանոնարկումներ, և այլևս չկան այդ կանոնների հետևողական կիրառմամբ անսխալ գրողներ: Կան, այն էլ՝ ոչ քչերը:

Տողադարձի սխալ գտնելու նպատակադրմամբ շատ ուշադիր կարդացի «Էջմիածին» ամսագրի 2002 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսների համարը: Շուրջ 200-էջանոց ամսագրում կատարված հարյուրավոր տողադարձումներում գտա միայն մեկ սխալ: Ամսագրի

156-րդ էջում, անցած համարների հոդվածների մատենագրությունը ներկայացնելիս, իմ սիրելի սան Անդրանիկ Ջեյթունյանը *երաժշտություն* բառը տողադարձել է *երաժշ-տություն*: Սակայն ամսագրի բուն շարադրանքում այս բառը գտանք *երաժըշ-տություն*՝ ճիշտ տողադարձմամբ: Այնպես, որ «Էջմիածին» ամսագիրը, իր բովանդակային-դաստիարակչական և ուսուցողական դերից զատ, կարող է նաև հայերենի ճիշտ ուղղագրության ուսուցման ձեռնարկ լինել:

Յ. Խ. Բարսեղյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ն Ե Ր

Ա. ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԱՌԱՂԱՐԶՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ Նախարարների խորհրդին առընթեր նախկին տերմինաբանական կոմիտեի «Հասարակական-քաղաքական մի շարք հասկացությունների ռուսերեն անվանումների հայերեն թարգմանության ճշգրտման մասին» (1990 թ.) որոշումը մասնակի փոփոխություններով վերահաստատելու մասին*

Ռուսերեն անվանումը

Հայերեն համարժեքը

геополитика

աշխարհաքաղաքականություն

гуманизация

մարդկայնացում

декларация

1. հռչակագիր
2. հայտարարագիր
այլախոհ

диссидент

1. լրամշակում

доработка

2. վերջնամշակում
փոխարկ

конверсия

հավաքորդ

коллекционер

1. բազմակիություն
2. բազմակարծություն

плюрализм

1. կանխարգելում
2. ախտականիւտում
(բժշկ.)

профилактика

3. հանցականիւտում
(իրավ.)

реалия

իրակ (ոբյեկտ)

рекет

բռնաշորթում

рекетир

բռնաշորթ

транспарант

ցուցապատառ

*Հաստատված է ՀՀ լեզվի պետական տեսչության պետի 2000 թ. փետրվարի 1-ի թիվ 8/3 հրամանով:

2. Հասարակական-քաղաքական մի շարք հասկացությունների հայերեն անվանումների միօրինակացման և ճշգրտման մասին*

Գործածվում է

Այսուհետև գործածել

ագրեսիա, հարձակում,
նախահարձակում
ագրեսիվ, հարձակողական
ագրեսոր, նախահարձակ
բրիֆինգ, ճեպագրույց
դեմոկրատիա, ժողովրդավարություն,
ժողովրդաիշխանություն,
ժողովրդապետություն,
ռամկավարություն

նախահարձակում
հարձակողական
նախահարձակ
ճեպագրույց
ժողովրդավարություն

էլիտա, վերնախավ, ընտրախավ

1. ընտրանի,
2. վերնախավ

էլիտար, էլիտային

1. ընտրամու,
2. վերնախավային

էլեկտորատ, ընտրազանգված,
ընտրախավ, ընտրաշերտ

ընտրազանգված

իմիջ

կերպար

լիբերալիզմ, ազատականություն
մասս մեդիա

ազատականություն
զանգվածային
լրատվամիջոց

մեդիա

լրատվամիջոց

մենտալիտետ

1. մտածելակերպ

պոպուլիզմ, ամբոխավարություն

2. խելք
ամբոխահաճություն

ռեյտինգ, վարկանիշ

վարկանիշ

տոտալիտարիզմ, ամբողջատիրություն

ամբողջատիրություն

* Հաստատված է ՀՀ լեզվի պետական տեսչության պետի 2000 թ. փետրվարի 1-ի
թիվ 8/4 հրամանով:

**3. ԳԳ վարչատարածքային միավորների և դրանց կառավարման
մարմինների անվանումների տառադարձման
և թարգմանության մասին***

Վարչատարածքային ստորաբաժանում	Դեկավար	Աշխատակազմ	Ներկայացուցչական մարմին
մարզ Марз (ռուս.) Marz (անգլ.) Marz (ֆրանս.) Mars (գերմ.)	մարզպետ Марзпет Marzpet Marzpet Marspet	մարզպետարան Марзпетаран Marzpetaran Marzpetaran Marspetaran	
համայնք община community communaute Gemeinde			ավագանի совет старейшин council of the aldermen conseil des anciens Ältestenrat
քաղաք город city ville Stadt	քաղաքապետ мэр города mayor of the city maire de la ville Bürgermeister	քաղաքապետարան городской муниципалитет city municipality Mairie de la ville Stadtverwaltung	
թաղ округ quarter quartier Bezirk	թաղապետ мэр округа mayor of quarter maire du quartier Bezirksrat	թաղապետարան окружной муниципалитет quarter municipality Mairie de la quartier Bezirksverwaltung	
գյուղ село village village Dorf	գյուղապետ староста mayor of the village maire du village Dorfaltester	գյուղապետարան сельский муниципалитет village municipality Mairie du village Dorfverwaltung	

*Հաստատված է ԳԳ լեզվի պետական տեսչության պետի 2000 թ. փետրվարի 1-ի թիվ 8/8 հրամանով:

4. Տնտեսագիտական մի շարք հասկացությունների հայերեն անվանումների միօրինակացման և ճշգրտման մասին*

Գործածվում է

բիզնես, գործարարություն
բիզնեսմեն, գործարար
բորսա, բիրժա, սակարան
դեֆիցիտ
դիվերսիֆիկացիա
դիվիդենդ, շահաբաժին
էլաստիկություն
էկզոզեն (էքսոզեն)
էնդոզեն
ինվեստիցիա, ներդրում
լիկվիդայնություն

լոնբարդ
կոմերցիոն
մենեջմենտ, կառավարում
չեկ
սերտիֆիկացում
ստագնացիա, լճացում
վալյուտա, արժույթ
տարադրամ, արտարժույթ,
ինվալյուտա
ցիկլ

Այսուհետև գործածել

գործարարություն
գործարար
սակարան
պակասուրդ
բազմազանեցում
շահաբաժին
առածգականություն
արտածին
ներծին
ներդրում
1. իրացնելիություն,
2. լուծարելիություն
գրավատում
առևտրային
կառավարում
վճարագիր
հավաստագրում
լճացում
արժույթ
արտարժույթ
պարբերաշրջան

*Հաստատված է ՀՀ լեզվի պետական տեսչության պետի 2000 թ. փետրվարի 1-ի
թիվ 8/10 հրամանով:

**5. Տնտեսագիտական մի շարք հասկացությունների
հայերեն անվանումների միօրինակացման և
ճշգրտման մասին***

Գործածվում է	Այսուհետև գործածել
մոնոպոլիա, մենատիրություն,	1. մենաշնորհ,
մենաշնորհ, մենավաճառ	2. մենատիրություն
մոնոպոլիստ, մենաշնորհյալ,	1. մենաշնորհյալ
մենաշնորհատեր	2. մենաշնորհատեր
մոլտիպլիկատոր	բազմարկիչ
սուբսիդիա, սուբվենցիա	լրահատկացում
քվոտա	բաժնեմաս, մասնորդ
օլիգոպոլիա	1. խմբաշնորհ
	2. խմբատիրություն
ֆիսկալ, գանձարանային,	գանձարանային
հարկաբյուջետային	

* Նախագիծը կազմել է Յու. Սուվարյանը: Հաստատված է ՀՀ լեզվի պետական տեսչության պետի 1997 թ. մարտի 3-ի թիվ 283 հրամանով:

6. Մարզական մի քանի անվանումների հայերեն համարժեքների մասին*

Գործածվում է

բոքսլեյ, ղեկասահնակ
կապա, ատամնակալ, ատամնապահ
մեմորիալ, հուշամրցում
ջրային սլալոմ, ջրային ոլորավայրէջք
սինխրոն լող, համալող, գեղալող
սլալոմ, ոլորավայրէջք
ստարտ, մեկնարկ
ստարտյոր, մեկնարկիչ
վերջնագիծ, եզրագիծ
տրասա (սահնակային, դահուկային),
սահուղի
տրենաժոր, վարժոց, վարժասարք

Այսուհետև գործածել

ղեկասահնակ
ատամնակալ
հուշամրցում
թիառլորասահք
գեղալող
ոլորասահք
մեկնարկ
մեկնարկիչ
վերջնագիծ
սահուղի
մարզասարք

*Չաստատված է ՀՀ լեզվի պետական տեսչության պետի 2000 թ. փետրվարի 1-ի
թիվ 8/7 հրամանով:

7. Սարգական մի քանի անվանումների հայերեն համարժեքների ճշգրտման մասին*

Համեմարարվող անվանումը	Ռուսերեն համարժեքը	Սահմանումը
ամրակապ	крепление	հարմարանք, որով մարզիկի ոտքն ամրացվում է ոտնակին, դահուկին և այլն
ամրափոկ	ремень тукалапса	ոտնաբնի կամ ամրակապի փոկը (կամ փոկանման հարմարանք)
անցկալ	заваа	հեծանվավթարի հետևանքով առաջացած՝ հեծանվորդների և հեծանիվների կուտակումը
գերհսկա ոլորասահք	супергигантский слалом	ոլորասահքի տեսակ
դահուկապար	фривтайл	մարզաձև, որ ներառում է դահուկներով գեղասահք, պարեր, ցատկեր, պտույտներ և այլն
դահուկընթաց	лыжные ходы	դահուկորդի տեղաշարժը տարբեր եղանակներով
դարձաշար	сопряженные повороты	դահուկորդի՝ իրար հաջորդող մի քանի դարձումները
եզրադարձ	кантование	դահուկները ներսի կամ դրսի եզրերին պահելով՝ դարձումներ կամ արգելակումներ կատարելը
թեքուղի	выраж	մրցուղու թեք հատվածը

*Նախագիծը կազմել է Մ. Իսախրյանը: Հաստատված է ՀՀ լեզվի պետական տեսչության պետի 2000 թ. փետրվարի 1-ի թիվ 8/15 հրամանով:

կողասահք	соскальзывание (боковое)	դահուկի կողմնային մասով լայնակի ուղղությամբ սահելը
հեծականգ	сюршас	հեծանվահրապարակային մրցումների ընթացքում մեկնարկից հետո հեծան- վորդների կանգնած վիճակը
հեծանվադղոլ	велотрубка	հեծանվի դողերը
հպարգելում	сцепление	ձյան և դահուկի շփումից առաջացած արգելակումը
մրցափորձ	попытка	մրցումների ժամանակ մարզիկին տրվող փորձի ինարավորությունը
ոտնակում	педалирование	հեծանվի ոտնակը պտտելը
սահքամարում	выкат	վարժությունն ավարտելուց հետո դահուկորդի ազատ սահելը
սեպակոշիկ	шиповки	ներքանի վրա սեպեր ունեցող մարզակոշիկ
վերջնարկ	финиш	մրցության ժամանակ վերջնագիծը հատելու պահը
փոկամրակ	антабка	սառցակտրիչի՝ ձեռքին ամրացվող փոկի ամրիչը
փորձամրցում	прикидка	մարզիկների միջև անցկացվող ոչ պաշտոնական նախնական ընտրական մրցությունը

8. Սարգսկան մի շարք անվանումների հայերեն համարժեքների ճշգրտման մասին*

Գործածվել էն	Ռուսերեն համարժեքները	Պետք է գործածել
Բազկամարտ	армрестлинг	բազկամարտ
Բռնվածք բազուկներով	плечевой захват	բազկաբռնում
Գլորում	перекат	գլոր
Գլորում ծալված	перекат согнувшись	ծալագլոր
Գլորում՝ շրջվելով կողմ	перекат в сторону	կողագլոր
Գլորում՝ շրջվելով մեջքով	круговой перекат	շրջագլոր
Գլորումով քայլ	перекатный шаг	գլորաքայլ
Դանդաղ շրջում	медленный переворот (перекидка)	շուռանց
Ելման դրություն	исходное положение	ելադիրք
Չսպանակածն թեքում	пружинящий наклон	զսպաթեքում
Չսպանակածն քայլ	пружинный шаг	զսպաքայլ
Թափի արագացում	разгон	թափառք
Խմբավորում	группировка	կուչ
Կանգ ձեռքերի վրա	стойка на руках	ձեռնականգ
Կանգ թիակների վրա	стойка на лопатках	թիկնականգ
Հենում ձեռքերի վրա	упор на руках	բազկահենում
Հիմնական կանգ	основная стойка	հիմնականգ
Ճախրանցում	перелет	ճախրանց
Շրջում՝ առաջ դարձումով	переворот вперед с поворотом («Рондат»)	շրջնդարձ
Շրջում դեպի կողմ	переворот колесом	շրջանիվ

*Նախագիծը կազմել է Կ. Գ. Բաբայանը: Հաստատված է ՀՀ լեզվի պետական տեսչության պետի 2001 թ. նոյեմբերի 20-ի թիվ 79 հրամանով:

Ոստյուն՝ ծունկը ծալելով	присядка	ծնկածալուկ
Պարանով կապված կախ	завязывание	կապկախ
Պոլկայի քայլ	шаги польки	ոստնաքայլ
Սողանցում	переползание	սողանց
Սողանցում փորի վրա	переползание по-пластунски	փորսողանց
Վարանցում	опускание	վարանց
Ցատկ (վարցատկ) խմբավորված	прыжок в группировке	կուչացատկ
Ցատկ (վարցատկ) շրջվելով	прыжок переворотом	շրջացատկ
Ցատկ՝ ոտքը դնելով	прыжок наступая	ոտնդիր ցատկ
Ցատկ՝ ոտքի կրկնակի փոխումով	прыжок с двойной сменой	կրկնափոխ ցատկ
Քառատրոփ քայլ	шаги галопа	տրոփաքայլ
– (Համարժեքը չի եղել)	взмах	սրընթափ (սուր-ընդ-թափ)

9. Օտար «մեխանիկ» տերմինի հայերեն գործածության մեջ ճշգրտում մտցնելու մասին*

Մեխանիկ տերմինը հայերենում մեկ գործածվում է որպես մեքենաների սարքավորմամբ զբաղվող վարպետ՝ մեքենագործ, մեկ որպես *մեխանիկա* գիտաճյուղի մասնագետ, գիտնական մեքենագետ:

Տերմինի այս բազմիմաստությունը վերացնելու նպատակով որոշվում է օտար *մեխանիկ* տերմինը այսուհետև գործածել *մեքենագործ* (վարպետ) նշանակությամբ միայն, իսկ *մեխանիկա* գիտաճյուղի մասնագետ՝ *մեխանիկագետ* նշանակությամբ, *մեխանիկ* բառի փոխարեն, այսուհետև գործածել (*մաթեմատիկոս, ֆիզիկոս, քիմիկոս* շարքի) *մեխանիկոս* անվանումը՝ գրելով այն բարձրագույն կրթության վկայագրերում:

*Նախագիծը կազմել է Վ. Սարգսյանը: Հաստատվել է ԳՀ լեզվի պետական տեսչության պետի 2000 թ. փետրվարի 1-ի հրամանով:

**10. Հավանականության տեսության, մաթեմատիկական
վիճակագրության և ընդհանուր մաթեմատիկայի որոշ
օտար տերմինների հայերեն համարժեքների մասին***

Անգլերեն համարժեքը	Ռուսերեն համարժեքը	Գործածվել է	Համեմատարարվում է
1. correlation	корреляция	կոռելյացիա	հարաբերակ- ցություն
2. theory of random processes	теория случайных процессов	պատահական պրոցեսների տեսություն	պատահական ընթացքների տեսություն
3. histogram	гистограмма	հիստոգրամ	սյունապատկեր
4. expectation, expected value, mathematical expectation	математическое ожидание, среднее значение	մաթեմատիկական սպասում	սպասելի միջին արժեք
5. type, composition of vector	тип, композиция вектора	տիպ	վեկտորի կազմ
6. econometrics	эконометрика	էկոնոմետրիկա	տնտեսա- չափություն
7. combinatorics	комбинаторика	կոմբինատորիկա, միացությունների տեսություն	համակցա- բանություն
8. variance	дисперсия	դիսպերսիա, ցրվածք, ցրում	ցրվածք
9. covariance	ковариация	համափոփոխա- կում, կովարիացիա	համացրվածք

*Նախագիծը կազմել է Եվ. Հարությունյանը: Հաստատվել է ՀՀ լեզվի պետական
տեսչության պետի 2000 թ. նոյեմբերի 14-ի հրամանով:

11. Հունա-լատինական ժազման՝ -ԻՋ, -ՈԶ, -ՊԱԹԻԱ, -ՄԱՏՈԶ, -ՈՄԱ վերջածանցներով կազմված բժշկական տերմինները հայերեն համարժեքներով փոխարինելու մասին*

Հունա-լատինական ժազման բժշկական տերմիններն ամենից հաճախ ունենում են -ԻՏ, -ՈԶ, -ՊԱԹԻԱ, -ՄԱՏՈԶ և -ՈՄԱ վերջածանցներ, որոնք արտահայտում են տարբեր երևույթներ, կենսընթացներ, ախտաբանական վիճակներ կամ հիվանդություններ: Սակայն հայերենում այդ վերջածանցներով արտահայտված տերմինները սովորաբար չեն թարգմանվում, կամ հաշվի չեն առնվում վերջածանցների տարբերությունները, ուստի չեն տարբերվում մեկը մյուսից:

Սույն որոշումը հիմնականում ունի այդ օտար տերմինները հայերենացնելու նպատակ: Հունա-լատինական ժազման -ԻՏ, -ՈԶ, -ՊԱԹԻԱ, -ՄԱՏՈԶ, -ՈՄԱ վերջածանցներով կազմված բժշկական տերմինները հայերենացնելու և սրանց հայերեն համարժեքների գործածության մեջ ճշգրտումներ ու բառակազմական համակարգվածություն մտցնելու նպատակով ՀՀ Կառավարությանն առընթեր լեզվի պետական տեսչության հայերենի բարձրագույն խորհուրդը *որոշում է.*

1. ա) -ԻՏ (=ԲՈՐԲ) վերջածանցով կազմված՝ բորբեքային կենսընթաց ցույց սովող տերմիններ.

Օտար տերմինը	Գործածվում է	Այսուհետև գործածել
ասցիտ	ջրգողություն, ասցիտ	ջրահավաք, ջրալիցք
արթրիտ	հողաբորբ, արթրիտ	հողաբորբ
դերմատիտ	մաշկաբորբ, դերմատիտ	մաշկաբորբ
էնտերիտ	աղիքաբորբ, լուծ	աղեբորբ
լիմֆադենիտ	լիմֆադենիտ	ավշագեղձաբորբ
խեյլիտ	խեյլիտ	լեզվաբորբ
խոլեցիստիտ	լեղապարկի բորբեքում, խոլեցիստիտ	լեղապարկաբորբ

* Նախագիծը կազմել է Ալ. Սարաֆյանը, խմբագրել՝ Հ. Բարսեղյանը: Հաստատվել է հայերենի բարձրագույն խորհրդի 2002 թ. հունվարի նիստում:

կուլպիտ	կուլպիտ, հեշտոցի բորբոքում	հեշտոցաբորբ (կուլպիտ)
մաստիտ	ստինքաբորբ, մաստիտ	ստինքաբորբ (կրծքագեղձաբորբ)
ներիտ	նյարդաբորբ, ներիտ	նյարդաբորբ
նեֆրիտ	երիկամաբորբ, նեֆրիտ	երիկամաբորբ
պարօդոնտիտ	պարօդոնտիտ	հարատամնաբորբ (պարօդոնտիտ)
պերիօդոնտիտ	պերիօդոնտիտ	շուրջատամնաբորբ (պերիօդոնտիտ)
պարօտիտ	հարկանցային թքագեղձի բորբոքում, խոզուկ, պարօտիտ	խոզուկ, հարկան- ջաբորբ
պուլպիտ	պուլպիտ	կակղանաբորբ (պուլպիտ)
վուլվիտ	վուլվիտ	ամոթույքաբորբ (վուլվիտ)
ցիստիտ	ցիստիտ, միզապարկի բորբոքում	միզապարկաբորբ
օստեոմիելիտ	օստեոմիելիտ	ոսկրաճուճաբորբ (օստեոմիելիտ)
ֆլեբիտ	ֆլեբիտ	երակաբորբ (ֆլեբիտ)

բ) Այլ (ոչ -ԻՏ վերջածանցով) բորբոքային կենսընթաց ցույց տվող տերմիններ.

Օտար տերմինը	Պորժավում է	Այսուհետև գործածել
անգինա	բկացավ (անգինա)	բկաբորբ (անգինա)
դիֆտերիա	բկացավ (դիֆտերիա)	բկացավ (դիֆտերիա)
երիզիպելաս	կարմիր քամի	կարմիր քամի, կարմրաբորբ
կատառ	կատառ, դում	լորձենաբորբ (կատառ)

պանարիցիում	պանարիցիում, մատնաշունչ	մատնաշունչ
ռևմատիզմ	հոդացավորքում, ռևմատիզմ	ռևմատիզմ
օնիխիա	եղնգախտ, եղնգացավ	եղնգացավ
ֆլեգմոնա	ֆլեգմոնա	թարախաբորբ (ֆլեգմոնա)

2. ա) -ՈՁ (= ԱԽՏ) վերջածանցով կազմված՝ օրգանի կազմափոխանկան կենսընթաց կամ վարակվածություն ցույց տվող տերմիններ.

Օտար տերմինը	Գործածվում է	Այսուհետև գործածել
ալյումինոզ	ալյումինոզ, ալյումինակալում	ալյումինախտ (ալյումինոզ)
ականթոզ	ականթոզ	փշախտ (ականթոզ)
ասպերգիլոզ	ասպերգիլոզ	բորբոսասանկախտ (ասպերգիլոզ)
արթրոզ	արթրոզ, հոդաբորբ	հոդախտ (արթրոզ)
դերմատոզ	մաշկախտ, դերմատոզ	մաշկախտ
կանդիդոզ	կանդիդոզ	խմորասանկախտ (կանդիդոզ)
հելմինթոզ	ճիճկագարություն, հելմինթոզ	ճիճկախտ
մելանոզ	մելանոզ	գունախտ (մելանոզ)
նևրոզ	նյարդայնություն, նևրոզ	նյարդախտ (նևրոզ)
նեֆրոզ	նեֆրոզ, երիկամաբորբ	երիկամախտ (նեֆրոզ)
Պարոօդոնտոզ	Պարոօդոնտոզ	Հարատամախտ (պարոօդոնտոզ)
սիդերոզ	երկաթագարություն, սիդերոզ	երկաթախտ (սիդերոզ)
սկլերոզ	կարծրուկ, սկլերոզ	կարծրախտ (սկլերոզ)
տաբակոզ	ծխախտազարություն	ծխախտախտ (տաբակոզ)
տրիխոմիկոզ	մազերի սնկախտ, տրիխոմիկոզ	մազասնկախտ (տրիխոմիկոզ)
օրնիթոզ	օրնիթոզ	թռչնախտ (օրնիթոզ)

բ) -ՈԶ (– ՈՒԹՅՈՒՆ, – ՈՒՄ) վերջածանցով կազմված՝ ախտաբանական կամ բնականոն կենսընթաց ցույց տվող տերմիններ.

<i>Օտար տերմինը</i>	<i>Գործածվում է</i>	<i>Այսուհետև գործածել</i>
անաստոմոզ	անաստոմոզ, բերանակցում	բերանակցում
ացիդոզ	ացիդոզ, թթվազարություն	թթվազարություն (ացիդոզ)
թրոմբոզ	թրոմբոզ	մակարդուկագո- յացում (թրոմբոզ)
հելիոզ	հելիոզ, արևահարություն	արևահարություն
փսիխոզ	հոգեզարություն, փսիխոզ	հոգեզարություն (փսիխոզ)
օստեոպորոզ	օստեոպորոզ, ոսկրի ծակոտկենություն	ոսկրամոսրացում (օստեոպորոզ)
ֆիմոզ	նեղաթլիփ, ֆիմոզ	նեղաթլիփ (ֆիմոզ)

գ) –ՈԶ վերջածանցով կազմված մի քանի այլ բնույթի տերմիններ.

<i>Օտար տերմինը</i>	<i>Գործածվում է</i>	<i>Այսուհետև գործածել</i>
դիագնոզ	ախտորոշում, դիագնոզ	ախտորոշում (դիագնոզ)
հիպնոզ	հիպնոս	հիպնոս
նարկոզ	թմրեցում, անզգայացում, նարկոզ	նարկոզ
պրոզնոզ	կանխորոշում, նախագիտանք, պրոզնոզ	նախագուշակում (պրոզնոզ)
ստենոզ	ստենոզ	նեղվածք (ստենոզ) օր՝ ստամոքսաեղքի նեղվածք

3. -ՊԱԹԻԱ (=-ԱԽՏՈՒԹՅՈՒՆ) վերջածանցով կազմված՝ ընդհանուր (ոչ ճշտված) ախտաբանական վիճակ ցույց տվող տերմիններ.

Օտար տերմինը	Գործածվում է	Այսուհետև գործածել
անզիոպաթիա	անզիոպաթիա	անոթախտություն (անզիոպաթիա)
արթրոպաթիա	հոդախտ, հոդաբորբ	հոդախտություն (արթրոպաթիա)
դերմոպաթիա	մաշկախտ, մաշկաբորբ	մաշկախտություն (դերմոպաթիա)
լալոպաթիա	խոսելախտ, լալոպաթիա	խոսելախտություն (լալոպաթիա)
խոնդրոպաթիա	աճառատապ, խոնդրոպաթիա	աճառախտություն (խոնդրոպաթիա)
կարդիոմիոպաթիա	կարդիոմիոպաթիա	սրտամկանախտություն (կարդիոմիոպաթիա)
կերատոպաթիա	կերատոպաթիա	եղջերախտություն (կերատոպաթիա)
կրիոպաթիա	ցրտահարություն, կրիոպաթիա	ցրտախտություն (կրիոպաթիա)
կոլոպաթիա	խթաղիքացավ, կոլոպաթիա	խթաղիքախտություն (կոլոպաթիա)
մաստոպաթիա	ստինքաբորբ, մաստոպաթիա	ստինքաախտություն (մաստոպաթիա)
նևրոպաթիա	նյարդախտ, նևրոպաթիա	նյարդախտություն (նևրոպաթիա)
նեֆրոպաթիա	երիկամաբորբ, նեֆրոպաթիա	երիկամախտություն (նեֆրոպաթիա) օր. հղիների երիկամախտություն

պարօրոնտոպաթիա	պարօրոնտոպաթիա	հարատամնախտություն (պարօրոնտոպաթիա)
սպոնդիլոպաթիա	ողնախտ, սպոնդիլոպաթիա	ողնաշարախտություն (սպոնդիլոպաթիա)
փսիխոպաթիա	փսիխոպաթիա	հոգեախտություն (փսիխոպաթիա)
օստեոպաթիա	օստեոպաթիա, ոսկրախտ	ոսկրախտություն (օստեոպաթիա)

4. ՄԱՍՈՁ (=ՈՏՈՒԹՅՈՒՆ) վերջածանցով կազմված՝ ախտաբանական կենսաբանական տարածվածություն (բազմակիություն) ցույց տվող տերմիններ.

Օտար տերմինը	Գործածվում է	Այսուհետև գործածել
աթերոմատոզ	ճարպախուլ, աթերոմատոզ	ճարպախուլոտություն (աթերոմատոզ)
անգիոմատոզ	անգիոմատոզ	անոթոռուցքոտություն (անգիոմատոզ)
անգիոֆիբրոմատոզ	անգիոֆիբրոմատոզ	անոթային թելքոռուց- քոտություն (անգիոֆիբրոմատոզ)
բոոլոմատոզ	պզուկ, բոոլոմատոզ	պզկոտություն
գրանուլոմատոզ	հատիկահյուսվածքի ուռուցք, գրանուլոմատոզ	հատիկոռուցքոտություն (գրանուլոմատոզ)
էրիթեմատոզ	կարմրացան, էրիթեմատոզ	կարմրացանոտություն (էրիթեմատոզ)
լիմֆոգրանուլոմատոզ	լիմֆոգրանուլոմատոզ	ավշային հատիկոռուց- քոտություն (լիմֆոգրանուլոմատոզ)
լիպոմատոզ	ճարպակալում, լիպոմատոզ (adipositas)	ճարպոտություն (լիպոմատոզ)

միելլոմատոզ	միելլոմատոզ, խալոսոտություն	գունակոտություն (միելլոմատոզ)
պապիլոմատոզ	շիտոտություն, պապիլոմատոզ	պտկուռուցքոտություն (պապիլոմատոզ)
տրիխոմատոզ	թաղկոճ, տրիխոմատոզ	մազափնջոտություն (տրիխոմատոզ)
ֆբրիմատոզ	ֆբրիմատոզ, պեդիկուլյոզ	ոջլոտություն (ֆբրիմատոզ)
ֆիբրոմատոզ	ֆիբրոմատոզ	թելուռուցքոտություն (ֆիբրոմատոզ)

5. ա) =-ՈՍԱ (-ՈՒՈՒՅՔ) վերջածանցով կազմված՝ հյուսվածքի նորագոյացություն (ուռուցք) ցույց տվող տերմիններ.

Օտար տերմինը	Գործածվում է	Այսուհետև գործածել
աթերոմա	ճարպագեղձի ուռուցք, աթերոմա	ճարպագեղձուռուցք (աթերոմա)
անգիոմա	անգիոմա	անոթուռուցք (անգիոմա)
բլաստոմա	ծլուռուցք, բլաստոմա	քաղցկեղ
դենտոմա	դենտոմա	ատամնուռուցք
դերմատոմա	մաշկի ուռուցք, դերմատոմա	մաշկուռուցք (դերմատոմա)
էմալոբլաստոմա	էմալոբլաստոմա	արծնուռուցք (էմալոբլաստոմա)
էպիթելիոմա	էպիթելի ուռուցք, էպիթելիոմա	քաղցկեղ
լիմֆոմա	լիմֆոմա, ավշուռ	ավշահյուսվածքուռուցք (լիմֆոմա)
լիպոմա	ճարպուռուցք, լիպոմա	ճարպուռուցք (լիպոմա)
կանցեռ	քաղցկեղ, կանցեռ	քաղցկեղ
կոնդիլոմա	կոնդիլոմա, պալար	գորտոնկախալ (կոնդիլոմա)

մեջանում	խալոտուցք, մեջանում	գումակոտուցք (մեջանում)
նկրում	նյարդոտուցք, նկրում (օստեոմա)	նյարդոտուցք (նկրում)
ֆիբրոմ	ֆիբրոմ	թելքոտուցք (ֆիբրոմ)

բ) –ՈՄԱ վերջածանցով կազմված՝ ոչ ուղուցքներ ցույց տվող տերմիններ.

Օտար տերմինը	Գործածվում է	Այսուհետև գործածել
գլաուկոմա	գլաուկոմա	մերակնային ճնշման բարձրացում (գլաուկոմա)
լեյկոմա	լեյկոմա	եղջերենու սպիաբիծ (լեյկոմա)
հեմատոմա	արյունոտուցք, հեմատոմա	արյունակույտ (հեմատոմա)
ստոմա	բերան, ստոմա	բերան
ստրոմա	ստրոմա	հենքահյուսվածք (ստրոմա)
տրախոմա	տրախոմա, խշրուկ	կոպի հատիկաբորբ (տրախոմա)
տրիխոմա	տրիխոմ (բորբ)	մազափունջ (տրիխոմա)

12. Գիտական աստիճանների շնորհման հետ կապված տերմինների միասնականացման մասին*

Գիտական աստիճանների շնորհման հետ կապված տերմինների գործածության մեջ նկատված անհարկի օտարաբանություններից ու զուգաձևություններից խուսափելու և տերմինագործածության միասնականություն սահմանելու նպատակով Հայաստանի Հանրապետության լեզվի տեսչության հայերենի բարձրագույն խորհուրդը որոշում է՝ այսուհետև գործածել երկրորդ սյունակում բերված տերմինները.

Գործածվում է

ավտոռեֆերատ, սեղմագիր
ատեստատ, վկայական
գիտական քարտուղար,
գիտնական քարտուղար
դիպլոմ, վկայագիր
դիսերտանտ, ատենախոս
դիսերտացիա, թեզ, ատենախոսություն
էքսպերտ, փորձագետ
էքսպերտիզա, փորձաքննություն
կոնսուլտանտ, խորհրդատու
հայցող, հայցորդ
մասնագիտական խորհուրդ,
մասնագիտացված խորհուրդ
օպոնենտ, ընդդիմախոս

Այսուհետև գործածել

սեղմագիր
վկայական
գիտական քարտուղար
(գիտքարտուղար)
վկայագիր
ատենախոս
ատենախոսություն
փորձագետ
փորձաքննություն
խորհրդատու
հայցորդ
մասնագիտական
խորհուրդ
ընդդիմախոս

* Նախագիծը կազմել են Ա. Գրիգորյանը և Լ. Արզումանյանը: Հաստատվել է ՀՀ լեզվի պետական տեսչության պետի 2000 թ. փետրվարի 1-ի թիվ 8/5 հրամանով:

**13. Տարբեր բնագավառների վերաբերող մի քանի
անվանումների հայերեն համարժեքների
ճշգրտման մասին***

Գործածվում է

Այսուհետև գործածել

բրուտտո քաշ
դիսկետ, սկավառակ, պնակիտ
ընտրական օկրուգ, ընտրատարածք
լեզվիտիմ, օրինական
կոնդոմինիում, համատիրություն
հասարակական սնունդ
նետտո քաշ
պրինտեր, տպիչ
սկաներ
վաուչեր, սերտիֆիկատ, հավաստագիր
քսերոքս, պատճենահանող սարք

համաքաշ
պնակիտ
ընտրատարածք
օրինական
համատիրություն
հանրային սնունդ
զտաքաշ
տպիչ
պատկերամուտ
հավաստագիր
պատճենահան

*Հաստատվել է ՀՀ լեզվի պետական տեսչության պետի 2000 թ. փետրվարի 1-ի
թիվ 8/6 հրամանով:

**14. Տարբեր բնագավառների վերաբերող մի շարք
հասկացությունների հայերեն անվանումների
միօրինակացման և ճշգրտման մասին***

Գործածվում է

**Հանձնարարվում է
գործածել**

կոլեգիա	վարչանի
դիսպետչեր	կարգավար
օֆերտա	գործարկ
օֆերենտ, գործարկու	գործարկու
կուրատոր, խնամակալ	խնամարկու
կոնցեպցիա, հայեցակարգ	հայեցակարգ
պրեզենտացիա, շնորհանդես	շնորհանդես
պայմանագիր (ДОГОВОР)	պայմանագիր
կոնտրակտ, պարտավորագիր	պարտավորագիր
կոնվենցիա, համաձայնագիր	համաձայնագիր
ժողովալիստ, լրագրող	լրագրող
շոկային թերապիա,	
ցնցաբուժություն	ցնցաբուժություն

*Հաստատվել է ՀՀ լեզվի պետական տեսչության պետի 1997 թ. մարտի 3-ի թիվ 283 հրամանով:

15. «Ինֆորմացիա» տերմինի և նույն արմատով այլ տերմինների հայերեն համարժեքների մասին*

Նկատի ունենալով, որ «*ինֆորմացիա*» տերմինի և նույն արմատով այլ տերմինների հայերեն համարժեքների կիրառության մեջ չկա դրանց հստակ իմաստային տարբերակում, որ այդ համարժեքների համակարգը պակասավոր է և չի համապատասխանում ինֆորմացիայի մասին գիտության զարգացման ժամանակակից մակարդակին, սահմանել «*ինֆորմացիա*» տերմինի և նույն արմատով այլ տերմինների հայերեն համարժեքների հետևյալ համակարգը.

информация	1.տեղեկույթ (տեղեկությունը գիտության համակարգում), 2.տեղեկատվություն (տեղեկույթի հաղորդում)
информировать информирование	տեղեկացնել 1.տեղեկացում, 2.տեղեկատվություն (նույնն է информация),
информированный информационный	1.տեղյակ, 2.տեղեկացված 1.տեղեկությային, (օր.՝ տեղեկությային տեխնիկա, պատերազմ, լեզու), 2.տեղեկատվական (օր.՝ տեղեկատվական ծառայություն), 3.տեղեկատու (օր.՝ տեղեկատու թերթիկ)
информатор информативный информативность	տեղեկարկու տեղեկունակ, տեղեկուն տեղեկունակություն, տեղեկունություն (օր.՝ տեքստի տեղեկունակություն)

*Նախագիծը կազմել են Վլ. Բաղդասարյանը և Վ. Ա. Սարգսյանը:
Հաստատվել է ՀՀ Կառավարությանն առընթեր լեզվի պետական տեսչության հայերենի բարձրագույն խորհրդի կողմից 2002 թ. մայիսի 15-ի որոշմամբ:

средства массовой информации	զանգվածային տեղեկատվության միջոցներ (ոչ թե զանգվածային լրատվության միջոցներ)
информатизировать	տեղեկութավորել, տեղեկավորել
информатизация	տեղեկութավորում, տեղեկավորում (օր.՝ հասարակության տեղեկութավորում, երբ հասարակությունը հիմնավորապես ապահովվում է տեղեկությով և տեղեկությամբ միջոցներով)
информатика	տեղեկագիտություն, ինֆորմատիկա
информатический	տեղեկագիտական
информатик	տեղեկագետ
информант	տեղեկորդ
дезинформировать	ապատեղեկացնել
дезинформация	1. ապատեղեկույթ 2. ապատեղեկատվություն 3. ապատեղեկացում
дезинформирование	1. ապատեղեկատվություն (նույնն է дезинформация 2), 2. ապատեղեկացում (նույնն է дезинформация 3)
дезинформатор	ապատեղեկարկու

Բ. ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ-ՈՒՂՂԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԵՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

1. *Ի վայր (վար), ի վեր* հետադրություններով կազմված բառակապակցությունների և բառերի գրությամբ մասին որոշումը մասնակի փոփոխություններով վերահաստատելու մասին*

Ժամանակակից հայերենում գոյականներով և *ի վայր (վար), ի վար* հետադրություններով կազմված կապակցությունների ու բարդ բառերի գրության մեջ առաջացել են ավելորդ զուգաձևություններ: Այսպես, օրնակ՝ *դար ի վեր – դարիվեր, զառ ի վայր – զառիվայր, հիմն ի վեր – հիմնիվեր, լեռն ի վայր (վար) – լեռնիվայր (վար), սարն ի վեր – սարնիվեր* և այլն:

Ուղղագրական այս անհարկի և շփոթեցնող զուգաձևությունները վերացնելու նպատակով որոշվում է առաջնորդվել հետևյալ կանոններով:

1. Անջատ կամ հարադրությամբ գրվում են.

Գոյականներով և *ի վայր (վար)* ու *ի վեր* հետադրություններով կազմված կապակցությունները:

Դրանք են՝

ա) հատուկ տեղանուն գոյականներով և *ի վայր (վար)* ու *ի վեր* հետադրություններով կազմված կապակցությունները. օրինակ՝ *Մասիսն ի վեր, Ծովասարն ի վայր* և այլն.

բ) հոգնակի գոյականներով և *ի վայր (վար)* ու *ի վեր* հետադրություններով կազմված կապակցությունները. օրինակ՝ *սարերն ի վեր, ծորերն ի վայր, դարերն ի վեր* և այլն.

գ) գոյականական բառակապակցությամբ և *ի վայր (վար)* ու *ի վեր* հետադրություններով կազմված կապակցությունները. օրինակ՝ *Արալի լեռն ի վայր, ավերակ բերդի պատն ի վեր, դիմացի սարն ի վեր, այդ օրից ի վեր* և այլն.

դ) բառային անկախություն ունեցող շեշտակիր գոյականներով կամ մակբայներով և *ի վայր (վար)* ու *ի վեր* հետադրություններով կազմված կապակցությունները. օրինակ՝ *գետն ի վայր, կիրճն ի վեր,*

*Նախագիծը կազմել է Դ. Բարսեղյանը: Հաստատվել է 1992 թ., ապա վերախմբագրմամբ՝ ԴՀ լեզվի պետական տեսչության պետի 2000 թ. փետրվարի 1-ի թիվ 8/2 հրամանով:

փողոցն ի վար, վաղուց ի վեր, հնուց ի վեր և այլն:

2. Անանջատ կամ համադրությամբ գրվում են.

Գոյականներով և ի վայր (վար) ու ի վեր հետադրություններով բաղադրված այն բարդ բառերը, որոնք ունեն մեկ բառային շեշտ և մակբայի, երբեմն էլ ածականի կամ գոյականի խոսքիմասային նշանակություն:

Դրանք են՝

բերանքսիվայր, բերանքսիվեր (գրվում են նաև՝ բերանսիվայր (վար), բերանսիվեր), գլխիվայր (վար), գլխիվեր, դարիվայր (վար), դարիվեր, երեսնիվայր (վար), երեսնիվեր, զառիվայր (վար), զառիվեր, հիմնիվայր (վար), հիմնիվեր:

Ծանոթություն 1: Ի վայր և ի վեր զուգածները (սարերն ի վայր – սարերն ի վար, զառիվայր – զառիվար) գրական-գրքային և խոսակցական-ժողովրդական ոճական տարբերակներ են: Այսպես՝ «Լեոն ի վայր ինչո՞ւ անուշ կարկաչով վազում է առուն դալարի միջով» (Ռ. Պատկանյան): «Թեթև քամին լեոն ի վար քշում է Ասատուրի այրված տան տաք մոխիրը» (Խ. Դաշտենց): «Դուրս գալով ծորից՝ ճանապարհը թեքվեցավ դեպի լեռնային զառիվայրը» (Դաֆֆի): «Ողջ գիշեր նա մնաց այդպես բերանքսիվայր» (Ս. Խանգադյան): «Ողջ բանակը... ընկավ բերանքսիվար գետնին» (Դ. Դեմիրճյան):

Ծանոթություն 2: Թույլատրվում է անանջատ գրության միավորների բաղադրիչների անջատ գրությունը, եթե առաջին բաղադրիչը նույնությամբ անկախ գործածություն ունի՝ *դար ի վեր, երեսն ի վայր, հիմն ի վեր, բայց՝ բերանքսիվայր, բերանքսիվեր, գլխիվեր:*

Ծանոթություն 3: Անհանձնարարելի է անջատ գրություն ունեցող լեոն ի վայր (վար), լեոն ի վեր, պատն ի վայր (վար), պատն ի վեր, սարն ի վայր (վար), սարն ի վեր միավորների անանջատ (լեռնիվայր (վար), լեռնիվեր, պատնիվայր (վար), պատնիվեր, սարնիվայր (վար), սարնիվեր) գրությունը:

2. Հայերեն գրավոր և բանավոր խոսքում դասական թվականների գործառնության միասնականացման և ճշգրտման մասին*

Նկատի ունենալով, որ պաշտոնական փաստաթղթերում և այլ գրություններում անմիօրինակություն է ստեղծվել արաբական թվանշաններով արտահայտվող դասական թվականները գործածելիս, այսինքն՝ անհրաժեշտ մասնիկները (*-ին, -րդ*) երբեմն գրվում, երբեմն չեն գրվում (օրինակ՝ *1-ին կետ, 1 կետ, 2-րդ հոդված, 2 հոդված, 3-րդ գլուխ, 3 գլուխ, 4-րդ նկար, 4 նկար* և այլն), գործող կանոնների միասնականացման, ճշգրտման և անկանոնության վերացման նպատակով Հայաստանի Հանրապետության Կառավարությանն առընթեր լեզվի պետական տեսչության հայերենի բարձրագույն խորհուրդը *որոշում է*.

1. Դասական թվականները արաբական թվանշաններով արտահայտելու դեպքում անհրաժեշտ մասնիկները միշտ գրել. օրինակ՝ *1-ին կետ, 2-րդ հոդված, 3-րդ գլուխ, 4-րդ նկար, 5-րդ վարժություն, 6-րդ աղյուսակ* և այլն:

2. Թվականների՝ առանց նշված մասնիկների գործածությունը թույլատրելի համարել հետադաս կիրառության դեպքում՝ վերնագրերում, ենթավերնագրերում, հղումներում և այլն. օրինակ՝ *կետ 1, հոդված 2, գլուխ 3, մաս 4, «Աշխատանքից ազատվել է հաստիքների կրճատման պատճառով. հիմքը՝ ՀՀ աշխատանքային օրենսգիրք, հոդված 36, կետ 1»:*

3. Հետադաս դիրքում անթույլատրելի համարել դասականի իմաստ արտահայտող թվանշանները և տառերը հոլովված ձևերով և հոդերով գործածելը, այսինքն՝ գրել ոչ թե *կետ 1-ի, գլուխ II-ով, մաս 4-ից, բաժին 4-րդի, նկար 5-ը, սյունակ VI-ը* և այլն, այլ՝ *1-ին կետի, II գլխով, 4 մասից, 4-րդ բաժնի, 5-րդ նկարը, VI սյունակը* և այլն:

Ծանոթություն 1: Սույն կանոնը չի վերաբերում անձնանունների հետ գործածվող հատուկ անվան արժեք ունեցող թվականներին: Նման դեպքերում հոլովվում և հոդ ստանում է միայն թվականը. օրինակ՝ Տիգրան Առաջինի, Արշակ Երկրորդով, Խոսրով Երրորդը և այլն:

*Նախագիծը կազմել է Գ. Միքայելյանը, խմբագրել՝ Գ. Բարսեղյանը: Հաստատվել է ՀՀ լեզվի պետական տեսչության պետի 2000 թ. նոյեմբերի 14-ի թիվ 87 հրամանով:

Ծանոթություն 2: Հայոց այբուբենի տառերով արտահայտված դասական թվականները անձնանունների հետ գործածելիս կարդացվում են ոչ թե տառանվամբ, այլ այնպես, ինչպես դասական թվականները: Այսինքն՝ պետք է արտասանել ոչ թե Տիգրան Ա, Արշակ Բ, Խոսրով Գ և այլն, այլ Տիգրան Առաջին, Արշակ Երկրորդ, Խոսրով Երրորդ և այլն:

Ծանոթություն 3: Թվարկման դեպքում հայոց այբուբենի տառերով արտահայտված դասական թվականները կարող են կարդացվել նաև ըստ հնչման. այսինքն՝ 1-ին հոդվածի ա (կամ առաջին) կետ, II բաժնի բ (կամ երկրորդ) պարբերություն և այլն:

**3. ԳԴ Նախարարների խորհրդին առընթեր նախկին
տերմինաբանական կոմիտեի «Երկակի գրություն ունեցող որոշ
բառերի ուղղագրության միօրինակացման մասին»
(1991 թ.) որոշումը մասնակի փոփոխություններով
վերահաստատելու մասին***

Գործածվում է

Համեմարարվում է

ազաթ, ազատ, ակաթ	ազաթ
դարպաս, դարբաս	դարպաս
հանգերգ, հանկերգ	հանգերգ
մանուշակագույն, մանիշակագույն	մանուշակագույն
նոյյան, նոյան	նոյյան
տիար, տյար	տիար
կոճոն, կրճոն	կոճոն
բրթել, բոթել (հրել)	բրթել
ծեծկռտել, ծեծկրտել	ծեծկռտել (ծեծկռտոց, ծեծկռտուք)
քաշկռտել, քաշկրտել	քաշկռտել
ցատկռտել, ցատկրտել	ցատկռտել

*Նախագիծը կազմել է Ա. Սարգսյանը: Հաստատված է ԳԴ լեզվի պետական տեսչության պետի 2000 թ. փետրվարի 1-ի թիվ 8/11 հրամանով:

4. Ժամանակակից հայոց լեզվում *Լոռի, Գյումրի* տեղանունների հոլովական զուգաձևությունները վերացնելու և հարացույցը միօրինակացնելու մասին*

Ժամանակակից հայոց լեզվում *Լոռի, Գյումրի* տեղանունների հոլովական զուգաձևությունները (*Լոռվա-Լոռիի-Լոռու, Գյումրվա-Գյումրիի-Գյումրու*) վերացնելու և հարացույցը միօրինակացնելու նպատակով ՀՀ լեզվի պետական տեսչության հայերենի բարձրագույն խորհուրդը որոշում է՝

Այսուհետև գրական լեզվում հանձնարարել սեռական-տրական հոլովի *ու-ով* *Լոռու, Գյումրու* ձևերը:

*Նախագիծը կազմել են Գ. Զահուկյանը և Դ. Բարսեղյանը: Հաստատվել է ՀՀ լեզվի պետական տեսչության պետի 2000 թ. փետրվարի 1-ի թիվ 8/9 հրամանով:

5. Արևելահայերենի այբուբենի և գրանշանների համապարփակ հավաքածուի մասին*

Վերջին տարիներին մեզանում բուռն բանավեճերի առարկա են դարձել հայերենի ուղղագրությանը, այբուբենին և առհասարակ գրանշաններին վերաբերող հարցերը: Հայերենի պատմական զարգացման փուլերի ու տարբերակների այբուբենի միասնականացման անվան տակ փորձեր են արվում վերացնելու այն նորը, որով բնորոշվում է Հայաստանի Հանրապետության փաստական պաշտոնական լեզվի՝ արևելահայերենի այբուբենը, և որը լեզվի, նրա հնչյունական համակարգի պատմական զարգացման օրինաչափ արդյունք է:

Արևելահայերենում գործող այբուբենի քննադատներն առաջարկում են՝ ա) այբուբենում վերականգնել «ւ» (վյուն) տառը, բ) այբուբենից և առհասարակ գործածությունից հանել «ու» տառը, որն իրենք համարում են ոչ թե տառ, այլ «ո» և «ւ» տառերի զուգակցություն», գ) կցագիր «և»-ը առհասարակ հանել գործածությունից և նրա ներկայացրած հնչյունների կապակցությունն արտահայտել «ե», «լ» տառերի զուգակցությամբ»:

Առաջին երկու կետերի պահանջները հակասում են՝ ա) տառի և այբուբենի մեարդպան, գիտական ըմբռնմանը, բ) հայերենի պատմական զարգացմանը: Սակայն կցագիր «և»-ի՝ տառ լինելու, մեծատառ չունենալու, գործածության ոլորտի հարցերը, իրոք, կարոտ են լուծման:

Հայերենի բարձրագույն խորհրդի նիստը վերոհիշյալ բանավեճային առաջարկների վերաբերյալ լսեց նախագծի հեղինակ Ս. Աբրահամյանի վերլուծումներն ու հիմնավորումները: Քննարկման արդյունքներն ամփոփեց խորհրդի նախագահ, ակադեմիկոս Գ. Ջահուկյանը:

Հաշվի առնելով արևելահայերենի հնչյունական համակարգի ու դրա հետ կապված այբուբենի պատմական զարգացման իրական ընթացքը, այլև այբուբենի բանավեճի առարկա դարձած հարցերին գիտական լուծում տալու և տարածվող ուղղագրական սխալներն ու կանայականությունները կանխելու, ինչպես նաև հայերենի գրավոր բոլոր տարբերակների գրային արտահայտությունը ներկայացնող գրանշանների համապարփակ հավաքածու ստեղծելու նպատակով՝

*Նախագիծը կազմել է Ս. Աբրահամյանը, խմբագրել՝ Դովի. Բարսեղյանը:

Հաստատվել է հայերենի բարձրագույն խորհրդի 1993 թ. նոյեմբերի 13-ի նիստում: Վերահաստատվել է ՀՀ լեզվի պետական տեսչության պետի 2000 թ. փետրվարի 1-ի հրամանով:

Հայաստանի Հանրապետության Կառավարության առընթեր լեզվի պետական տեսչության հայերենի բարձրագույն խորհուրդը որոշում է.

1. «Լ» (վյուն) տառը չի կարող վերականգնվել արևելահայերենի այբուբենում, քանի որ դարեր առաջ այն դարձրել է ինքնուրույն տառի արժեք ունենալուց՝ նրա արտահայտած հնչյունի լեզվից պատճառներով վերացած լինելու պատճառով:

2. Վերահաստատել «ու» տառը այբուբենում որպես հայերենի հնչյունական համակարգի պատճառով զարգացման օրինաչափ իրական արդյունք՝ բազմաթիվ դարեր առաջ ձևավորված «ու» պարզ ծայնավորը նշանակող ինքնուրույն տառ՝ մերժելով «ու»-ն այբուբենից հանելու առաջարկը՝ այն «ո» և «ւ» տառերի կապակցություն համարելու սխալ պատճառաբանությունը:

Պահպանել «ու» տառի տեղը արևելահայերենի այբուբենում ավանդական այբուբենի «Լ» տառի տեղում՝ վերջինիս թվային արժեքով (7000):

3. Կցագիր «և»-ը այբուբենից տանել հավելյալ տառերի շարքը, քանի որ չունի հնչյունական և այբբենական միանշանակ արժեք. «և»-ի գրության և ուսուցման հարցում ղեկավարվել գործող հետևյալ կանոններով.

ա) «և»-ը գործածել առանձին հանդես եկող «և» շաղկապը և համապատասխան «եվ» հնչյունակապակցությունը մյուս դեպքերում արտահայտելու համար. ինչպես՝ *և, ևս, արև, հարևան, տերևաթափ:*

բ) «եվ» հնչյունակապակցությունը գրել «եվ» ա) մեծատառով գրության դեպքում՝ ԱՐԵՎԵԼՔ, ԲԱՆԱՉԵՎ, ԵՐԵՎԱՆ, ԵՎՐՈՊԱ (այլև՝ *եվրոպական*), բ) տողադարձի դեպքում՝ *արեւ-վային, թեւ-վաճոր, երեւ-վույթ*, գ) այն բաղադրյալ բառերում, որոնցում «եվ»-ի «վ»-ն երկրորդ (հաջորդ) արմատի սկզբնատառն է. *տարեւմեջ, հոգեւմիճակ, Դարեւ-վանք:*

դ) Բառարաններում, տարբեր բառացանկերում «և» ունեցող բառերի այբբենական տեղը որոշելիս հիմք ընդունել նրա բաղադրիչներ «ե»-ի և «վ»-ի տեղն այբուբենի մեջ, որպիսի մոտեցումով հետագայում կկանխվեն այնպիսի հակասություններ, որպիսիք այժմ շատ են մեր բառարաններում:

դ) Սխալ համարել «և»-ը «ե»-ի և արևելահայերենում գոյություն չունեցող «Լ»-ի գուգակցումով կազմված «ել» գրությամբ արտահայտվել:

4. Արևելահայերենի այբուբենը դնել տեղեկատվական տեխնոլո-

գիաների հայերեն գրանշանների հավաքածուի հիմքում՝ հաշվի առնելով, որ այն մշակված ու ճշգրտված է գիտականորեն, լիովին համապատասխանում է գրական արևելահայերենի հնչյունական համակարգին, արտահայտում է մեկուսյալ այբուբենի ու նրա պատմական զարգացման բոլոր տարբերակների հիմնական պատկերը, միաժամանակ նկատի ունենալով, որ լեզվական իրականության արտահայտման ճշտությունը անհրաժեշտ է ոչ միայն լեզվական-լեզվաբանական առումով, այլև համապատասխան տեխնիկայի, տվյալ տեղեկատվական տեխնոլոգիաների կատարյալության ու լիարժեքության ցուցանիշ է:

5. Տեղեկատվական տեխնոլոգիաներում, գրահրատարակչության, ուսումնական և այլ բնագավառներում ավանդական ուղղագրության կարիքները բավարարելու նպատակով հայերենի համապարփակ գրանշանների հավաքածուում պահպանել «Լ»-ը (վյուն) որպես հավելյալ տառ:

Այսպիսով՝ հաստատել արևելահայերենի այբուբենը և գրանշանների համապարփակ հավաքածուն հետևյալ տեսքով.

Ա) ԱՐԵՎԵԼԱՅԱՅԵՐԵՆԻ ԱՅԲՈՒԲԵՆ

ա, բ, գ, դ, ե, զ, է, ը, թ, ժ, ի, լ, խ, ժ, յ, հ, ձ, ղ, ճ, մ, յ, ն, 2, ո, չ, պ, ջ, ք, ս, վ, տ, ր, ց, ու, փ, ք, օ, ֆ
Բ) ԴԱՎԵԼՅԱԼ «Լ» ԿՑԱԳԻՐ

6. ՀԱՅԵՐԵՆ ԳՐԱՆՇԱՆՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԾՈՒՆ

ա) Այբուբենի տառերը

Ա մեծատառ
ա փոքրատառ
Բ մեծատառ
բ փոքրատառ
Գ մեծատառ
գ փոքրատառ
Դ մեծատառ
դ փոքրատառ
Ե մեծատառ
ե փոքրատառ
Ձ մեծատառ
զ փոքրատառ
Է մեծատառ
է փոքրատառ
Ը մեծատառ
ը փոքրատառ
Թ մեծատառ
թ փոքրատառ
Ժ մեծատառ
ծ փոքրատառ
Ի մեծատառ
ի փոքրատառ
Լ մեծատառ
լ փոքրատառ
Խ մեծատառ
խ փոքրատառ
Օ մեծատառ
օ փոքրատառ
Կ մեծատառ
կ փոքրատառ

Հ մեծատառ
հ փոքրատառ
Ձ մեծատառ
ձ փոքրատառ
Ղ մեծատառ
ղ փոքրատառ
Ճ մեծատառ
ճ փոքրատառ
Մ մեծատառ
մ փոքրատառ
Յ մեծատառ
յ փոքրատառ
Ն մեծատառ
ն փոքրատառ
Շ մեծատառ
շ փոքրատառ
Ո մեծատառ
ո փոքրատառ
Չ մեծատառ
չ փոքրատառ
Պ մեծատառ
պ փոքրատառ
Ջ մեծատառ
ջ փոքրատառ
Ռ մեծատառ
ռ փոքրատառ
Ս մեծատառ
ս փոքրատառ
Վ մեծատառ
վ փոքրատառ

S մեծատառ
 տ փոքրատառ
 Ր մեծատառ
 ր փոքրատառ
 Յ մեծատառ
 ց փոքրատառ
 ՈՒ մեծատառ
 ու փոքրատառ
 Փ մեծատառ
 փ փոքրատառ
 Զ մեծատառ
 ջ փոքրատառ
 Օ մեծատառ
 օ փոքրատառ
 Ֆ մեծատառ
 ֆ փոքրատառ

.... բազմակետ
 (ձախ կոր փակագիծ
) աջ կոր փակագիծ
 [ձախ ուղիղ փակագիծ
] աջ ուղիղ փակագիծ
 { ձախ ձևավոր փակագիծ
 } աջ ձևավոր փակագիծ
 « ձախ չակերտ
 » աջ չակերտ

բ) Հավելյալ տառեր

Ի «վուն» մեծատառ
 Լ «վուն» փոքրատառ
 Լ «ել» կապակցությունն
 արտահայտող տառանշան

գ) Կետադրական նշաններ

. միջակետ
 , ստորակետ
 : վերջակետ
 \ բութ
 / շեշտ
 ° հարցական նշան (պարունկ)
 - բացականչական նշան
 - միության գծիկ
 — անջատման գիծ
 - տողադարձի նշան (ենթա-
 մնա)
 › ապաքարց
 ... կախման կետեր

7. Բաղադրյալ հատուկ անուններում մեծատառերի գործածության մասին*

Նկատի առնելով բաղադրյալ հատուկ անունների մեջ մեծատառերի գործածության անմիօրինակությունն ու սահմանված կանոնների անհետևողական կիրառությունը, ինչպես նաև բաղադրյալ անունների ու անվանումների ավելացման հետևանքով սրանց գրության ուսուցման և տպագրական գործում ստեղծված դժվարությունները՝ վերջիններս հաղթահարելու և մեծատառերի գրության մեջ միասնականություն սահմանելու նպատակով ՀՀ Կառավարությանն առընթեր լեզվի պետական տեսչության հայերենի բարձրագույն խորհուրդը որոշում է.

1. Բոլոր բառերն սկսել մեծատառով.

Ա. Բոլոր պետությունների պաշտոնական բաղադրյալ հատուկ անուններում.

Ամերիկայի Միացյալ Նահանգներ, Արաբական Միացյալ Ամիրայություններ, Աֆղանստանի Իսլամական Պետություն, Բելառուսի Հանրապետություն, Գերմանիայի Դաշնային Հանրապետություն (նախկինում՝ Գերմանիայի Դեմոկրատական Հանրապետություն և Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետություն), Հայաստանի Հանրապետություն (նախկինում՝ Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն), Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն, Ռուսաստանի Դաշնություն (այսպես նաև՝ Ռուսաստանի Խորհրդային Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետություն և Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միություն), Օսեթ-Ալանիայի Հանրապետություն և այլն:

Ծանոթություն: Պետությունների պատմական անուններում (պետություն, ամիրայություն, թագավորություն, կայսրություն, խանություն, մելիքություն և այլն) մեծատառ է գրվում բաղադրյալ անվան միայն առաջին բաղադրիչը (տե՛ս իր տեղում):

Բ. Բոլոր բաղադրյալ այն անձնանուններում և մականուններում ու ծածկանուններում, որոնց մեջ՝

ա) բոլոր բաղադրիչներն առանձին-առանձին հատուկ անուն են. օրինակ՝ Ալեքսանդր Սերգեևիչ Պուշկին, Ալեքսանդր Ստեփանի Թևո-

* Նախագիծը կազմել է Հ. Բաբսեդյանը, խմբագրել՝ Վ. Ասլանյանը: Հաստատվել է ՀՀ ԿԳ նախարարի 2003 թ. հունվարի 14-ի թիվ 18 հրամանով:

սյան (Ակսել Բակունց), Եղիշե Աբգարի Սողոմոնյան (Եղիշե Չարենց), Խոսե Ռաուլ Կապաբլանկա, Կիմ Իր Սեն, Յո Շի Մին, Մառ Տգեղուն, Մելիք-Յակոբյան Յակոբ Մելիք-Միրզայի (Րաֆֆի), Նիկոլայ Անդրեևիչ Ռիմսկի-Կորսակով, Ջորջ Նոել Գորդոն Բայրոն, *այսպես նաև՝* Գամառ-Քաթիպա, Նար-Դոս, Սայաթ-Նովա *և այլն*։

բ) *լրացյալը հատուկ անուն է, իսկ լրացումը (նախադաս թե հետադաս)՝ մականուն. օրինակ՝* Աշոտ Երկաթ, Արա Գեղեցիկ, Գայոս Սեկունդոս, Դավիթ Անհաղթ, Իվան Ահեղ, Մխիթար Սպարապետ, Պետրոս Առաջին, Պլինիոս Ավագ, Ջորջ Բուշ Կրտսեր, Սահակ Պարթև, Տիգրան Մեծ, Անանիա Շիրակացի, Ներսես Աշտարակեցի, Սողոմոն Իմաստուն, Յայկ Նահապետ, *այսպես նաև՝* Առյուծածև Միեր, Գայլ Վահան, Չախորդ Փանոս, Չենով Օհան, Մայր Թերեզա, Քաջ Նազար, Անբան Յուրի, Միկիտան Սաքո *և այլն*։

Գ. Բոլոր բաղադրյալ այն աշխարհագրական անուններում, որոնց մեջ՝

ա) բոլոր բաղադրիչներն առանձին-առանձին հատուկ անուն են. օրինակ՝ Անի-Կամախ, Արփա-Սևան, Բաղք-Քաշունիք, Դոնի Ռոստով, Էլզաս-Լոթարինգիա, Խուբ-Բռնաշեն, Մայնի Ֆրանկֆուրտ, Վան-Տոսպ, Վոլգա-Դոն *և այլն*։

բ) *հասարակ անուն լրացումը նախադաս է, իսկ հատուկ անուն լրացյալը՝ հետադաս. օրինակ՝* Արևելյան Եփրատ, Արևմտյան Բեռլին, Բարձր Յայք, Կենտրոնական Աֆրիկա, Յարավային Ամերիկա, Մեծ Մասիս, Նոր Արեշ, Փոքր Ասիա, Ներքին Թալին, Վերին Արտաշատ, *այսպես նաև՝* Յին Յունաստան, Յին Յոռն *և այլն*։

գ) *լրացումն ու լրացյալը օտարալեզու, բոլոր բաղադրիչները մեծատառով գրվող (վերոհիշյալ որևէ տեսակի) անուններ են. օրինակ՝* Ադիս Աբեբա, Ալմա Աթա (այժմ Ալմաթի), Բուենոս Այրես, Իսիկ Կուլ, Խալխին Գոլ, Կրիվոյ Ռոգ, Ղարա Բողազ Գյոլ, Մատոչկին Շար, Մինե-րալմին Վոդի, Յասնայա Պոլյանա, Նիժնի Նովոբորո, Նյու Յորք, Սան Ֆրանցիսկո *և այլն*։

դ) *երկու բաղադրիչներն էլ հասարակ անուններ են (առաջինը՝ նաև հատուկ), բայց պայմանական կամ փոխաբերական գործածությամբ դառնում են հատուկ անվան բաղադրիչ և գրվում մեծատառ. օրինակ՝* Ծիր Կաթին (աստղակույտ), Նոր Երկիր, Յեռավոր Արևելք, Յին Արևելք, Մերձավոր Արևելք (երկրամասեր), Յայկական Պար (լեռնաշղթա), Մեծ Արջ, Փոքր Արջ (համաստեղություններ)։ *Այսպես նաև՝* հատուկ անվան *և նրան հաջորդող պայմանական գործածության անվան բաղադրություններում. օրինակ՝* Աֆրիկայի Եղջուր (թերակղզի), Վիննայի Ան-

տառ (լեռնագանգված), Բերենիկեի Վարսեր (համաստեղություն) և այլն:

Դ. Հոգևոր-պատմամշակութային այն բաղադրյալ հատուկ անուններում, որոնց մեջ բոլոր բաղադրիչներն առանձին-առանձին կամ «Սուրբ» մականվան հետ միասին հատուկ անուն են. օրինակ՝ Անգղա Սուրբ Նշան, Արգյազի Սուրբ Ստեփանոս Նախավկա, Դարաշամբի Սուրբ Ստեփանոս, Ընծայից Սուրբ Աստվածածին, Մաստարայի Սուրբ Հովհաննես, Մուղնու Սուրբ Գևորգ, Վասպուրականի Մոկաց Սուրբ Մինաս, կամ նաև՝ Սուրբ Նշան, Սուրբ Ստեփանոս Նախավկա, Սուրբ Աստվածածին, Սուրբ Հովհաննես, Սուրբ Գևորգ, Սուրբ Մինաս (վանք, եկեղեցի):

Ծանոթություն 1: Հայերեն թե օտարալեզու բաղադրյալ անձնանուններում և աշխարհագրական անուններում գործածված միջադաս և վերջադաս մեկնական-լրացական բառերն ու քերականական-վերաբերական նշանակության բառ-մասնիկները (նախդիր, հոդ, կապ, շաղկապ) ինչպես այլ լեզուներում, այնպես էլ հայերենում, գրվում են փոքրատառ. օրինակ՝ Արդ էլ Քերին, Անդրեա ըն Սարտո, Անդրեա որոյս Ռոբիա, Բողոնն ըն Կուրտենն, Ժաննա ը՝Արկ, Լեոնարդո ոս Վինչի, Հարուն այ Ռաշիդ, Միրզա Մելքուն իսն (Հովսեփ Մելքոնյան), Միրզո Թուրսուն-զա-յն, Մուքեմի Մուսամադ, Ամին-իսոգա, Նուր ադ դին իս Հալաբի, Շառլ ոդ Գոլ, Վիլհելմ ֆոն Հունբուրգ, Օմար խայամ Դիասսարդին Աբու-Լ-Ֆաթի իսն Իբրահիմ, Մահարի Աբու-Լ-Ալա, Ադրիան վան Օստադե, Մուսամեդ Սուլեյման օղլի Ֆիզուլի (Ֆուզուլի), այսպես նաև աշխարհագրական բաղադրյալ անուններում՝ Անտիոք ան Եփրատավ, Անտիոք ան Տավրոսիվ, Իլ ոդ Ֆրանս (պատմական մարզ Ֆրանսիայում), Մեծ կան Խաղաղ օվկիանոս, Նահր էլ Արդեն (Հորդանան գետի արաբերեն անվանումը), Ռիո ըն Ժանեյրո (քաղաք), Սեն Պիեռ և Միքել (կղզեխումբ), Տուլ-լա ըն Համդոն, Տալլ իսն Համտուն (Թիլ Համտուն բերդավանի ֆրանսերեն և արաբերեն անվանումները), Ջաբալ այ Հաբիթ (Արարադի՝ Ջուդի լեռան արաբերեն անվանումը) և այլն:

Սակայն բաղադրյալ հատուկ անվան սկզբում կամ մախադաս դիրքում (թե՛ հայերենում, թե՛ այլ լեզուներում) այդ կարգի մեկնական-լրացական բառերն ու կապակցական բառ-մասնիկները գրվում են մեծատառ. օրինակ՝ Իսն էլ Ֆաթի, Լա Կրոզ Մաթյուրեն Վեյսիե, Լա Վալե Պուսեն Շառլ Ժան, Վան Գոգ Վինսենտ, Վան Դեյք Անտոնիս, Օ՛րիորդեն Մայքլ, Օ՛Նելլ (Օ՛Նիլ) Յուլիան, այսպես նաև՝ աշխարհագրական անուններում՝ Լա Մանշ (նեղուց), Լա Պլատա (քաղաք), Լե Կրեզ (քաղաք), Սեն Գոթարդի (լեռնանցք), Սեն Պիեռ (նավահանգիստ) և այլն:

Ծանոթություն 2: Հատուկ անձնանվան զբաղմունքը, մասնագիտությունը, պաշտոնը (բանաստեղծ, վիպասան, նկարիչ, երգիչ, ուսուցիչ, երկրագործ, կոշկակար, բազմալոր և այլն) և տեղանվան տեսակը (գետ, լիճ, ծով, լեռ, դաշտ, գյուղ, քաղաք և այլն) որոշող հիմնաբառերը, բոլոր բառերը մեծատառով գրվող հատուկ

անունների հետ գործածվելիս, գրվում են փոքրատառ. օրինակ՝ Աշոտ Երկաթ թագավորը, Խրիմյան Հայրիկ կաթողիկոսը, Դերենիկ Դեմիրճյան վիպասանը, Եղիշե Չարենց բանաստեղծը, Մարտիրոս Սարյան նկարիչը, Անի-Կամախ քաղաքը, Արփա-Սևան ջրատարը, Արևմտյան Եփրատ գետը, Բարձր Հայք աշխարհը, Խալխին Գոլ լիճը, Հայկական Պար լեռնաշղթան, Մեծ Մասիս լեռը, Մաստարայի Սուրբ Հովհաննես եկեղեցին, Վասպուրականի Սոկաց Սուրբ Մինաս վանքը և այլն:

2. Միայն առաջին բառն սկսել մեծատառով (դրանց կազմում հատուկ անուն լինելու դեպքում պահպանելով նաև այդ անվան մեծատառով գրությունը).

Ա. Ֆիզիկաաշխարհագրական այն բաղադրյալ հատուկ անուններում, որոնց մեջ լրացյալը, առանձին վերցված, հատուկ անուն չէ.

Աղբամար կղզի, Արայի լեռ, Արարատյան դաշտ, Բաղակի քար (բերդ-ամրոց), Գեղամա լեռներ, Լոռու հրաբխային բարձրավանդակ, Կասպից (Վրկանա) ծով, Կովկասի լեռնաշղթա, Հիմալայան լեռներ, Հրազդանի ձոր, Հյուսիսային սառուցյալ օվկիանոս (կամ Սառուցյալ օվկիանոս), Մեծ կամ Խաղաղ օվկիանոս (կամ Խաղաղ օվկիանոս), Որոտանի լեռնանցք, Պարսից ծոց, Սև ծով, Սևանա լիճ, Տրդատի թախտ (բերդավան, դաստակերտ), Ուրմիա (Կապուտան) լիճ և այլն:

Ծանոթություն: Այս կարգի աշխարհագրական բաղադրյալ հատուկ անունները գրաբարում ունեն այլ շարադասություն, որի հետևանքով հասարակ անուն լրացյալները լինում են նախադաս և նույնպես գրվում են մեծատառ. այն է՝ Աթոռ Ա-նահտա(յ), Դոռն Անտիոքա(յ), Զարն Բաղակու, Թախտ Տրդատա(յ) և այլն:

Բ. Պետությունների վարչատարածքային հին ու նոր այն անվանումներում, որոնց մեջ լրացյալն, առանձին վերցված, հատուկ անուն չէ.

Արագածոտնի մարզ, Վայոց ձորի մարզ, Տաճրովի մարզ, Լոձի վոյեվոդություն, Կրակովի վոյեվոդություն, Վանի նահանգ, Փենսիլվանիայի նահանգ, Մասյացոտն գավառ, Մուշի գավառ, Կրասնոյարսկի երկրամաս, Ստավրոպոլի երկրամաս, Լանկաշիրի կոմսություն, Քենտի կոմսություն, Հոկայդոյի պրեֆեկտուրա, **այսպես նաև՝ պետությունների, ավատական (ֆեոդալական) ինքնավար իշխանությունների պատճական անվանումներում՝** Կիլիկիայի հայկական պետություն (կամ թագավորություն), Կարսի թագավորություն, Սյունիքի թագավորություն, Վասպուրականի թագավորություն (բայց նաև Կարսի Բագրատունիների թագավորություն, Վասպուրականի Արծրունյաց թագավորություն), Բյուզանդական կայսրություն, Հռոմեական կայսրություն, Խաճապի մելիքություն, Հուլիսյան միապետություն, Հայաստանի ա-

ռաջին հանրապետություն կամ Առաջին հանրապետություն, Ֆրանսիայի հինգերորդ հանրապետություն կամ Հինգերորդ հանրապետություն և այլն:

Գ. Պետությունների խմբերի (դաշինքների, միավորումների) այն անուններում, որոնց մեջ լրացյալը (նաև սրան նախորդող միջադաս բաղադրիչը), առանձին վերցված, հատուկ անուն չէ.

Արաբական պետությունների լիգա, Երեք կայսրերի դաշինք, Եռյակ դաշինք, Սրբազան դաշինք, Նավթ արտահանող երկրների կազմակերպություն, Բրիտանիայի ազգերի համագործակցություն (բայց՝ Անկախ Պետությունների Համագործակցություն) և այլն:

Դ. Զանգեռուների մեջ առնվող անվանումներում.

ա) գրական, գիտական, արվեստի և այլ երկերի ու ստեղծագործությունների, լրագրերի, պարբերականների բաղադրյալ անուններ՝

Պատերազմ և խաղաղություն», «Հացի խնդիր», «Իններորդ ալիք», «Ամբոխները խելագարված», «Գրական թերթ», «Հայկական բանակ» (ամսագիր), «Հայոց աշխարհ» (թերթ), «Իմ ընկեր Նետուն», «Մենք ենք, մեր սարերը», «Մամուլի տեսություն» հեռուստածրագիր, «Հողի արյուն» (գինի), «Անհաղթ աքլոր» (կոնֆետ), «Արգելմետի փ ֆակտի» շաբաթաթերթ, «Ռեսպուբլիկա Արմենիա» և այլն:

բ) հիմնարկներին, կուսակցություններին, կազմակերպություններին և զանազան այլ հաստատություններին ու առարկաներին (տարբերանշաններ, շքանշաններ և այլն) տրվող բաղադրյալ անուններ՝

«Մուրճ և մանգաղ» գործարան, «Նաիրիտ» գործարան, «Ազգային միաբանություն» կուսակցություն, «Հանրապետություն» կուսակցություն, «Հզոր հայրենիք» կուսակցություն, «Հող և ազատություն» կուսակցություն, «Միացյալ Հայաստան» կուսակցություն, «Միություն և առաջադիմություն» կուսակցություն, «Օրինաց երկիր» կուսակցություն, «Ռադիկալ ժողովրդավարական կուսակցություն» (Գերմանիայում) (բայց նաև Գերմանիայի սոցիալ-ժողովրդավարական կուսակցություն, Ավստրալիայի լեյբորիստական կուսակցություն, ճապոնիայի ազատական-ժողովրդավարական կուսակցություն, Հայաստանի ժողովրդական կուսակցություն, Ռուսաստանի Դաշնության կոմունիստական կուսակցություն), «Աշխատանք», «Դինամո», «Սպարտակ» (մարզական ընկերություններ), «Զինվորի մայր» կազմակերպություն, «Պատվո նշան» շքանշան, «Մարտական ծառայությունների համար» մեդալ, «Մայրական փառք» շքանշան, «Գերազանցիկ ֆինանսիստ» կրծքանշան և այլն:

Ե. Համաշխարհային կամ համապետական ճանաչման հաստատու-

թյան, մրցանակի կամ բարձրագույն պատվավոր կոչման, ինչպես նաև պետություններից շնորհվող շքանշանների և մեդալների բաղադրյալ անուններում:

(Երևանի Մերոպ Մաշտոցի անվան) Մատենադարան, (ՀՀ) Գիտությունների ազգային ակադեմիա, Նոբելյան մրցանակ, ԽՍՀՄ Լենինյան մրցանակ, ՀԽՍՀ Պետական մրցանակ, Հայաստանի Ազգային հերոս, Հերոսուհի մայր, *այսպես նաև* Հայրենիքի շքանշան, Կարմիր դրոշի շքանշան, Աշխատանքային կարմիր դրոշի շքանշան, Փառքի (առաջին աստիճանի, երկրորդ աստիճանի) շքանշան, Հայրենական պատերազմի առաջին աստիճանի շքանշան, Կարմիր աստղի շքանշան, Մարտական խաչի երկրորդ աստիճանի շքանշան, Արիության մեդալ, Պատվո լեգեոնի շքանշան (*բայց նաև*՝ Անանիա Շիրակացու մեդալ, Սուրբ Մերոպ Մաշտոցի շքանշան, Սուրբ Գեորգի խաչ շքանշան) և այլն:

Ձ. Համաշխարհային կազմակերպությունների, միությունների, հաստատությունների, եզակի քաղաքական, արհմիութենական և հասարակական մարմինների ընդարձակ և համառոտ բաղադրյալ անուններում:

Միավորված ազգերի կազմակերպություն, Անվտանգության խորհուրդ, Խաղաղության համաշխարհային խորհուրդ, Արհեստակցական միությունների համաշխարհային ֆեդերացիա, Շախմատի միջազգային ֆեդերացիա, Ազգերի լիգա և այլն:

Է. Բոլոր պետությունների կենտրոնական ղեկավար օրենսդիր, գործադիր և դատական բարձրագույն մարմինների բաղադրյալ անուններում:

ԱՄՆ-ի Կոնգրեսի Ներկայացուցիչների *պալատ* և Սենատ, Բուլղարիայի Հանրապետության Ժողովրդական *ժողով* և Նախարարների *խորհուրդ*, Լեհաստանի Հանրապետության Սեյմ, Հայաստանի Հանրապետության Ազգային *ժողով* և Կառավարություն, ՀՀ Վճռաբեկ *դատարան* և Սահմանադրական *դատարան*, Մեծ Բրիտանիայի Պառլամենտի Համայնքների *պալատ* և Լորդերի *պալատ*, (ԱՄՆ, ՌԴ) Գերագույն *դատարան*, Չինաստանի Ժողովրդական Հանրապետության Ժողովրդական *ներկայացուցիչների համաչինական ժողովի* Մշտական կոմիտե, ԶԺՀ Պետական *խորհուրդ*, Ռուսաստանի Դաշնության Պետդումա (Պետական *դումա* կամ Դումա), ՌԴ Կառավարություն, Ֆրանսիայի Ազգային *ժողով* և այլն:

Ճանոթություն: Պաշտոնական փաստաթղթերում և հաղորդագրություններում մեծատառով գրվող Պառլամենտ, Կոնգրես, Սենատ, Սեյմ, Մեջլիս, Դումա, Ռադա,

հուրալ, հայերեն՝ Կառավարություն և այլ անունները՝ իբրև պետական կենտրոնական ղեկավար մարմնի տեսակ անվանող բառեր գործածվելիս գրվում են փոքրատառ և մտնում են բառարան՝ որպես հասարակ անուն:

Ը. Պատմահասարակական նշանավոր անցքերի ու շրջափուլերի և պաշտոնական ու ազգային-ավանդական տոների անուններում.

ա) պատմահասարակական նշանավոր անցքեր՝

Առաջին համաշխարհային պատերազմ (Առաջին աշխարհամարտ), Երկրորդ համաշխարհային պատերազմ (Երկրորդ աշխարհամարտ), Դիմադրության շարժում, Երեսնամյա պատերազմ, Թոնդրակյան շարժում, (հայկական) Մեծ եղեռն, Հայրենական մեծ պատերազմ (Մեծ Հայրենական), Հայրուրամյա պատերազմ, Հյուսիսային պատերազմ, Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխություն, Ռուսաստանի 1812 թ. Հայրենական պատերազմ, 1920 թ. Մայիսյան ապստամբություն, Յոթնամյա պատերազմ, 1917 թ. Փետրվարյան հեղափոխություն, 1848 թ. Ֆրանսիական բուրժուադեմոկրատական հեղափոխություն, 1789-1794 թթ. Ֆրանսիական մեծ հեղափոխություն, Գրիգորյան տոմար, Հուլյան տոմար և այլն.

բ) պետական-պաշտոնական և միջազգային տոներ՝

Թարգմանչաց տոն, Հաղթանակի տոն, Մայիսի մեկ, Ապրիլի յոթ (Մայրության և գեղեցկության տոն), Մարտի ութ (Կանանց միջազգային օր), Նոր տարի կամ Ամանոր, Անկախության օր, Երեխաների պաշտպանության միջազգային օր, Ռազմաօդային ուժերի օր, Սահմանադրության օր, Երկաթուղայինի օր և այլն.

գ) եկեղեցական-ծիսական և և ժողովրդական, ավանդական դարձած տոներ՝

Քրիստոսի հարության կամ պայծառակերպության տոն, Սուրբ ծննդի տոն (Սուրբ ծնունդ), Տյառնընդառաջի տոն, *ինչպես նաև* Կանաչ կիրակի, Կարմիր կիրակի, Մեծ պաս (տոն օրեր), Ջատկի տոն (Ջատիկ), Ծաղկազարդի տոն (Ծաղկազարդ), Համբարձման տոն (Համբարձում), Ջրօրհնեքի տոն (Ջրօրհնեք), Վարդավառի տոն (Վարդավառ) և այլն:

3. Դիվանագիտական և պաշտոնական փաստաթղթերի ու հաղորդագրությունների մեջ, Հայոց եկեղեցու պաշտոնական լեզվում, հեղինակային վերաբերմունքի՝ քաղաքավարական և մեծարժան ոճերում թույլատրվում է մեծատառի ազատ գործածություն՝ ըստ ընդունված կարգի:

4. Վերոհիշյալ կանոնների մեջ չմտնող բաղադրյալ անվա-

նունները, եթե չեն տեղայնացված, որպես հասարակ անուններ գրել փոքրատառով.

(ՀՀ) արտաքին գործերի նախարարություն, գիտության և կրթության նախարարություն, պետական գիտատնտեսական խորհուրդ, գազի արդյունաբերության գլխավոր վարչություն, լեզվի պետական տեսչություն, գլխավոր դատախազություն, ռազմածովային ուժեր, գրողների միություն, նկարիչների միություն, արհեստակցական միությունների կենտրոնական խորհուրդ, երիտասարդության միություն, մարզական ընկերությունների և կազմակերպությունների միություն, պետական համալսարան, բժշկական համալսարան, պետական հումանիտար քոլեջ, կաուչուկի գործարան, քաղաքային դեպարտամենտ, ազգային գրադարան, Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոն, հայկական երգի-պարի վաստակավոր անսամբլ, պատմության պետական թանգարան:

Այսպես են գրվում կուսակցությունների՝ չակերտներում չառնվող բաղադրյալ անունները. օրինակ՝ կոմունիստական կուսակցություն, բանվորական կուսակցություն, դեմոկրատական կուսակցություն, սոցալիստական միասնական կուսակցություն, լեյբորիստական կուսակցություն, քրիստոնեա-ժողովրդավարական կուսակցություն: *Այսպես են գրվում նաև պետական, զինվորական, գիտական պաշտոնների, պատվավոր և այլ կոչումների բաղադրյալ անունները. օրինակ՝* գերագույն գլխավոր հրամանատար, գլխավոր դատախազ, ավիացիայի մարշալ, ժողովրդական արտիստ, գիտության վաստակավոր գործիչ, վաստակավոր ուսուցիչ, վաստակավոր շինարար, *այսպես նաև՝* հանրապետության նախագահ, կուսակցության կենտկոմի քարտուղար, երկրի վարչապետ և այլն:

Ծանոթություն: *Եթե բաղադրյալ անվան վերադիր ածականը տեղայնացնող կամ մասնավորող նշանակություն ունի և օտարաբանությամբ գործածված է տեղանվան սեռական հոլովի իմաստով ու կարող է փոխարինվել այդ ծնով. գրվում է մեծատառով. օրինակ՝ Լեհական (փոխանակ՝ Լեհաստանի) միացյալ բանվորական կուսակցություն, Հայ (Հայկական կամ Հայաստանի) ռանկավար ազատական կուսակցություն, այսպես նաև՝ Երևանյան լիճ, Թբիլիսյան խնուղի, Կիևյան փողոց և այլն:*

5. Հապավումների մեջ մեծատառերով գրել՝

Ա. Հատուկ և հասարակ բաղադրյալ անունների տառային հապավումներն ամբողջությամբ.

ՌԴ, ԱՄՆ, ՉԺՀ, ՄԱԿ, ՀԳՄ, ՀԺԿ, ՀԴԿ, ԳԱԱ (Գիտությունների ազգային ակադեմիա), ԱՏԿ, ՀՕՊ, ՊԱՊ և այլն:

Ծանոթություն: Հասարակ գոյականի արժեք ստացած բուս, մեպ, հեկ, զագս և նման տառային հապավումները գրել փոքրատառով:

Բ. Բաղադրյալ հատուկ անունների ոչ տառային հապավումների միայն առաջին տառը.

(Լեհաստանի Հանրապետության) Պետխորհուրդ, (Ռուսաստանի Դաշնության) Պետդումա, Անդրֆեդերացիա և այլն:

Գ. Հասարակ անվան գործածություն ունեցող բաղադրյալ անունների տեղայնացնող բաղադրիչի առաջին տառը.

Հայկինո, Հայպետհրատ, Գրոզնեֆտ, Լենֆիլմ, Մոսֆիլմ, Հայոսկի և այլն:

Դ. Խառը տիպի հապավումների նաև առանձին բաղադրիչների առաջին տառը.

ԱՄ Նահանգներ, ՌԴ Դումա (Պետդումա), ԼՂ Հանրապետություն, ՀՀ Կառավարություն, Երևանյան ՀԷԿ, ՀամԼԿԵՄ, ՀամԿ(Բ)Կ և այլն:

Ե. Օտարազգի տառաճանձններով հատուկ անունների յուրաքանչյուր տառաճանձն առաջին տառը.

Այբիեմ, ԲիբիՍի, ԷյբիՍի, Էլբիեյ, Էֆեմ, Սիեմեն և այլն:

8. Տողադարձի մասին*

Տողադարձի գործող կանոնների որոշ անճշտությունները վերացնելու, դրանցում ճշգրտումներ ու լրացումներ կատարելու նպատակով ՀՀ կառավարությանն առընթեր լեզվի պետական տեսչության հայերենի բարձրագույն խորհուրդը *որոշում է*.

Վերահաստատել ՀԽՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր տերմինաբանական կոմիտեի՝ 1971 թ. դեկտեմբերին ընդունած որոշումը՝ հետևյալ խմբագրությամբ.

1. Տողադարձը հիմնականում կատարվում է բառը վանկերի բաժանելով կամ վանկատմամբ, ըստ որում՝

ա) երկու ծայնավորի միջև եղած մեկ բաղաձայնը անցնում է հաջորդ տողը. օրինակ՝ *աշա-կերտ, գա-րուն, բա-նա-կա-յին, դա-սա-րան, լե-գե-ոն, կա-տու, հե-քի-աթ*.

բ) երկու ծայնավորի միջև եղող երկու և ավելի բաղաձայններից հաջորդ տողն է անցնում միայն վերջին բաղաձայնը. օրինակ՝ *արծան, բուր-ժու-ա-կան, բեր-րի, Աստ-դիկ, Արծ-վիկ, թարգ-ման, բարձրա-նալ, երկ-դի-մի, ա-ռանցք-ներ*:

Ծանոթություն 1: *Քանի որ հայերենի յա, յո, յու երկբարբառակերպ վանկերի յ բաղադրիչի և նրան նախորդող բաղաձայնի միջև ը չի արտասանվում, ուստի յ-ին նախորդող բաղաձայնը կամ բաղաձայններից վերջինը կարող է նաև նրան միացած անցնել հաջորդ տողը՝ առաջացնելով տողադարձի երկակիություն. օրինակ՝ անկ-յուն/ևն-կյուն, արդ-յոք//ար-դյոք, գոչ-յուն/գո-չյուն, գիտութ-յուն/գիտություն, կոստ-յուն/կոս-տյուն, կոն-յակ/կո-նյակ, Հակոբ-յան/Հակոբյան, հոբել-յար/հոբե-լյար, մատ-յան/մա-տյան, սեն-յակ/սե-նյակ, սին-յոր/սի-նյոր, ուխտ-յալ/ուխ-տյալ և այլն:*

Տողադարձի այս երկակիությունը չի պահպանվում երկարա-կյաց, կնքազգյաց (կնքազգեստ), բյուրա-բյուր, ամենա-հյուրասեր, ան-հյուրընկալ, լեռնա-գյուղ, ոսկե-հյուս, սառցա-ծյուն, քարա-սյուն ու նման բաղադրություններում, որոնց սույն վանկային կամ արտասանական և բառակազմական տողադարձումները նույնական են:

Ծանոթություն 2: *Բառամիջի ծայնավորից առաջ ընկած և-ը տողադարձի ժամանակ գրվում է եվ, և վ-ն անցնում է հաջորդ տողը. օրինակ՝ Երե-վան, բարե-վել, սե-վաքույր, տերե-վաքափ:*

* Նախագիծը կազմել է Հ. Բարսեղյանը: Հաստատվել է ՀՀ ԿԳ նախարարի 2003 թ. հունվարի 14-ի հ. 22 հրամանով:

2. Գաղտնավանկ, այսինքն՝ արտասանվող, բայց չգրվող *ը* ունեցող բառերի տողադարձի ժամանակ *ը*-ն գրվում է միայն տողավերջի և հաջորդ տողի սկզբի վանկերում. օրինակ՝ *շըդ-թա, կը-տըրտել, կտըրտել, Մը-կըրտիչ, Մկըր-տիչ, երբե-մըն, գըլ-խավոր*:

Այսպես նաև՝ փոխառյալ օտար բառերում դեմո-կըրատիա, դեմո-կը-րատիա, էլեկ-տըրական, էլեկտը-րական, մաես-տըրո, մաեստը-րո, (/մաեստ-րո), ֆոքստը-րոտ, ֆոքս-տըրոտ (/ ֆոքստ-րոտ):

Ծանոթություն 1: Անշեշտ և թույլ արտասանվող ը ծայնավորը գրական արտասանությամբ առավելապես սղվում, իսկ ժողովրդական արտասանությամբ և բանաստեղծական խոսքում հաճախ պահպանվում է՝ առաջացնելով արտասանության և տողադարձի երկակիություն՝

ա) բառասկզբի ը գաղտնավանկին հաջորդած վերջնավանկի կ կամ ու ծայնավորը չեշտային հնչյունափոխության ենթարկված հետևյալ կրկնաբաղաձայն բախերում՝ զը-նը-նել//զըն-նել, խը-ճը-ճել//խըճ-ճել, խը-տը-տել//խըտ-տել, կը-ծը-ծել//կըծ-ծել, պը-տը-տել//պըտ-տել, փը-թը-թել//փըթ-թել, ջը-թը-թել//ջըթ-թել, ջը-նը-նել//ջըն-նել, այսպես նաև՝ մը-րը-րիկ//մըր-րիկ, խըր-տընել//խըրտ-նել, սը-րըս-կել//սըրս-կել և այլն.

բ) վերջնավանկի *ի-ն* մեկ սղված, մեկ *ը-ի* հնչյունափոխված բազմավանկ այլ բառերում՝ աղջը-կա//աղջ-կա, արճը-ճի//արճ-ճի, խըն-ղըրել//խընղ-րել, կարմը-րել//կարմ-րել, մարմը-նի//մարմ-նի, ջըր-տը-նել//ջըրտ-նել և այլն.

գ) պատճառական և երկու բաղաձայնից հետո վ ծածկ ունեցող կրավորական բայերում՝ թըր-ցը-նել//թըռց-նել, խաղացը-նել//խաղաց-նել, մերկացը-նել//մերկաց-նել, մոտեցը-նել//մոտեց-նել, վազեցը-նել//վազեց-նել, փախցը-նել//փախց-նել, զըս-պը-վել//զըսպ-վել, թըր-ջը-վել//թըրջ-վել, կազմը-վել//կազմ-վել, տանջը-վել//տանջ-վել և այլն:

Ծանոթություն 2: Զբ, զգ, շտ, սպ, ստ և նման հնչյունակապակցություններով սկսվող հատուկ անունների տողադարձի ժամանակ այդ հնչյունակապակցությունները հաջորդ ծայնավորից չեն անջատվում, որպեսզի հատուկ անվան գրությունը ը-ով չսկսվի, այսինքն՝ պետք է տողադարձել՝ Ստե-փան, Սպար-տակ, Ստրաս-բուրգ, և ոչ թե՝ Ըս-տեփան, Ըս-պարտակ, Ըստ-րասբուրգ:

3. Բարդ և նախածանցավոր բառերը կարելի է տողադարձել նաև առանց վանկատման հաջորդ տողը փոխադրելով արմատը կամ ամբողջական բառը, այսինքն, կարդալիս պահելով բառի վանկային ճիշտ արտասանությունը, ոչ միայն կարելի է գրել՝ *արա-զընթաց, գեր-խընդիր, ա-նօգուտ, ա-նորոշ, հա-կազդել, ծո-վեզր, գե-տափ, ինք-նիշխան, համազ-գեստ, համ-րընթաց, վայ-րէջք, մե-կընդմեջ, երեսու-ներկու* և այլն, այլ նաև՝ ըստ բառակազմության՝ *արագ-ընթաց, գեր-խնդիր, ան-օգուտ, ան-որոշ, հակ-ազդել, ծով-եզր, գետ-ափ, ինքն-իշխան, համա-զգեստ, համը-ընթաց, վայր-էջք, մեկ-ընդմեջ, երեսուն-երկու*:

Ծանոթություն 1: Բառակազմությամբ կամ բաղադրիչներով տողադարձված բառերի նախորդ տողի վերջնականակի և հաջորդ տողն անցնող արմատի սկզբնականի գաղտնավանկ ը-ն չի գրվում, օրինակ՝ ան-վնաս, ապա-շնորհ, արև-մտյան, բացա-տրական, գրա-քննիչ, դարա-գլուխ, դիմա-դրել, երկնա-սլաց, լեռնա-բնակ, կարգա-դրում, հակա-կղերական, համա-կրանք, հաշվե-տվություն, հեծ-կլտոց, հեղա-շրջում, նախա-դրյալ, շարա-դրել, չարա-ճճի, վազ-վզել, վառ-վռում, փայլ-փլել, փոխ-գնդապետ, քաշ-քշել, ապա նաև՝ ակն-կալել, ակն-դետ, հոտոն-կայս, ձեռն-տու, ունկն-դրել և այլն: Այսպես նաև փոխառյալ օտար բառերում՝ ցինկո-գրաֆիա, դիա-գրան, պոլի-գրաֆիա, պոլի-կլինիկա, մելո-դրամա, բջջա-պլազմա և այլն:

Ծանոթություն 2: Որոշ բացառություններում հաջորդ տողն անցնող արմատի սկզբնականի ը-ն սղվում է, ուստի բառը տողադարձվում է միայն ըստ վանկատման, օրինակ՝ գայթակ-ղել, գերբ-նական, համալ-սարան, մասնակ-ցություն և այլն:

Ծանոթություն 3: Եթե բարդ բառի՝ նախորդ տողում մնացող հնչյունափոխված բաղադրիչը գաղտնավանկ ը-ից բացի այլ ծայնավոր չունի, ապա տողավերջում այդ գաղտնավանկ ը-ն գրվում է, օրինակ՝ դռն-բաց, ծկըն-կուլ, մթըն-կա, մկըն-դեղ, այսպես և՛ զըռ-գռալ, ճըռ-ճռոց, թըր-թիռ, մըր-մոտ և այլն:

4. Տառային և վանկատառային ապավումները չեն տողադարձվում. օրինակ՝ ԱՄՆ, ՄԱԿ, ԼՂՀ, ՌԴ, ԽՍՀՄ, ՀՀԴ, ՀԿԿ, ՀՀՇ, ԳԱԱ, ՀամԼԿԵՄ, ՀԷԿ և այլն:

ՀԱՎԵԼՎԱԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ ԼԵԶՎԻ ՄԱՍԻՆ

Սույն օրենքով սահմանվում են Հայաստանի Հանրապետության լեզվական քաղաքականության հիմնական դրույթները, կարգավորվում են լեզվավիճակը, պետական իշխանության և կառավարման մարմինների, ձեռնարկությունների, հիմնարկների ու կազմակերպությունների լեզվահարաբերությունները:

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության լեզվական քաղաքականությունը

Հայաստանի Հանրապետության պետական լեզուն հայերենն է, որը սպասարկում է հանրապետության կյանքի բոլոր ոլորտները: Հայաստանի Հանրապետության պաշտոնական լեզուն գրական հայերենն է:

Հայաստանի Հանրապետությունն աջակցում է իր սահմաններից դուրս բնակվող հայերի շրջանում հայոց լեզվի պահպանմանն ու տարածմանը:

Հայաստանի Հանրապետությունը նպաստում է հայերենի ուղղագրության միասնականացմանը:

Հայաստանի Հանրապետությունն իր տարածքում երաշխավորում է ազգային փոքրամասնությունների լեզուների ազատ գործածությունը:

Հոդված 2. Կրթության լեզուն

Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող կրթական և ուսումնական համակարգերում դասավանդման և դաստիարակության լեզուն գրական հայերենն է:

Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների համայնքներում հանրակրթական ուսուցումը և դաստիարակությունը կարող են կազմակերպվել իրենց մայրենի լեզվով՝ պետական ծրագրով և հովանավորությամբ, հայերենի պարտադիր ուսուցմամբ:

Հայաստանի Հանրապետության տարածքում օտարալեզու ոչ հանրակրթական ուսումնական հաստատություն կարող է հիմնել միայն Հայաստանի Հանրապետության Կառավարությունը:

Հայաստանի Հանրապետության բոլոր միջնակարգ-մասնագիտական, մասնագիտական-տեխնիկական և բարձրագույն ուսումնական հաստատություններում հայոց լեզվի ընդունելության քննությունը և հայոց լեզվի ուսուցումը պարտադիր են: Հայրենադարձների, փախստականների, Հայաստանի Հանրապետության տարածքում բնակվող այլազգի քաղաքացիների ու օտարերկրյա քաղաքացիների ընդունելության քննությունները և ուսուցումն իրականացվում են Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից սահմանված կարգով:

Հոդված 3. Քաղաքացիների լեզվական պարզականությունները

Պաշտոնատար անձինք և սպասարկման առանձին ոլորտներում աշխատող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները պարտավոր են տիրապետել հայերենին:

Հայաստանի Հանրապետությունը ներկայացնող անձանց պաշտոնական ելույթների լեզուն հայերենն է, եթե դա չի հակասում տվյալ միջազգային ատյանում ընդունված կարգին:

Պաշտոնական խոսքում Հայաստանի Հանրապետության քաղաքացիները պարտավոր են ապահովել լեզվի անաղարտությունը:

Հոդված 4. Հասարակությունների լեզվական իրավունքներն ու պարզականությունները

Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող ձեռնարկությունները, հիմնարկներն ու կազմակերպությունները այլ երկրների պետական մարմինների, ձեռնարկությունների, հիմնարկների, կազմակերպությունների և քաղաքացիների հետ հաղորդակցվում են փոխադարձաբար ընդունելի լեզվով:

Հայաստանի Հանրապետության պետական մարմինները, ձեռնարկությունները, հիմնարկներն ու կազմակերպությունները պարտավոր են.

ա. գործավարությունը կատարել հայերեն,
բ. համագումարներում, մատաչքաններում, ժողովներում, գիտաժողովներում, հրապարակային ատենախոսությունների և պաշտոնական ու զանգվածային այլ միջոցառումների ժամանակ ապահովել ոչ հայերեն ելույթների զուգահեռ հայերեն թարգմանությունը,

գ. ցուցանակները, ձևաթղթերը, դրոշմանիշները, նամականիշները, կնիքները, միջազգային փոստային ծրարները ձևավորել հայերեն անհրաժեշտության դեպքում զուգակցելով այլ լեզուներով:

Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող արտասահմանյան պետական մարմինները, ձեռնարկությունները, հիմնարկներն ու կազմակերպությունները պարտավոր են պետական վերահսկողության ենթակա փաստաթղթերը զուգակցել հայերենով:

Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող փոքրամասնությունների կազմակերպություններն իրենց փաստաթղթերը, ձևաթղթերը, կնիքները ձևավորում են հայերեն՝ իրենց լեզվով զուգահեռ թարգմանությամբ:

Հոդված 5. Պետական լեզվաքաղաքականության իրականացումը

Պետական լեզվաքաղաքականությունն իրականացնում են Հայաստանի Հանրապետության Կառավարությունը, պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, ինչպես նաև դրա համար լիազորված պետական մարմինը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ համապատասխան:

Հայաստանի Հանրապետությունը հովանավորում և խրախուսում է հայերեն լեզվով հրատարակությունները, մամուլը, ինչպես նաև հայերեն դասագրքերի, ուսումնական ձեռնարկների, գիտամեթոդական, տեղեկատու, գիտահանրամատչելի գրականության ստեղծումը:

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանվում է պատասխանատվություն սույն օրենքի պահանջները խախտելու դեպքում:

երևան
17 ապրիլի 1993 թ.
Լրացումները՝ 2005 թ.:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ ԼԵԶՎԻ ՄԱՍԻՆ

Սույն օրենքով սահմանվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության լեզվական քաղաքականության հիմնական դրույթները, կարգավորվում են լեզվավիճակը, պետական իշխանության և կառավարման մարմինների, ձեռնարկությունների, հիմնարկների և կազմակերպությունների լեզվահարաբերությունները:

Հոդված 1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության լեզվական քաղաքականությունը

ԼՂՀ պետական լեզուն հայերենն է, որն սպասարկում է հանրապետության կյանքի բոլոր ոլորտները: ԼՂՀ պաշտոնական լեզուն գրական հայերենն է:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը նպաստում է հայերենի ուղղագրության միասնականացմանը:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը նպաստում է Արցախի բարբառի օգտագործմանը, խրախուսում նրա գիտական ուսումնասիրումը և տվյալ բարբառով ազգագրական ժողովածուների հրատարակումը:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունն իր տարածքում երաշխավորում է ազգային փոքրամասնությունների լեզուների ազատ օգտագործումը, նպաստում ռուսաց լեզվի զարգացմանը, որպես ազգամիջյան հաղորդակցության լեզվի:

Հոդված 2. Կրթության լեզուն

ԼՂՀ տարածքում գտնվող կրթական և ուսումնական համակարգերում դասավանդման և դաստիարակության լեզուն գրական հայերենն է:

ԼՂՀ ազգային փոքրամասնությունների համայնքներում հանրակրթական ուսուցումը և դաստիարակությունը կարող են կազմակերպվել նրանց մայրենի լեզվով՝ պետական ծրագրով և հովանավոր-

րությամբ, հայերենի պարտադիր ուսուցմամբ: ԼՂՀ տարածքում օտարալեզու ոչ հանրակրթական ուսումնական հաստատություն բացառության կարգով կարող է հիմնել միայն ԼՂՀ կառավարությունը՝ ԼՂՀ խորհրդարանի համաձայնությամբ:

ԼՂՀ բոլոր միջնակարգ-մասնագիտական, մասնագիտական-տեխնիկական և բարձրագույն ուսումնական հաստատություններում հայոց լեզվի ընդունելության քննությունը և հայոց լեզվի ուսուցումը պարտադիր են: Հայրենադարձների, փախստականների, ԼՂՀ տարածքում բնակվող այլազգի քաղաքացիների ու օտարերկրյա քաղաքացիների ընդունելության քննությունները և ուսուցումն իրականացվում են ԼՂՀ կառավարության կողմից սահմանված կարգով:

Հոդված 3. Քաղաքացիների լեզվական պարզականությունները

Պաշտոնական անձինք և սպասարկման առանձին ոլորտներում աշխատող ԼՂՀ քաղաքացիները պարտավոր են տիրապետել գրական հայերենին:

Պաշտոնական խոսքում ԼՂՀ քաղաքացիները ապահովում են լեզվի անաղարտությունը:

Հոդված 4. Հասարակությունների լեզվական իրավունքներն ու պարզականությունները

ԼՂՀ տարածքում գտնվող ձեռնարկությունները, հիմնարկներն ու կազմակերպությունները այլ երկրների պետական մարմինների, ձեռնարկությունների, հիմնարկների, կազմակերպությունների և քաղաքացիների հետ հաղորդակցվում են փոխադարձաբար ընդունելի լեզվով:

ԼՂՀ պետական մարմինները, ձեռնարկությունները, հիմնարկներն ու կազմակերպությունները պարտավոր են՝

ա) գործավարությունը կատարել հայերեն:

բ) ցուցանակները, ձևաթղթերը, դրոշմանիշները, մամականիշները, կնիքները, միջազգային փոստային ծրարները ձևավորել հայերեն՝ անհրաժեշտության դեպքում զուգակցելով այլ լեզուներով:

ԼԴՀ տարածքում գտնվող արտասահմանյան պետական մարմինները, ձեռնարկությունները, հիմնարկներն ու կազմակերպությունները պարտավոր են պետական վերահսկողության ենթակա փաստաթղթերը գույքակցել հայերենով:

**Հոդված 5. Պերական լիզվաբաղաբականության
իրականացումը**

ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱԴԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ Ռ. ԶՈՇԱՐՅԱՆ

ՀՀ ՕՐԵՆՔԸ «ԳՈՎԱԶԳԻ ՄԱՍԻՆ»*

Ընդհանուր պահանջները գովազդի նկատմամբ

Հայաստանի Հանրապետությունում *գովազդի լեզուն հայերենն է*: Անհրաժեշտության դեպքում որպես լրացում, գովազդատուի հայեցողությամբ, գովազդի շարադրանքը կարող է զուգորդվել նաև այլ լեզուներով՝ համեմատաբար փոքր տառերով:

Սույն դրույթը չի տարածվում օտար լեզուներով տպագրվող թերթերի, հատուկ հրատարակությունների, ապրանքանիշերի և մակնիշների վրա:

Գովազդի հայերեն շարադրանքը տեղեկատվության ծավալով չպետք է գիջի այլ լեզվով հրատարակվող տարբերակին:

«Գովազդի մասին» ՀՀ օրենքը ընդունվել է ՀՀ ԱԺ-ի կողմից, 1996 թ. ապրիլի 30-ին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԻՐԱՅՎՈՂ ՄԱՆԳԱՄԹԵՐՔԻ ՄԱԿՆՇՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՅՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետությունում սննդամթերք արտադրող, վերամշակող, փաթեթավորող իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատերը պարտավոր է այն մակնշել *հայերեն լեզվով*: Մակնիշը պետք է պարունակի հետևյալ տեղեկությունները՝

ա) իրացվող սննդամթերքի անվանումը, գտաքաշը կամ ծավալը, եթե սննդամթերքը փաթեթավորված է.

բ) սննդամթերքում հավելումների ցանկը.

գ) արտադրության տարեթիվը և պիտանիության ժամկետը.

դ) սննդամթերքի օգտագործման վերաբերյալ ցուցումներ, եթե առանց դրանց այն չի կարող պատշաճորեն օգտագործվել (հատկապես բուժիչ, դիետիկ, մանկական սննդամթերք), առանձնահատուկ հանձնարարականներ դրա պահպանման և օգտագործման մասին: Այդպիսի սննդամթերքի ցանկը հաստատում է Հայաստանի Հանրապետության Կառավարությունը.

*Այստեղ բերված են օրենքի միայն լեզվին առնչվող կետերը:

- ե) տվյալներ արտադրողի մասին.
- զ) սննդամթերքի ծագման երկիրը.
- է) ոգելից խմիչքներում ալկոհոլի պարունակության տոկոսը.
- թ) գծային ծածկագիրը.
- ժ) նորմատիվ փաստաթղթերով սահմանված այլ տեղեկատվություն:

«Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքը ընդունվել է ՀՀ ԱԺ-ի կողմից 1999 թ. դեկտեմբերի 8-ին

«ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՆՇԱՆՆԵՐԻ, ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԾԱԳՄԱՆ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔ, ՀՈՎՎԱԾ 6

Հայտը ներկայացվում է հայերեն: Հայտին կցվող փաստաթղթերը կարող են ներկայացվել այլ լեզվով: Այդ դեպքում Հայաստանի Հանրապետության հայտատուները պարտավոր են դրանց հայերեն թարգմանությունը ներկայացնել հայտի հետ, իսկ օտարերկրյա հայտատուները՝ հայտը ներկայացնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ԱՐՏԱԴՐՈՂԻ (ԿԱՏԱՐՈՂԻ, ՎԱՃԱՌՈՂԻ) ԿՈՂՄԻՅ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՁԵՏԵՂԵԼՈՒ ՅՈՒՅԱՆԱԿԻՆ ՆԵՐԿԱՅԱՅՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ*

1. Ցուցանակի տեղադրմանը և եզրաչափերին ներկայացվող պահանջներն են՝

ա) ցուցանակը պետք է տեղադրված լինի կազմակերպության ճակատային մասում (որտեղ տեղադրված են մուտքը և ցուցափեղկը) առաջին հարկի լուսամուտախորշերի կամ ցուցափեղկերի արանքում և երկրորդ հարկի լուսամուտախորշերի արանքում և չպետք է դուրս գցվի երկրորդ հարկի լուսամուտախորշերի ներքևի եզրից վերև:

*Հաստատված է ՀՀ կառավարության 2002 թ. մարտի 19-ի թիվ 270 որոշմամբ:

Ցուցանակի ներքևի եզրը չպետք է գտնվի հողի մակերևույթից առնվազն 2,5 մետր բարձրության վրա.

բ) ցուցանակը պատի մակերևույթից չպետք է դուրս ցցվի 0,5 մետրից ավելի.

գ) ցուցանակը չպետք է զբաղեցնի շենքի ճակատային մասի 1/6 մասից ավելին.

դ) ցուցանակի տառերի բարձրությունը պետք է լինի ոչ ավելի, քան 0,8 մետր և ոչ պակաս, քան 0,1 մետր.

ե) ցուցանակը երեկոյան ժամերին պետք է լուսավորված լինի ներքին անհատական կամ արտաքին հոսանքի աղբյուրներով և չպետք է ունենա թարթող լուսավորման աղբյուրներ.

զ) ցուցանակը տեղադրվում է հակահրդեհային, սանիտարական ու սպասարկման նորմերի և անվտանգության տեխնիկայի պահանջներին համապատասխան:

2. Ցուցանակի լեզվին և լրացման ձևերին ներկայացվող պահանջներն են

ա) *ցուցանակի լեզուն հայերենն է:* Ցուցանակի հայերեն տեղեկատվությունը կարող է զուգորդվել այլ լեզուներով նշված տեղեկատվությամբ.

բ) ցուցանակի հայերեն շարադրանքը տեղեկատվության ժառանգ չպետք է զիջի այլ լեզվով շարադրված տարբերակի ժառանգին.

գ) ցուցանակի այլ լեզվով շարադրանքը պետք է լինի հայերեն շարադրանքից ներքև կամ աջ հատվածում (ըստ ձախից աջ գրության):

3. Ցուցանակների վրա պետք է գետնի վրա տեղադրվեն հետևյալ տեղեկությունները՝ կազմակերպության ճակատային մասում փակցված ցուցանակի վրա նշվում են կազմակերպության (ֆիրմայի) անվանումը, կազմակերպական-իրավական ձևը, իսկ մուտքի դռան ցուցանակի վրա՝ աշխատանքային ռեժիմը:

IV. ՔԱՂՎԱԾՔՆԵՐ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱՍՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱՔԵՐՅԱԼ ՀՀ ՕՐԵՆՔԻՅ

Հայաստանի Հանրապետության ուսումնական հաստատություններում առարկաների հայերեն դասավանդումը կամ միջնակարգ-մասնագիտական, մասնագիտական-տեխնիկական և բարձրագույն ուսումնական հաստատություններում *հայոց լեզվի ընդունելության քննությունը* չապահովելը

Հայաստանի Հանրապետության ուսումնական հաստատություններում առարկաների հայերեն դասավանդումը կամ միջնակարգ-մասնագիտական, մասնագիտական-տեխնիկական և բարձրագույն ուսումնական հաստատություններում հայոց լեզվի ընդունելության քննությունը (բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի) չապահովելը առաջացնում է տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի ութսունապատիկից մինչև հարյուրապատիկի չափով, իսկ պաշտոնատար անձանց նկատմամբ՝ հարյուրապատիկից մինչև հարյուրհիսնապատիկի չափով:

Նույն խախտումը, որը կատարվել է կրկին՝ վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո մեկ տարվա ընթացքում, առաջացնում է տուգանքի նշանակում. քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրքսնապատիկից մինչև հարյուրհիսնապատիկի չափով, իսկ պաշտոնատար անձանց նկատմամբ՝ երկուհարյուրապատիկից մինչև երեքհարյուրապատիկի չափով:

Հայաստանի Հանրապետության պետական մարմինների, ձեռնարկությունների, հիմնարկների և կազմակերպությունների (անկախ սեփականության ձևից) գործավարությունը ոչ հայերեն վարելը, ցուցանակները, ձևաթղթերը, դրոշմանիշերը, նամականիշերը, կնիքները, միջազգային փոստային ծրարները և գովազդները ոչ հայերեն ձևավորելը

Հայաստանի Հանրապետության պետական մարմինների, ձեռնարկությունների, հիմնարկների և կազմակերպությունների (անկախ սեփականության ձևից) գործավարությունը ոչ հայերեն վարելը, ցուցանակները, ձևաթղթերը, դրոշմանիշերը, նամականիշերը, կնիքները, միջազգային փոստային ծրարները և գովազդները ոչ հայերեն ձևավորելը առաջացնում է տուգանքի նշանակում. քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից մինչև ութսունապատիկի չափով, իսկ պաշտոնատար անձանց նկատմամբ՝ հարյուրապատիկից մինչև երկուհարյուրապատիկի չափով:

Նույն խախտումը, որը կատարվել է կրկին՝ վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո մեկ տարվա ընթացքում, առաջացնում է տուգանքի նշանակում. քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի ութսունապատիկից մինչև հարյուրհիսնապատիկի չափով, իսկ պաշտոնատար անձանց նկատմամբ՝ երկուհարյուրապատիկից մինչև երեքհարյուրապատիկի չափով:

Ձանգվածային միջոցառումների ժամանակ ոչ հայերեն ելույթների համաժամանակյա թարգմանությունը չապահովելը

Համագումարներում, նստաշրջաններում, ժողովներում, գիտաժողովներում, հրապարակային ատենախոսություններում և պաշտոնական ու զանգվածային այլ միջոցառումների ժամանակ ոչ հայերեն ելույթների համաժամանակյա հայերեն թարգմանությունը չապահովելը առաջացնում է տուգանքի նշանակում. քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից մինչև հարյուրապատիկի չափով, իսկ պաշտոնատար անձանց նկատմամբ՝ ութսունապատիկից մինչև հարյուրհիսնապատիկի չափով:

Նույն խախտումը, որը կատարվել է կրկին՝ վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո մեկ տարվա ընթացքում, առաջացնում է տուգանքի նշանակում՝ քաղաքացիների նկատմամբ. սահմանված

նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև հարյուրհիսնապատիկի չափով, իսկ պաշտոնատար անձանց նկատմամբ՝ հարյուրապատիկից մինչև հարյուրհիսնապատիկի չափով:

Պաշտոնատար անձանց՝ հայերենին չտիրապետելը և սպասարկման առանձին ոլորտներում աշխատող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների՝ հայերենին չտիրապետելը

Պաշտոնատար անձանց՝ հայերենին չտիրապետելն առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև հարյուրհիսնապատիկի չափով:

Սպասարկման առանձին ոլորտներում աշխատող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների՝ հայերենին չտիրապետելն առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեսնապատիկից մինչև հիսնապատիկի չափով:

**ՏԵՐԺԻՆԱԲԱՆԱԿԱՆ ԿՈՃԻՄԵՏԻ Ե ԽԱՅԵՐԵՆԻ ԲԱՐԺՐԱԳՈՒՅՆ ԽՈՐԻՐՈՂԻ
ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ԵՆԴ ԳՄԱԾ ԱՆՈՒՄՆԵՐԻ, ԵՆԵՐԺԻՄՆԵՐԻ, ԲԱՅԵՐԻ ՈՒ
ԲԱՌԱԿԱՎԱԿՑՈՒՄՆԵՐԻ
ԳԱՆԼ**

– Ա –

աբա
Աբաս
աբբա
Աբգար
Աբդ էլ Քերիմ
աբեթ
Աբեթ
Աբել
Աբխաղոն
աբխազ (աբխազական,
աբխազերեն)
աբխազացի
Աբուլյան փողոց
աբսցիս
աբսուրդ
Աբրահամ(յան)
Աբրամ (ռուս.)
Ազաթանգեղոս (պատմ.)
Ազապի
ագահ
ագարակ
ագի
ագիտացիոն-մասայական
Ազնես(ա)
ագռավ
Ագրիպաս
ագրոկլիմայական
Ադա
ադաթ
Ադամ
ադամանոթ
ադամանդ
Ադամյան
ադամորդի
Ադամս

Ադանա
Ադելաիդա
Ադելինա
Ադիբեկ
Ադիս Աբեբա
Ադրբեջան
Ադրիական (Ադրիատիկ) ծով
Ադրիանապոլիս
Ադրիանոս
Ադրիան վան Օստադե
Ադրինե
Ազա
Ազատ
ագատականություն (լիբերալիզմ)
(հաս.-քաղ.)
Ազատուհի
Ազարիա (պատմ.)
Ազգային գրադարան
Ազգային ժողով
«Ազգային միաբանություն» կու-
սակցություն
Ազգանուշ
Ազգերի լիգա
Ազգությունների սովետ
Ազգուշ
ագդ
ագդեցության գիծ
ագդեցություն
Ագիգ
Ագիգբեկ
Ազնաուր
Ազնիվ
Ազովի ծով
ագու
Աթաբեկ
Աթանաս

Աթանես
 Աթենաս (պատմ.)
 Աթենք
 Աթոռ Անահտա(յ)
 Աիդա
 Ա-93 բենզին
